This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at `http://books.google.com/`

B 1,211,586

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՍԻՄԷՕՆԷ ՄԻՆՉ ՑՈՎՀԱՆՆԷՍ Ը.

ԱՄԲ ՏԵԱՌՆ

1763 — 1831

„Պատմեցէք զազգս նոցա. և զազգիր նոցա զազգս իւրեանց. և հոգայա զանձնեալ յազգ յազգ" (Բ-ՇԵՐ. = 31)

ԳՐԵԱԼ.

Ի ՄՍԵՐԱՑ ՄԱՍԻՍՅԱՆՑԻՆԷ ՄՆԵՐԵԱՆՑ

ՀՈՐԱՏՈՒՆԱՑԻՆՑ

ԳՐՍԳՈՒՐՈՒՆ
ԳՐԱԴԱՐԱՆ ԱՅԴՅԱՆԻ
կարգաւոր 608

Ի ՄՈՍԿՈՒԷ.
ՏՊԱՐԱՆԻՆ ԱԼԱՐՈՒՄԱՅԻ ՄԱՍԻՆՆԵՐՈՅ
1870

Stna
EREN
373
BUHR

Дозволено цензурою. С.-Петербургъ, 28 Ноября 1874 г.

Moscou. Imprimérie W. Gautier, au pont des Maréchaux, maison Torletzky.

GRAN
EREN
373
01.1099

ՄՍԵՐ ՄԱՊԻՍՏՐՈՍ ՄՍԵՐԵԱՆՑ

Ի ՀԱՍԱԿՍ 65 ԱՄԱՅ

ԱԶԴ

Թէպէտ բարեբաստիկ հանդիսանայ ազգային հին պատմութիւն՝ ունելով ստուգապատում հեղինակս հանգոյն Մովսիսի Խորենացւոյ և Յովհաննու Պատրիարքի, ապա և սոյն այս դարս մեր վերջին ոչ նուազ լիաբազդիկ համարեսցի գտանելով արձագանգս ճշգրտաձայնս 'ի բազմարդիւն գլուխն Մագիստրոսի Մսերայ Մսերեանց։ Դանգի յակն արկանելով զոր 'ի նորին մատենագրանի գտանին ձեռագիր երկասիրութիւնք նորա, նամակք առ այլևայլ անձինս առ 'ի նմանէ ուղղեալք՝ յամէ 1830 մինչև յամն 1870, և հաւաքոյթն նիւթոց, զոր ընդ բովանդակ կեանս իւր մեղուաջան երկասիրութեամբ պատրաստեալն էր 'ի լուսաբանութիւն՝ ազգային, եկեղեցական և զրական պատմութեանց, յանկարելեաց իմն է ոչ

գալ 'ի խոստովանութիւն՝ թէ այդ ամենայն գլուածք նոցա գանձք հաղուագիւտք և օգտակարագոյնք են մերոց ապագայ պատմագրաց, աստուածաբանից և հայախօս դպրութեանց։ Ուստի պարտ անձինս վարկանիմ ժողովել զայնս և առ սակաւ սակաւ 'ի կարգ ածեալ, ըստ թոյլտուութեան ժամանակի, հրատարակել 'ի լոյս եթէ ոչ զբովանդակն, գոնեա զյոյժ կարևորագոյնսն 'ի գիտութիւն բանասիրաց։

Զմեայր ինձ այս աշխատութիւն՝ թէ հաճէին Երկինք յաւելուլ 'ի կեանս ալէզարդ Մագիստրոսիս այլևս ամն ինչ. յայնժամ և ազգս մեր ունիլ ունէր պարծանս յանուն իւրոյ պատմագրի վերջնումն դարու, որպէս այժմս պարծի 'ի պատկառելի անուն իւրոցն նախնի պատմագրաց։ Զոր յընթացս կիսադարեան ժամանակի հաւաքեալ էր նիւթս պատմութեան, և զոր յամենայն կեանս իւր ականատես և ականջալուր գիտութեամբ ստուգեալ էր, զայն ամենայն խմբագրել և յօրինել 'ի կարգ մատենի, և թողուլ յանմահ յիշատակ ազգին իւրոյ սիրելւոյ, յիշատակ արժանի այնմ անուան, որով պանծայրն շնորհիւ երջանկայիշատակ Տեառն Ներսիսի Ե. Կաթողիկոսի, այս իսկ էր ահա ուիտ սիրատենչ սրտի ծերունւոյն Մասերայ։ Այո՛, ցանկայր նա նկարագրել զանցս ազգային գործոց վերջնոյս այսր դարու, որք արժանի են մեծի ուշադրութեան, և նկարագրել յոճ և 'ի բարբառ գրոց իւրովն գեղեցկահիւս անմահ գրչաւ, զոր ուսեալ էր 'ի գերահռչակ քերթողէն „Ոսկի դարուն Հայաստանի“,

և որոյ չքնաղ վսեմութեան քաջածանօթ իսկ են որոց փոքր 'ի շատէ տեղեկացեալ իցէ տպագիր երկասիրութեանց նորա։ Այլ հարուած տնակնկալ մահուն չեռ նմա թոյլ 'ի կատար ածել զոր 'ի բազմաց հետէ ըղձալր մեծափափաղ տենչմամբ։ Պանորոյ և յառաջեաց կանխեաց նա քան զմեզ ողբալ 'ի մահամերձ մահճին զառաքաժամն զայն վճիռ. „Աւաղ ինձ, ասաց նա լալագին, ինձ պիտոյ էր դեռ ևս ապրիլ, տակաւին ունէի գործ առ 'ի կատարել վասն ազգին իմոյ“։ Եւ կատարէր իսկ ճշդիւ զտակաւ եթէ չէր օրհասին այսպէս յանակնկալս հասեալ զթել ցանկալի կենաց նորա։

Օհանգուցեալ ծնողին իմոյ զգրաւոր երկասիրութիւնս և զպատուական նշխարս հաւաքածոյից տալ 'ի լոյս՝ հարկ սրբազան կայ 'ի վերայ իմ, որպէս 'ի վերոյն ասացի. այլ եթէ պատճառք անակնկալք խոչ, և խուրթ յարուցեալ խափանիցին զիս 'ի կատարելոյ զեմն խոստումն, յայնժամ զնուիրականդ զայդ պարտս կատակեմ որդւոց իմոց, թոռանց ծերունւոյն Մսերայ, զի զոր անձեռնհաս գտաք մեք հայր և որդի կատարել, նոքա զնոյն կատարեսցեն անխափան։

Բանք ինչ և զառաջիկայս երկասիրութենէ։

„Պատմութիւն Կաթողիկոսաց Էջմիածնի 'ի Աիմէոնէ մինչ ցՄատթէոս (1763—1860)“ ունէր լինել տառաջիկայս երկասիրութեան մակագիր, եթէ չէին կարճեալ աւուրք ալէղարդ Մագիսարոսին, որպէս ասացաւն։ Բանզի կային առ ձեռն պատրաստ կարևոր նիւթք և ծանօ-

թութիւնք 'ի նկարագրութիւն անցիցն անցելոց յաւուրս կաթողիկոսացն Յովհաննու Ը-երորդի և Դերսխի Դ-երորդի (1831—1856), որք ոչ այլ իմիք՝ բայց կարգաւորելոյ և եթ մնային։ Այլ զարդիս շատացեալ ասալ 'ի լոյս զառաջիկայս պատմութիւն, հասեալ մինչև ցօծումն Յովհաննու Կաթողիկոսի (1831), որպէս գործ լրացեալ, թողում այլով պատեհաւ հրատարակել և զմնացորդն գործոյս, որ են պատմական տեղեկութիւնք յաւուրս յիշատակեալ Հայրապետին Յովհաննու և երջանկայիշատակ Դերսխի Կաթողիկոսի։

Զառաջիկայս հրատարակութիւն „Պատմութեան Կաթողիկոսաց Էջմիածնի 'ի Միմեոնէ մինչ ցՅովհաննէս“ ասամ 'ի լոյս ըստ ձեռագրին՝ որ գաղափարեալն էր 'ի 1829—1831 ամին, մասամբ յԷջմիածին, և մասամբ 'ի Տփղիս։ Բաց յայսմանէ ունէի առաջք իմ այլ ևս երկուս ձեռագիրս, յորս ընդարձակագոյն ևս կային պատմեալ Կաթողիկոսութիւնք Պանիէլի, Պաւթի, Եփրեմի, ևս և գործք Դերսխի (յեպիսկոպոսութեանն ժամանակի) և այլն. զորս ես զեռեղեցի 'ի կարգի պատմութեանն ըստ պատշաճի։ Յիշատակեալքդ այդ կրկին ձեռագիրք, որպէս յայտ իսկ է ինձ, գտեալ են 'ի Թիֆլիս՝ 'ի բերանոյ նորին իսկ երջանկայիշատակ Հայրապետին Դերսխի (յառաջնորդութեան նորա 'ի Խաստաբաբիա), և 'ի բերանոյ Աէֆնազարեան Թադէոս եպիսկոպոսի ('ի ժամանակի վարդապետութեան նորա), որք ականատես գտեալ բազմադիմի անցից և գործոց, քաջահմուտք էին և բազմ ինչ իրո-

ղութեանց։ Ուստի և զառաջիկայս երկասիրութիւն՝ թէ համարիցեմք մասամբ իմն արձագանգս երջանկայիշատակ Հայրապետին Ներսիսի, կարծեմ թէ ոչ վրիպեմք։

Ի կարգի ծանօթութեանց և յաւելուածոց այսր տպագրութեան դասեցի ինչ ինչ տեղեկութիւնս արժանիս ուշադրութեան, զորս գտեալ էի ի մատենադարանի ծնողին իմոյ. որք անշուշտ մուծեալ լինէին յայս երկասիրութիւն եթէ միանգամ և եթ գոնեա յակն արկեալ էր նորա զայս գործ իւր, որ ի ցաւ մերս. սրտի հրատարակի աւասիկ առանց որևիցէ սրբագրութեան, այլ ճշդիւ այնպէս՝ որպէս ելեալն էր զառաջինն ի նորին գրչէ։

Պակասակարգութիւնք պատմութեանս թէպէտ անփոփոխ ըստ մեծի մասին պահեցան, սակայն բովանդակութիւնքն, բաց յառաջին գլխոյն, յինէն են յաւելեալ։

Ի վերջ մատենիս յաւելի և զայլ երկու երկասիրութիւնս ծնողիս, այն է՝ ա. „Աշխարհագրական և պատմական քննութիւնք ի վերայ Աթոռոյն Էջմիածնի, յորինեալ ի ձև հարցման և պատասխանւոյ“, և բ. „Դանօթութիւնք զերաւանց, զպատուոյ և զեշխանութենէ Նայրագոյն Պատրիարգին Հայոց որ ի Ս. Էջմիածին“։

Հարմայրք Մոելեանց։

Ի 29 Մարտի 1874 ամի ի Մոսկուա։

ՑԱՆԿ

ԷՋԴ։

ՑԱՆԿ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԷՋՄԻԱԾՆԻ

ԳԼ· Ա· Կոնստանդնուպոլսոյ Սիմէոնի (1763—1780)· Ընտրութիւն Սիմէոնի 'ի կաթողիկոսութիւն։ — Աբրահամ վարդապետ Ատանայեցի և փոփոխութիւն Պատրիարքաց 'ի Կ· Պոլիս։ — Ազգօգուտ գործք Սիմէոնի 'ի պայծառութիւն Ս· Աթոռոյ Էջմիածնի։ — Հրովարտակ կայսերուհւոյն Ռուսաց Եկատերինեայ Բ·ի։ — Մահ Սիմէոնի։ ..... Էջ· 1·

ԳԼ· Բ· Կոստանդնուպոլսոյ Ղուկասու (1780—1799)· Ժողով Էջմիածին վասն ընտրութեան Ղուկասու։—Գաղտնի հնարագիտութիւնք Սահակ և Մկրտիչ եպիսկոպոսաց։ — Պատճառ չիշատակելոյն 'ի սկզբան անուան Ղուկասու յեկեղեցիս Հայոց Օսմանեան Ցէրութեան։— Զաքարիա Պատրիարք Կ· Պոլսոյ։ - Առաքումն նուիրակաց։ — Կատարումն խորհրդոյ պատկին յաւուրս Աղուհացից։ — Կարգադրութիւն յաղագս թուոյ անդամոց Միւնհոդոսի։ — Շահեցաւ ինչ ազգ Հայոց 'ի Հայրապետութենէ Ղուկասու։ -- Հրովարտակ կայսեր Ռուսաց։ -- Մահ և թաղումն Ղուկասու։ ..... 5·

ԳԼ· Գ· Ընդրութիւն Դանիէլի 'ի Կոստանդնուպոլսոյ (1799—1800)· Ժողով Էջմիածին վասն ընտրութեան կաթողիկոսի։—Ընտրութիւն Դանիէլի՝ պատրիարքի Կ· Պոլսոյ՝ 'ի կաթողիկոսութիւն։ — Առաքումն Դաւթի եպիսկոպոսի հրաւիրակ 'ի Կ· Պոլիս։ — Ջանք վասն ընտրութեան 'ի կաթողիկոսութիւն զՅովսէփ եպիսկոպոս Արղութեանց։ - Ժողով 'ի Կ· Պոլիս վասն ընտրութեան կաթողիկոսի և պատրիարքի։ .. .. 14·

ԳԼ· Դ· Գալուստ Նուիրակի (1800)· Հասանել Գալուստ Նուիրակի 'ի Կ· Պոլիս։ - Ընտրութիւն՝ նախ Բարդուղիմէոս եպիսկոպոսի, և ապա՝ Դաւթի եպիսկոպոսի 'ի Պատրիարքութիւն Կ· Պոլսոյ։—Նոր ջանք Յովսէփ եպիսկոպոսի 'ի կաթողիկոսութիւն։ — Խռովութիւն, որ եղև 'ի ժողովրդեան Կ· Պոլսոյ պատճառաւ Գալուստ Նուիրակի։ ..... 19·

ԳԼ. Ե. Պատրիարքութիւն Յովհաննու Զամաշչեան (1800—1801). Վարիլ յաքսորս Դանիէլ և Գալուստ եպիսկոպոսաց։ — Ընտրութիւն Յովհաննու Զամաշչեան ի պատրիարքութիւն Կ. Պոլսոյ։ — Հանել սորա յԱրքունուստ զՀրովարտակ հաստատութեան Յովսէփայ ի կաթողիկոսութիւն, և յիշատակումն անուան նորա ի պատարագի։ — Գնալն Դաւթի հրովարտակաւ յԷջմիածին։ — Փախուցանելն Յովհաննէս եպիսկոպոսի զԳեղարդն։ — Ազատութիւն ի բանտէ Դանիէլի և Գալուստ Նուիրակի։ — Նշանակիլն առաջնոյն Առաջնորդ Եւդոկիոյ և գնալն երկրորդին ի կողմանս Նիկոմիդեայ։ ..... 29.

ԳԼ. Զ. Յովսէփ Եպիսկոպոս Արղութեանց (1801). Հաստատութիւն Յովսէփ եպիսկոպոսի Արղութեանց ի կաթողիկոսութիւն։ — Ճանապարհորդութիւն Յովսէփայ։ — Հասանել նորա ի Տփխիս, հիւանդանալն և մահն։ — Հրաւիրակքն Էջմիածնի և հնարագիտութիւնք Գրիգոր վարդապետի։ ..... 32.

ԳԼ. Է. Կաթողիկոս Դանիէլ Ա Դաւիթ (1801). Երկրորդ անգամ ընտրութիւն Դանիէլի ի կաթողիկոսութիւն։ — Առաքումն Նուիրակաց առ Դանիէլ։ — Ջանք Դաւթի ի յափշտակել ի ձեռաց Դանիէլի զԱթոռն։ — Օծումն Դաւթի ի կաթողիկոսութիւն։ — Աղմուկք և տարաձայնութիւնք ընդ ամենայն տեղիս, և ջանք Դաւթի վաւերացուցանել զկաթողիկոսութիւն իւր։ ..... 36.

ԳԼ. Ը. Եփրեմ Եպիսկոպոս Առաքելոյ Ռուսոյ (1801—1802). Երկիւղ Եփրեմայ ի Գրիգոր վարդապետէ Աղքիրմանցւոյ։ — Ջանք Եփրեմայ գնալ ի Մոսկուա վասն ներկայ լինելոյ օծման Թառանգին կայսերութեան Ռուսաց և վասն ապօրէն ցուցանելոյ զկաթողիկոսութիւն Դաւթի։ — Հաստատութիւն Եփրեմայ յԱռաջնորդութեան Հայոց ի Ռուսիայ։ — Հաստատութիւն Դանիէլի ի կաթողիկոսութիւն։ — Մերժել Միաբանից Էջմիածնի զկաթողիկոսութիւն Դաւթի։ — Օծումն Դանիէլի։ — Քաղուած Սին հոգոսական վճռոյն։ 45.

ԳԼ. Թ. Նեղէին արհամարէր Ամոսոյն Հայրապետական (1802—1805). Ժողով գումարեալ ի Դաւթէ և կողմնակալք նորա։ — Գալ Դանիէլի յԷջմիածին։ — Ջանք Յովհաննէս եպիսկոպոսի ի գործ դնել զզօրութիւն Հրովարտակին Դանիէլի։ — Դանիէլ և Դաւթի կաթողիկոսք յԵրևան առ Խանն Պարսից։ — Կրկին զօրանալ

Դաւթի։ — Մեկնիլ Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսաց ԷՉ·
յԷջմիածնէ։ — Արգելումն Դանիէլի 'ի խաւարշտին
սենեկի և գերծումն մօրուաց նորա։ — Յարձակումն
զօրաց Ռուսաց 'ի վերայ Երևանու։ — Աքսորումն
Դանիէլի 'ի Մարաղայ։ — Թուղթ Դանիէլի 'ի Մա-
ռաղայէ։ ..... 55·

ԳԼ· Ժ· Կաթողիկոսութիւն Դանիէլ (1806—1809)· Փոխոխու-
թիւն խանից յԵրևան։ — Ազատումն Դանիէլի և դարձ
նորա յԵրևան։ — Դաւիթ կաթողիկոս 'ի Ծուփս։ —
Դանիէլ և Դաւիթ առաջի Սարտարին։ — Դանիէլ ճա-
նաչի օրինաւոր կաթողիկոս Հայոց։ — Հանդիսաւոր
մուտ Դանիէլի յԷջմիածին։ — Դարձ Ներսիսի յԷջմի-
ածին։ — Հիւանդութիւն Դանիէլի և գերծումն մ-
ռուաց Դաւթի։ — Մահ և թաղումն Դանիէլի։ ..... 66·

ԳԼ· ԺԱ· Կաթողիկոսութիւն Եփրեմայ (1809—1827)· Ընտրու-
թիւն Եփրեմայ 'ի կաթողիկոսութիւն։ — Գործակցու-
թիւն Ներսէս եպիսկոպոսի։ — Մահ Դաւթի։ — Ան-
դորրութիւն Աթոռոյն։ — Նուիրակութիւն։ — Շրջա-
գայութիւն Եփրեմայ և փախուստ նորա 'ի Տփխիս։ —
Վճարումն պարտուց։ — Վիճակ Աթոռոյն զկնի մեկնե-
լոյն Եփրեմայ։ ..... 76·

ԳԼ· ԺԲ· Պատերազմ Ռուսաց ընդ Պարսից (1826—1827)· Սկզ-
բնական պատճառ պատերազմին Ռուսաց ընդ Պար-
սից։ — Զօրավարքն՝ Մատաթով, Բենկենդորֆ և Պա-
սկևիչ և Մեծ Արհին Ներսէս։ — Քաջութիւնք Ռու-
սաց։ — Պաշարումն և առումն Սարտարապատայ և Ե-
րևանայ 'ի ձեռաց Պարսից։ ..... 87·

ԳԼ· ԺԳ· Դաշնադրութիւն Ռուսաց ընդ Պարսից (1827)· Կոչումն
Հազարապետին Ղազարոսի Լազարեան 'ի Պետերբուր-
գայ։ — Գալ Պասկևիչի և Ղազարոսի Լազարեան 'ի
Դաւրէժ։ — Ուրախութիւն Հայոց։ — Պայմանք դաշնա-
դրութեան 'ի Տէյկարկան։ — Հանդէս զինաշարժու-
թեան զօրացն Ռուսաց։ ..... 103·

ԳԼ· ԺԴ· Արհիեպիսկոպոսն Ներսէս և ընդ-պէտն Կրասովսկի (1827—
1828)· Յանձնումն կառավարութեան Էջմիածնի, Սար-
տարապատայ, Երևանայ և այլն զօրավարին Կրասո-
վսկեայ և արհիեպիսկոպոսին Ներսիսի։ — Ջանք Ներ-
սիսի 'ի ճոխազարդել բարեվայելուչ կարգաք զԱթոռն
հայոցն Հայաստանեայց, զեկեղեցիս, զվանորայս,
և այլն։ — Հանդէս ջերմեռնութեան՝ որ կատարեաց Ներ-
սէս եպիսկոպոս յԵրևան։ ..... 110·

ԳԼ. ԺԵ. Գաղթականութիւն Հայոց և փոխադրութիւն Ներսիսի Էջ. (1828). Առաքելն Ներսիսի զբարոզիչս առ 'ի յորդորել զՀայկազուն բնակիչս Պարսկաստանի 'ի չուել կամ հիւք և կարասեաք 'ի բնիկ Հայրենիս իւրեանց յերկիրն Արարատայ։ — Ցօժարամտութիւն Հայոց 'ի գաղթականութիւն։ — Զու գաղթականաց և չարանալ Պարսից։ — Փոխադրութիւն Ներսիսի։ ..... 116.

ԳԼ. ԺԶ. Հրաժեշտ Եփրեմայ և ընդդունութիւն Յովհաննու (1828 — 1831). Դարձ Եփրեմ կաթողիկոսի յԷջմիածին։ — Անդորրութիւն Ս. Աթոռոյն։ — Թուղթ Եփրեմայ առ կայսրն Ռուսաց և ջանք նորա վասն դարձուցանելոյ զՆերսէս յԷջմիածին նպատակաւ յանձնելոյ նմա զԱթոռն Հայրապետական։ — Հրաժեշտ Եփրեմայ 'ի կաթողիկոսութենէ։ — Ընտրութիւն Յովհաննու 'ի կաթողիկոսութիւն։ — Ժողով յԷջմիածին։ — Կողմնակալք Ներսիսի։ — Յարութիւն վարդապետ Ալամդարեան։ — Հաստատութիւն Յովհաննիսի 'ի կաթողիկոսութիւն և օծումն նորա։ — Դարձ Էլիմիրզեանի յԷջմիածին։ — Մահ Եփրեմ կաթողիկոսի։ ..... 129.

ԿՈՆԴԱԿՔ, ՀՐՈՎԱՐՏԱԿՔ, ԵՒ ԱՑԼՆ։

Ա. Կոնդակ Սիմէօն կաթողիկոսի առ Պղատոն արքեպիսկոպոսն Մոսկովու։ — Պատասխանի Պղատոն արքեպիսկոպոսին Մոսկովու առ Սիմէօն կաթողիկոս։ .. .. 155.

Բ. Հրովարտակ Եկատարինեայ Բ. կայսերուհւոյն Ռուսաց առ Պատրիարքն Սիմէօն։ ..... 161.

Գ. Հրովարտակ Պօղոսի Ա. կայսեր Ռուսաց առ Պատրիարքն Ղուկաս։ ..... 163.

Դ. Հրովարտակ Պօղոսի Ա. կայսեր Ռուսաց առ Պատրիարքն Յովսէփ։ ..... 166.

Ե. Օրինակ գրոյն կայսեր Ռուսաց Պօղոսի առ Յովսէփ Պատրիարք Հայոց։ — Օրինակ թղթոյն կայսեր Ռուսաց Պօղոսի առ Արքայ Վրաց և կախէթու Գէորգ Հերակլեան։ 169.

Զ. Հրովարտակ կայսեր Ռուսաց Աղեքսանդրի Ա. առ Պատրիարքն Դանիէլ։ ..... 171.

Է. Հրովարտակ կայսեր Ռուսաց Աղեքսանդրի Ա. առ Պատրիարքն Եփրեմ։ ..... 174.

Ը. Թարգմանութիւն յօդուածոյն Հէնրի Մարտին Անգղիացի կրօնաւորի ընդ վերնագրովս. „Անցք 'ի Ս. Էջմիածին յամին 1812 'ի 12 ամսեանն Սեպտեմբերի“։ ..... 176.

Թ· Օրէնակ առաջարկութեան եղելոյ 'ի կողմանէ Ժողովոյն Էջմիածնի առ Հայկազնեայ իշխանան Կ· Պոլսոյ։—Պատասխանի Քօլեան Աբրահամ Պատրիարքի Կ· Պոլսոյ յՅէն Մայիսի 1814 ամի։ . . . . . 182·

Ժ· Օրէնակ հրաժարականին Եփրեմ կաթողիկոսի մատուցելոյ 'ի Շուշի։—Նամակ Եփրեմ կաթողիկոսի առ կայսրն Ռուսաց Աղեքսանդր Ա։ . . . . . 185·

ԺԱ· Օրէնակ՝ Ազգարարութեանն առ Հայս։—Բ· Առաջագրութեան Հայոց նոր սարքվող զօրքի համար։—Գ· Ցուցակի անուանց Հայոց զինուորաց 1827 ամի։ . . . . . 192·

ԺԲ· Բան գովեստի շնորհաւորութեան, ասացեալ 'ի Մուրայ դպրէ։ . . . . . 201·

ԺԳ· Պատճէն նամակի Եփրեմ կաթողիկոսի առ կայսրն Նիկողայոս։—Պատասխանի կայսեր Ռուսաց Նիկողայոսի Ա։ 204·

ԺԴ· Պատճէն նամակի Եփրեմ կաթողիկոսի առ կոմն Պասկեվիչ։ 211·

ԺԵ· Պատճէն կոնդակի Եփրեմ կաթողիկոսի առ Արքեպիսկոպոսն Ներսէս։ . . . . . 215·

ԺԶ· Օրէնակ Հրաժարականին Եփրեմ կաթողիկոսի մատուցելոյ Սիւնհոդոսին։ . . . . . 216·

ԺԷ· Հրովարտակ կայսեր Ռուսաց Նիկողայոսի Ա· առ Պատրիարքն Եփրեմ։ . . . . . 221·

ԺԸ· Հրովարտակ կայսեր Ռուսաց Նիկողայոսի Ա· առ Պատրիարքն Յովհաննէս։ . . . . . 224·

ԺԹ· Հրովարտակ կայսեր Ռուսաց Նիկողայոսի Ա· առ Պատրիարքն Եփրեմ։ . . . . . 225·

Ի· Պատճէն կոնդակի Յովհաննէս կաթողիկոսի առ վիճակաւոր առաջնորդն Բեսարաբիոյ արքեպիսկոպոսն Ներսէս։ 226·

ԻԱ· Օրէնակ կոնդակի Եփրեմ կաթողիկոսի գրեալ առ Հասարակութիւնն Հայոց Կ· Պոլսի։ . . . . . 232·

ՑԱՒԵԼՈՒԱԾՔ

Ա· Աշխարհագրական և Պատմական Տեղեկութիւն 'ի վերայ Աթոռոյն Էջմիածնի, յօրինեալ 'ի ձեռ հարցման և պատասխանւոյ։ . . . . . 239·

Բ· Ծանօթութիւն զիրաւանց, զպատուոյ և զիշխանութենէ Ծայրագոյն Պատրիարքին Հայոց՝ որ 'ի Ս· Էջմիածին։ 277·

. „Պատմեցէք որդւոց ձերոց, և որդիք ձեր որդւոց
իւրեանց, և նոքա դարձեալ յազգ յայլ“։

Յովել. ՚՚ 3.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի ՍԻՄԷՈՆԻ ՄԻՆՉ ՑՑՈՎՀԱՆՆԷՍ Ը.

ԳԼ. Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՍԻՄԷՈՆԻ

1763—1780

Ընդ-ունի-ն Սիմէոնի 'ի կ-ի-ոլիկոս-ունի-ն։ — Աբրահամ վարդապետ Ատրապատեցի և քահանա-ունի-ն Պարսկաստ-ց 'ի կ. Պոլիս։ — Աղէքսանդր քորեպ։ Սիմէոնի 'ի պայծառա-ունի-ն Ս. Անանա-ոյ Էջմիածնի։ — Հրավարակ Կայսերական-ոյն Ռուսաց Եկատերինայ Բ-ի։ — Մահ Սիմէոնի։

Յետ վախճանի Յակոբայ Կաթողիկոսի Հ. ամախեցւոյ (յամին 1763)՝ միաբանք Էջմիածնի հնգիցս ժողովեալ 'ի խորհուրդ ընտրութեան նորոյ Հայրապետի, հուսկ ուրեմն որոշեցին զՍիմէոն վարդապետ Երևանեցի. ընդ որ հաճեցան ապա և Յակոբ պատրիարք Կոստանդնուպօլսի և այլք։

'Ի նոյն աւուրս (1764) լցեալ էր ժամանակ Առաջնորդութեան Աբրահամ վարդապետի Աստապատեցւոյ 'ի Օմիւռնիա. ուստի հարկ էր նմա դառնալ յԷջմիածին։ Այլ զի չկամէր նա զայս, զրեաց առ Սիմէոն Կաթողիկոս՝ հաստատել զինքն 'ի Կոստանդնուպօլիս փոխանորդ Էջմիածնի. իսկ նա թէպէտև հաճեցաւ ընդ այն, այլ ակն ածելով 'ի Յակոբ պատրիարքէ՝ պատասխանեաց համբերել առ ժամանակ մի։

Եւ եղև իբրև հրաժարեցաւ Յակոբ 'ի պատրիարքութենէ պատճառաւ հիւանդութեանն (1764, Մայիս 13), և եղաւ 'ի տեղի նորա Գրիգոր վարդապետ Կոստանդնուպոլսեցի Պասմաճեան ասացեալ, Աբրահամ վարդապետ՝ որ 'ի Զմիւռնիոյ գնացեալ էր 'ի Կոստանդնուպոլիս, սկիզբն արար թեկն ածել զփոխանորդութեան, կամակից իւր ունելով զարևելեան Հայս՝ որք գտանէին անդր. որոյ վասն հարկ եղև Գրիգոր պատրիարքի ժողով առնել իշխանաց, որք առիթ խռովութեան համարեալ զձկտումն Աբրահամու՝ առաջապրեցին նմա գնալ Էջմիածին. և 'ի չանսալ նորա և յերկարն մնալ պատճառանօք պէսպէս իրաց, արքունի հրամանաւ արտաքսեցին զնա 'ի քաղաքէն։

Սիմէօն Կաթողիկոս՝ բաց 'ի բազմաց բարի գործոց[1], փոյթ կալաւ նաև 'ի նորոգ կարգաւորութիւն մուծանել զՏօնացոյց եկեղեցւոյն մերոյ (1777, Յունվ. 2)՝ տրոհեալ զայն յերկուս մասունս. կառոյց Էջմիածին զվար-

[1] Այն է՝ շինեաց նա զբոլոր պարիսպս սրբոյ Աթոռոյ Էջմիածնի շուրջանակի ամուր և հաստատուն բրքօք և դիտանոցօք։ 'Ի մէջ առեալ զամենայն անասնատունս և զայլն ամենայն պարագայիւքն իւրեանց, շինեաց նորապէս 'ի կողմն արևելից ներ պարսպին համաժողով և մերձ իրերաց, և արար յամենից կուսէ անահ և ապահով։ Շինեաց ընդ նմին և զամուրն Սեղանատունն վերստին տաշեալ քարիւ և կամարօք վայելչագոյն քան զառաջինն, որ մերձ էր 'ի փլանիլ։ Շինեաց զմոմատունսն և զդպրատունսն ձմռան և ամռան յատուկ յատուկ պարսպօք 'ի հիւսիսակողմն յետ կոյս խցից միաբանիցն յարմար ըստ տեղւոյն և ըստ շինուածոյն։ Շինեաց և 'ի ներս 'ի վեհարանոջն զգեղեցիկ դարպաս մի երկատամբք 'ի հարաւակոյսն. ետ հանել զքանքանս 'ի մէջ ներսի պարսպի, զշրջագայիւք սրբոյ Եկեղեցւոյն, և զառաջօք միաբանից խցիցն և այլոց շինուածոցն, և տարեալ խառնեաց 'ի քանքան Փիլիպպոս Կաթողիկոսին։ Վերանորոգեալ շինեաց նոր 'ի նորոյ և զբոլոր տանիսն սրբոյ Ցաճարին, գեղեցիկ և տաշեալ քարիւք, և բացեալ զառաստաղ երկուց խորանացն, նոր 'ի նորոյ շինեաց երկտամբ 'ի պիտանաւորութիւնս յա-

ժալան ուսման, և զտպագրատուն՝[2] արդեամբք Գրիգորի Խոջայանեան Ղաքիկեանց բնակելոյ 'ի Հնդիկս՝ յաւել ապա շինել և արտաքոյ պարսպի Աթոռոյն զգործարան թղթոյ ծանր ծախուք, և ջան եղ ծաղկեցուցանել զթղթագործութիւն՝ ածեալ 'ի հեռաւոր վայրաց զհեղինակս և զգործիս այնր արուեստի։ Եւ զի էր սա այր նախանձախնդիր ուսման, շարագրեաց և ինչ ինչ յիւրմէ, յորոց և զմանս 'ի լոյս ած տպագրութեամբ, բայց ոչ բանից նորա անյարդար։ Գրեաց նաև թուղթ

մենայնի։ Շինեաց 'ի ներս Հայրապետարանին 'ի յարևմտակողմն 'ի վերոյ մեծ բրգոյն գդարպաս մի գեղեցիկ 'ի հովանոց ամռան, և 'ի դիտանոց բոլոր 'ի դաշտին։ 'Ի ներս Հայրապետարանին՝ 'ի հիւսիսոյ կուսէ 'ի քնարվանսարայն գվեց գաղաշափ տեղիս էարկ 'ի ներս՝ և շինեաց զտասն տունս 'ի լայնութիւն և յարձակութիւն ձմռատանցն և 'ի պիտանաւորութիւն այլոց իրաց։ Եւ յետ կուսէ պարսպեալ ամրացոյց հաստատագոյն պարսպաւ։ Նոյնպէս և զքնարվանսարայն, որ յամենայնի փլիլեալ և աւերեալ էր, և կարի անվայել և տգեղ, շինեալ զամենայն յօտայս վերանորոգեաց յամենայնի պարագայիւք գեղեցիկ և պատշաճաւոր ձևով։ Շինեաց 'ի Ղրի այգւոջն գհնձանն գեղեցիկ հանդերձ կից շինուածովք, իւրովք, և արար զմեծ այգի մի՝ որպէս զՂրի այգին։ Ցեռ զայսմ ամենայնէ 'ի „Ջամբռ“ մատենի, տպելոյ 'ի Վաղարշապատ յամին 1873։ Ծանօթ. Զաբմայրայ Մաբբեանց։

[2] 'Ի ճակատու դրան տպագրատան գրեալ կայր. „Ատուածով հաստատեցաւ տպագրատունս նոր 'ի նորոյ 'ի սուրբ Աթոռս Էջմիածին ամենայն պարագայիւքն հոգաբարձութեամբ Տեառն Սիմէոն Կաթողիկոսին Երևանցւոյ արդեամբ Ջուղայեցի 'ի Հինդ բնակեալ բարեպաշտոն Գրիգոր աղային Խօջայանեան՝ որ մականուամբ Ղաքիկենց կոչի, 'ի յիշատակ իւրեան և իւր 'ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն Միքայէլին և Մամա խաթունին, իւր կենակից մատուցային, և վաղաթառամ Միքայէլ որդւոյն, և քերցն Անամարիային և Զիպիտային, հօրեղբարցն Եղիազարին և Աղեքսանդրին, պապուն Գրիգորին և կենակից թագուհւոյն և հօրաքեռն Զիժազատային և մեծ պապուն Յակոբջանին. հօրեղբօր դստերցն Բէկզատային, Գիւլնազարին, այլև ամենայն հին և նոր ննջեցելոցն նորին, այսու պայմանաւ՝ զի 'ի տարին ՃԽԱ անգամ 'ի տօնի Լուսաւորչին և Հրեշտակապետացն 'ի սուրբ Աթոռոջս պատարագ մատչիցի հանգիստաւորութեամբ յիշելով զնսա, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի“։

սիրոյ առ Պղատոն՝ երևելի Մետրապօլիտն Մոսկովու, և ընկալաւ 'ի նմանէ զպատասխանին[3]։

Ընդ սա Պայսերուհին Ռուսաց Եկատարինէ Ա· առաքեաց Հրովարտակ[4], յորում խոստանայր զԱթոռն և զազգն Հայոց ունել ընդ հովանեաւ Պայսերական ողորմութեան իւրոյ։ Այս Հրովարտակ յիշատակի և 'ի Հրովարտակին, 'որ տուաւ Դանիէլ Կաթողիկոսի յԱղեքսանդր Պայսերէ, զորոյ զթարգմանութիւնն ունիս տեսանել 'ի վախճան մատենիս։

Յաւուրս Սիմէոնի Աթոռն Էջմիածնի՝ թէև ընդ իշխանութեամբ բարբարոսացն Պարսից՝ այլ կայր ըստ մարթելոյ ժամանակին 'ի բարեկարգութեան, և ոչ սակաւ ծաղկէին 'ի նմա արք իմաստունք և արդիւնաւորք, յորս անուանիքն են՝ Սահակ Եպիսկոպոս Աղուանից· Մինաս եպիսկոպոս կոյր· Պետրոս եպիսկոպոս Աղամալեան կամ Փիրթումեան՝ մատենագիր բազմահմուտ, և այլք։ Այլ 'ի վախճանիլ ազգասէր Հայրապետիս՝ վախճան առին և ամենայն կարգք լաւութեան և ուղղութեան հոգևոր պաշտօնէից և գործոց 'ի նմա, որպէս տեսցի 'ի ստորև։

Եկաց Սիմէոն 'ի Կաթողիկոսութեան ամս եօթնևտասն։

---

[3] Զկոնդակն գտցես 'ի վախճան մատենիս (Ա)։

[4] Զօրինակ թարգմանութեան Հրովարտակիս գտցես 'ի վախճան մատենիս (Բ)։

ԳԼ. Ի.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ

1780—1799

Ժողով յԷջմիածին վասն ընտրութեան Ղուկասու։ — Գալոյն հնարքին-պարութեան Սահակ Ե Մկրտիչ եպիսկոպոսաց։ Պատճառ չյիշատակելոյն ի գրեանս անուան Ղուկասու։ յեկեղեցի Հայոց Օսմանեան Ցեղութեան։— Զատրիս պարիսպ Կ. Պոլսոյ։ Առաջնոյն նոյիրակաց։ — Կարգութեան իսրհրդոյ պակին յաստուս Աղուհոցից։ Կարգադրութեան յաղագս նոցա անդամոց Սէնհոդոսի։ — Շահեցաւ ինչ ազգս Հայոց ի Հայաստանեայս Ղուկասու։ — Հրամարդակ կոյսեր Ռոսաց։ — Մահ Ե նորոցն Ղուկասու։

Յետ վախճանի (1780) Միմէոն Կաթողիկոսի (որ եղև յաւուր Վարդավառի), Սահակ եպիսկոպոս Գեղամացի, որ էր խորհրդական՝ գրագիր և իրր գործակից նորա, կոչեալ զՂուկաս եպիսկոպոս Կարնեցի, որ նորոգ եկեալ էր ի Յմիւռնիոյ, ետ համբուրել զաջն Միմէոնի ի մէջ տաճարին՝ ուր եղեալ էր դիակն, և եղեալ զմատանին Կաթողիկոսական ի մատն նորա՝ ասէ. „Հնորհաւորեմ քեզ զիշխանութիւն սորա“։ Եւ այս եղև մինչ դեռ առանձին էին նոքա ի տաճարին, և չգոյր ոք ի միաբանից անդ։ Այսպա հաճեցուցեալ առանձինն և զկամս սիրելւոյն իւրոյ Մկրտիչ եպիսկոպոսի Տեղապահի առայն, ի լինել Ժողովոյ[5] յետ աւուրց երից ի տան կաթողիկոսարանի վասն ընտրութեան նորոյ Հայրապետի, երկոքին նոքա Սահակ և Մկրտիչ՝ եղեալ էին ի մտի ընտրել զՂուկաս. բայց կամելով ևս զի հաւանու-

[5] Գումարումն Ժողովոյ վասն ընտրութեան նորոյ Հայրապետի՝ ըստ այնր ժամանակի սովորութեան լինէր յԷջմիածին յեպիսկոպոսաց և ի վարդապետաց անդ գտեալոց, և ոչ ոք յաշխարհականաց դասուէ գտանէր ի նմա։

թեամբ ժողովոյն լեցի այն, բարուք համարեցան՝ զա-
ռաջին նուագն հրաւիրել զայլս ոմանս յեպիսկոպոսաց՝
որք յառաջաւորքն էին [6]: Ուստի Սահակ եպիսկոպոս
յետ խօսելոյ բանս ինչ 'ի ժողովի անդ՝ հրաւիրեաց նախ
զՄ՝կրտիչ եպիսկոպոս Տեղապահ, և 'ի հրաժարել նորա՝
հրաւիրեցին զայլս· բայց ոչ ոք կարաց յայնժամ ցու-
ցանել զհաճութիւն, զի ամենեքին նոքա տեսանելով՝
թէ որ երևելագոյնն էր 'ի միջի իւրեանց՝ հրաժարեցաւ,
ինքեանք ևս՝ ակնածելով իմն անբաւական զանձինս
ցուցին այնմ դերագոյն պաշտօնի՝ զմեծ վասն քաղաքա-
վարութեան: Յայնժամ առիթ պատեհաւոր համարեալ
Սահակայ եպիսկոպոսի զայնօրինակ հրաժարումն նոցա,
ասաց· „Որովհետև այդպէս, ես արժանաւոր դատիմ այսմ
պաշտաման զնորին հոգևոր եղբայր մեր զՊ՝ուկաս եպիս-
կոպոս· համաձայնիք և դուք այսմ“: Եւ 'ի լսելն յո-
մանց 'ի նոցանէ՝ թէ արժան է, անդէն յոտն կացեալ
և զաջն համբուրեալ զՊ՝ուկասու՝ ասէ· „Կեցցէ՞ Հոգևոր
Տէր մեր Պ՝ուկաս Կաթողիկոս“: Ընդսպիսի եղև ընտ-
րութիւն Պ՝ուկասու: Եւ օծաւ նա յետ աւուրց ութից
անցանելոյ 'ի մահուանէն Միմէօնի:

Պատճառ միաբանելոյն Սահակայ և Մ՝կրտչի զընտ-
րութիւն Պ՝ուկասու՝ այն էր, զի կասկածէին զՊ՝ալուստ
եպիսկոպոսէ Դերսիսեան, որ երևէր թէ բռնաբար և
անձնընծայութեամբ իմն ձկտի յաջորդել Միմէօնի· ըստ
որում Ընթռակալ գոլով նա յայնժամ՝ ամաչպարեալ
էր տալ բերել զերիս հարիւր ձիաւորս 'ի Թեսաղարաց

[6] Յաւուրսն յայնոսիկ երևելիքն յեպիսկոպոսունս Էջմիածնի՝ էին
Գրիգոր Լուսարար, Պետրոս Աղամալեան գիտնական, Մինաս՝ որոյ
յետոյ լուսնաւորեցան աչք, Ղուկիանոս, Գէորգ Կոստանդնուպոլսե-
ցի, Յովակիմ Ցաթևացի՝ Պոպ կոչեցեալ:

Պօրչալուի, իբրև թէ 'ի պահպանութիւն վանացն Էջմիածնի։ Բայց գիտելով Սահակայ և Մկրտչի զգաղտնի դիտումն նորա, փութացան և ինքեանք ածել յԷրևան զԳեղարքունեցի երիտասարդս՝ իբրև երկերիւր, զոբրս և գաղտագողի մուծին 'ի ներքս 'ի վանն 'ի տեղին կոչեցեալ Ներսի Պ՝ազարապատ. որպէս զի եթէ երևեսցի ինչ նշան բռնանալոյ Պալուստի՝ կարողասցին զդէմ ունել նմա և խափանել զչարն։ Եթէպէտև այսօրինակ նախահոգութիւնք երկոցունց կողմանց՝ գուշակ էին շփոթութեան իմիք ծագելոյ, բայց խաղաղութեամբ վճարեցան իրքն, որովհետև խոհական հնարագիտութիւն երկոցունց միաբանելոյն Սահակայ և Մկրտչի՝ գիտաց և զայլն յանկուցանել 'ի հաւանութիւն ընտրութեան Պ՝ուկասու, յորմէ և Պալուստի չգտաւ ինչ առիթ ձիկ հանելոյ կամ զբրտին մերկանալոյ զգաղտնիս։

Զնուն Պ՝ուկասու Կաթողիկոսի ոչ իսկ և իսկ յիշատակեցաւ յեկեղեցիս Հայոց որ յՕսմանեան Տէրութեան. զի Ս՝աքարիա պատրիարք Կոստանդնուպօլսոյ նախապատիւ համարելով զանձն քան զնա, զչարեալ իմն էր՝ թէ ընդէր և ինքն չհրաւիրեցաւ յայն բարձրագոյն աստիճան. ուստի պատճառելով՝ թէ առանց իւրոյ գիտութեան կամ ազգային հաւանութեան լեալ է ընտրութիւնն Պ՝ուկասու՝ արտաքոյ սովորական կարգի, արգիլ զհանումն հրովարտակի յՕսմանեան Պրանէ 'ի հաստատութիւն Կաթողիկոսութեան նորա, և չեթող յիշատակել 'զանուն նորա 'ի պատարագի զամն իբրև երկու։ Եւ զի միաբանք Էջմիածնի առ արդարացուցանելոյ զանձինս՝ համբաւ իմն հանեալ էին, թէ հանգուցեալ Հայրապետն 'ի կտակաւանդութեան իւրում յանուանէ նշանակեալ էր զՊ՝ուկաս 'ի յաջորդութիւն

Ընթռոյն, ընդ այս առաւել ևս զայրացնեալ Օ՝աքարիայ՝ ջան եդ խափանել զգործածութիւն Սիմէոնեան Յօնացուցին՝ որ այն ինչ հրատարակեալն էր, և վերըստին զհին սօնացոյցն 'ի տիպ տուեալ՝ տարածեաց ընդ ամենայն տեղիս. ուր և 'ի յառաջաբանի բան կարգէ ստգտանողական 'ի ցուցանել՝ թէ նորաձևութիւն է այն արարք Սիմէօնի ընդդէմ նախնաւանդ կարգի և կանոնաց սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեայց, ուստի և անարժան ընդունելութեան։

Պանիագոյն ևս զմտաւ ածեալ Պ՝ուկասու, թէ չէ՞ մարթ այլազգ ինչ շահել զսիրտ Օ՝աքարիայ կամ զի-ջուցանել զցասումն նորա, այսպիսի իմն 'ի վար արկ հնարս։ Յետ օծութեանն ոչ փութացաւ ըստ սովորութեան նստել յԸթռոն Հայրապետական 'ի մէջ տաճարին, այլ ընտրեաց իւր տեղի առընթեր Ընթռոյն յաջմէ կողմանէ՝ շտապ համարեալ վասն անձին միայն զկոչումն Կաթողիկոսական։ Եւ զայս արար նա առ 'ի ցուցանել՝ թէ թէպէտև ընկալեալ է զօծումն ընտրութեամբ և հաւանութեամբ միաբանից Էջմիածնի, այլ վասն բազմելոյ յԸթռոս սպասէ հաճութեանն Օ՝աքարիայ և ազգային հաւանութեան։ Եւ այնպէս զրկեաց 'նա զանձն յԸթռոյն զամս երկու, և ոչ այս միայն, այլ յաւել ևս զրել առ Օ՝աքարիա գիր խոնարհական, որով հրաւիրէր զնա 'ի գահակալութիւն փոխանակ իւր. զի թէև 'ի հարկէ ժամանակիս վիճակեցայ ես, ասէր, յայս պաշտօն, այլ գիտեմ Ընդունելիդ քան զիս՝ տեղի տալ և պատկառ մեծիդ կալ պատուոյ, միայն թէ հաճեսցիս գալ այսր և զծանրագոյնս զայս յանձն առնուլ զլուծ։ Օ՝այս լուեալ Օ՝աքարիայ՝ զիջաւ 'ի կրիցն, և 'ի բաց եդեալ զառաջին զհակառակութիւնսն՝ ընկալաւ զկա-

թողեկոսութիւնն Պ. ուկասու՝ հրամայելով յիշատակել զանուն նորա յեկեղեցիս, և ետ հանել զհրովարտակ 'ի Պրանէ, և զԻմէօնեան Ցօնացոյցն ևս թոյլ ետ 'ի կիր արկանել։

Յետ այնորիկ ապահովեալ Պ. ուկասու'ի Պաթողիկոսութեանն՝ ժառանգեաց զաթոռն. բայց կամեցեալ յանկասկածս վարել զիւրն իշխանութիւն, եղ 'ի մտի 'ի բաց հեռացուցանել յԷջմիածնէ զխոհեմագոյն և զբանագէտ անձինս։ Եւ նախ առաջին զԱհակ և զԿինաս եպիսկոպոսունս մի զհետ միոյ առաքեաց 'Ն. ուիրակ անուամբ 'ի Կոստանդնուպոլիս, յորոց զառաջինն կարգեաց ապա յառաջնորդութիւն Օմիւռնիոյ, ուր և եկաց նա ցվախճան կենացն[1]։ Եւ ապա յաւել առաքել Նուիրակական կոչմամբ զՊրիգոր Նորընծայ եպիսկոպոս Օշականցի 'ի Կարին, զՊետրոս եպիսկոպոս Փերթումեան կամ Ղամալեան յԵդեսիա, զԵփրեմ եպիսկոպոս՝ նախ 'ի Հընդկաստան և ապա յԱժդարխան։

Յաւուրս սորա կամ եղև եղբօր արքային Պարսից տալ ժողովիլ վասն իւր օրիորդս յազգէ Հայոց։ 'Ի լսել զայս Պ. ուկասու՝ հրաման արար ամուսնացուցանել զամենայն աղջկունս Հայազգիս գտեալս 'ի սահմանս Երևանայ յուԹամենից և 'ի վեր. որով և զերծոյց զնոսա 'ի վտանգէ։ Օվ ընդ գալ յուզիլ խնդրակաց 'ի առնս՝ ոչ զոք 'ի նոցանէ գտին անառագաստ։ Եւ այս եղև յաւուրս Ղուհացի՝ յորս արգելեալ են հարսանիք ըստ եկեղեցական կանոնաց։

Դարձեալ յաւուրս սորա (1783), որպէս վկայէ 'Ն. եր-

---

[1] Զոր գրեցաք ցայս վայր՝ պատմեաց մեզ Բ. Աստուածաբանն Ս. Թադէոս վ. Բէկնազարեան ըստ լսելոյ իւրոյ յեղբօրորդւոյ Սահակայ եպիսկոպոսի 'ի Դաւթէ Ստեփանեան, որ վախճանեցաւ յաւուրս մեր։

մածախ գործարանն թղթոյ, որ յիշեցաւ 'ի վերս անդր, և 'ի կոփածոյ քարանց նորին շինել զլիճ ընդարձակ 'ի լուացումն գոմշոց յամարանի։ Զայսոսիկ յայն սակս արար, ասեն, զի ինքն տգէտ գոլով՝ մարթասցի 'ի ագիտաց միջի խրոխտապանծ ճոխանալ անկախ իշխանութեամբ, և մի գտցի ոք՝ որ ծանիցէ կամ մտաբերիցէ ինչ լաւութեան կարգս ընդդէմ կամաց իւրոց· ուստի և ստէպ յեղյեղէր 'ի լսելիս ամենեցուն զայս անալի ասացուած· „Մեծ է տուն այս· ինձ մարդիկ հալկաւորք են 'ի կառավարել· իմ միաբանքն եթէ զՍոՐՐԷ Ե՝ ՏԷՐ, և զ՝այլ գՆՈՃՆ գիտենան, ինձ բաւական է· ես փիլիսոփայ միաբան ուզում չեմ“։

Գիտեմ, զի ոմանց՝ կծու, և կիսոց տալտկալուր թուին գրեալքս· այլ ես զճշմարտութիւնն և եթ կալեալ պատմութեանս նպատակ, զմի ըստ միոջէսն զամենայն՝ զորս հարցի լուայ և ստուգեցի 'ի հինաւուրց միաբանից Ընթռոյն և յարժանահաւատ ծերունեաց, պարտապան եմ անաչառ 'ի գրի հարկանել 'ի գիտութիւն վերծանողաց, և 'ի խրատ զգուշութեան այնոցիկ՝ որք նմանող Հայրապետիս լինելով՝ ստգիւտ յանձինս ձգեն յիմաստնոց 'ի նախատինս յաւիտենից։

Գովել ախորժեն ոմանք զԼուկաս իբրև օգտի մեծի մատակարար՝ ճոխացուցանելով զգանձարան Ընթռոյն· գովէի և ես արդարև՝ եթէ զոյգ ընդ ոսկեքաղութեանն Ջանից՝ գոնեա կիսաչափ մի փոյթ յանձին բերէր տնկել հաստատել 'ի միաբանս իւր զգեղեցիկ եռանդն ուսումնականութեան, և զյորդոր բարի վաստակոց 'ի շինութիւն Հայրենեաց· սակայն եթէ նուրբ մտախոհ ոք լինիցի, տեսանէ քաջ՝ զի 'ի յոլովութենէ մեծագումար գանձուցն՝ զորս նայն համբարեաց կուտեաց յամս Գա-

հակալութեան իւրոյ, ոչ զայլ ինչ կթեաց պտուղ Ազգ մեր 'ի վախճանի, բայց եթէ զնիւթ աղետալի աղմկաց և երկպառակեալ հերձեաց ընդ ամենայն ուրեք, յորժամ 'ի ճանկ արկեալ զայնս Դաւթի եպիսկոպոսի Մորչալուեցւոյ՝ հնարեցաւ գտանել ածեցուցանել իւր կուսակիցս 'ի Պարսիկ Իշխանաւորաց՝ կաշառաբեկութեամբ, 'ի յափշտակութիւն Հայրապետական դաւազանին, որպէս մանրապատում 'ի հետագայումդ ունիմ դրոշմել։

Տուաւ Ղուկաս Կաթողիկոսի Հրովարտակ[8] 'ի Կայսրէն Ռուսաց (1798), որպէս տուեալ էր Միմէօնի։

Վախճանեցաւ Ղուկաս յամի 1799, 'ի Դեկտեմբերի 27, յետ չարաչար տառապելոյ յերկարատև հիւանդութեամբ, և թաղեցաւ 'ի վանս Դայիանեայ 'ի ձախակողմանէ տաճարին։

---

[8] Զօրինակ թարգմանութեան Հրովարտակիս գտցես 'ի վախճան մատենիս (Գ.)։

մին էր Դանիէլ պատրիարք Կոստանդնուպօլսի, և միւսն՝ Յիրեմ եպիսկոպոս Զորագեղջի՝ նուիրակ Ռուսաստանի։ Ի գրեալ (1800, Յունվ. 16) վասն այսորիկ թուղթ ստորագրութեամբ իւրեանց և առաջաւոր իշխանաց Հայոց Երևանայ, առաքեցին 'ի Կոստանդնուպօլիս 'ի ձեռն Դաւթի եպիսկոպոսի Խորշաղուեցւոյ (որ արդէն գժտեալ էր ընդ Դեղարդակրին, և խորհէր պատճառաւ իւիք 'ի բաց մեկնել յԱթոռոյն, առ ապահովելոյ զանձն առժամանակ մի յերեսաց ոսոխին իւրոյ, ինքն խնդրեաց կատարել զայն պաշտօն)։ որով յայտնեալ զվախճան Ղուկասու՝ խնդրէին յԱղգային ժողովոյն Կոստանդնուպօլսոյ հաստատել զմի յերկուց ընտրելոցն 'ի Հայրապետութիւն։ Գրեաց և Մահմէտ Խանն Երևանայ գիր հրաւիրանաց առ Դանիէլ, և գիր խնդրանաց առ Ցէրութիւնն Օսմանեան։

Եղ գնաց Դաւիթ 'ի Կոստանդնուպօլիս Հրաւիրակ անուամբ՝ ընդ իւր ունելով զբազմաստորագիր թուղթն ժողովոյն Էջմիածնի։

Մինչ չև էր հասեալ թղթատարն 'ի Պարին, լուեալ 'ի Ցփխիս ազգակցաց և բարեկամաց Յովսէփայ եպիսկոպոսի Շիրազեան Երղուրեանց՝ որ կայր յայնժամ 'ի Ռուսաստան, զմահ Ղուկասու, հաճեցուցին զարքայն Ղրաց զԴորգի՝ հնարել իւիք զընտրութիւն Կաթողիկոսութեանն հաստատել տալ 'ի վերայ Յովսէփայ։ և նա կոչեալ զԵկնեցի Յովհաննէս եպիսկոպոսն՝ որ առաքեալ էր անդր 'ի Ղուկասէ հանդերձ Դեղարդեամբն 'ի փարատումն ժանտախտին ճարակելոյ, ահացուցանէ զնա։ „Գրեա՛, ասէ, առ միաբանակիցս քո, և ծանո՛՝ զի չէ հնար այլում ումեք լինել ձեզ Հայրապետ, բայց միայն Յովսէփայ։ ապա թէ ո՛չ՝ չթողո՛ւմ, ասէ, դարձուցանել զԴեղարդնդ յԱթոռ ձեր, և մի՛ և ս ակնկալջիք տեսանել զայն“։

'Ի լսել միաբանից զայս (Յունվ. 27) ազգարարութեամբ Յովհաննու եպիսկոպոսի, զահի հարան յոյժ. զի գիտէին՝ թէ յանլսողն լինել հրամանի Աստուծոյ՝ կորուսանել ունին անշուշտ զԱեղարդն՝ յոր բոլորանուէր կապեալ էր բարեպաշտութիւն սուրբ կրօնին զսիրտ նոցա և զոգի՝ սերտիւ հաւատով։ Ուստի զրնալ վերստին զայլ թուղթ, և յիշեալ 'ի նմա 'ի կարգս անուանց երկուց կաթողիկոսացուացն և զՅովսէփայն, հասուցանեն ընդ փոյթ առ Պաւլիթ եպիսկոպոս՝ տանել զայն ընդ առաջնոյն 'ի միասին 'ի Կոստանդնուպօլիս. և կամելով անբասիր զանձինս առնել առաջի Յովսէփայ՝ գրեն առ նա յետ այնորիկ թուղթ մի, յորում յայտ առնեն զպատճառս չյիշելոյ իւրեանց զանուն նորա յառաջնումն թղթի առ Կոստանդնուպօլսեցիս. իբր զի սմա քան և եօթն կալով նորա 'ի Տէրութեան Ռուսաց՝ գտեալ էր անձամբ 'ի պատերազմունս ընդդէմ Օսմանեանց և Պարսից. „այժմ, ասեն, թէպէտև 'ի ստիպել բարեկամաց Աբրազնութեանդ՝ գրեցաք և զԱբրազնութիւնդ ('ի շարս կաթողիկոսացուաց), բայց վստահացեալ 'ի Հայրական զբաթութիւնդ, խնդրեմք աղերսիւք, զի նրբաբար խորհելով զասացեալ պատճառսն մեր... եթէ առանց ինասու գտեսս զգալուստ քո... նախ 'ի Պոլիս եղեալ ազգիս մերոյ զսիրտն հաճեցուցեալ այտի, և ապա երագեսցես զշնորհաբեր գալուստդ. զի մեք ամենեքեանքս կամք պատրաստական 'ի հարազատ ծառայութիւն Ցեառնդ մերոյ“։ Եւ զօրինակ այսր թղթոյ փութացուցին առ Իշխանն Հայոց 'ի Կոստանդնուպօլիս յառաջ քան զժամանել թղթատարին անդր։

Յընթեռնուլ սոցա զայսոսիկ, և 'ի ծանուցանել զկնդիր միաբանիցն Էջմիածնի 'ի դուռն Աստուծոյ, ել հրա-

ման՝ ստանալ անյապաղ զընտրութիւն ՀԱՅՐԱՊԵՏԻ։ Եւ 'ի գալ հասանել ընդ այն աւուրս (Մարտ 18) Պաւլիի եպիսկոպոսի՝ գրովքն հանդերձ, ժողովեցան Իշխանք առ Պատրիարքն Պանիէլ խորհել 'ի վերայ իրացս· ուր թէպէտև բազում եղեն զրոյցք 'ի վերայ երեցունց ընտրելոցն 'ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, սակայն և ոչ զմի ոք 'ի նոցանէ կարացին յատկացուցանել՝ ոչ զՅովսէփ, և ոչ զԵփրեմ, վասն լինելոյ նոցա յերկիր Տէրութեան Ռուսաց, և ոչ իսկ զՊանիէլ· զի 'ի հաստատել զընտրութիւն նորա 'ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ՝ հարկ էր փոխան նորա զայլ ոք որոշել 'ի Պատրիարքութիւն։ Եւ զի այս դժուարին թուեցաւ, կասկածեալ՝ գուցէ երկպառակութիւն ինչ ծագեսցի 'ի կամել միոյն զայս ոք, և միւսոյն՝ զայն, 'ի մէջ մատուցին զայլ երրորդ թուղթ մի 'ի նոցին միաբանից, յորում գրեալ էր· „Եթէ 'ի մէջ մահզարիցն մեր գրեցեալ սրբազան եպիսկոպոսունքն զանազան պատճառաւ··· անպատշաճ դատեսցին անուանակոչել, գոնէ զնորապատակ Ստեփաննոս արքեպիսկոպոսն Կեսարիոյ՝ բարեհաճեալ առաքեսջիք գալ 'ի Սուրբ Էջմածին, որ ամենայն յօժարութեամբ սիրով վերապատուեմք զնա Տէր և ՀԱՅՐ ըստ սարասի առաջին սրբազան ՀԱՅՐԱՊԵՏացն“։ Զոսն որոյ խորհեցան հաստատել զընտրութիւնն 'ի վերայ սորին Ստեփաննոսի։ Բայլ յորժամ այս ևս անհնարին պատեցաւ վասն չկամելոյ Կեսարացի Իշխանացն ՀԱՅՈՑ՝ որք էին 'ի Կոստանդնուպօլիս, զրկիլ յեպիսկոպոսէ իւրեանց, ցրուեցաւ ժողովն յայն օր՝ առանց վճարելոյ ինչ։

Գ·Լ· Գ·

ԳԱԼՈՒՍՏ ՆՈՒԻՐԱԿ

1800

Հասանել Գալատա Նոյեմբերի ՝ի Կ· Պոլիս։—Ընդունիմ՝ նախ Բարդուղիմոս Եպիսկոպոսի, և ապա Դաւիթ Եպիսկոպոսի ՝ի Պարբերոնիան Կ·· Պոլսոյ։—Նոր Ջանֆ Յովհէթ Եպիսկոպոսի ՝ի Կոնոգիսոնիան։—Խոսվոնիան, որ էնէ ՝ի Ժողովրդեան Կ· Պոլսոյ պարտաւոր Գալատայ Նոյեմբերի։

Յունուարն յայնոսիկ (1800) Գալատայ եպիսկոպոս Ղուզայեցի Լուիսակն Էջմիածնի շրջէր ՝ի կողմանս Փիկոմիդիայ։ Այս ՝ի լսելն զհամբաւ՝ ընտրութեան նորոյ Հայրապետի՝ փութացեալ եհաս ՝ի Կոստանդնուպաւլիս, ակն ունելով թերևս բարի իմիք տիրանալ։ Եւ եղև իբրև ժողովեցան երկրորդ անգամ Էշխանք առանձինն ՝ի սենեակ մի ՝ի Նոր Խանն, կոչեցեալ զնա անդր, ևս և զԳաւիթ եպիսկոպոսն, և յայտնեալ նոցա զարգելարիթս հաստատելոյ զընտրութիւն երեցունց նախանշանակեալ կաթողիկոսացուացն, կամեցան լսել ինչ և ՝ի նոցանէ, եթէ զո՞ այլ ոք արժանաւոր դատեսցին այնմ Էռաքելական աստիճանի· այլ իբրև նոքա ևս տարտամ բանիւք ՝ի կամս հաճութեան ժողովոյն թողին զայն, չորոշեցաւ ինչ և յայնմ աւուր։

՝Ի գալ ապա միւսանգամ (Էպր· 9) հրամանի Էլչիքունուստ ՝ի պատրիարքարանն՝ առանց յապաղանաց առնել զընտրութիւն Հայրապետի մինչ ցերիս աւուրս, ժողովեցան (Էպր· 12) ՝ի սուրբ Աստուածածին եկեղեցին՝ ուր էր և Պատրիարքն, և կոչեցեալ զայլ ևս վարդապետս, աւագերէցս, և զգլխաւորս յարհեստապետաց՝

անձինս աւելի քան զերկերիւր, ցուցին զանհնարութիւն ընտրութեան չորեցունց եպիսկոպոսացն վասն առանձին առանձին պատճառաց· և ապա հաստատեցին ընտրել զԽարդուղիմէոս եպիսկոպոսն Սիկոմիդեայ: Սակայն ոմանք յաշխարհիկ անձանց ժողովելոց անդր՝ 'ի դուրս ելեալ զաղաղակ բարձին· „Մի կարծեսցեն, ասեն, թէ կստուգեցաւ ընտրութիւնդ· քանզի մեք 'ի բուն իսկ 'ի միաբանից Աթոռոյն կամիմք, և ոչ զոք յօտարաց“: Այլ Պատրիարքն և Իշխանք յոչինչ զնոցա բանսն գրեալ, և միանգամայն երկուցեալ անցուցանել զպայմանեալ ժամանակ ընտրութեանն (Էջ· 13), բարեաւ համարեցան ծանուցանել զընտրութիւնն Խարդուղիմեայ 'ի դուռն Էրքունի:

'Դաւիթ եպիսկոպոս՝ որ 'ի բնէ իսկ զկատեալն էր զհէտ գահասիրութեան[10], 'ի Սեանեալն զայսչափ յեղափոխ շփոթութիւն իրացս՝ գնացեալ կիշերայն առ Դալուստ նուիրակ՝ ասէ ցնա· „Արքոյ Աթոռոյն մերոյ բազմաշնատ ծերունի արքեպիսկոպոս 'Դու ես· և զի՞ պիտոյ է թողուլ

[10] Յառաջնմէ իսկ զկատուածն Դաւիթ 'ի գահասիրութիւն գուշակի ըստ իմիք 'ի թղթոյն, զոր յետ ելանելոյ նորա յԷջմիածնէ՝ ոմանք յեպիսկոպոսաց գրեցին առանձինն առ Իշխանս 'ի Կոստանդնուպոլիս օրինակ զայս· „Մեք զդոյն Դաւիթ եպիսկոպոսդ յօժարութեամբ մերով ոչ կամիւք մահզարարեր առնել յայդր· բայց գա ունելով ասա յԵրևան նեղբօր իւրոյ աներ զՄելիք Աբրահամն, որոյ միջնորդութեամբ որպէս թէ բռնութեամբն ինքնին եղև յանձնառու 'ի գալ: Արդ ահա այսու յայտարարական գրով մերով աղերսեմք· մի՛ գուցէ հայելով ձեր յոլովութիւն հերաց և գեղեցկութեան մօրուացն, անուանակոչեսջիք զդա· որ զկնի ընդ խնամոյն իւր Մելիք Աբրահամին միանալով՝ պատճառ աւերման սրբոյ Աթոռոյս լինին, և զբազմաժամանակեայ միաբանն մեր ցիր և ցան առնեն· յորմէ լինիցի ձեզ կամեցողացդ նմա մշանջենաւոր խղճահարութիւն· քանզի նորին բնութեան և կառավարութեանն յոյժ բարեպէս տեղեակք եմք“, և այլն:

զԻՌՈ Հայրութիւնդ, և զայլ ոք օտարական բարձրացուցանել 'ի պատիւ գերատիճան Պահակալութեան»։ Այսպիսի փաղաքուշ բանիւք դրդեալ Պալատի 'ի ցասումն, իբր զի չեղև ոք՝ որ զինքն ևս յընտրելոց կարգի դնիցէ, և յառաւօտու յատեան 'ի սուրբ Աստուածածին եկեղեցւոջ 'ի քարոզել, ուր բնաբան կալեալ զասացեալն Առաքելոյ. „Երնայիցէք իցեն՝ և ես. Խրայէլացիք իցեն՝ և ես. զաւակք Աբրահամ՝ իցեն՝ և ես. պաշտօնեայք Քրիստոսի՞ իցեն՝ առաւել ևս ես, եթէ վաստակօք՝ առաւել», և այլն (բ Կորն. ԺԱ. 22). լայնեաց զայն յատենաբանութեան իւրում սնոտի և ձանձրացուցիչ շաստախօսութեամբ, և որ առաւելն է՝ նաև զիշխանաց սիրտս և զպատրիարքին երդիծեցոյց՝ ձգեալ 'ի նոսա քարինս նախատանաց և նզովից։ Յետ որոյ իբրև լուաւ, թէ զայրացեալ իշխանացն՝ կամին արքունի հրամանաւ արտաքսել զինքն 'ի քաղաքէն, փախուցեալ 'ի Միջագիւղ՝ եմուտ 'ի տուն փողերագործի ուրումն Մինասայ. որոյ միջնորդութեամբ պաշտպան իւր գտեալ 'ի Վալաթիա զՎրիմեցի Պէորք զոմն Աղայիկեան՝ գործակատար դեսպանին Ռուսաց՝ Յաղճի անուանեալ, չոքաւ ապա 'ի Պեյլէր Պէյի 'ի տուն Յակոբ Խալֆայի, և կայր անդ թագաստեամբ։

Խարդուղիմէոս եպիսկոպոս Ամիսոմիրեայ՝ որ չէր ինչ գիտակ անցիցս, հրաւիրեալ 'ի պատրիարքէն՝ եկն 'ի Կոստանդնուպօլիս։ Եւ այն ինչ առաջի եդին նմա զընտրութիւնն յատիճան Հայրապետական, բացէ 'ի բաց հրաժարեալ՝ եցոյց զանձն անբաւական 'ի բառնալ զծանր լուծ այնր մեծի պաշտաման։

Յիմանալ Տէրութեան; եթէ Խարդուղիմէոս եպիսկոպոս չառնու յանձն զընտրութիւն ժողովոյն, երրորդ

անգամ հրամանագիր արար՝ զայլ ոք 'ի տեղի նորա ընտրել։ Եւ վասն այսորիկ (Էպր· 28) գումարեալ Եշխանացն զբաղմութիւն արուեստապետաց և ժողովրդեան սուիլի քան զչորս հարիւր անձինս 'ի սուրբ Աստուածածին եկեղեցւոջ, հաստատեցին համահաւան նախ զընտրութիւն Դանիէլի 'ի Կաթողիկոսութիւն, և ապա 'ի տեղի նորա ընտրեցին լինել Պատրիարք զԴաւիթ եպիսկոպոսն։ Եւ զայս ամենայն ծանուցին 'ի դուռն Արքունի ըստ սովորութեան։

Բայց քանզի Սահաթձի Խարդուղիմէոս ոմն Սահաթձի Յուսուֆեան հաճեցուցեալ էր կանխաւ զկաշառակուրծսն Արքունի դրան՝ կացուցանել Պատրիարք զՅովհաննէս եպիսկոպոսն Խաբերդացի՝ Ղամաշերծը օղլու ասացեալ՝ զաշակերտն Զաքարիայ Պատրիարքի, յետս դարձուցին զծանուցական գիր ժողովոյն՝ պատճառելով զսակաւութիւն կնքոց և ստորագրողաց 'ի նմին, և պահանջեցին զթուղթ միաբանից Էջմիածնի՝ հանդերձ թարգմանութեամբ 'ի տաճիկ լեզու։

Ընդ այն աւուրս և Առաջնորդն Հայոց Յուսիոյ Յովսէփ եպիսկոպոս Արղութեանց՝ գրեաց առ Խամարով անուն դեսպանն Յուսաց՝ որ 'ի Կոստանդնուպօլիս, հնարել հաստատել զընտրութիւն Հայրապետութեանն յիւր վերայ՝ հաճութեամբ Ազգին, և հանել յանուն իւր հրովարտակ յԱրքունի Դրանէ։ Այսմ գիտակ գոլով Պէորդայ Աղայիկեան՝ յուսադիր եղև Դալուստ նուիրակի՝ որ կայր 'ի Թաքստի, վերացուցանել զնա յԱթոռ Պատրիարքութեան՝ ընկեցեալ զԴաւիթ· որով և եղև պատճառ ծագելոյ աղմկի մեծի և խռովութեան 'ի մէջ ժողովրդոց, որպէս տեսցի ստորև։

Դալուստ նուիրակ՝ որ դեռ ևս կայր 'ի Թաքստի,

տեսեալ՝ թէ մին 'ի միաբանակցաց իւրոց՝ Դանիէլ հանդերձեալ է ունել զԱթոռ Հայրապետութեան, և միւսն՝ Դաւիթ, ընտրեալ է 'ի պատրիարքութիւն, բորբոքէր ջեռնոյր 'ի ցասմանէ սրտին։ Եւ իբրև զիր աղատութեան ընկալաւ յԱրքունուստ սատարութեամբ գեսպանին Ռուսաց՝ 'ի շրջել համարձակ, ժամ պատեհ եգիտ հետամուտ լինել և ճգնել զյետին ճիգն առ յափշտակելոյ զՊատրիարքութիւնն՝ որում բաղձայր ամենայն ոգւով, զօրավիգն ունելով իւր և պաշտպան զԵՒորգն Ազայեան, զԱ՞ինասն փողերագործ՝ որ 'ի վեր անդր յիշեցաւ, և զայլս ոմանս 'ի փաքուս խառվասիրաց։ Եւ զի 'ի մտի եդեալ էր 'ի գլուխ տանել զոր խորհէրն, ոչ մեծ ինչ գրէր զմեծագումար դրամոց վատնումն, որպէս յայտնի իսկ յիւրաձեռագիր մուրհակէն ցուցանի· զոր առաքեաց 'ի Պէյլէր Պէյի առ Յակոբ Խալֆա բարեկամ իւր՝ օրինակ զայս· „'Ի տէր Դալուստ վարդապետէ՝ օրհնութեամբ և սիրով սուրբ հոգւոյն· Ծանիր, մեծահաւատ Յակոբ բարեսէր Ամիրայ· ահա այս ձեռնարկս քեզ հարազատիդ եղբոյր որպէս թէմէսիկ, որ զոր ինչ դրամ իցէ գնալոյ յաղագս պատրիարքութեան, հոգայ· այն իմ պարտս է, և ես հատուցից քեզ անթերի· գրի իմով ձեռամբ· ՌՍԽԹ· 1800· Մայիսի 4· և իմ կնիքս է ○“։

Յետ այսորիկ յապահովի գոլով ծերունւոյն՝ տենչիւ փառախնդրութեան բանդագուշելոյ, երթեալ օթևանս կալաւ 'ի սենեակ մի հանդէպ պատրիարքարանի· ուր իբրև առաքեցին առ նա Դանիէլ և Դաւիթ զվարդապետս քանի մի՝ հարցանել զողջունէ նորա, և հրաւիրել 'ի մատուցանել զպատարագ յառաջակայ կիւրակէի 'ի սուրբ Խաչ եկեղեցին Երիսաղէմայ (այն է՝ Իւսկիւտար),

ետ պատասխանի ոգւով դառնացելով· „երթայք ասացէք նոցա զանձանց իւրեանց ճանաչել զչափ· զալ իմ այսր եղև հրովարտակաւ Աստուծոյ· չէք նոցա իշխանութիւն՝ ինձ հրամայել“: Եւ վաղայարոյց ընդ առաւօտն դիմեալ յեկեղեցի՝ բազմեցաւ յԱթոռ Դաւթի եպիսկոպոսի· 'ի զալ ապա և Դաւթի անդր՝ ազգ արարին Դալստի և հրաւիրեցին զնա յայլ կողմն դասու· այլ նա փոխանակ պատասխանելոյ՝ եցոյց միայն թթուպդէմ խոժոռութիւն ինչ և կնճիռն 'ի ճակատի· իբրև տեսին՝ թէ կամի ոչ 'ի տեղւոջէն խլրտել, յակնարկել Դաւթի՝ բռնաձիգ ի ջուցին զնա յԱթոռոյն, և նա ճարակտուր յայնժամ խլատեալ 'ի Յարութիւն սարկաւագէ իւրմէ՝ գնաց եկաց 'ի շարս ժողովրդականաց: 'Ի տեսանել զայս խառնաղանջ խուժանին խռնելոյ անդէն՝ յանհնարին զայրոյթ բրդեալ 'ի սիրտս իւրեանց՝ վառեցան ընդդէմ Դաւթի· յաճախէր 'ի նոսա շշնջիւն գամ քան զգամ, հծծէին այր իւրաքանչիւր, մինչ փոքր միւս ևս առ տեղեաւն պատրաստ էին զնա բրդզել· այլ առ ժամն հանդարտեալ, յետ աւուրց ինչ 'ի տօնի Երևման Խաչի (Մայիս 6) մինչ չև սկսեալ գիշերային պաշտօնեարգութեան՝ առեալ մուծին զԴալուստն յեկեղեցին աղաղակաւ, և 'ի վայր մղեալ զԴաւիթ յԱթոռոյ՝ նստուցին զնա: Եւ զի չև ևս էր եկեալ անդր Դանիէլ, հրամանաւ նորա 'ի նորա Աթոռում նստուցին քահանայք զԴաւիթ՝ առ 'ի խաղաղել զաղմուկն: Այլ յետ սակաւ միոյ առաւել ևս զօրացաւ զայրացաւ շշուկ շփոթին· զի սրիկայից ոմանց անազգակաց պաշտպանողաց զԴալուստ՝ հափշտակեալ զնա յԱթոռոյն՝ յոր նստուցեալ էին, ածին յատեան՝ խօսել ինչ առ ժողովուրդն: Եւ նա՝ թէպէտև տգէտ՝ այլ ճարտար 'ի պատշաճել զբանս սուրբ Դկոց 'ի նիւթ

խռովութեան, բնաբան կալեալ զբան Տեառն. „Երանի՛ է ձեզ, յորժամ հալածիցեն զձեզ մարդիկ“, և այլն, շարժեաց բորբոքեաց զռամկահոյլ ամբոխն 'ի վրիժառութիւն. զի այն ինչ գեռ բանքն 'ի բերան նորա էին, զաղաղակ հարեալ մոլեգին սրտմտութեամբ՝ դիմեցին զեղան համախուռն 'ի վերայ Գաւթի՝ գահընկէց հոսել զնա։ Գտան անդ և այլք՝ որք զկողմն ունէին Գաւթի, և 'ի ձեռին սոցա զդէմ ունել Գալստեանց՝ առաւել ևս բռնացաւ բարձրացաւ գոչումն և գոռումն երկուստեք. Նոքա թեւակոխէին վերածել հանել զԳալուստ ՅԷթոռ Պատրիարքի, և սոքա գուն ընէին չթողացուցանել քակել անտի զԳաւիթ։ Եւ իբրև այսպիսի մարտամբոխիւք այր զարամբ եկեալս արարեալ զերարէին, լռեաց ժամերգութիւնն. պաշտօնէիցն դասք կէս մի յայս կոյս՝ և կէս մի յայն, ցիրեցան եղեալ խուսափեցին։ Ընդ էր տեսանել զկատաղահար ձեռնձգութիւն ընդ իրեարս, կռփումն գազաթանց, ճողել հերաց, բռնապտակաց հարուածս, յոխորտաձայն ահընկեցութիւն միոյն առ միւսն, լուտանս, հայհոյանս, խժդժական զբոյցս պժգալիս՝ ժայթքեալս՝ փրփրեալս ճենճերեալս յեռանդանէ դիւագնեալց սրտից։

Ո՛վ արտասուելի թանձրամտութեան մարդկանն. կէսք զԳալուստ կամին ամբառնալ 'ի պատիւ գերակայ մեծութեան, և կէսք զԳաւիթ. այլ ոչ նա արժանի ոք էր այնմ, և ոչ սա. երկոքին ևս խռովայոյզք շարագրգիռք՝ մի քան զմի դժնդակք, պատճառք աւերութեանց՝ ինքասուց և յոգնապատիկ չարեաց, որք զտաճարն Տեառն արարին իբրև զկաղալս խմբից այսահարելոց, կամ լաւ ևս ասել՝ իբրև զասպարէզ ճակատամարտի, յորում թէ ո՛ ընդ ո՛ւմ մրցի՝ չերևի, և զի՞նչ յաղթանակաց ակնկալութիւն՝ անյայտ։

Հուսկ ուրեմն 'ի բռնանալ կուսակցաց Նուիրակին՝ քանզի բազմաթիւք էին, զելս ուստիք գտեալ Դաւթի՝ իսոյս եւ եմուտ մազապուր 'ի պատրիարքարանն։ Իսկ Նուիրակն բազմեալ փառաւորութեամբ յԱթոռ Պատրիարքի՝ զոր եւ ընդ 'ի բեմբ սեղանոյն, ելից զբաղձանս սրտի իւրոյ՝ 'ի ծափաձայնել խուժանին 'ի հանդիպոյն՝ „Ընտուած շնորհաւոր անէ“։ Հապիւ ուրեմն մարթացեալ ապա ոմանց լռեցուցանել զնոսա, սկսան եկեղեցականք երգել „զփառք 'ի բարձունս“. յետ որոյ սկիզբն եղև Պատարագի, յորում 'ի յիշատակիլ քահանային զԴալուստ՝ Պապքիպոպ կոչմամբ, վերստին հնչեաց նոյն շփոթալից ձայն շնորհաւորութեան։

Յաւարտ Պատարագին՝ գնաց Դալուստ 'ի սենեակ իւր՝ յառաջոյ և զկնի ունելով զբազմութիւն ամբոխին՝ անձինս աւելի քան զերկերիւր· յորոց ոմանք զելան խռնեցան 'ի ներքս 'ի սենեակ նորա, և այլք արտաքոյ կացեալ առ դրան յաւելուին յանցորդաց ընդ փողոցս՝ 'ի թիւ իւրեանց զորս և կարէին՝ զի առեալ տարցին հանդիսիւ զԴալուստ 'ի Դուռն Երքունի, և տացեն նմա զգենուլ զխիլայն Պատրիարքական։

Տեսեալ քաղաքապահ զօրականաց զշշուկ խուռներամ ամբոխին՝ եկին խաղաղել զնոսա և ցրուել· և 'ի զդէմ ունել սոցա և 'ի գանել զոմանս 'ի նոցանէ՝ եհաս անդր և սաստիկ կամ գլխաւոր նոցա (Աէյման պաշը) զօրաք։ Յայնժամ որք 'ի դուրս 'ի փողոցսն էին՝ սրտաթափք սրտաբեկք յերկիւղէ 'ի շտապ տաղնապի անկեալ՝ վայրայածէին, կէսք 'ի տունս, կէսք 'ի կրպակս· ոմն յայս, և ոմն յայն խորշ ծակամտեալ անձնաթաքոյց լինէին· և այլք 'ի յետուստ 'ի թիկանց գանահարեալք՝ զփախուստ խնդրէին։ Իսկ յեղելոցն 'ի ներքս 'ի սենեկին կալեալ

Պահակապետին զոգիս իբրև եօթանասուն էած կացոյց ընդ Գալուստ եպիսկոպոսի յանդիման Լուսաւորչոսին. որ իբրև ետես զամբոխն՝ եհարց ցնոսա վասն Գալստի. „Ամիք դուք զՊատրիարքանալ դորա“, ասացին՝ այն. եհարց և ցեպիսկոպոսն „և դու յանձն առնուս“. և 'ի պատասխանել նորա, որովհետև սոքա կամին, և ես յօժարութեամբ ընդունիմ, հրամայեաց տանել արգելուլ զնա և զորս ընդ նմա՝ 'ի բանտ, և զմանս իսկ վարել 'ի ծառայութիւն թիոյ 'ի նաւետղն։ Եւ յերկրորդումն աւուր հանեալ զԳալուստ 'ի բանտէ՝ առաքեաց Յուսկիւտար՝ կալ անդ 'ի պահեստ 'ի տան Միւթեվէլլի Աղասիի. և զայլսն գանիւք և յանդիմանութեամբ իրատեալ՝ արձակեաց 'ի բաց։ Իսկ կողմնապահացն և պաշտպանացն Գալստի կամեցեալ հնարագիտ լինել վերստին 'ի կատարումն ըղձից իւրեանց, մատուցին (Մայիս 10) 'ի Գուռն Աղքունի զգիր աղերսանաց՝ ստորագրութեամբք և դրոշմամբ կնքոց արուեստաւորաց ոմանց. որով խընդրէին հաստատել զԳալուստ 'ի Պատրիարքութեան։ Ընդ այս առաւել ևս զայրացեալ Տէրութեան, ետ զՀրեսին անձինն 'ի ստորագրողացն՝ բանտարգել առնել, և զայլսն չարադանեալ՝ մերժել 'ի բաց։

Հայեցեալ Գալուստ եպիսկոպոսի ընդ ձախողակ ելս իրացն, չդաւ անդրէն փախստեայ 'ի տուն Յակոբ Խալֆայի 'ի Գէյլէր Գէյ, յուսացեալ այլազգ ինչ խորհել հնարս և կատարել 'ի ձեռն նորա։ Այլ յետ միոյ աւուր (Մայիս 13), գնացնալ անդր Գնդապետն Տապարակիր անուանեալ զօրաց (այն է՝ Պալթաճրլար Ամինի), եհան զնա խաբկանօք 'ի տանէ, և տարաւ 'ի դուռն եպարքոսին՝ կապեալ զեղկելին 'ի յոյս սնոտի, իբրու թէ հասեալ ի՛ցէ ժամանակ փառաւորելոյ նորա Պատրիարքութեամբ։

Եւ նա դիւրահաւատութեամբն՝ յոր գլեաց զնա Դա-
հասիրութեանն տենչ, յստոյգս համարեալ զաւետիսն՝
եւ բերել զվեղար, զգաւազան, և դրամն, զի առձեռն
պատրաստ ունիցի։ Սակայն ընդհակառակն եղև ակն-
կալութեան նորա· զի վճռեցաւ նմա աքսորիլ 'ի Լեմնոս
կղզի, որպէս և Դանիէլի՝ 'ի Տենեդոս։

Իսկ թէ յի՞նչ պատճառաց կամ յորմէ՞ հնարիմաց
գաղտամեստ խարդախանաց նեռթեալ դաւադործեցաւ
տարագրումն Դանիէլի՝ թէպէտև չէ ինձ յոյժ բացա-
յայտ, բայց 'ի կարգէ անցիցս բերմանց երևի լինել
դեսպանն Ռուսաց՝ որ 'ի Կոստանդնուպոլիս, Վասիլ
Դամարով անուն· որ կամեցեալ թերևս զընտրութիւն
Ազգապետութեանն շրջել 'ի Յովսէփու վերայ, հնարե-
ցաւ խռովայոյզ թելադրութեամբ Գէորգայ Ղազարեան
դրդել շարժել 'ի գրգիռս բարձաձգութեան զԴաղուստ,
և նովաւ յարուցանել ամբոխ 'ի ժողովրդեան, որպէս
զուշակի 'ի նամակէ նորա գրելոյ առ Սերգէյ Լազարիչ
բարեկամ իւր 'ի Պետրբուրգ, յորում ընդ հենգն յիշէ
համառօտիւ զայսօրինակ անցս՝ յասելն· „Մեր հասա-
բակաց բարեկամ Յովսէփ յարդելի արքեպիսկոպոսն այն
ընտրեալ՝ լինելոց է Պատրիարք Յերուսաղէմի։ Ակառա-
կորդ նորա նորընտիր Պատրիարքն Դանիէլ՝ նստաւ 'ի
մէջ երկուց Աթոռոցն 'ի գետնի· և այժմ ողջունէ զգ
ձեզ 'ի Տենեդոսէ՝ ուր աքսորեալն է... Ափսոսելի է ինձ...
Դաղուստն՝ որ 'ի պատճառս անասելի աղմկաց յառաջա-
ցելոց յանզգուշութենէ նորա 'ի մէջ Հայոց՝ վարեցաւ
'ի Լեմնոս, կալ անդ սուղ ինչ ժամանակ... 'ի Պէյրութ
Տէրէ· 'ի 15 Մայիսի 1800 ամի“։

ԳԼ. Ե.

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՁԱՄԱՇՐՃԵԱՆ

1800—1801

Վարիլ յաքսորս Դանիէլ Ե Գալուստ եպիսկոպոսաց։ — Ընդրութիւն Յովհաննու Ձամաշրճեան ի Պատրիարք։ Կ. Պոլսոյ։ — Հանել սուրբ յԱրքունուստ զՀրովարտակ հաստատութեան Յովհէփայ ի Կաթողիկոսութիւն, և յիշատակութիւն անուան նորա ի պատարագի։ — Գնալն Դաւթի հրովարտակս յԷջմիածին։ — Փախուցանելն Յովհաննէս եպիսկոպոսի զԷջմիածն։ — Աղտութիւն ի քանդիլ Դանիէլի և Գալուստ նուիրակի։ — Նշանակելն առաջնոյն առաջնորդ Ներսէսի, և գնալն երկրորդին ի կոչման նախնիդրեայ։

Յանուր՝ յորում վճռեցաւ Դանիէլ և Գալուստ եպիսկոպոսաց վարիլ յաքսորս, ի նմին և յԱրքունուստ հրամայեցաւ ընտրել զոք ի Պատրիարք ի տեղի Դաւթի, զի զնա չընկալաւ Տէրութիւնն՝ էր աղագաւ չգիտեմ։

Ի ժողովիլ արուեստապետաց և իշխանաց ոմանց անուանեալոց ի Վ. Էզիր խանն (1800, Մայիս 19), իբրև բանք եղեն զընտրութենէ Պատրիարքի, եհարց Սահաթճի Խարդուղիմէոս զՅովհաննէ եպիսկոպոսէ Խաբերդացւոյ Ձամաշրճեան՝ որում ջատագովն էր և պաշտպան, եթէ ուրպիսի ոք իցէ։ Եւ ի վկայել քահանայից ոմանց՝ որք անդն կային՝ զարժանաւորութենէ նորա, ընտրեալ հաստատեցին զնա ի Պատրիարքութիւն։

Այն սա զկողմն կալեալ զՅովսէփայ՝ յորմէ թերևս ակն ունէր բարութեան և օգտի իմիք անձին, ջանահնար եղև հանել (Մայիս 31) յԱրքունուստ զ՝Հրովարտակ հաստատութեան նորա ի Հայրապետութիւն Էջմիածնի. և յառաջ քան զօծումն՝ հրաման արար (Յուլ. 16) յիշատակել զանուն նորա ի պատարագի՝ ընդդէմ հա-

սարակելոյ սովորութեան։ Եւ զի խիթայլ 'ի Դաւթէ, և խորհէր պատճառաւ իւիք հեռացուցանել զնա 'ի քաղաքէն, հաճեցոյց զնա տանել զ՝բովարտակն յԷջմիածին, և սպասել անդ գալստեան Յովսէփայ· և ես միջնորդեցից, ասէ, առ նա՝ կարգել զքեզ նուիրակ Կոստանդնուպօլսի կամ Օ՝միւռնիոյ։ Սովին յուսադրութեամբ տուեալ զ՝բովարտակն 'ի ձեռս նորա, փութացոյց զնա յԷջմիածին, որպէս զի մարթասցի և ինքն կալ յիշխանութեան իւրում անկասկած։

Յաւուրսն յայնոսիկ Յովհաննէս եպիսկոպոս Ինկնեցի՝ Ղենդանի նահատակ ասացեալ՝ հնարիւք իւիք փախոյց 'ի Տփխիսայ զԴեղարդն՝ զոր արգելուլ կամէր արքայն Վ՝րաց Դորգի՝ դրդեալ 'ի թելադրութենէ Յովսէփեանց, որպէս 'ի վեր անդր պատմեցաւ։ Եւ վասն այսորիկ սոյն այս Յովհաննէս եպիսկոպոս մականուն ընկալաւ Դեղարդակիր։

Յետ անցիցս այսոցիկ Դանիէլ եպիսկոպոս՝ որ տակաւին յաքսորս կայր, ընկալեալ զաղաստագիր (իթլախ) (Սեպտ· 26) զոր 'ի Դրանէ հանել ետուն իշխանք, եկ (Սեպտ· 30) 'ի Տենեդոսէ, և անցեալ ընդ Թրակիա (Թէքիր տաղը)՝ չոքաւ 'ի Պանտրմա· ուր յետ աւուրց ինչ եհաս նմա գիր 'ի Յովհաննէս Պատրիարքէ հանդերձ առաջնորդական Կոնդակաւ 'ի վերայ Եւդոկիոյ, և հրամայեցաւ նմա գնալ անդր։

Ընդ այն ժամանակս (Նոյեմբ· 4) և Դալուստ նուիրակ պրծեալ յաքսորանաց 'ի Լեմնոս կղզւոյ՝ ջանադրութեամբ իւրայոցն և պատրիարքին, հրաման էառ գնալ 'ի կողմանս Նիկոմիդեայ 'ի լրացուցանել զնուիրակութեան գործն՝ զոր թերաւարտն էր թողեալ ընդ գալն իւր 'ի Կոստանդնուպօլիս։

Լսկ Դանիէլ եպիսկոպոս՝ իբրև եհաս (Նոյեմբ. 13) 'ի Մահալըճ՝ զտեղի էառ անդէն, վայելել աւուրս քանի մի 'ի հիւրոյթ մարդասիրութեան ժողովրդոց։ Պասկած առեալ յայսմանէ Յովհաննու Պատրիարքի, թէ գուցէ յամելով նորա անդր՝ հնարեսցի զԿաթողիկոսութիւն վերստին յինքն դարձուցանել, միջնորդութեամբ Դէորգայ Աղայիկեան ազգ արար դեսպանին Ռուսաց Խամարովի, և ծանոյց 'ի Դուռն Արքունի. ուր Ռէյիզ Ֆէլէպի Էֆէնտին հասու եղեալ 'ի Մուրատ Էմիրայէ Սուրենեան, և յայլոց Ինչանաց մերայնոց՝ թէ այն է 'ի չարիմացութենէն Յովհաննու, խորհուրդ ետ նոցա գրել առ Դանիէլ՝ զուղղնացութիւն իւր առնել հանդարտութեաց։ Այլ Յովհաննու անտեղեակ այսմ գոլով՝ գրեաց նմա հապճեպիւ չուել գնալ անտի յԱւդոկիա կամ ուր ուրէք և կամիցի. „զի Տէրութիւնն, ասէ, բարձր հրամանաւ կամեցեալ էր առաքել զԱրբազնութիւնդ քո, բայց մեք աղերսանօք արգելեցաք“։ Զգուշացեալ յայսմանէ Դանիէլի՝ մի գուցէ ինչ ընդդէմ պատուոյ իւրում լինիցի 'ի յամելն և ևս, չոքաւ (Յունվ. 23, 1801) յԱւդոկիա։ Եւ զի կամք իւր էին գնալ յԷջմիածին, չէառ յանձն զանուն Առաջնորդութեան. այլ կացեալ անդէն իբրև զհիւր ոք՝ մնայր լսել զօծումն Յովսէփայ 'ի Կաթողիկոսութիւն։

ԳԼ. Զ.

ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ

1801

Հասարակութիւն Յովսէփ Եպիսկոպոսի Արղութեանց 'ի Կոստանդնուպոլիս։ — Ճանապարհորդութիւն Յովսէփայ։ — Հասանել նորա 'ի Տփխիս, հիւանդանալն և մահն։ — Հրաւէրակն Էջմիածնի և հնարքներն Գրիգոր վարդապետի։

Յովսէփ եպիսկոպոս՝ որդի Հիսայ՝ նուիրակ և առաջնորդ Հայոց Ռուսաստանեայց, որ յայսմ ժամանակի էր 'ի Պետերբուրգ, ընդ լսելն զայսչափ և զայսպիսի անցս՝ որք անցին 'ի Կոստանդնուպոլիս, և զ հաստատութիւն ընտրութեան իւրոյ 'ի Կաթողիկոսութիւն և զնստելն Յովհաննու եպիսկոպոսի Պատրիարք, դիմեաց 'ի Մոսկով, և անտի յԷջմիածին։ ուր հրաւէր նմա Հրովարտակն Օսմանեան Տէրութեան վասն Կաթողիկոսութեան իւրոյ։ զոր առաքեալ 'ի Պետերբուրգ 'ի տեսութիւն Կայսեր Պօղոսի, ընկալաւ 'ի նմանէ զՊարգևագիր (Պրամատ [11])։ էջ ապա 'ի Տփխիս (Փետր. 11, 1801) շքեղ հանդիսավեհութեամբ [12], առ 'ի գնալ անտի յԷջմիածին և ընդունել զօծումն Հայրապետական, թողեալ փոխան իւր նուիրակ զԷփրեմ եպիսկոպոս Զորագեղցի՝ զընտրեալն կանխաւ ընդ Պանիէլի 'ի միաբանից 'ի Կաթո-

---

[11] Զօրինակ թարգմանութեան Հրովարտակիս գտցես 'ի վախճան մատենիս (Դ)։

[12] Յովսէփ Կաթողիկոսն 'ի գալն 'ի Տփխիս՝ չոքաւ եմուտ ուղղակի 'ի Սիոն եկեղեցին, ուր կայր մարմին Գէորգ Թագաւորին Վրաց, և անդ կատարեալ զկարգ թաղման՝ ընթերցաւ զթուղթ Պօղոս Կայսեր (զորոյ զթարգմանութիւն գտցես 'ի վախճան մատենիս - Ե), գրեալ յանուն նորին, և ետ յեկեղեցւոջ անդ քարոզ։

զեկոսութիւն։ Եկին յայնժամ հրաւիրակք յԷջմիածնէ՝ ըստ յառաջագոյն գրելոյ նորա անպր՝ չորք եպիսկոպոսք՝ Աբրահամ, Թադէոս, Բարսեղ, Ենդրէաս [13], մատուցանել նմա զվայելչականն յարգութիւն 'ի դիմաց ուխտի միաբանից։ Եւ այն ինչ զքեռինսն բարձեալ պատրաստէին 'ի ճանապարհ ելանել, անկեալ Յովսէփայ յախտ հիւանդութեան [14], և ժամէ 'ի ժամ 'ի ծանրանալ մերձենալ անակնուն ելի մահուանն վտանգի՝ չմարթացեալ գրել կամ գրել տալ զկտակ, բերանացի և եթ աւանդեաց Աբրահամ եպիսկոպոսի միումն 'ի հրաւիրակաց՝ զոր կտակելն կամէր։ Եւ յետ պատուիրելոյ գերեզմանակից առնել զինքն՝ Աբրահամ Կաթողիկոսի, որ թաղեալ կայ յԷջմիածին, վախճանեաց զկեանս (Մարտ 9) 'ի տան եղբօրորդւոյ իւրոյ Սողոմոնի Երզրութեան, ուր օթևանեալն էր։ Իսկ 'ի կտակաւանդութեանն կայր և այսպիսի ինչ. „Մէկ փոքր զութի ունիմ հարկաւոր իրաց. 'ի մէջն կայ յատկացեալ ինչ. զայն առանձնաբար քո ձեռամբն Պատս Սողոմոնին, որ օտարք չիմանան, և իմ հայրենիք

[13] Յայլում ձեռագրի անուանք հրաւիրակաց՝ եկեղց յԷջմիածնէ, նշանակին այսպէս. „Բարսեղ, Աստուածատուր, Թադէոս, և Յովհաննէս“։ Ծանօթ. Ջ. Մ։

[14] Վասն հիւանդութեան և մահուան Յովսէփայ Կաթողիկոսի յայլում ձեռագրի պատմի այսպէս. „զՅովսէփ Կաթողիկոսն հրաւիրեաց յարքունի չայի Ցարէճան տէ Ցօփալն, այսինքն՝ թագուհին, կինն Հերակլ թագաւորի, և ետ գեղ մահու յարքման չայի։ Շաթիր Աւեան տեսանելով զերան՝ յայտնեալ է Գրիգոր վարդապետին, բայց նա չիմացեալ յանհոգս եկաց։ Այս եղև 'ի շաբաթ աւուրն. յերկուշաբթի հիւանդացաւ, և յետ աւուրց ինչ վախճանեցաւ։ Մարմին Յովսէփայ եկաց 'ի Թէթղէհէմ եկեղեցւոջ մինչ ցօծումն Դաւթի. և յետ օծմանն տարան զմարմինն յԷջմիածին։ Պօղոս կայսր վախճանեցաւ 'ի վերջին աւուրս Յովսէփ Կաթողիկոսի. Յովսէփ նախ ետես զգիսակն զբաց թագաւորի, ապա լուաւ զմահ Պօղոսի, ապա վախճանեցաւ ինքն»։ Ծանօթ. Ջ. Մ։

տուն չքակեն“։ 'Ի վաղիւ անդր պատեալ եպիսկոպոսաց զքի նորա՝ եդին 'ի տաճարի սրբոյն Գէորգեայ՝ Մուղնի ասացեալ· և իբրև հանդերձէին տանիլ զնա յԷջմիա-ծին՝ արգելին զնոսա կառավարիչք քաղաքին՝ պատճառս ածեալ, թէ պարտ է հրամանին սպասել մեծի Կուսակալին Վրաստանի՝ որ 'ի Մոզրոկ· առանց որոյ չկարէք, ասեն, ելանել 'ի քաղաքէս, և ոչ իսկ մեք թողուցք։ Այսր աղագաւ մնացին նոքա անդանօր իբրև ամիսս երիս· ընդ որս և դի մեռելոյն եկաց ցայնչափ ժամանակս անթաղ։ Եւ այս ամենայն՝ ըստ պատմելոյ ոմանց՝ տնօրինեալ լինէր 'ի գաղտնի հնարագիտութենանց Գրիգոր վարդապետի Աղքիրմանցւոյ[15], որ գոլով մի 'ի ձեռնասուն սպասաւորաց Յովսէփայ՝ ակն ունէր եպիսկոպոսանալ և վերանալ 'ի բարձ Առաջնորդական։ Եւ զի գիտէր սա՝ թէ հակառակ է իւր Եփրեմ, և 'ի Կաթողիկոսանալ բարեկամի նորա Դանիէլի՝ դժուարին լինի առնել զոր կամի, խորհեցաւ զընարութիւն Հայրապետութեանն շըրջել 'ի վերայ միոյ ուրուք 'ի ծանօթից իւրոց։ Յոյժ սակս հռչակ եհար նախ՝ թէ Յովսէփ եպիսկոպոս կտակեալ իցէ կացուցանել 'ի տեղի իւր Կաթողիկոս կամ զՅովհաննէս Պատրիարք Կոստանդնուպօլսի, և կամ զԴաւիթ եպիսկոպոս Խորչալուեցի, զայն՝ որ հրովարտակաբերն եղև 'ի Կոստանդնուպօլսէ· և ապա յիւր կողմ ձգեալ զԱրքայորդին Վրաց զԴաւիթ, ևս և զԱղաքապետն Տփխեաց և զայլ Իշխանաւորս՝ արգել 'ի ձեռն

---

[15] Յայլում ձեռագրի պատմի ևս՝ թէ „եպիսկոպոսքն Յէջմիածնայ եկեալք ոչ կամէին տանիլ զմարմինն Յովսէփայ Յէջմիածին, և ասացին Գրիգորի վարդապետին՝ թէ եթէ դու ձեռնադրեսցես զսան Կաթողիկոսութեան Դանիէլի՝ մեք ևս տարցուք զմարմինն· բայց ոչ նոքա և ոչ սա հաճեցան կատարել զինդիրս միմեանց“։ Ծան. Հ. Մ։

նոցա զհրաւիրական. քանզի 'ի կասկածի էր՝ թէ 'ի գնալ նոցա յԷջմիածին՝ խնդրել ուներն վերստին զԴանիէլ 'ի Հայրապետութիւն։

Իմացեալ զայս հրաւիրակացն՝ գրեցին (Մարտ 10) թուղթ առ միաբանսն. ուր յետ ծանուցանելոյ զմահ Յովսէփու՝ խորհուրդ տան չինդրել զայլ ոք 'ի Դահակալութիւն բաց 'ի Դանիէլէ. „ապա թէ ոչ՝ դիւական մնան կայ, ասեն, Ջանացող վասն Յովհաննէս Պատրիարքին և այլում. վախեմք՝ թէև այն ցաւ մեծ լինի մեզ“։

Այց Գրիգոր վարդապետ Ջանս 'ի Ջանից վերայ յաւելեալ՝ յաճախեաց զնամականի իւր առ դիսպանն Ռուսաց՝ Խամարով, առ Գէորգն Աղայեկեան 'ի Կոստանդնուպօլիս, և առ այլ մեծամեծ Իշխանս և աւագորեարս յայլևայլ տեղիս, և ստացաւ իւր թիկնակիցս համախոհս ամենայն ուրեք, մանաւանդ 'ի Տփխիս. որով և խառնվեաց զԱզգ մեր, որպէս Պատմութեանս կարգ ցուցցէ։

ԳԼ. Ի.

ԿԱԹՈՂԻԿՈՍՔ ԴԱՆԻԷԼ-ԵՒ ԴԱՒԻԹ

1801

Երէցուրդ անքամ ընտրութիւն Դանիէլի 'ի կաթողիկոսութիւն։ — Ասաւոծ նուէրքաց առ Դանիէլ։ — Ջանք Դաւթի 'ի յոգեշրջիլ 'ի յեռաց Դանիէլի զԱմուն։ — Օծաւծ Դաւթի 'ի կաթողիկոսութիւն։ — Աշխատիք և պարտէզնութիւնք ընդ ամենայն գեղջս, և ջանք Դաւթի վերացուցանել զկաթողիկոսութիւն իւր։

Յետ ընթեռնլոյ միաբանից զգիր հրաւիրակացն՝ զորմէ վերագոյնդ յիշեցաւ, խմբեցան (1801, Մարտ 16) 'ի Տաճարին խորհել զընտրութենէ նորոյ Հայրապետի. ուր 'ի կամիլ բազմաց յատկացուցանել վերստին զԴանիէլ, Դաւթի եպիսկոպոս՝ որ աչառաձակն էր ցայն վայր 'ի բարձր պատիւն, խորհրդատու եղև նոցա հարցանել նաև զհաճութիւն Իշխանաց Երևանայ. „Օ՜ի՞ է, ասէ, եղբարք. զի դուք ձեզէն կամիք առնել զոր առնէք՝ առանց խորհրդակցութեան Իշխանաց մերոց՝ որք յԵրևան. միթէ չի՞ն նոքա մարդիկ“։ Երբև պատասխանեցաւ յոմանց՝ թէ „ոչ առաջին նուազ է այս՝ ընտրութեան Դանիէլի, և զի՞ կայ մեր այժմ ընդ Երևանեցիս, յորժամ ամաւ յառաջ և կիսով ցուցին նոքա ընդ այս զյաժարութիւն առանձին գրով“, անկաւ հերձուած 'ի միջի. և 'ի տեսել յաճախել գամ քան զգամ բարկացայտ և կծու խօսից առ իրեարս յերկպառակ ժողովի անդ, առաւել ևս զայրացեալ ջեռեալ Դաւթի՝ նդ 'ի մտի ոսոխել զենիլ ընդդէմ նոցա ոգւով հակառակութեան։ Եւ զի 'ի թղթոյ Գրիգոր վարդապետի գրելոյ առ Կարապետ վարդապետ Լախիջևանեցի՝ տեղեկացեալ ևս էր

կամակաւանդութեանն Յովսէփայ՝ որ վասն իւր, թէ ստոյգ, թէ անստոյգ, յինքն յանկուցեալ զոմանս 'ի Միաբանից, սկսաւ ամենայն փութոյ պնդութեամբ խորհիլ և հնարոյցս լինիլ 'ի յափշտակութիւն Հայրապետական գաւազանի։ Ուստի 'ի գնալ իւր յԵրուսաղեմ 'ի վաղիւ անդր ընդ այլոց ութ եպիսկոպոսաց 'ի խորհրդակցիլ ընդ Իշխանաց, 'ի ձեռն գաղտորսակ միջնորդութեան ազգակցին իւրոյ Մէլիք Աբրահամու շահեալ զկամս Մահմետ Խանի՝ հաճեցոյց և զոմանս յիշխանաց Հայոց՝ ընտրել զինքն 'ի Կաթողիկոսութիւն։ Այլ զի դժուարին էր զայս յանկարծ 'ի գլուխ հանել, դաղեալ առժամն 'ի սրտի զխորհրդոյն գաղտնիս, 'ի լինել ապա ժողովոյն և յորոշել եպիսկոպոսացն և Իշխանաց զԴանիէլ՝ կամակից նոցուն եղոյց զանձն. և որ առաւելն է՝ գրեաց ապա նաև առանձինն գիր հրաւիրանաց առ Դանիէլ. յորդոր եղև նմա գալ հաստատել ընդ փոյթ յայցելութիւն Աթոռոյն։ Եւ զայս, որպէս թուի, յայն սակս արար, զի մի ինչ յուրուք 'ի միտս կալցիս ընենգամտութենէն իւրոյ արկցէ։ Իսկ եպիսկոպոսք, ընդ որս և Իշխանք, յետ ժողովոյն գնացեալ 'ի միասին առ Մահմետ Խան՝ ծանուցին նմա, եթէ կամին զԴանիէլ նստուցանել Կաթողիկոս, և նա ցուցեալ 'ի վերին երեսս զհաճութիւն՝ գրեաց առ Դանիէլ գալ վաղվաղել յԱթոռ իւր մինչ ցամիսս երկու, և մի անագանել։

Յետ այսորիկ 'ի դառնալ եպիսկոպոսաց յԷջմիածին, կրկին անգամ ժողով գումարեալ հանդերձ իշխանօք՝ հաստատեցին զընտրութիւն Դանիէլի. և գրեալ Հրաւիրագիր մեծ առ Դանիէլ՝ յորում ստորագրեալ և կնքեալ էին անձինք եօթանասուն և ութ 'ի Միաբանից, և քառասուն և մի յիշխանաց, առաքեցին առ նա

յԱնդոկիա (Մարտ 20) 'ի ձեռն երկուց վարդապետաց Ներսիսի Աշտարակեցւոյ[16], և Յովհաննու Պառաւեան։ Ընդ որս և Դաւիթ առանձին գրով յորդոր լինէր նմա փութացուցանել զգալուստ իւր· զի „օր աւուր, ասէ, 'ի կարգաւորութենէ յանկարգութիւն, և 'ի գոյաւորութենէ 'ի չքաւորութիւն երթամք“։

Աղէ մինչ չէ էր սոցա (Ներսիսի և Յովհաննու) հասեալ անդր, Գրիգոր վարդապետ եռ գրել մեծամեծացն Տփխեաց առ Խանն Երևանայ՝ զի հաճեսցի նստուցանել զԴաւիթ՝ Կաթողիկոս։ Եւ ինքն Դաւիթ համախոհ և կամակից ունելով զԿարապետ վարդապետ Նախիջևանեցի՝ որ յառաջ քան զվախճանն Յովսէփու առաքեալ էր 'ի նմանէ յԵրզմիածին իբրև Տեղապահ, զուն գործէր կաշառել որսալ զԵշխանաւորս Պարսից լռիկ ձեռնտուութեամբ Մէլիք Աբրահամու։ Այս իմացեալ Միարանից՝ խուռն 'ի միասին դիմեցին 'ի Տաճարն· ուր և երդմնի արարեալ 'ի փայտն Կենաց և 'ի Գեղարդն սուրբ՝ զոր եղեալն էին 'ի վերայ սեղանոյն, կապեցան պնդեցան նզովիւք 'ի բան՝ ոչ զոք բաց 'ի Դանիէլէ ընդունել 'ի Կաթողիկոսութիւն։ Դանուցեալ ապա (Եպրիլ 10) և Խանին զոր արարին՝ խնդրեցին չառնել ինչ բռնադատութիւն յընտրութիւն այլոյ Խալիֆայի, այն է՝ Կաթողիկոսի· ապա թէ ոչ „մեք կցրուիմք, ասեն, և օճաղն կաւերի· կամք հրամանուդդ է“։ Թողեալ զնոսա Խանին 'ի կամն իւրեանց, հրամայեաց առաքել անդրէն

[16] Այն այս Ներսէս է, որ վարէ այժմ զԵշխանութիւն Հայրապետական։ Կայր սա 'ի մանկութենէն առ աթոռակալ Գալուստ եպիսկոպոսի՝ որ յաւուրս Միմէոնի և Ղուկասու, և յանուն հօր նորա՝ 'ի սարկաւագանալն կոչեցաւ Ներսէս· զի աւազանագիր անուն նորա էր Թէոդորոս։

զայլ ևս հրաւիրակս առ Դանիէլ՝ 'ի փութացուցանել զնա՝ յԱթոռն. զի պակասեսցի, ասէ, 'ի ձէնջ խառվութիւն։ Եւ նոքա առաքեցին զՎաղար եպիսկոպոս խոստովանահայր, և զՍտեփաննոս եպիսկոպոս Վրուշրութեան։

Իսկ Դերսէս և Յովհաննէս վարդապետք՝ որք յառաջագոյն առաքեալ էին, ոչինչ գիտելով զանցիցս, 'ի հասանիլ իւրեանց յԱրզոկիա (Ապրիլ 7)՝ կոչեալ զելևելիսն 'ի մերազն ժողովրդենէ 'ի սուրբ Յոհաննոս անուանեալ եկեղեցին 'ի Թաշ Դէրտիվէն՝ ուր էր և Պարապետ վարդապետ Մաքսուանցի նուիրակ Արքուսաղէմի, յայտնեցին զինչիր և զհրաւէր Միսրանից. և 'ի հաճիլ ամենեցուն ընդ այն՝ առեալ զԴանիէլ՝ ելին 'ի ճանապարհ (Ապրիլ 11)։

'Ի գեղերիլ նոցա 'ի կողմանս Սեբաստիոյ և Էնայ՝ արգելեալ 'ի հիւրամեծար պատուասիրութենանց Փիլիպպոս Էվիրայի Էրփիւրեան, եհաս գիր (Ապր. 28) յերկրորդ Հրաւիրակաց 'ի Կարնոյ, որք աղաչէին փութալ կարճել զճանապարհն. զի գիտէին՝ թէ 'ի պատճառս յամելոյ նոցա ունի յառաջ գալ շփոթ մեծի վրդովման Աթոռայինն, որպէս և եղևն իսկ։

Վանզի 'ի նմին աւուր՝ յորում ընկալան առքա զգիր Հրաւիրակաց՝ Դաւիթ եպիսկոպոս՝ ըստ թելադրութեան Գրիգոր վարդապետի Աղքիրմանցւոյ (որ գնացեալ էր յԱջմիածին 'ի թաղել զմարմին Յովսէփայ) եգիտ պատեհ և առիթ յաջողակ յորսալ արծաթով զկամն Պարսիկ Իշխանին Երևանայ՝ միջնորդութեամբ կնոջ նորոյ, որով և հնարեցաւ սալ օծանել զինքն 'ի Կաթողիկոս՝ մինչ դեռ կայր Դանիէլ 'ի քաղաքին՝ որում անուն կոչեն Ջաճիկք Պարան Մատէնի։

Մուի թէ՝ պատճառք երկու ձկտեցուցին զԴաւիթ

'ի սոյն անձնընծայութիւն· մի՝ բնաւոր ական գլուխն վերժինդիր լինելոյ յիւրոց հակառակորդաց յաղագս անարգանացն զոր եառն նմա 'ի ժամու նախնոյ ընտրութեանն Դանիէլի, որպէս պատմեցաւն 'ի վերոյ· և մեա (որպէս 'ի նորա իսկ բերանոյն լուեալ են բազումք) նախատպաւորութիւնն 'ի մեռս նորա յուրուական արարողութենէ անտի՝ զոր արար Գրիգոր եպիսկոպոս լուսաբար։ Զի այլ պարզամիտ գոլով սորա և անցեալ զաւուրքք, 'ի տեսանել զԴաւիթ 'ի սաճարին միայնակ յաւուր յորում թաղեալ էին զմարմինն Զուկասու՝ կոչեաց զնա հուպ 'ի սան անդր արծաթի՝ ուր կայր մեռոնն սուրբ, և ասէ ցնա· „Ո՛ւ օծից զքեզ Դաւիթ վարդապետ· զի վկայէ յիս Հոգին՝ թէ դու ես արժանի Պատրիարքութեան“· և 'ի խոնարհեցուցանել նորա զգլուխն՝ օծ զնա մեռոնաւն։ Ուրարք այսպիսիք՝ թէպէտև ծիծաղանաց քան պատմութեան դատին արժանաւորք· սակայն և առ բազումս մանաւանդ յորս բուն է երևակայութիւն՝ տպաւորութիւն ազդէն մեծ և սաստիկ, որպէս յայտ է որոց միանգամ թարթափեալք իցեն 'ի վէպս ազգաց։ Եւ Դաւիթ իսկ ինքնին ասացեալ է բազում անգամ (որպէս 'ի լսողաց ստուգեալ է մեր) թէ „քան զամենայն ինչ հոգեզարդ ծերոյն այնորիկ բանքն եղեն ինձ 'ի խրախոյս“։ Այլ մեք զայսոսիկ 'ի խորհրդածութիւն ընթերցողաց թողեալ՝ մատիցուք 'ի կարգ Պատմութեանս։

Այլ Դանիէլեանցն ոչինչ գիտելով զեղելոցս, քանզի չկարծէին, և ոչ իսկ ընդ միտ բերէին՝ թէ հնարեսցի Դաւիթ զայնպիսի ինչ խարդախել ընդ փոյթ, հանդարտութեամբ գնային զեւրեանց ճանապարհ· որոց և անցեալ ընդ Յոնակնեան վանսն՝ որ 'ի Ցարոն, իբրև հասին 'ի դեղ մի Շոռվէրէն անուն՝ լուան անդ (Մայիս 7)

զօծքումն Դաւթի. զրանոր ժամանեցին առ նոսա և Հրաւիրակքն՝ որք ուղարկէին 'ի Կորին։ Որքա և լուեալ զայն՝ յապուշ հարան յոյժ. և լի զարմացմամբ հասեալ (Մայիս 14) 'ի Պայազէտ քաղաք զկայ առին անդէն։ Եւ ահա ոչ յետ բազմաց ինչ աւուրց աղմուկք և ապաքանչանութիւնք ընդ ամենայն տեղիս յաճախեցին յա-ջողութիւն Օսմանցւոց, 'ի Վրաստան և 'ի Ռուսաստան, մինչև ոմանց զԴաւթի ունել կոչմ, և ոմանց զԴանիէլի։ Եւ 'ի մէջ Ենջիճանի ևս երկպառակութիւն էր 'ի Մի-բանս. զի ոմանք 'ի նոցանէ Դանիէլեանք էին, և այլք Դաւթեանք. և իւրաքանչիւր ոք նկրտէր զիւրն զօրա-ցուցանել կողմն։ 'Ի հակառակորդս Դաւթի պարագլուխ էր Գեղարքակիրն։ Սա քանզի ճարտար ոք էր 'ի բանս և հզօր 'ի խորհուրդս՝ բազում աշխատ արար զԴաւթի։ Իր պատմեն եթէ 'ի ժամու օծմանն՝ զայս բանս ասա-ցեալ ցոյց նորա. „Եւս դնեմ արդ զերկուս մատունս իմ 'ի գագաթն քո՝ առ հանելոյ ապա զերկոսին աչսդ“։ Յառաջ վիճեմ գտեալ սոքա ժամ պատեհ՝ մեկնեցաւ 'ի վանացն Ենջիճանի առ 'ի փախչել, այլ չարտարաղ-դութեամբ անկեալ 'ի ձեռս՝ արգելաւ 'ի բանտի ոտնա-կապաց երկաթեաց. որով և 'ի ճարակուրն լինել յա-մենայն կողմանց՝ յակամայ կամս խոնարհեցոյց զանձն, և ըստ միջնորդութեան ոմանց արձակեալ 'ի կապանացն՝ զգնդաւ զհնազանդութիւն։ Իսկապէս չեմ էր շինեալ 'ի սրտի նորա բաց ասելութեանն ընդդէմ Դաւթի. այլ զի չէր հնար յայտնապէս հակառակելոցն շահիլ ինչ՝ ակուռ խելօք վարիլ։ Եւ զառաջինն ջան եդ 'ի կեղծս խնդ մնակրմանալ Դաւթի ցուցանելով զանձն իբրև բա-բեկամացեալ նմա. և իբրև երարձ ըստ ամենայնի զիւէթ կասկածանաց 'ի մտաց նորա՝ սկսաւ հնարս խնդրել առ

'ի փախչելոյ· և յաջողեցաւ նմա։ Զանգի լուեալ սորա՝ թէ Լարսղի եղբօր Դաւթի՝ որ բնակէր յԵրևան՝ ծնեալ է զաւակ արու, կամեցաւ կնքահայր լինել մանկանն իբրև 'ի նշանակ յաւէժական մտերմութեան առ Դաւթի· յորմէ և առեալ հրաման՝ չոգաւ յԵրևան· և յետ կատարելոյ անդէն մեծահանդէս փառօք զկարգ մկրտութեանն՝ եկ 'ի քաղաքէն ոլորէս թէ առ 'ի դառնալ յԶվարթն· բայց խոտորեցուցեալ զընթացս իւր 'ի ճանապարհէն՝ փախեաւ 'ի Տփխիս, և սկսաւ բազմացուցանել անդէն զթիւ կուսակցացն Դանիէլի։

Իսկ Դաւիթ կամելով վաւերական ցուցանել Եղբին զԱթոռակալութիւն իւր՝ սկսաւ այնուհետև գրել ամենայն ուրեք առ մեծամեծս, թէ յանագանել Դանիէլ եպիսկոպոսի, և յանշքանալ Աթոռոյս օր աւուր անգլխութեամբ, ստիպեցին զիս յայս պաշտօն։ Նոյնպէս ետ գրել (Յուլ· 31) բռնութեամբ և Միսբանից յԱժդարխան, 'ի Ղլար, 'ի Մոզդոկ, և յայլ քաղաքս Ռուսաստանի թուղթս Հաւանութեան, յորս յիշեցուցանէր և զկոչակաւանդութիւնն Յովսէփայ վասն իւր։ Եւ 'ի վերայ այսր ամենայնի՝ առ 'ի հաստատ պահելոյ զիշխանութիւնն զոր կալաւ, աշխատակցութեամբ Գրիգոր վարդապետի 'ի Տփխիս, և Յովհաննու Պատրիարքի 'ի Կոստանդնուպօլիս՝ ծանուցեալ Կայսեր Ռուսաց Եղեքսանդրի Ա· և դեսպանին Թամարովի զկոչակն Յովսէփու, գուն գործէր հանել զհրովարտակ 'ի Դրանէ Օսմանեան տէրութեան։ Եւ զի այս ամենայն ոչ առանց մեծագումար ծախուց 'ի գլուխ ելանէր, ձեռն արկ յարծաթի անօթս և 'ի զարդս տաճարին· յորոց զբաղումս հալեալ՝ ետ հատանել գրամս 'ի փողերանոցի Խանին յԵրևան։ Իսկ զառաւել և ծանրագինն ամփոփեալ յարկղ փոքրիկ կամ 'ի գլոց՝ եդ

'ի տան եղբօր իւրոյ յԷրզրում։ Եւ յաւուր միում իբրև պիտաք եղեն հանել ինչ 'ի միջոյ, բերել տուեալ անտի՝ եդ 'ի խուց Սահակն վարդապետի տղգակցին իւրոյ։ Եւ եղև յորժամ աճեաց վրդովումն Էթոռայնոց ընդդէմ իւր, թաղուցեալ զայն 'ի պարկ լի սխտոռամբք, յորում եդեալ էր և զԿեղարդն, `նա այգեպանի ումեմն՝ տանիլ ապահովել վերատին 'ի տուն եղբօր իւրոյ։ Զգացեալ զայս ոմանց 'ի Միաբանից, խրատեցին զԿախիջևանեցի ուխտաւորս՝ որք եկեալ էին անդր, հնարիւք իւիք պրծուցանել զԿեղարդն։ Եւ նոցա դարանեալ զառաջս կալեալ զճանապարհին՝ ընդ որ այգեպանին էր անցանել, յափշտակեցին 'ի ձեռաց նորա զարկղն, և տարան յԷրզրում։ Այլ թէ յոյր ձեռս անց ապա այն՝ չէ ինձ յայտ։ Բայց տեսի և ընթերցայ զպատճէն թղթոյն՝ զոր 'ի նմին աւուր գրեալ է Դաւիթ առ եղբայր իւր. յորում յետ յայտնելոյ զայս դիպուածս՝ ասէ 'ի վերջոյ. „Զի՞նչ կասէք. Վհալբոլի խանի՞ն գրեմ, թէ մեր խանին ևս ծանուցանեմ... Խո՛չ այս ի՞նչ անզգամութիւն է՝ որ այդ չքերն արարեալ են“։

Դանիէլ եպիսկոպոս՝ յետ լսելոյ զօծումն Դաւթի և ընթեռնլոյ զգիր նորա՝ զոր գրեալ էր առ ոմն յիշխանաց, ո՛չ ևս կամեցաւ գնալ Յէջմիածին. այլ զկայ առեալ (Մայիս 21) 'ի Պայազետ, առաքեաց անտի զմի ոմն յիւրոցն, այն է՝ զՄանուէլ վարդապետ Շահինեան Եիւմիւշխանեցի 'ի Կոստանդնուպոլիս, ծանուցանել Պատրիարքին և Իշխանաց զերացն պատահմունս, և խնդրել 'ի նոցանէ նշանակել վասն իւր տեղի ուրէք 'ի կալ յանդորրու. քանզի յահի կայր յերևսաց Պարսից։

'Ի հասանել Մանուէլ Վարդապետի անդր (Յունիս 2)՝ ոչինչ փոյթ եղև Յովհաննու Պատրիարքի զԴա-

նիէլէ. ըստ որում 'ի կողմն էր նա՝ Դաւթի. և 'ի յա-
պաղելն զինպլոյն կատարումն՝ օրաձիգն լինելով, եհաս
անդր (Յուլ. 19) Ներսէս վարդապետ՝ առաքեալ 'ի
Դանիէլէ հանդերձ բազում թղթովք՝ գործակից լինել
Մանուէլի։ Եւ ոգբա երկոքեան իջեանս կալան 'ի Խանն
Միւլէյման փաշայի։ Եկեալ էր 'ի նոյն աւուրս՝ (Յուլ.
15) Յէջմիածնէ և Պարապետ եպիսկոպոս Նախիջևա-
նեցի՝ նորոգ ձեռնադրեալ 'ի Դաւթէ՝ հանդերձ Հաճու-
թեան թղթով, զոր բռնի առեալ էր գլխել և կնքել
Միաբանից՝ նա ինքն Դաւիթ։

Ժողովեալ յայնժամ (Յուլ. 20) Պատրիարքին զՍա-
հակ Եմիրայն և զայլս ոմանս յերևելեաց 'ի սենեակ իւր,
և ածեալ նախ 'ի մէջ զհրովարտակն՝ զոր յանուն Դաւթի
ամսով միով յառաջ հանեալ էր 'ի Դրանէ՝ թերևս
միջնորդութեամբ զեպանին Ռուսաց, հրամայեաց ապա
կարդալ զՀաճութեան թուղթն գրեալ 'ի Միաբանից
Յէջմիածնի. և իբրև կարդացին, առեալ զայն՝ ձեռնա-
գրեաց, և եհար 'ի նմա զկնիք իւր. զնոյն արարին և
ժողովեալքն անդէն. յորոց ոմանք թէպէտև հրաժարիլ
կամէին՝ պատճառելով չունել կնիքս առձեռնպատրաստ.
բայց ապա ձեռնագրեցին և նոքա։ Յետ այսորիկ առա-
քեաց Պատրիարքն զայն թուղթ՝ որպէս և զՀրովար-
տակն՝ առ Դաւթի, ձեռամբ Նախնայիշեալ Պարապետ
եպիսկոպոսի։

ԳԼ. Բ.

ԵՓՐԵՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՌԱՋՆՈՐԴ ՌՈՒՍԻՈՅ

1801—1802

Երկու Եփրեմայ 'ի Գրիգոր վարդապետէ Աղէքսանդրայ։ — Զոնէ Եփրեմայ քնալ 'ի Մոսկովա վասն նէրկայ լինելոյ օծման ժառանգին Կայսերականն Ռուսաց և վասն ապօրէն ցուցանելոյ զկաթողիկոսական դասին։— Հաստատմանն Եփրեմայ յԱրաքելական հայոց 'ի Ռուսիայ։— Հաստատմանն դանիելի 'ի կաթողիկոսական։— Մերժել Մելքանից Էջմիածնի զկաթողիկոսական դասին։— Օծումն դանիելի։— Քաղաքագրական մեկնութեան։

ԵՓՐԵՄ եպիսկոպոս Զորագեղցի՝ որ կայրն յԱժդարխան, չկամէր բնաւ զյաջողութեն կաթողիկոսութեան դասի, զի մի գուցէ յաւուրս նորա եպիսկոպոսացեալ յառաջացի կամ առաքեալ կարգեսցի Առաջնորդ 'ի Ռուսիա՝ հակառակորդ իւր Գրիգոր վարդապետ Աղքիրմանցի։

Յաւուրսն յայնոսիկ հանդիպեալ էր լինիլ հանդէս օծման ժառանգի Կայսերութեան Ռուսաց Աղեքսանդրի Ա. 'ի Մոսկով մայրաքաղաքի։ Այս գիտելով Եփրեմայ՝ ցանկայր գտանիլ 'ի հանդիսի անդ՝ թերևս առ ընդունելոյ շնորհս ինչ և զփառաւորութիւն։ և զի դժուարին էր լինիլ այսմ՝ առանց հրաւիրի կամ կոչման, խնդրէր միջոցս։ Եւ ահա 'ի լսելն զանցս խառվութեանցն՝ որք անցին 'ի Կոստանդնուպոլիս, եգիտ ժամանակ և առիթ պատեհ՝ ընդ զիրգ սրտին՝ միանգամայն և խափան արկանել իշխանութեանն Դաւթի, յորմէ խիթայրն։ Ուստի 'արարս զերիս ինչ։ Նախ ազդ արար լռելեայն Մխարանից Էջմիածնի գրել զԴաւթէ ամբաստանութիւնս առ երիս եղբարս Ս. հայազնեայ Իշխանսն Հայոց՝

Յովհաննէս, Մինաս և Յովակիմ, որոց բնակութիւն էր 'ի Պետրբուրգ կամ 'ի Մոսկով։ Երկրորդ՝ հաճեցոյց զհասարակութիւնս Հայոց Էժդարխանայ՝ Մոզդոկայ՝ և Զլարայ, խնդրել զինքն Առաջնորդ Ռուսաստանի· քանզի Նուիրակութիւնն միայն յանձնեալ էր նմա 'ի Յովսէփայ։ Երրորդ՝ գրեաց առ Դանիէլ բողոք բառնալ առ Կայսր զԴաւթէ, և խնդրել իրաւունս։

Յետ հնարաւորելոյ զայսոսիկ՝ չոքաւ 'ի Մոզդոկ· ուր ցուցեալ Ռուսակալին զգիրն՝ զոր առեալ էր 'ի Հասարակութեանցն Էժդարխանի և այլոց քաղաքաց 'ի վկայութիւն ապօրէնն լինելոյ ընտրութեան և Հայրապետութեան Դաւթի, պատմեաց նմա զհամբաւ խռովութեանցն եղելոց Յէջմիածին և 'ի Կոստանդնուպոլիս, և ստեալ զկտակն հռչակեալ յանուն Յովսէփու· ամբաստան եղև և զԴրիգորէ· զի նա եղև, ասէ, նախապատճառ այսպէս աղմկելոյ ժողովրդեան։ Եւ զի Ռուսակալն աւուրքք ինչ յառաջ՝ առանց մանրախուզիւ 'ի վերայ հասանելոյ ստութեան կամ ստուգութեան Յովսէփեանն կտակին՝ ծանուցեալ էր զայնմանէ 'ի խորհրդարանն Էքքունի ('ի Խարձր Կաղէկն) 'ի Պետրբուրգ· 'ի լսելն այժմ՝ թէ հնարած ինչ է այն խորագիտութեամբ Դրիգոր վարդապետի՝ դառնացաւ 'ի վերայ նորա։

Այնժամ հրաման առ 'ի նմանէ Երքեմ՝ գնալ 'ի Մոսկով առ 'ի յանդիման լինել Կայսեր, մերկել զպատրուակ ճշմարտութեանն և խնդրել իրաւունս։ Այլ մինչ չև ելեալ էր անտի, գրեալ (Մայ· 15) առ Ամիրայս Կոստանդնուպոլսի՝ յորդորեաց զնոսա պինդ կալ 'ի վերայ ընտրութեան Դանիէլի, և լինել աներկիւղ· զի „սմենողորմ Կայսրն, ասէ, այս նոր եղելութեանց տեղեակ չէ· և վասն ծանուցանելոյ Նորին Ինքնակալու-

թեան՝ ահա գնամ 'ի Մոսկով քաղաք. ներկայ լինել սուրբ օծմանն, և ծանուցանել զկորամանկութիւն Գրիգորի և Դաւթի. դուք 'ի վերայ ճշմարտութեան հաստատուն կացէք", և այլն։

'Ի լսել Դանիէլեանց զայսօրինակ յուսադրութիւն Եփրեմայ՝ քաջալերեցան, և մնային տեսանել՝ թէ զի՞նչ պատգարեկեցի անտի։

Ընդ հասանել (Օգոստ. 27) Եփրեմայ 'ի Մոսկով, հասին և թուղթքն գրեալք ըստ խրատու նորա 'ի Միաբանից և 'ի Դանիէլէ առ Վեհգնեայ երիս եղբարսն՝ որք յիշատակեցան 'ի վերոյ։ Ընդիսակ գոլով այսմ՝ Դաւթի, գրեալ էր և ինքն զառանձին թուղթ, յորում ցուցանելով զայրակտութիւն իւր կտակաւ Յովսէփու հաստատեալ՝ խնդրէր միջնորդութեամբ նոցա ընդունել զհրովարտակ 'ի Կայսերէ. բայց չգտեցաւ ինչ. զի առաջնոցն բանք առաւել ևս եղեն հաւատալի, մանաւանդ զի և Եփրեմ յառաջնմէ իսկ լեալ յայտնեալ զերացն պատահմունս և զթեկնածութիւնն Գրիգոր վարդապետի, վասնալ էր զՍրատմոնականն նոցա։ Ուստի Յովհաննէս՝ մի 'ի Վեհգնեայցն՝ յետ ծանուցանելոյ Նախարարաց Տէրութեան զազգակ Միաբանից Էջմիածնի զԴաւթէ, ևս և զենդիր Ռուսիաբնակ ժողովրդոց յաղագս Առաջնորդութեան Եփրեմայ, ընդ որս և զբողքն Դանիէլի, գրեաց (Սեպտ. 6) 'ի Պետերբուրգայ 'ի Մոսկով առ եղբարսն իւր Մինաս և Յովակիմ՝ ձեռնտու և նպաստամատոյց լինել Եփրեմայ յամենայն գործս։ Սոցա հոգատարութեամբ ներկայացաւ Եփրեմ 'ի հանդիսի օծութեան Կայսեր (Սեպտ. 15). յորմէ և գտեալ շնորհս, որպէս ըղձայրն, ընկալաւ զհաստատութիւն Առաջնորդութեան Հայոց 'ի Ռուսիա, և զհրաման 'ի կրել զՊա-

նակէ ականակապ 'ի լանջս իւր։ Հրամայեցաւ և դեսպանին 'ի Կոստանդնուպոլիս չհանել յՕսմանեան Պրանէ զհրովարտակ յանուն Պաւլթի, այլ 'ի կամս Ազգին թողուլ ընտրել ընդ որ և հաճեսցին։

Յայսմ ժամանակի Պանիէլ եպիսկոպոս՝ որ կայր առաքաւին 'ի Պայազիտ, լուեալ յոմանց՝ թէ Պաւլիթ Կաթողիկոս բազմում ինչ խոստանայ մեծամեծացն Ֆաճկաց և բդեշխի քաղաքին՝ մատնել զինքն 'ի ձեռս իւր, ծանոյց 'ի Կոստանդնուպոլիս՝ Ամիրայից, և նոցա հրաման հանեալ (Հոկտ. 8) յալքունեուստ առ բդեշխն Պայազիտոյ և Կարնոյ՝ փախուցին զնա 'ի Կարին և զերծուցին 'ի վտանգէ։

Իսկ յետ աւուրց ինչ (Հոկտ· 17) իբրև իմացան զկամս Կայսեր յընդարձակ թղթոյն Ներսիսեայ գրելոյ 'ի 19 Սեպտեմբերի առ Պատրիարքն Յովհաննէս և առ Ամիրայս և առ հասարակութիւն Ազգին, ընկեցեալ խսկոյն յաթոռոյ զՅովհաննէս Պատրիարք՝ սակս գալոյ նորա 'ի կողմն Պաւլթի, աքսորել եռուն յԻրդոկիա· և 'ի տեղի նորա որոշեցին (Հոկտ· 19) զՊրիգոր եպիսկոպոս Խամսեցի զնուիրակն Էջմիածնի։ Այլ զի էր նա յայնժամ յԻրդոկիա, կարգեցին զոմն Յակոբոս եպիսկոպոս՝ լինել փոխանորդ մինչև 'ի գալ նորա։ Իսկ ապա յորժամ ազգ եղև նոցա 'ի դեսպանէն ընտրել 'ի կաթողիկոսութիւն զն ոք և կամեցին, հանին (Նոյեմբ· 23) 'ի Պրանէ զՀրովարտակն յանուն Պանիէլի· գրեցին ապա (1802 Յունվ· 8) առ Մխիթարեանսն Էջմիածնի 'ի բաց կալ 'ի Պաւլթէ՝ անվաւեր համարեալ զեշխանութիւն նորա, և օծանել զՊանիէլ յօրինաւոր Հայրապետութիւն։ Այլ զի չէր հնար նոցա զայս առնել առ ահի Խանին Երևանայ, գրեցին և առ ինքն Խանն, և խնդրեցին մեր-

ժել զԴաւիթ, և թոյլ առնել Դանիէլի նստել 'ի տեղի նորա։

'Ի սաանալ Դանիէլի (Փետր. 21) 'ի. Կարին զՀրովարտակն և զվերոյիշեալ թուղթսն՝ զորս երէր Ներսէս վարդապետ, առաքեալ նախ առ Խանն Երևանայ զեպիսկոպոս ոմն Մարտիրոս անուն՝ յանձնարարական զրով բդեշխին, և իմաց տուեալ Միրանից Էջմիածնի զգալըստանելն իւրմէ անդր ընդ փոյթ, ել և գնաց (Մայիս 9) իւրովքն 'ի Պայազիտ։ Եւ քանզի իմացեալ էր յայնժամ Կայսրն Ռուսաց յազգարարութենէ դեսպանին զհաճութիւն Ազգին ընդ Դանիէլի, և հաստատութիւն հրովարտակին Յովսանեան Տէրութենէ վասն Հայրապետութեան նորա, առաքեաց նմա 'ի պարգև կերպաս ծանրագին 30 կանգուն, և ժապաւէն ոսկեթել նրբահիւս 50 կանգուն հանդերձ առանձին Հրովարտակաւ (Թարգմանիւ [17])։ զրեաց և առ Մահմէտ Խանն Երևանայ (Մայիս 23)՝ ցուցանել նմա զբարեկամական օգնութիւն և զպաշտպանութիւն։

Իսկ Եփրեմ եպիսկոպոս կասկածեալ՝ թէ գուցէ Խանն Երևանայ կաշառեալ 'ի Դաւթէ՝ առ շնորհուկս նորա չթողուցու Դանիէլի վարել զիշխանութիւն, յորդորէր զրովք իւրովք զգլխաւոր Իշխանսն Կոստանդնուպօլսի, և զՄիրանսն Էջմիածնի՝ օծել տալ զԴանիէլ 'ի Կաթողիկոս 'ի վանսն Յովհաննու Կարապետի 'ի Բագրևանդ գաւառի մերձ 'ի Պայազիտ՝ Իւչքիլիսէ ասացեալ 'ի Տաճկաց, և անդ նստուցանել զնա։ Եւ այս ցուցանի 'ի թղթոյ նորա, զոր՝ 'ի 19 Սեպտեմբերի 1801 ամի՝ գրեաց 'ի Մոսկովայ առ Ամիրայս և առ Հասարակու-

[17] Զօրինակ թարգմանութեան Հրովարտակիս գտցես 'ի վախճան մատենիս (Զ)։

թիւնն Կոստանդնուպօլսի· յորում յետ այլոց բանից ասէ· „Զապօրինաւորդ այդ (այսինքն՝ զԴաւիթ) արտաքսեցէք, և զԴանիէլ մուծէք 'ի նեղս։ Իսկ եթէ երկիւղ իցէ 'ի Պարսից, գրեցէք Դանիէլին գալ Յուշքիլիսէ՝ և անդ օծանիլ"... Յաւելու ևս· „Սակս երկու պատճառի ասեմ Դանիէլ Յուշքիլիսէ օծանիլն, նախ՝ որ այն չօծեալն (Դաւիթ) միայնակ մնասցէ, և հետևողք նորին չկարասցեն մատնել 'ի Տէրութիւնն Օսմանցւոց· 'ի հարկէ ակամայ կամաք ճարակուր եղեալ հերքելոց են զնա անտի։ Եւ երկրորդ՝ յայսպիսի չարաբորբոք ժամանակի՝ ոչ բաւուք վարկանիմ Դանիէլին 'ի սուրբ Աթոռն լինիլ՝ և անդ մնալ, որովհետև յերկիւղէ Պարսից մեծամեծ հարկապահանջութիւնք են յառաջանալ։ Որոյ աղագաւ և վաղ ուրեմն ունիմ գրեալ նախանկատ դիտմամբ՝ թէ 'ի սուրբ Աթոռն, և թէ առ Դանիէլ արքեպիսկոպոսն"։

'Յիմանալ Դաւթի զայս՝ առաքեաց (Ակր· 12) զՍտեփաննոս եպիսկոպոս Դուշուրեան Տփխիսեցի և զԼազար վարդապետ Վեցիկեան 'ի Կոստանդնուպօլիս, զի հոգ կալցեն որով և իցէ հնարիւք զհաստատութենէ Կաթողիկոսութեան իւրոյ 'ի ձեռն ստանարութեան Դէորգայ Աղայեկեան, որ էր գլխաւոր պաշտպան նորա և ջատագով։ Եւ յետ այնորիկ սկսաւ խստիւ վարել զգաւազան իշխանութեանն· և 'ի դիմադարձել Միաբանից՝ յաւել և ևս զդժնէութիւն իւր առ նա· մինչ զի ոչ ևս կարացեալ հանդուրժել, դիմեցին (Ակր· 14) խուռն բազմութեամբ յեկեղեցին, և ընդ բանիւ արարեալ զԴաւիթ՝ գրեցին առ նա „թէ վասն զանազան անկարգութեանց և բարբարոսական գործոց քոց՝ ոչ ընդունիմք զքեզ"։ Եւ 'ի միւսում աւուր (Ակր· 15) յամբոխիլ

նոցա վերստին՝ եւ Դաւիթ փակել զդրունս վանաց՝ զի մի ոք փախիցէ։ Զայս տեսեալ նոցա՝ բորբոքեցան յառաւել եւս կատաղութիւն, եւ քակեալ զորմն հիւսիսակողմանն՝ որ 'ի վաճառանոցն հայի, ինչին ամենեքին ընդ այն. եւ դիմեալ զայրագին Յերեւան յապարանս Խանին՝ բոլոր բարձին առհասարակ աղաղակաւ. „կամ բարձ, ասեն, 'ի միջոյ զչարն եւ բեր զօրինաւոր Հայրապետն մեր (զԴանիէլ), եւ կամ սպան զմեզ զամենեսին“։

Զայս արարեալ Միաբանից՝ օգտեցան ինչ ոչ, այլ չարաչար եւս գառնացուցին զԴաւիթ. որ թիկունս ունելով զԽանն՝ եւ բռնաբար կնքել ամենեցուն նոցա զթուղթ մի (Ինթիզամ), յորում գրեալ էր Պալսիկ գրով. „Եթէ ոք 'ի մէնջ Խալիֆի (Կաթողիկոսի) հրամանն չառնու յանձն կատարել, զմօրուս նորա գերծցեն, եւ Խանին հարիւր թուման տուժեսցի։ Եթէ ոք փախիցէ՝ զայս պատիժ հատուսցեն յրմբռնիլն նորա, եւ 'ի սենեակս եղեալ ինչքն իւր՝ Խանին եղիցի բոլորովին“։ Այնպէս էառ եւ այլ յատուկ թուղթ մի ՅԱստուածատուր եւ 'ի Բարսեղ եպիսկոպոսաց. զի եթէ հակառակեսցին՝ իւրաքանչիւրն 'ի նոցանէ տուժեսցի հինգ հարիւր թուման։

Զայս ամենայն ծանուցին (Մայ. 20) գրով Միաբանքն գաղտաբար 'ի Ռուսիա եւ 'ի Կոստանդնուպոլիս. ուր եւ յաւելուն ասել եւ զայս. „Եւ (Դաւիթ) գրել 'ի գիմաց Միաբանից զբանադրանս վասն փախաքելոյն մերոյ (այսինքն վասն Դանիէլի), եւ հրաւիրելոց է զմեզ 'ի կնքել. ոչ գիտեմք զինչ արասցուք. եթէ կնքեմք՝ հակառակ գտանիմք Աստուծոյ եւ կանոնաց սրբոյ Հարց, եւ անձամբ զանձինս մեր նզովեալ՝ ընդ բանիւ առնեմք զմեզ. ապա եթէ ոչ կնքեմք՝ անշուշտ գիտեմք թէ զի վերոյ գրեալ պատիժն կրելոց եմք... վասն զի ոչ կարեմք

հրամանի սորա կալ ընդդէմ երբէք թէ իրաւացի իցէ հրամանն՝ և թէ անիրաւ· զի մահ և կեանք մեր 'ի ձեռին՝ սորա են· կամի՝ կեցուցանէ, և կամի՝ կորուսանէ· եթէ ծանր ծանր յանցանս բարուրանօք բարդեսցէ 'ի վերայ մեր, և 'ի թղթի արձանացուցանել՝ հրաւիրեսցէ 'ի կնքել, ոչ կարիմք բացասել", և այլն։ Այս և ըստ իրատուն՝ զոր առեալ էին յԵրեմայ, ասեն վասն Դանիէլի· „Այս և դիտասջիք· կամք է մեզ ամենեցունցս՝ զի 'ի Տէրութեանն Օսմանցւոց օծցի և նստցի անդ օրինաւոր սրբազան Հայրապետն մեր, և զգործ Հայրապետութեանն կատարեսցէ՝ սրբագործելով զմեռոն", և այլն։

Իբրև լուան և ընթերցան զայսոսիկ Դանիէլ եպիսկոպոս և որք առ նմայն Միաբանք Էջմիածնի, կոչեալ զՊարապետ Կաթողիկոսն Աղթամարայ, և եպիսկոպոսունս՝ թուով հնգետասան[18], և վարդապետս 28, և քահանայս բազումս, գումարեցին ժողով 'ի վանս սուրբ Պարապետի որ 'ի Լագրևանդ· ուր յետ դատապարտելոյ զԴաւիթ և զՊարապետ և զԴրիգոր վարդապետսն՝ որք ձեռնադրեալ էին 'ի Նմանէ եպիսկոպոս, օծին (Մայ· 25) զԴանիէլ 'ի Կաթողիկոս, և ետուն նմա օրհնել զմիւռոն, և ձեռնադրել յեպիսկոպոս զՄինաս վարդապետ Պաչլուեան, և զՅովհաննէս վարդապետ Պառաւեան, և զայլս երկուս 'ի վարդապետաց։ Եւ զոր սրարինն՝ հրատարակեցին գրով ընդ ամենայն տեղիս։ Առաքեցին 'ի Կոստանդնուպօլիս ձեռամբ Դրիգոր եպիսկոպոսի Առաջնորդին Սեբաստիոյ՝ զվճիռն Միւնհոդոսական, զորոյ զծաղկաքաղ 'ի դէպ համարիմ դնել յառաջիկայդ։

---

[18] Ցայլում ձեռագրի գնի „չորեքտասան"։ Ծանոթ· Զ· Մ։

Վաղուան Աթոռոական Վճռոյն

Ոչ իցեն երկու և երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա, ասաց Տէր մեր։ Վասն որոյ և ի ժամանակիս յայսմիկ մինչ ձեռնարկեաց ամենաշարն խարբալել զեկեղեցի սուրբ յանուն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ժողովեալ զբազմութիւն եպիսկոպոսաց՝ վարդապետաց՝ քահանայից և ժառանգաւորաց ի յերեք Վանք կոչեցեալ սուրբ ուխտս, որ ի ստորոտ Նպատ լերինն ի Բագրեւանդ գաւառի առ ափն Եփրատայ... Եւ ասա ի մէջ զքանչելահրաշ սրբոյ տաճարիս կառուցելոյ յանուն Յովհաննու՝ այն է Տրդատայ արքայի մերոյ, առաջի սրբութեան սեղանոյն վկայութեամբն Աստուծոյ և սուրբ Աւետարանի նորա, ուղիղ ակնարկութեամբ ի հանդէս մատուցեալ, քննեցաք զդատաստան Դաւթի Թիֆլիզեցւոյ՝ որ անձնընծայ եղեալ անուանեցաւ Կաթողիկոս Հայոց յամի 1801 ի 28 Ապրիլի. յորմէ և այսր ոչ երբէք տեսանէ եկեղեցիս Հայոց զերեսս խաղաղութեան, զոր վայելէր առատապէս յերեկն և յեռանդն։ Եւ ի զննին եղեալ համեմատութեամբ աւետարանական բանից և գրոց մարգարէական և առաքելական, ծանեաք զնա ամենեին խոտորեալ ի շաւղաց կենարար վարդապետութեան նոցին, և հետեւեալ քննութեամբ կանոնաց Հարցն Արբոց առաջնոց, և բարւոք վերահասութեամբ քանի քանի բազմակնիք գրութեանց քահանայակարգ միաբանութեանն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, գտաք զնա իսկապէս ընդդատապարտութեամբ եկեղեցւոյ, և անվաւեր օծութիւն նորա։ Նաև տեսաք և ընթերցաք զայլ բազում գրութիւնս, որոց ամենեցուն համեմատութեամբ գտաք զԴաւիթն ամենեին հակառակ Հարցն կանոնաց, և անընդունակ ընտրութիւն և օծութիւն նորա. ուստի խոտեցաք զնա ըստ բանի մարգարէին՝ թէ խոտեսցեն այնոքիկ՝ զոք ընտրեալ են արծաթով և հրաժարեցաք ի նմանէ, որպէս ի թշնամւոյ եկեղեցւոյ... սմին իրի և մեք համաձայնեալ Հարցն սրբոց առաջնոց և վերջնոց, հարաք զնա ի վէճն Քրիստոս, և դատապարտեցաք զնա ինքն Դաւիթ և զամենայն հնամեխոհն իւր դատապարտութեամբս եկեղեցւոյ, մինչև զղջացեալ ապաշխարեսցեն, և դիմեալ յոտս օրինաւոր սրբազնին՝ զոցեն զաղաւութիւն իւրեանց... Յետ ամենայնի ընթերցաք և զմահղեր համահաճութեան Պօլսեցւոց և այլոց քաղաքաց մերազանց գրեալ առ միաբանութիւնն սրբոյ Էջմիածնի յամի 1802, Յունվ. 8... Ուստի և մեք համաձայնեալ նոցին ընտրութեան ընկալաք արժանապէս զընտրեալն ի բազմաց զՏէր Դանիէլ սրբազան արքեպիսկոպոսն, որ և ի 25 ամսոյս Մայիսի հեղմամբ սրբալոյս մեռոնին յարժանաւոր գազաթ նորա՝ օծաք զնա օծութեամբ սրբոյ Հոգւոյն Աստուծոյ Կաթողիկոս և քահանայապետ

ամենայն Հայոց և ծայրագոյն Պատրիարք Արբոյ Էջմիածնի··· Մանաւանդ և՝ զի ոչ եթէ մեք հակառակ Դաւթի օծեալք զորբազան Տէրս մեր, այլ նա ինքն հակառակ սմա օծաւ յառաջագոյն, ուրանալով զծանուցեալ ճշմարտութիւնն այն՝ զոր յառաջագոյն ձեռագրով իւրով խոստովանեալ էր, թէ Աստուած է՝ որ կոչէ զքեզ, և ով է՝ որ Աստուծոյ կամացն կայցէ հակառակ"։

„Գրեցաւ և կնքեցաւ 'ի թուին Հայոց ՌՄԾԱ (1802) 'ի Մայիսի 28, յԵրեք-Խորան կոչեցեալ սուրբ վանս, որ 'ի Բագրեւանդ գաւառ"։

Ընդունակ եպիսկոպոսացն ժողովելոց բաց 'ի Կաթողիկոսէն Ընթամարայ (Կարապետի), էին այսոքիկ·

Խաչատուր արքեպիսկոպոս՝ առաջնորդ Բարդուղիմէոս առաքելոյ վանացն։

Գէորգ արքեպիսկոպոս՝ առաջնորդ Թադէոս առաքելոյ վանացն։

Յովհաննէս արքեպիսկոպոս՝ առաջնորդ երկոտասան առաքելոց վանացն։

Յովհաննէս արքեպիսկոպոս՝ առաջնորդ Մշու սուրբ Կարապետի վանիցն։

Անտոն արքեպիսկոպոս՝ առաջնորդ Մանազկերտոյ։

Գրիգոր արքեպիսկոպոս՝ առաջնորդ Բաղիշու։

Աբրահամ արքեպիսկոպոս՝ առաջնորդ Դերջանու։

Գրիգոր արքեպիսկոպոս՝ առաջնորդ Սեբաստիոյ։

Գրիգոր արքեպիսկոպոս՝ առաջնորդ Բալուայ։

Փիլիպպոս արքեպիսկոպոս՝ առաջնորդ Խարբերդու։

Մանուէլ արքեպիսկոպոս Վարդի հօր վանաց։

Աբրահամ արքեպիսկոպոս՝ առաջնորդ սուրբ Սահակայ վանից։

Կարապետ եպիսկոպոս Կեսարացի։

Վարդան եպիսկոպոս Բաղիշու։

ԳԼ. ԺԹ.

ՆԵՐՔԻՆ ԱՐՀԱՒՈՐՔ ԱԹՈՌՈՑՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

1802—1805

Ժողով գումարեալ 'ի Դուրին և կոչեալք նորա։—Գալ Դանիէլ յԷջմիածին։—Ջան+ Յովհաննէս եպիսկոպոսի 'ի Բոլիս գնել զզբօրինեան Հրովարտակն Դանիէլի։—Դանիէլ և Դուրին կամաւոր յերեսան ամենայն պարսից։—Կրկին զբօրնալ Դուրին։—Մեկնել Գրիգոր և Ներսէս եպիսկոպոսաց յԷջմիածնէ։—Աբգեղամ Դանիէլի 'ի Խարբերդն տնեցի և Բերձոսի մօրաց նորա։—յԱրքայսոսի զբրոց Ռոսաց 'ի վերայ երեանայ։—Ատոլոսի Դանիէլի 'ի Մարաղայ։—Թաղի Դանիէլի 'ի Մարաղայէ։

ԶԱՅՍ լուեալ Պաւլի, ինքն ևս ժողով գումարեալ յիւրոցն կուսակցաց և 'ի համախոհից, որոց զլխաւորագոյնք էին՝ Յոհաննես եպիսկոպոս Վրուշուրեան, Աբրահամ եպիսկոպոս Վէօլեան, Անդրէաս եպիսկոպոս Պապ կոչեցեալ, Սիմէոն եպիսկոպոս մականուն Մոգ, միւս Սիմէոն եպիսկոպոս աթոռական՝ որ յետոյ եղև վանահայր Թադէոս առաքելոյ վանացն, Պօղոս վարդապետ Ղազարեան Կարբեցի, Ղազար վարդապետ Ալեցիկեանց, Յակոբ վարդապետ Կարնեցի գրագիր, Մկրտիչ վարդապետ Դուզկիացի, Սահակ վարդապետ Պարբինեան, Աւետիք վարդապետ Ալքիլ,—բանադրեաց զԴանիէլ, և յաւել ևս առաքել 'ի Կոստանդնուպոլիս զՅոհաննես եպիսկոպոս Ցփխիսեցի Վրուշուրեան անուանեալ, և զՂազար վարդապետ Ալեցիկեանց, որոց և Ջանիւքն ընկեցեալ (Հոկտ. 17) 'ի Պատրիարգութենէ զԳրիգոր եպիսկոպոս Խամնեցի՝ ետ կացուցանել 'ի տեղի նորա զՅովհաննէս եպիսկոպոս զառաջին Պատրիարքն, և զօրութեամբ արքունի Հրովարտակին՝ զոր եհան այս Պատրիարք, զնոյն

ինքն զԳրիգոր ածեալ կապանօք 'ի վանս օրբոյ Կարապետի յԻշխիլիսէ, և անտի ընդ Դանիէլի ետ բերել յԷջմիածին։

Յայս գործ Դաւթի խառն երևի բռնութիւն ընդ խաբէութեան· զի, որպէս պատմեն, կամելով Դաւթի անկասկած առնել զԴանիէլ 'ի գալ առ ինքն՝ առաքեաց ընդ առաջ նորա բանիւ խաղաղութեան զԷբրահամ եպիսկոպոս Ցաթևացի Վէօլեան կոչեցեալ՝ խոստանալով սիրով և պատուով ընդունել զնա, և յանձնել նմա զԷթոռն Հայրապետական՝ եթէ ինքն յօժարեսցի։ Այլ իբրև մերձ եղեն 'ի վանս Էջմիածնի 'ի դուռն Ազարապատայ՝ հակառակ խոստմանն պատահեցին դէպք, զի սպասաւորք Դաւթի յարձակեալ 'ի վերայ նոցա աւազակօրէն՝ կորզեցին 'ի ձեռաց նոցա զինչ և զամն զգէնս՝ զժամացոյց, և այլն։ Եւ կարծի իբրև 'ի զանխուլ իմն թոյլտուութենէն Դաւթի լինել իրացս· զի Էբրահամ եպիսկոպոս սրտմտեալ յոյժ և դժուարեալ ընդ այնպիսի դժպատեհ անցս՝ դիմեաց զայրագին առ Դաւիթ, և սկսաւ մեղադիր լինել նմա յաղագս խոստմնազանցութեանն· „Եւ, ասէ, քոյով բանիւ, սէր խոստացայ Դանիէլի և պատիւ, և յուսացուցի զնա 'ի հաշտութիւն և 'ի խաղաղութիւն· այլ ահա սուտ գտանիմ այժմ 'ի բանս իմ և ամօթազգեաց“։

'Ի լսել Դաւթի զայս՝ ոչինչ եցոյց դառնութեան կիրս յանձին· այլ հանդարտութեամբ ոգւոյ յարեաւ գնաց վաղվաղակի ընդ առաջ Դանիէլի 'ի Ներսի Ազարապատ կոչեցեալ տեղւոջ՝ ուր իջևանեալն էր նա· և անդ ողջունեալ զնա քաղցրութեամբ և զգալուստն շնորհաւորեալ՝ խօսել սկսաւ և ասէ· „Որ ինչ եղեն՝ եղև· մի՛ ինչ յայսմ հետէ վշտացուսցուք, զմիմեանս, զի արք եղբարք

եմք երկոքեանս. եթէ ես և եթէ դու՝ Աթոռոյն եմք որ-
դիք։ Ո՞վ է Պօղոսն, կամ ո՞վ Ապօղոսն, և այլն...
ուստի և արժան է մեզ հանգչել 'ի գիրկ ծնողիս մերոյ,
վարիլ ընդ իրեարս եղբայրաբար՝ աշխատեալք մի քան
զմի առաւել յԱթոռոյս պայծառութիւն. և զուր է մեզ
մաշել զկեանս յերկիւղ՝ 'ի կասկած՝ և 'ի սնոտի հոգս
անցաւորաց. զի ոչ քեզ պատուս մի հացի պակասէ, և
ոչ ինձ ումպ մի ջրոյ"։

'Ի բանից ասսի Մխիթարեալ Դանիէլի և յորդորեալ
'ի սէր և 'ի խաղաղութիւն՝ հեզութեամբ և քաղցրու-
թեամբ բերաւ 'ի պատասխանիս. քանզի և ինքն 'ի բնէ
հանդարտազգեաց և երկիւղած վիճակեալ էր բարոյից։
Եւ գոյր յոյս՝ թէ վախճան առցին այնուհետև ամենայն
աղմուկք երկպառակութեանց՝ որք եղեն ցայն վայր 'ի
մէջ ազգիս 'ի պատճառս երկոցուն սոցա. սակայն ընդ
հակառակն պատահեաց։

Վանզի Յովհաննէս եպիսկոպոս Դեղարդակիր՝ որ
փախուցեալն էր 'ի Տփխիս, զտիւ և զգիշեր ոչ դադարէր
'ի գործ դնելոյ զամենայն հնարս բորբոքելոյ զհակառա-
կութիւնս ընդդէմ Դաւթի։ Եւ իբրև ընկալաւ յԵփրեմ
եպիսկոպոսէ զօրինակ Հրովարտակի Աղեքսանդրի Կայսեր՝
գրեալ 'ի 19 Մայիսի 'ի հաստատութիւն Կաթողիկոսու-
թեան Դանիէլի, զոր հանեալ էր նա սատարութեամբ
տանն Լազարեանց, առաւել ևս քաջալերեալ՝ խնդրեաց
'ի Ռուս և 'ի Վրացի կառավարչացն Վրաստանի 'ի
գործ դնել զզօրութիւն հրովարտակին։ Եւ նոցա առա-
քեալ դեսպանութեամբ զԹէմուրազ՝ զորդի Թէմիրազ
Էշիկ Աղասիի առ Մէհմէտ խանն Երևանայ՝ միջնորդե-
ցին նմա, զի ընկեցեալ զԴաւիթ յԱթոռոյն՝ նստուցէ
զԴանիէլ։

Այլ զի 'ի նմին ժամանակի Լդեշին կարուց դատակնքեալն 'ի մահ յՕսմանեան Պրանէ՝ փախստական անկեալ էր յԱրևան, կամելով խանին բարերարել նմա, առիթ բարեպատեհ վարկաւ զայն զայս միջնորդութիւն Վրաց 'ի խնդրել 'ի նոցանէ զօգնութիւն· ուստի ասէ ցդեսպանն առաջի Լդեշխին· „Կատարեսցին խնդրուածք քո՝ եթէ և որք առաքեցինն զքեզ՝ հաւանեսցին ձեռն տալ Լդեշխիս այսմիկ, և կացուսցին զսա վերստին յիւրում իշխանութեանն՝ փութացուցանելով առ սա զօրս 'ի վանել զթշնամին իւր զնորեկ Լդեշին՝ որ կայ 'ի Կարս“։ Իբրև յանձն էառ զայս՝ դեսպանն, և մեծամեծս կոտորելով յուսացոյց 'ի մերձ ընդ մերձ կատարումն բանին մինչ ցաւուրս հնգետասան, առաքեալ կոչեաց խանն նախ զՊանիէլ՝ և ապա զՊաւիթ՝ յԱրևան· որպէս զի առեալ 'ի վերջնոյն զփականս Կաթուղիկոսական տանն և գանձարանին՝ յանձնեսցէ առաջնոյն։

Մինչ այս մինչ այն, անցին աւուրք, և յերկոցունց կողմանց անպտուղ գտան խոստմունք։ Զանգի Կառավարիչք Վրաստանի՝ յինչ պատճառէ ոչ գիտեմ, դանդաղեցան կամ բնաւ իսկ չկամեցան առաքել զօրս յԱրևան ըստ խոստման դեսպանին։ Այն տեսեալ խանին՝ ետ 'ի մտի, թէ արք ենենգամիտք են նոքա և խաբեբայք· ուստի փոխեալ զխորհուրդ սրտին՝ թոյլ ետ Պաւիթի երթալ վարել ըստ առաջնոյն զիւր իշխանութիւն, և ցդեսպանն ասէ· „Փոխանակ զի դու զքոյդ չկատարեցեր խոստումն, և ոչ ես զիմն կատարեմ“։

Իբրև պատրաստ էր դեսպանն դառնալ յետս, Գրիգոր եպիսկոպոս Խամնեցի, և Ներսէս վարդապետ, որք էին յայնժամ ընդ Պանիէլի յԱրևան, երկուցեալ այնու-

հետև գնալ յԷջմիածին և կալ ընդ խեթիւ ակնարկութեամբ ատելոյն իւրեանց, յորդորէին և սարկէին զԴանիէլ գնալ ընդ դեսպանին. և 'ի չառնուլ նորա յանձն՝ ոչինչ խղճեցին մեկնիլ 'ի նմանէ. ուստի և հաճեցուցեալ զկամս Խանին՝ ըստ միջնորդութեան դեսպանին՝ չոգան (Հոկտ. 30) 'ի Տփխիս։ Առաջինն 'ի սոցանէ զտեղի էառ անդէն առ Գեղարդակրին՝ որ զառաջնորդականն վարէր իշխանութիւն. իսկ երկրորդն, այն է՝ Ներսէս՝ ոչ կամեցեալ կալ առ նմա՝ մեկնեցաւ գնաց առ Եփրեմ եպիսկոպոս՝ որ կայր յայնժամ 'ի Նոր Նախիջևան քաղաքի։

Երկոքին սոքա թէպէտև քաջ գիտացին 'ի ճողոպրումն անձանց փութալ, այլ զԴանիէլ թողին 'ի վտանգս, և բազմապատիկ տառապակրութեանց նորա գոսան պատճառք։ Բանզի կասկած մեծ առեալ Դաւթի 'ի հպըստէպ դիմելոյ նոցա առ հզօրագոյն և գլխաւորագոյն ոսոխս իւր, և համարելով թերևս՝ թէ Դանիէլ ինքնին յատուկ խորհրդով առաքեալ է զնոսա, դառնացաւ 'ի վերայ նորա, և առ ցասումն սրտին՝ արգել զնա 'ի խաւարչտին սենեկի։ Եւ ապա ընդ լսելն ևս՝ թէ չդադարեն նախայիշեալ հակառակորդք իւր 'ի գրգռելոյ զժողովուրդս և զիշխանաւորս յիւր վերայ, և թէ՝ Ջանահնար լինին շարժել զզօրութիւն Ռուսաց 'ի բազմեցուցանել զԴանիէլ յԱթոռ, եդ 'ի մտի պատժել զանմեղն Դանիէլ. և ածեալ զնա (1803 Մայ. 25) անարգաբար առաջի իւր՝ ասէ. „Մինչև ցե՞րբ ոչ դադարիցես 'ի խռովելոյ զազգն և յաշխատ ղես առնելոյ՝ այ ծեր դու. եթէ տակաւ 'ի Ռուսս է ապաւինութիւնդ՝ առ որս անկան քո չարագև ալբանեակք, ձայն տուր ուրեմն զօրաց նոցա փութալ յօգնութիւն քեզ 'ի չարիսդ՝ որ արդ իսկ իրա-

ւամբք 'ի գլուխ քո հասանիցեն[19]*»։ Այս ասացեալ՝ հրամայեաց սափրչին որ անդն կայր՝ գերծել զմօրուս նորա· և յասել Դանիէլի· «Ինայեա՛ յիս զէթ 'ի պատիւ աւուրս» (զի էր իսկ այն օր Պենտէկոստէ), զայս ետ պատասխանի· «Դէլեոյդ խռով սուրբ Հոգին»։ Եւ առ ժամայն թափեցան 'ի գոգ նորա սպիտակափառ փունջք մօրուացն։ Եւ այն ինչ խայտառակաբար տանէին զնա արկանել վերստին 'ի բանտ, ետես նա անդէն և զգործիս գանից կամ զաղիւաղան (Ֆալագա)· յոր և ընդհարեալ ոտիւքն՝ ասէ դառնութեամբ ցԴաւիթ· «Այ՞ս ևս պատրաստեալ է քո 'ի հանդէս փառաւորութեանս· ահա՛ ոտք իմ յաչս քո, արա՛ զոր կամիսդ»։ Թէպէտև ժամ էր Դաւթի 'ի փոխարէն խստութեան խօսիցս՝ զդժնդակագոյնն ևս որոտալ պատուհաս, այլ հայեցեալ յորս շուրջ կային, և տեսեալ՝ զի ամենեցուն խոժոռեցան դէմք 'ի տխրալից տեսարանէն, կարաց 'ի ժամուն սանձել խոհեմաբար զսրտին կիրս՝ առ 'ի զմիաբանիցն չզայրացուցանել յիւր վերայ զբազմութիւն։

Ընդ այն ժամանակս յորժամ յայսպիսի ներքին արհաւիրս ծփայր Ներսէն Հայրապետական, յարձակեցան (1804) զօրք Ռուսաց (կարծի յամենանն Յուլիսի) առաջնորդութեամբ Զիցիանով զօրապետի 'ի սահմանս Երևանայ՝ ուր ժառանգակալութեամբ առ 'ի նախնեաց՝ պայազատեր Մէհմէտ կամ Մէհէմմէտ Խան· եհաս անդր և սրքայն Պարսից Ֆաթ-Ալի Շահ ահագին բանակաւն· զի կանխագոյն զմնաւ ածեալ Մէհէմմէտայ՝ թէ չքաւէ իւրովք և ութ զօրօք զդէմ ունել թշնամւոյն,

---

[19] Յայլում ձեռագրի· «Դանիէ՛լ Դանիէ՛լ, ասէ, ձայն տուր զօրացն Ռուսաց՝ գալ օգնել քեզ»։ Ծանօթ. Զ· Մ·

խնդրեալ էր յալքայէն ձեռն տալ ինքեան, և զփրկութիւն աշխարհին 'ի նա էր յանձնեալ։ Այն ինչ մերձ էին զօրք Ռուսաց յառնուլ զամրոցն Երևանայ՝ զոր ամենայն կազմութեամբ ուժգինս պաշարեալ էին, եկն եմուտ շտապաւ 'ի բանակ անդր նոցա Եւրոպէացի ոմն, և խօսեցաւ ինչ յունկն զօրապետին Ցիցիանովի, և կարծի՝ թէ կարաց զնա իւիք իրօք շատացուցանել. քանզի անդէն իսկ 'ի ժամու սաստկութեան մարտին նհանջեցոյց նա (Սեպտ. 4) զյարձակումն զօրականին՝ տալով 'ի հնչիւն փողոյ զնշան յետադարձի [20]։ Եւ 'ի տեսանել բերդականաց զայնօրինակ շփոթութիւն նոցա և զաճապարումն՝ սկսան 'ի բարձանց պարսպացն հոսել 'ի վերայ նոցա գիլս մեծամեծս՝ վերգս՝ կուժս ջրոյ՝ շառաշիղս՝ և զայլ ծանրագոյն իրս. որով և վտանգեցին զնոսա չարաչար յոյժ և զբաղումն սպանին, մինչև շուրջ շուրջանակի խրամոց բերդին ընուլ դիակամբք անկելոցն։

Իբրև մեկնեցան գնացին Ռուսք 'ի սահմանաց անտի՝ եկն ալքայն Գաթ-Ալի Շահ [21] 'ի վանս Էջմիածնի։ Եւ զի Պատրիարք Պետրոսիկոս տակաւին 'ի կասկածոտ միտս էր զԳանիէլէ՝ եգիտ ժամ պատեհ պատճառաւ իւիք 'ի բաց հեռացուցանել զնա. ուստի մատուցեալ առ ալքայ՝ խօսեցաւ վասն նորա բազում ինչ, և յաւել ևս հաւատացուցանել՝ թէ 'ի նորա պատճառս լեալ իցէ զալուստ

---

[20] Քան Ռուս պատմչաց պատճառ յետադարձի Ցիցիանովի էր՝ պակասութիւն պաշարոյ և հիւանդութիւնք, զորս կրէր տակաւաթիւ խումբն նորա, ևս և խափանումն հաղորդակցութեան ընդ Վրաստանի („Кавказцы" Новоселова, 1858 г., вып. 19—22, стр. 55; „Подвиги русскихъ воиновъ въ странахъ Кавказскихъ" Зубова, т. I, стр. 122—123; Военно-Энциклопед. Лексиконъ, ч. X, стр. 380, и ч. XIV, стр. 308). Ծանօթ. Զ. Մ.

[21] Ցայլում ձեռագրի գնի, „Արքայորդին Աբբաս Միրզա"։ Ծանօթ. Զ. Մ.

Ի՛ուսաց· „զի ունի, ասէ, նա կուսակիցս ոմանս յերկրի նոցա՝ արս չարամիտս, որք ոչինչ խղճեն վեր 'ի վայր առնել զամենայն կարգս ուղղութեանց, և ջանան անդադար խռովել զժողովուրդս, և ապստամբեցուցանել զնոսա 'ի հնազանդութենէ այսր Ա՛թոռոյ (Ոճախի), որ ընդ ձերով պատսպարեալ կայ հովանաւորութեամբ“։ 'Ի լսել արքային զայս՝ հրամայեաց ածել առաջի իւր զԴանիէլ· զոր իբրև ետես՝ եհարց ցնա և ասէ· „Դա՞ ես որ զմբրիկդ յարուցեր 'ի մեր վերայ“· պատասխանի ետ Դանիէլ ցածագոյն և նուաղ ձայնիւ· „Պիլմէնէմ“ (այս է՝ ո՛չ գիտեմ)։ Հայեցեալ արքային 'ի նկուն և յանփառունակ կերպարանս նորա (զի այն ինչ իբր մատնաչափ մի յերկարեալ ցցուեալ էին հերք ծնօտից նորա կամ մօրուաք), զարմացաւ ընդ միտս՝ թէ զի՞պրդ այր այնպիսի կարողացեալ իցէ զեւրոյ ազգի մեծամեծացն գրաւել զկամս։ Եւ թէպէտ չկարծէր՝ թէ հնարեսցի նա այնուհետև առնել ինչ ինքնին 'ի վեր քան զեւր կարայլ առ բառնալոյ 'ի սպառ զգայթակղութեան առիթն և զերկպառակութեան՝ հրաման արար Խանին Մարաղայ (Մէհմէտ անուն) որ ընդ նմա եկեալն էր՝ առնուլ պահել զնա առ իւր· „Մնջ յանձնի, ասէ, կապեալդ, և 'ի քէն խնդրեսցի“։

Ընդեալ Խանին զԴանիէլ, յետ աւուրց ինչ տարաւ ընդ իւր 'ի Մարաղայ՝ 'ի չուելն ընդ արքայական բանակին· և անդ եղեալ զնա 'ի դիպահոջ՝ զառաջինն խրատագոյնս վարէր ընդ նմա իբրև ընդ առն խռովարարի· իսկ ապա լուեալ 'ի պահնորդաց՝ թէ ճգնապղծաց ոք է նա և աղօթասէր, և թէ ո՛չ մի ինչ ստահակութեան երևին 'ի նմա գնացք, եհան զնա 'ի բանտէ, և թոյլ ետ կալ յընդարձակի 'ի տան իւրում։ Եւ զի դէպ եղև երբ

բեռն յաղթել Դանիէլի հիւանդացելոյ որդւոյն Խանի յառաջութիւն գառնալ, յայսմանէ առաւել ևս քաջալերացեալ սիրա Խանին՝ սկսաւ գութ մեծ ցուցանել՝ սեղանակից իւր առնելով զնա և մեծարելով իբրև զայր Աստուծոյ։ Եւ որ մեծն է՝ պատճառ ևս եղև դարձին նորա Յէջմիածին և բազմելոյ ՅԱթոռ Կաթողիկոսութեան։

Դանիէլ Կաթողիկոս գրեաց (1805 Սեպտ. 13) թուղթ 'ի Մարաղայէ առ Միաբանս Էջմիածնի՝ որք էին 'ի Ցփխիս և այլուր պանդխտացեալք, յորում յեա յորդորելոյ զնոսա 'ի սէր, 'ի միաբան խաղաղութիւն և 'ի պահպանութիւն օրինաց .. բանամ ձեզ, ասէ, զծածկեալն 'ի սրտի իմում զօգուտն ձեր և ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց և հին ամենայն բարութեանց որբոյ Աթոռոյն մերում Էջմիածնի, և զփափագելին և զընտրեալն վաղապէս 'ի Երիստոսասէր բարեպաշտից Հայոց՝ որք 'ի Կոստանդնուպոլիս։ Եւ յետ այլոց բանից զայս ինչ առաջի առնէ նոցա իբրև հին բարեկարգութեանց՝ զի „կաթողիկոսն առանց եպիսկոպոսաց, և եպիսկոպոսք առանց կաթողիկոսի մի՛ ևս իշխեսցեն յայսմ հետէ եղական կամաք իւրեանց իշխանաբար առնել ինչ գործ՝ որ իցէ պատկանեալ եկեղեցւոյ Հայաստանեայց և կամ Աթոռոյն Էջմիածնի և կամ հասարակութեան ազգի Հայոց“։ „Ա՛ռ այս, ասէ, 'ի կողմանէ իմմէ ընտրեցի ես զառաջնորդն Ռուսաստանու Հայոց զԵփրեմ արքեպիսկոպոսն, զոր և գուք կանխաւ ընդ իս ընտրեալ էիք 'ի Կաթողիկոսութիւն, և զնախորդ Պատրիարքն Կոստանդնուպոլսոյ զԳրիգոր արքեպիսկոպոսն և զբարեհամբաւ Խարսեղ արքեպիսկոպոսն, և զառաջնորդն Վրաստանու զՅովհաննէս արքեպիսկոպոսն... Եւ արժան համարեցաք՝ զի յայսմ հետէ նոքա չորեքին միաբանեալ 'ի միասին բազմեցուսցեն

'ի յատկացեալ վայելուչ տեղւոջ զսուրբ խաչն Վրիս-
տոսի, և զսուրբ Աւետարանն, և դիցեն առաջի նոցա
զգիրս հոգևորական և մարմնաւորական կանոնաց՝ զորս
կարգեալ են Աւաքեալք, Հայրապետք, բարեպաշտ սուրբ
Խաղաւորք· և ապա ընդհանուր միաբանութեամբ ընտ-
րեալ յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց զարս բարե-
բարոյս իմաստունս, օրէնսգէտս և արժանահաւատս որո-
շեալ թուով· յատկացուսցեն (զնոսա) ըստ իւրաքան-
չիւր կարգի ընտրութեան՝ զի նոքին եղեցին դատաւորք
սրբազան Միւնհոդոսիս, և յայնմ հետէ մի ոք ժպրհեսցի
յանդուգն ազատակամ յօժարութեամբ իշխել 'ի վերայ
եկեղեցւոյն պատկանեալ գործոյ և ձեռնամուխ լինիլ
յիրս ինչ՝ որ չեցէ յանձնեցեալ ինքեան 'ի Միւնհոդոսէն·
այլ նոքին եղեցին հանրիշխան ծայրագոյն կառավարիչ
ընդհանուր ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց, և ու-
նիցին զկարողութիւն դատելոյ նաև զծայրագոյն Պատ-
րիարքն ըստ կանոնաց Հայոց, ևս և զամբաստանեալ
ընկերս իւրեանց"... Եւ յաւարտ ամենայն բանիցն
„Գրեալ եմ, ասէ, ընդ այսմ առ Եփրեմ արքեպիսկո-
պոսն, և առաջադրեալ եմ նմա, զի որպէս և վայելուչ
դատեսցէ խորհրդակցութեամբ Վեհաշնեայ իշխան Հայոց
Մինաս Աղեքսարեանին՝ զոր յառաջագոյն կարգեալ եմ
'ի Գրան Նորին Կայսերականի Մեծութեանն փոխանորդ
և Վեքիլ 'ի կողմանէ մեր, յայտնեսցէ զայս գիր մեր
ուր և որոց արժանն իցէ· և այնպէս ապա օրինակաւ
առ ինքն գրեցելոցս՝ առաքեսցէ առ ձեզ վկայեալ օրի-
նակն սոյն այս գրոյս և կամ գնտխագաղափարն՝ ըստ
հարկին պահանջելոյ" [22]։

---

[22] Լուեալ էի յաւանդութենէ, զի մինչդեռ Դանիել կաթողիկոս

Լիկաց Դանիէլ Կաթողիկոս 'ի Մարաղա ամն իբր երեք։ Եւ թէ օրպէս արտաքոյ ամենայն կարծեաց յաջողեցան դարձ նորա յԷջմիածին և բազմիլ յԱթոռ Կաթողիկոսութեան՝ ոճով իմն առցուք պատմել։

'ի Մարաղա էր, և Դաւիթ բռնացեալ Էջմիածին նեղէր զմիաբանսն, կուսակիցքն Դանիէլի առնէին զթշնամութիւն ընդ միմեանս, և մանաւանդ ընդ Ներսիսի Վարդապետի, գաղտնածածուկ իմն և նորահնար նշանագրովք։ Արդ տեղեկացայ 'ի հաւատոյ աղբերէ, զի այնպիսի ծածկագրութիւնք մինչև ցայժմ գտանին 'ի գրուածսն մեացեալս 'ի Ներսիսէ Կաթողիկոսէ՝ անընթեռնելի համարեալք, ուստի և անծանօթք հասարակաց։ Սակայն յամին 1859, 'ի գնալ Գեր. Գաբրիէլի Վարդապետի Այվազեան (այժմ Արքեպիսկոպոս) 'ի սուրբ Էջմիածին, պրօկուրօրն և ատենադպիր Անոդին մատուցին առ նա 'ի գրուածոց անտի զթերթիկ մի, և հարցանէին թէ արդեօք յինչ լեզու և որպիսի տառիւք իցեն գրեալքն. իսկ նորա հայեցեալ 'ի տարօրինակ ձևակերպութիւնս տառիցն այնոցիկ, և յետ բազում աշխատ լինելոյ չկարացեալ առ ժամն գտանել զբանալի կամ զայբուբենս ծածկագրութեանն այնորիկ, հաւանութեամբ նոցին առեալ տանի զթերթն ընդ իւր, զի թերևս յայլում ժամանակի գտցէ ինչ հնարս վերծանելոյ զգրեալսն։ Յետ ամաց երից 'ի վերայ անցանելոյ, մինչդեռ յուսուր միում յակն արկանէր զթշնեան գրագարանին իւրոյ, գարձեալ պատահէ խարհրդաւոր թղթեկին այնմիկ, և իբր ժամ մի հետազօտ եղեալ պէսպէս հնարիւք և յեղանակաք, յաջողի ուր ուրեմն գտանել զնշանակութիւնս միոյ միոյ 'ի նշանագրաց անտի, ընթեռնու զթերթիկն, և պարզագրէ, և էր այն անստորագիր նամակ միոյ ուրուք 'ի մերձակայիցն Դանիէլի առ Ներսէս Վարդապետս այսպիսի ունելով վերնագիր դրոշմեալ նոյն անծանօթ տառիւք. „Ներսէս Վարդապետ հոգոյս հատոր“։ Յանկալի է ապաքէն զի և մեացեալ թերթք այնպիսիք ոչ միայն անկորուստ պահեսցին, այլ և առաջարկեսցին նմին իսկ Գաբրիէլի Սրբազան Արքեպիսկոպոսի 'ի պարզագրել. զի չիք երկբայութիւն՝ թէ ոչ սակաւ լոյս ծագեսցի 'ի նոցանէ որոց կամիցին աշխատասիրել զշշգրիտ պատմութիւն ժամանակացն այնոցիկ։ Ծանօթ. Զ. Մ.

ԳԼ. Յ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐՔԻՆ ԴԱՆԻԷԼԻ

1806—1809

Փոխոխունին խանից յԵրևան։—Ազատումն Դանիէլի և դարձ նորա յԵրևան։—Դուրսն կոնդակիս 'ի Ծոփս։—Դանիէլ և Դաւիթն սուրբքն Սուրբերին։—Դանիէլ ճանապարհն օրինաւոր կոնդակիս Հայոց։—Հանդիսաւոր մատ Դանիէլի յԷջմիածին։—Դարձ նեբոխի յԷջմիածին։—Հիւանդութիւն Դանիէլի և գերծումն մօրաց Դաւթի։—Մահ և թաղումն Դանիէլի։

Ի ՏԻՊԱՐ արքայի վիճակին Երևանայ իբրև նորանուաճ երկրի թափելոյ 'ի ձեռաց թշնամւոյ, հանեալ յիշխանութենէ զառաջին խանն՝ որ ինքնիշխանութեամբ տիրէր անդ, կացոյց 'ի տեղի նորա յիւրմէ կողմանէ զայլ ոմն խան Մէհտի Գ.ուլի անուն. և յետ ոչ բազմաց ցաս ևս հանեալ՝ յանձն արար (1806) զայն պաշտօն Էհմէտայ խանին Մարաղայ, որ եկեալ յԵրևան՝ սկսաւ կառավարել զերկիրն։

Այս քանզի կասկած 'ի մտի ունէր, թէ գուցէ Դաւիթ Կաթողիկոս, որ թշնամութեամբ էր ընդ Դանիէլի՝ վտանգս ինչ խորհեսցի հասուցանել նմա 'ի բացակայութեան անդ, կամեցաւ պարսկային իմն հնարիւք յապահովի կացուցանել զնա. ուստի յառաջնում նուագի տեսութեանն ասէ ցնա. „Տէր Կաթողիկոս, ծերն այն վարդապետ զոր ըստ արքայի հրամանին տարեալն էի ընդ իս 'ի Մարաղա՝ վախճանեցաւ ողորմելին“։ Թէպէտև սուտ էր զոր ասացն՝ այլ հաւատաց այնմ Դաւիթ. հաւատացին և որք լուանն 'ի նմանէ. և 'ի տարածիլ համբաւոյն ամենայն ուրեք բեկան վհատեցան Դանիէլեանքն, որով և առ ժամանակ

մի գաղարեաց աղմուկն երկպառակութեան 'ի ժողովուրդս և 'ի Միաբանս Էջմիածնի. և դադարէր ապաքէն 'ի սպառ՝ եթէ նա ինքն Խանն չտայր պատճառս վերստին բորբոքելոյ այնմ. քանզի անզօր գոլով սա անձամբ և ցաւագար, և տեսանելով՝ թէ օգ երկրին չյաբմալի իւրումն խառնուածոյ՝ յետ վնցից ամսոց ինքնին հլուժա-լեցաւ յիշխանութենէն, և այն ինչ հրաման առեալ յաբքայէ՝ դառնայր 'ի Մարաղա, պատահեցին նմա 'ի ճանապարհի երկոքին եղբարք Հիսէյին Պարտար և Հասան Խան Ղաջար, ոլք առեալ յարքայէ զնոյն իշխանութիւն՝ զային յԵրևան։ Եւ իբրև բանք եղեն անդանօր զորպիսութենէ և զկառավարութենէ երկրին Երևանայ, ասէ Խանն Մարաղայ ցերկոսին եղբարսն. „Երկիրն յոր գնայք դուք՝ բարեբեր է և արգաւանդ յոյժ, այլ 'ի բազում տեղիս նուազեալ 'ի շինութենէ, և յոլովք իսկ 'ի բնակչացն տարագնոց անկեալ են յայլևայլ սահմանս 'ի ժամանակէ անտի արշաւանացն Ռուսաց. որում և կէս մի (ըստ լսելոյ իմ յոմանց) այն է լեալ պատճառ՝ զի զծերունի վարդապետն՝ որ առեալ են ինձ յարքայէ 'ի պահ և կայ 'ի Մարաղա՝ կամեցեալ են երբեմն կացուցանել Կաթողիկոս, և չէ յաջողեալ՝ վասն հակառակորդացն զօրանալոյ. և եթէ ցանկանայցէք դուք վերստին բարիշէն առնել զերկիրդ և օգուտ լի կթել յայնմանէ վասն տէրութեան, պիտի ձեզ նախ առաջին անգլ ածել զծերն զայն և հաստատել 'ի Կաթողիկոսութեան. և զայս կարող էք առնել խնդրելով յարքայէ“։

Զայս խորհուրդ առեալ երկոքին նոքա Հիսէյին և Հասան, անդէն իսկ ընդ հասանել իւրեանց Երևան ջան 'ի գործ արարին գրել առ արքայ և յայտնել զինդիր իւրեանց վասն Դանիէլի։ Եւ նորա ոչինչ անհաւան ընդ

այն լեալ՝ յղեաց առ Խանն Մարաղայ գիր հաստատութեան կամ պարգեւագիր (Դալղա) վասն Կաթողիկոսութեանն Դանիէլի հանդերձ խիլայիւ, և հրամայեաց նմա՝ փութացուցանել ապահովութեամբ զԴանիէլ առ Սարտարն Երևանայ [23]։ Ելբար Խանն ըստ հրամանին· յանձնեաց զԴանիէլ միւսմ ումեք 'ի հաւատարիմ պաշտօնակալաց, և արձակեաց զնա պատուով՝ տալով նմա յուղեկցութիւն այրուձիս հինգ հարիւր։

'Ի հասանել (1807 Մայ· 14) Դանիէլի այսօրինակ հանդիսիւ բազմութեան յայդեստանն Նորագաւիթ գեղջ հեռի յԵրևանայ երկուց ժամուց ճանապարհաւ, հասին առ նա և բազումք 'ի Միաբանից Էջմիածնի՝ որք կանխագոյն առեալ էին զլուր գալստեան նորա· և էին գլխաւորագոյնք 'ի նոցանէ՝ Պազալ եպիսկոպոս Ալեքսիկեանց, Սահակ եպիսկոպոս Դարբինեան, Ենգրէաս եպիսկոպոս, Յովհաննէս եպիսկոպոս Դայլակերենց [24], և այլք։

'Ի նմին ժամանակի Դաւիթ Կաթողիկոս կայր յԵրևան և նստէր յԱնապատն կոչեցեալ տեղւոջ՝ ուր լինէին իջևանք Կաթողիկոսաց։ Իբրև պատմեցան նմա

---

[23] Առ այս վկայ բերեմք զբանս ներսէս եպիսկոպոսի գրեալ 'ի Տփխիսայ առ Աբբաս Միրզայ արքայորդին Պարսից 'ի գրութեանն յամի 1823, 'ի Նոյեմբերի 1, ուր ասէ· „Եթէ չէր երագեալ հովանաւորութիւն մեծազօր Ֆաթալի Շահին և ժառանգի նորա ընդդէմ այնպիսի բռնաւորութեանց Մահմետ Խանի (Երևանայ)՝ մերձ էր փոխել զԿաթողիկոսարանն 'ի սահման հովանաւորութեան այլ տերութեանց· այլ զի ողորմութեամբն Աստուծոյ բարձրացուցին մեծազօր Շահն և Շահզատայն զիշխանութիւն իւրեանց 'ի վերայ անհնազանդութեանց Մահմետ Խանի և վերադարձուցեալ 'ի Մարաղայու հաստատեցին յԱթոռ Էջմիածնի զընտրեալն յամենայն ազգէ Հայոց զԴանիել Կաթողիկոս, այն է՝ զի սկսաւ վերանորոգիլ Աթոռն, և օր ըստ օրէ յառաջանալ յիւր առաջին պայծառութիւն“։

[24] Սա է՝ որ ապա յաւուրս Եփրեմայ Կաթողիկոսի եղև Առաջնորդ Աժդարխանայ, և անուանեցաւ Գառնաքեր՝ յԵփրեմայ։

անակնկալ դէպք իրացս, հիացումն էառ զնա, և գժուարանայր 'ի հաւատալ. „միթէ 'ի մեռելոց, ասէ, յարեաւ նա“: Այլ 'ի վերայ այսր ամենայնի՝ ոչ կարացեալ նորա փարատել զմտացն վարանս, հրամայեաց սարկաւագի իւրում Յարութիւն անուն[25] (որ էր Աղուլեցի 'ի տոհմէ Յովհաննէսեանց, բայց կոչէր Ռասենցի), երանել կալ 'ի վերայ տանեացն և զննել դիտակամբ 'ի ճանապարհն կոյս՝ ընդ որ գալ պարտ էր Դանիէլի. և ինքն ձեռն ընդ գօտեաւ ճեմ առնոյր շրջէր խոկալով 'ի սրահին, և ստէպ ստէպ հարցանէր ցսարկաւագն՝ թէ տեսանիցէ՞ ինչ: Իսկ սարկաւագն զառաջին նշմարեալ զամբոխ իմն բազմութեան ընդ աղօտ, և ապա ընդ մօտել նոցա տակաւ՝ պարզագոյն ևս դիտեալ՝ ասէ ցԴաւիթ. „Տեսանեմ գունդ մի այրուձիոյ, յորոց միջի երևին և ոմանք 'ի մերոց վարդապետաց՝ այլ և ինքն Դանիէլ, որք հասեալ 'ի դուռն բերդին՝ մուտ 'ի ներքս առնեն ահա“: 'Ի լսել Դաւթի զայս՝ շարժէր զգլուխն, մրմնջէր և ասէր. „Տէր ողորմեա“. ապա ասէ ցսարկաւագն՝ „Ոչ՝ ոչ զգեակ՝ տեսցուք զինչ ցուցանիցէ Տէր“:

Մինչ դեռ յայսպիսի ծուփս էր Դաւիթ, և չկարէր յեղելոց իրացն գուշակել ինչ ընդ միտս, եկն առ նա շտապաւ մի ոմն 'ի Ջայոց առաքեալ 'ի Սարտարէն, այն է՝ Միրզայ Թադէոս Մէլիք Մինասեան, և ասէ ցնա. „Հրաման արար Սարտարն՝ զի վաղվաղակի եկեալ յանդիման լիցիս ինքեան ամենայն կարևոր հանդերձանօքդ“:

---

[25] Սա յետոյ 'ի վարդապետանալն կոչեցաւ Թովմաս, և ընդ Վրթանէս եպիսկոպոսի Նուիրակի գնաց 'ի Հնդիկս յաւուրս Եփրեմի յամի 1812, և ապա յետ դարձին յամի 1824 առաքեցաւ Նուիրակ 'ի Ռուսաստան, և 'ի հասանելն 'ի Քիշնև՝ վախճանեցաւ: Եւ մեք զայս ամենայն լուաք 'ի Թադէոս վարդապետէ, որ առ նմա էր 'ի սարկաւագութեանն, և 'ի նորին բերանոյ էր լուեալ զոր պատմեցաք:

Եւ զի տմարդօրէն իմն էր յեղանակ խօսիցն, զայրացաւ Դաւիթ, և ասէ ցսպասաւորսն. „Կալէք զԼերբդ զայդ և զանդրամ“. իսկ նա ինչ մի ևս յանդգնագոյն ցոփաբանեալ՝ ամաչապարեաց 'ի փախուստ։ Եւ որք պնդեցան զհետ՝ ոչ կարացին ունել զնա։

Ելեալ ապա Դաւիթի ընդ իւր զանձինս քանի մի և զՅարութիւն սարկաւագ՝ ել գնաց հանդիպիւ 'ի բերդն յանդիման լինել Սարտարին։ Եւ իբրև եմուտ 'ի դահլիճն, ետես անդ խմբովքն զեպիսկոպոսունսն նախայիշեալ, և զԴանիէլ գահերեց բազմեալ առ Սարտարին 'ի տեղւոջ՝ ուր Պաթողիկոսին էր նստել. ըստ սովորութեան [26], ունելով 'ի գլխի զպարգևագիր (թալըա) Հ՚ահին։ Եւ յետ տալոյ ողջոյն Սարտարին՝ այն ինչ հրաւիրեցաւ 'ի բազմոց՝ ոչ կարաց զնուաստութիւն յանձն առնուլ զպատուոյն. „Իմ չէք աստ, ասէ, տեղի բազմելոյ. զի զբարձդ որ իմ էր՝ այլ ոք ունի“։ Այս ասաց, և զթիկունսն դարձուցեալ՝ ել արտաքս 'ի սենեկէն։ Հիացաւ Սարտարն ընդ այս վեհանձնութիւն Դաւթի. և զհետ ընթացեալ զնորա մինչև 'ի գլուխ սանդղոցն՝ ձայն ետ և ասէր. „Դնար մի՝ տէր Պաթողիկոս“։ Այ՚տեղի առ յայնժամ և Դաւիթ, և զձեռսն 'ի գօտին հարեալ Սարտարի՝ յեղ յունկն նորա ինչ մի 'ի ծածուկ. և կարծի՝ թէ խոստացեալ ինչ նմա կշիռս արծաթոյ յորսալ զկամն։ Ապայ Սարտարի գժկամակութեամբ բերեալ 'ի լուր բանին՝ զայս ետ պատասխանի. „այսմ իրի լինել հնար չէ“։

Յիշանել Դաւթի 'ի վայրագաւիթն, հասին առ նա սպասաւորք դրանն ըստ Սարտարին ակնարկելոյ, և 'ի

---

[26] Այս նշան էր տեղւոյն նախապատուութեան՝ զի թաղիք կրկնակուղք արկանէին 'ի նմա։

բաց առին 'ի նմանէ զերիվարն՝ յոր ունէր հեծանել նա, այլև զկաչն և զգաւազանն և զայլ ամենայն սպասս և զզարդս Կաթողիկոսական եկաւորութեանն, և զնախընթացիկսն ևս զնորա, զորս Հ. աթոռս անուանէին՝ արգելին անդէն։ Ուստի հարկ եղև Դաւթի նստել 'ի ձի սարկաւագին իւրոյ, և այնպէս դառնալ անպատուաւորութեամբ 'ի բնակարան իւր ՅԷնապատն։

Եւ զի էին նորա յայնժամ առ ձեռն պարկք չորք ոսկելցք՝ որոց միոյ միոյ աւելի քան զԹզաչափ երկայնութիւն էր, զերկուս 'ի նոցանէ ետ սարկաւագին 'ի պահեստ, և զերկուս պահեաց առ ինքն։ Եւ սարկաւագին առեալ զայնս՝ տարաւ Թագոյց ընդ յարդիւք 'ի մէջ մարագի։ և ապա իբրև վերստին մատոյց զայնս ամբողջութեամբ 'ի ձեռս Դաւթի՝ ընկալաւ 'ի նմանէ 'ի պարգև ոսկիս երկերիւր։

Իսկ Դանիէլ մեծապատիւ մեծարեալ 'ի Պարտարէն, և առեալ հրաման վարելոյ զեշխանութիւնն Կաթողիկոսական՝ ածաւ փառաք ՅԷնապատ անդր։ Եւ Դաւիթ բերեալ առ նա զփականս Կաթողիկոսարանին՝ ասէ ցնա. „Ա՛ռ զայսոսիկ, Կաթուղիկոս եղբայր, յորոց թէ ես շահեցայ ինչ, շահեսցիս և դու“։

Յետ աւուրց ինչ (Մայ. 20) ելեալ ՅԷնապատէ անտի երկոցուն սոցա հանդիսիւ բազմութեան՝ ուղևորեցան գնալ Յէջմիածին. և 'ի մօտել նոցա յայգեստանն մեծ՝ կոչեցեալ Վ. ռի այգի, խումբ խումբ ընդ առաջ եկին նոցա ամենայն բազմութիւն Միաբանից Էջմիածնի և բնակչաց Վ. աղարշապատայ. և յետ համբուրելոյ զԱՆՋն Դանիէլի՝ այն ինչ գային համբուրել և զԴաւթին (քանզի ակնածէին իցն 'ի նմանէ, և չէր իսկ հնար չակնածել զէթ յաղագս կերպարանացն ահաւորութեան) նա 'ի բաց զնո-

սին մերժեալ· „գնացէք, ասէր, գնացէք այսուհետև· ըստ օրտից ձերոց արդ յաջողեցան իրքդ“։

Համբաւ դարձին Դանիէլի Յէջմիածին այսպէս անկարծելի յաջողութեամբ և ժառանգելոյ զԷթոռն Հայրապետական՝ ընթացեալ ընդ ամենայն տեղիս՝ 'ի զարմանս գրաւեաց զյոլովս 'ի լսողաց, մանաւանդ զԴանիէլեանսն, զի անշուշտ յամաց հետէ ընդ մեռեալս գիտէին զնա՝ պատրեալք յառաջնոյ անոի համբաւոյ սուտ մահուանն։

Ներսէս վարդապետ՝ որ 'ի ժամանակին յայնմիկ գտաներ 'ի Դրիգորուզօլիս նորաշէն քաղաքի ընդ Եփրեմայ նուիրակին և առաջնորդին, իբրև էառ զլուր անցիցս այսոցիկ 'ի գրութենէ ուրումն 'ի ծանօթից իւրոց ոչ ևս հանդուրժեալ կալ անդէն՝ փութացաւ սլացաւ գնաց ՆՀաս ճեղով Յէջմիածին· ուր և զեպիսկոպոսութեանն վաղվաղակի ընկալեալ զձեռնադրութիւն՝ սկսաւ 'ի ձեռն առնուլ զերասանակ կառավարութեանց թէ Էթոռոյն՝ թէ 'ի նիրքինս և թէ յարտաքինս, ամենայն ոք այնուհետև զԿաթուղիկոսին զիշխանութիւն 'ի նորա տեսանելով բռին՝ ինքնին սահպէր ըստ նորայն վարիլ ակնարկութեան (աչացն թարթելոյ)· և թէպէտ նա զամենայն ինչ Սուրբ Յոհովոյն Խորհրդարանի առնէր անուամբ՝ յորոյ մի և ինքն էր յատենակալացն, սակայն յամենայնի յիւրն նկրտեալ զկամս յերիւրել զայլոց, մինչև մերձաւորացն իրաւամբք գժտել ընդ նա, և հեռաւորացն առաջնորդելոյ իմն բռնակալութեան գրել զարարս նորա։ Եւ զայսմ ամենայնէ առանձին բան ճառել՝ այլում ժամու գործ լեցի մեր՝ արդ 'ի կարգն անցցուք պատմութեանս։

Եւ եղև՝ զի յետ ամաց միոյ և կիսոյ յանկանիլ Դանիէլի հիւանդութեամբ 'ի մահիճս՝ եկին խընդրել 'ի

Դաւթէ զգրչագիր բժշկապետն՝ որ կայր առ նմա. և 'ի չկամել նորա տալ, առեալ պատեհ գտեալ Դանիէլեանց՝ կալան զնա 'ի սենեկի իւրում. և ետուն գերծել ըզմօրուսն, որպէս և նա գերծեցուցեալ էր զԴանիէլին[27]:

---

[27] Ցայլում՝ ձեռագրի գէպքս այս պատմի ընդարձակօրէն այսպէս. „Ցանկանալ Դանիէլի հիւանդութեամբ 'ի մահիճս, հարկ եղև բժշկի նորին՝ որում անուն էր Նահապետ, զդեղոց ինչ կազմութեան խրատս քաղել 'ի բժշկարանէն Ամիրտէօվլէթայ, որ մի էր յերևելեացն Հայկազանց բժշկաց [illegible] դարուն: Եւ այն ինչ խոյզ և խնդիր առնէր մատեանն 'ի գրատանն, ելին ոմանք և պատմեցին՝ թէ յերբեմն ժամանակի տեսեալ են զայն առ Դաւթի: 'Ի լսել զայս սպասաւորացն Դանիէլի՝ վազեցին գնացին վաղվաղակի առ Դաւթի առնոյ 'ի նմանէ զմատեանն. այլ գարձան ունայնաձեռն. քանզի հայեցեալ Դաւթի՝ թէ բռնիւ ստիպաւ իմն է պահանջումն նոցա, իբրու այն թէ՝ ոչ իւր սեպհական իցէ մատեանն՝ այլ գրատան, խիթացաւ հանել զայն 'ի ձեռաց և չետ: Ընդ այս գժուարեալ յոյժ Դանիէլեանցն, և յոչ բարին բերեալ 'ի կարծիս, իբրև թէ առ թշնամութեան և առ սխալութեան որոյ գլացեալ իցէ Դաւթի տալ զմատեանն, յաւելին միւս և անգամ առաքել խնդրել զնոյն: Եւ որ առաքեցաւն, թերևս յանխոհեմագունից որ լեալ յարանց՝ ամարգագոյնս իմն էառ խօսիլ 'ի լսողին յանարգանս: „Ցէ՛ գու, ասէ, մեծամօրուս ծեր, զի՞ զգրատանն առ քեզ կալեալ զմատեան՝ արգելուս պահես իբրև զքոյդ, և տալ չկամիս. միթէ արդ խակ և գո՞ իցես Աթոռոյս տէր... Ե՛լ հան տուր շուտ զմատեանդ. զի ոչ և սպասել գիտէ հիւանդն": Ընդ այս ծանրացաւումն յոյժ լեալ Դաւթի, քանզի ոչ նուազ ինչ և 'ի նմա գաղանագոյն էին բարկութեան կիրք. „Օ՛հ 'ի բաց երթ, ասէ, անզգամ գու. քեզ և հաս յոխորտալ յիմ վերայ... երթ. եթէ սպասել գիտէ ոչ քո հիւանդդ, թող ուրեմն սատակեսցի": Իբրև լուաւ զայս Ներսէս եպիսկոպոս (որ նստէր 'ի Հաշտի խուցն կոչեցեալ սենեկի պաթրիարքարանին) դառնացաւ յոյժ յանձն. և կոչեալ առ ինքն զՍտեփաննոս եպիսկոպոս քուչուրեան (այն՝ որ յառաջագոյն հաւատարիմն էր Դաւթի, և ապա 'ի պատճառէ իմեքէ գժտեալ ընդ նա), և զայլս ոմանս յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց՝ ամբաստան եղև հոգոր բռնիւ առաջի նոցա զԴաւթէ, և հեռանան և մեծամեծ և աղեխարեր չարեաց գուշակեալ յասելոյն նորա „սատակեսցի", թեպետիր եղև նոցա յանխնայ զինիլ 'ի վրէժխնդրութիւն. „զի՝ թէ, ասէ, ոչ ամենապարեսցուք փութացուք դիզական խորտակել զդաղանիդ՝ որոյ արդ և ա 'ի վեր երևեցան անդթութեանցն հաւատարք, գժուարին յոյժ եղիցի մեզ յապա ժամանակի փրծանիլ

Իսկ Դանիէլ չօգտեալ ինչ և 'ի բժշկարանէ անտի՝ վախճանեցաւ (1809) 'ի սառապալից կենաց, զորոյ և զմարմին թաղեցին պատուով յԷջմիածին 'ի սրահի

'ի ճիրանաց դորա»։ Զայս ասաց, և ետ նոցա ձեռնագրել զգրեալն յիւրմէ կանխաւ զգիր վնասուն, յորում իբրև իրաւացի հատուցման հատեալ կայր վճիռ՝ անմօրուսացուցանել զԴաւիթ»։

Ասա՝ պատմութիւն դիպուածոցս ոչ է լրացեալ, և որպէս յայտնապէս տեսանի 'ի ցուցակի՝ ընդ վերնագրովս «Նիւթք Պատմութեան» (որ կայ 'ի վերջ տետրիս), պակասին 'ի նմանակարգութիւնք հեռաւեալ դիպուածոցդ·

«1·, Ածելն Ներսիսի զԴաւիթ գանակոծ նախատանաւք 'ի Վեհարանն 'ի սենեակն կոչեցեալ Շմեռնային Թանապա։

«2·, Խուզելն անդ նախ Ենաքեանի զմօրուսն Դաւիթի, և ապա գերծուցանելն Ներսիսի և այլոց զայն՝ սափրչին, և Ահարոն վարդապետի աղուաշաբար ցուցանելն «Դանիէլ զմօրուսն Դաւիթի» ասելով։

«3·, Յետ սափրելոյն զմօրուսն Դաւիթի՝ տանելն զնա 'ի տպագրատան խուցն, և անդ իբրև 'ի բանտի արգելուլ զնա, և մատնելն զնա 'ի տանջանս աքսորութեան 'ի ձեռն Ղարաբաղցի Մէլքոն Թիւֆէնկճիի։ Եւ այս այն Մէլքոն է՝ որ փախուցեալ էր զՆենաքեանն յԻւչքիլիսէ առ Դանիէլ· և 'ի լսելն Դաւիթի զայս՝ ելեալ տուեալ էր զկին նոցն Մէլքոնի՝ իւրոց Թիւֆէնկճաց։

«4·, Լսելով Սարտարի զսափրումն մօրուացն Դաւիթի՝ գալն յԷջմիածին, և ասելն «որովհետև զրկեցաւ Դաւիթ 'ի մօրուացն՝ համարի նա աշխարհական· ուստի պարտ է ինձ տանել զնա Յերևան և ամուսնացուցանել զնա», և թէ «եթէ Դանիէլ խալիֆայն առնել տուեալ է զայդ գործ՝ չէ՛ ինչ· իսկ եթէ այլ ոք՝ գիտեմ զինչ արարիցէ»։

«5·, Առաքելն Սարտարի զմի 'ի խանիցն ընդ իւր եղելոց առ Դանիէլ առ 'ի հարցանել՝ թէ ի՞նքն սափրեցուցեալ է զմօրուսն Դաւիթի, թէ այլ ոք։

«6·, Ներսիսի և գործակցաց նորա յայնժամ անկանիլն աղաչանաք առ նոյն խան և հաճեցուցանելն զնա բազում ընծայիւք և դրամովք՝ առ 'ի խափանել և ծածկել զյանցանս իւրեանց· նոյնպէս և զնալ անկանելն Ներսիսի առ Դանիէլ և աղաչելն՝ զի ասիցէ «թէ ես եմ սափրեցուցանօղն, և ոչ այլ ոք»· քանզի եթէ ոչ, ասէ, 'ի քո վերայ առնուցուս զայս գործ՝ մեք 'ի կորուստ եմք այսուհետև։

«7·, Դանիէլի պատասխանելն առ հարցանօղ խանն՝ թէ «պէն էթմիշէմ»։

«8·, Ցալն Դանիէլեանց՝ Սարտարի զլսազում ընծայս և զգումարս գրամոց և այնպէս դարձուցանելն զնա յետս։

տաճարին առ ընթեր Աւագ Օրանկակատան ընդ հաբաւակողմն։

„9։ Դաւթի ազատիլն ի բանտէ հրամանաւ Սարտարի, և գնալն յԵրևան ի տուն եղբօր իւրոյ Բարսղեի։

„10։ Ի հնչել համբաւոյն՝ թէ զօրք Ռուսաց գիմեն յԵրևան՝ առնել տալն Սարտարի զԴանիէլ ի բերդն Երևանայ հիւանդագին անձամբ, և անդ Դանիէլի յետ աւուրց ինչ վախճանելն, և մնալն անթաղ մինչ ց — օր։

„11։ Գալն Աբբաս Միրզայի ընդդէմ՝ զօրայն Ռուսաց, և բանակիլն ի գաշտին Խոտվերապայ։ գնալն առ նա Դաւթի և բողոքելն զներսիսէ իբրու թէ նա է դրդռիչն Ռուսաց և ածողն ի վերայ Պարսից։

„12։ Կոչելն Աբբաս Միրզայի զներսէս յԷջմիածնէ և յանգիման իւր կացուցանել ի վրանի իւրում հարցփորձ առնելն զպատճառաց գալստեան Ռուսաց, և յայտնելն զբողոքանն Դաւթի։ Ներսիսի խնդրելն ժամանակ 2 և 4թ ժամուց, և դառնալն յԷջմիածին, և գտանելն զԹուղթն Դաւթի գրեալ առ զօրապետն Ռուսաց Ցիցիանով անուն՝ ի ժամանակի յորժամ եկն նա զօրաք ի վերայ Երևանու յամի 1804։ Եւ վերատին դառնալն Ներսիսի առ Աբբաս Միրզայ, և ընթեռնուլ տալն զայն թուղթ Դաւթի, և ասելն՝ թէ տեսէք ո՞ է հրաւիրիչն Ռուսաց, ե՞ թէ դա ինքն Դաւիթ։ Բարկանալն Աբբասայ ի վերայ Դաւթի, և արձակելն զներսէս, և տալն ի ձեռս Նորա զԴաւիթ՝ զի վարեսցի ընդ նմա որպէս և կամիցի։ Բայց Ներսէս թոյլ ետ Դաւթի գնալ նստիլ ի տուն եղբօրն յԵրևան ըստ առաջնոյն։ Եւ ինքն խնդրեաց յԱբբասայ՝ զի հրաման արասցէ նստուցանել յԱթոռ կաթողիկոսութեան զԵփրեմ եպիսկոպոս, որ էր ի Ռուսաստան։ և Աբբասայ յօժարիլն ընդ այն, և տալն զգիր հրաւիրանաց յանուն Եփրեմայ։

„13։ Դառնալն Ներսիսի յԷջմիածին, և առաքելն զՌէթէոս եպիսկոպոս հրաւիրակ ի Ռուսաստան ի կոչել զԵփրեմ՝ հրաւիրանաց գրովն Աբբասայ։ Ծանօթ. Զ. Մ.

ԳԼ. ԺԱ.

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԵՓՐԵՄԱՑ

1809 — 1827

ԸՆԴՐՈՒԻՆ Յէրեմայ 'ի Կոմոզիկոսութիւն։ — Գործակցութիւն Ներսէս Եպիսկոպոսի։ — Մահ Դաւթի։ — Անդրադարձութիւն Ախուռեան։ — Նոյեմբերի։ — Շրջաբերութիւն Յէրեմայ և հրաժեշտ նորա 'ի Կոմոզիկոսութենէ։ — Փոխադարձ Յէրեմայ 'ի Տֆխիս։ — Վճռաբանութիւն պարտաց։ — Վիճակ Ախուռեան զկնի մեռնելոյն Եփրեմայ։

Զկնի վախճանման Դանիէլի (1809), երկուցեալ Մինասանից Յէջմիածնի՝ մի գուցէ վիրատին խլրտեսցի Դաւթի 'ի նախատենչ ձգտումն գահակալութեան, բարձրք համարեցան փութալ յայտնել ալքայորդւոյն Պարսից[28]՝ Աբբաս Միրզայի, և այլոց իշխանաւորացն Պարսից, թէ կամք իւրեանց է ընտրել 'ի Հայրապետութիւն միայն զՅիրեմ եպիսկոպոսն՝ որ 'ի Ռուսաստան, և ոչ այլ ոք[29]։

---

[28] 'Ի ձեռն Ներսիսի, որպէս ցուցաւ 'ի նախընթաց ծանօթութեան, Հ. 12։ Ծանօթ. Զ. Մ։

[29] 'Ի նամակէ միոյ Ներսէս կաթողիկոսի, գրելոյ 'ի Քիշնեւայ յամին 1814 'ի Դեկտեմբերի 24, առ Հ. Մինաս վ. Բժշկեան 'ի Ղարսաստ, հասաւ լինիմք՝ թէ զկնի մահուան Դանիէլի ոմանք 'ի յառաջադէմ ազգայնոց մերոց կամեցեալ են նստուցանել յԱթոռ Հայրապետութեան զնա ինքն զՅերսէս, սակայն նա ոչ է ցուցեալ առ այս զհիր յօժարութիւն։ Ա՛յս են ահա բանք երջանկայիշատակ Հայրապետին։ „...Դեռ յամի 1809, յետ վախճանի արժանի յիշատակաց ցանկալի անուն Դանիէլ կաթողիկոսի, ոմանք յառաջադէմք 'ի ներգործութեան ազգական՝ գրեալ առ նախապատիւ Բարսեղ սրբազան արքեպիսկոպոս՝ որ հրովարտակաւ Թառանդի տէրութեան Պարսից կարգեցեալ էր ընդ Սիմէոն արքեպիսկոպոսի վիճակաւորի վանաց սրբոյն Թադէոսի առաքելոյն և ընդ մեզ՝ վերատեսուչ պատրիարգական կառավարութեանց մինչև ցյայտնանալ Նորոգ կաթողիկոսի, յառաջարկեալ էին՝ զի կամ ինքն և կամ մեք ստանձնեալ զայն կոչումն՝ առաքեսցեն ինքեանք զհրովարտակ տէրութեան Օսմանեան. որում

Ընկալեալ արքայորդւոյն զինդիր Միաբանից՝ գրեաց առ Եփրեմ եպիսկոպոսն գնալ յԷջմիածին. գրեցին և Միաբանք և հասարակութիւնն Երևանայ գիր հրաւիրանաց առ նա ինքն Եփրեմ, և գիր աղերսանաց առ Կայսրն Ռուսաց՝ թողուլ զնա գալ յԷջմիածին և նստիլ անդ յԱթոռ Հայրապետութեան։

Եփրեմ եպիսկոպոս (որ էր յայնժամ յԱժդարխան) յառնուլ զհրաւիրագիր Աբբասայ և Միաբանից Էջմիածնի և հասարակութեանց Երևանայ՝ զմահսերագիրսն՝ չղգաւ նախ 'ի Պետերբուրգ ընդ Ռէթէոս եպիսկոպոսի և ընդ Մանուել վարդապետի և անդուստ առեալ զՀրովարտակ Կայսեր Ալեքսանդրի 'ի հաստատութիւն Կաթողիկոսութեանն[30], և զականակուռ խաչ վեղարի, նոյնպէս և զայլ պարգևանշանս վասն Ռէթէոսի և Մանուելի՝ ճանապարհորդեաց յԷջմիածին ընդ իւր ունելով զՌէթէոս եպիսկոպոս (զի Մանուել վ. Հ. Հայինեան մեկնեալ 'ի Նմանէ գնաց 'ի Գրիգորիապօլ), ուր և ընկալեալ զօծումն (8 Նոյեմբ. 1810)՝ սկսաւ վտրել զպաշտօն իւր, ու-

---

պատասխանեաց բարեյիշատակ այրն՝ թէ ոչ ինքեան և ոչ մեզ չէ ըղձալի այն։ Եւ յամի 1812 սրբազան Եփրեմ Կաթողիկոս երդմամբ հաւատացուցեալ մեզ վասն իւրոց ազատակամ ընտրութեանց՝ յառաջարկեաց մեզ յանձն առնուլ զտեղակալութիւն իւր, զի հրաժարեսցի ինքն (տես զայսմանէ և 'ի Բարձրագոյն Հրովարտակի՝ տուելոյ յանուն Եփրեմ Կաթողիկոսի 'ի 1 Յուլիսի 1831 ամի, որ գտանի 'ի վերջ մատենիս՝ ընդ համարաւս ԺԷ)։ այլ՝ և մեք նոյնպէս նոյնօրինակ երդմամբ հրաժեշտ տուաք, այնպէս՝ զի ոչ միայն յայնմ ժամանակի հրաժարել կամելոյն իւրոյ, այլ թէ և յետ մահու իւր գտայց կենդանի՝ դարձեալ ոչ եղեց յանձնառու այնմ կոչմանց։ Եւ ըստ այնպիսի իմոյ հաստատուն կամաց բաւական ինձ ճանաչի թէ կարող եղեց յայնմ իմում կոչման գտանիլ պատասխանատու վասն արքեպիսկոպոսական պարտաւորութեան միայն»։ Ծանօթ. Ջ. Մ։

[30] Ջօրինակ թարգմանութեան Հրովարտակիս գտցես 'ի վախճան մատենիս (Է)։

ենլով գլխաւոր գործակից իւրեան զ'Ներսէս եպիսկոպոս[31]։ Բայց Ամիրայք Կոստանդնուպօլսի թէպէտև խոհական իմաստութեամբ չհանին յԸրքունի Դրանէ զ՝Լրովարտակ յանուն նորա՝ սակս ընդ երկար կալոյ նորա յերկրի Ռուսաց· սակայն ընկալեալ զնա իբրև զօրինաւոր Հայրապետ, թոյլ ետուն նուիրակաց և եպիսկոպոսաց նորա շրջիլ ընդ ամենայն տեղիս յՕսմանեան տէրութեան մինչև ցամն 1825։

'Ի նոյն ամի (1810) վախճանեցաւ Յովհաննէս եպիսկոպոս Կենդանի նահատակն՝ որ էր առաջնորդ 'ի Տփխիս, և առաքեցաւ 'ի տեղի նորա յԷջմիածնէ՝ Ներսուածատուր եպիսկոպոս։ Բայց և յետ ժամանակաց 'ի հրաժարելն նորա յառաջնորդութենէ գնաց 'Ներսէս եպիսկոպոս[32] նովին պաշտամամբ 'ի Տփխիս, ուր և մնաց ցամն 1828։

Եփրեմ Կաթողիկոս փոխանակ շնորհակալ լինելոյ 'Ներսէս եպիսկոպոսի վասն ջանադիր փութոյ նորա 'ի կարգաւորութիւն ազգային և եկեղեցական իրաց՝ անուամբ Խորհրդարանին Էջմիածնի[33], տրտնջէր հանապազ՝ ասելով, թէ 'ի պատճառս նորա (այսինքն՝ 'Ներսէս Ե-

---

[31] Որպէս վկայէ նաև Անգղեայի Կրօնաւոր ոմն Հէնրի Մարտին անուն, որ 'ի մատենի իւրում տպագրելոյ 'ի Լոնդոն՝ յամին 1822, ընդարձակօրէն խօսի զվիճակէ Ս· Էջմիածնի։ Զթարգմանութիւն յօդուածոյ նորա, որ գտաւ 'ի մատենադարանի հօր իմոյ, դնեմ 'ի վախճան մատենիս (Ը)։ Ծանօթ· Զ· Մ։

[32] Այն է՝ յամին 1814, իսկ ըստ այլոց յամին 1811։ Ծանօթ· Զ· Մ։

[33] Ո՛չ աւելորդ վարկանիմ 'ի մէջ բերել 'ի վախճան մատենիս (Թ) նաև զօրինակ առաջարկութեանն եղելոյ յաւուրս Հայրապետիս 'ի կողմանէ սոյն այս Խորհրդարանի Էջմիածնի առ Հայկազնեայ Իշխանն Կոստանդնուպօլսի, ևս և զպատճէն գրութեան քօլեան Աբրահամ Պատրիարքի Կոստանդնուպօլսոյ առ Եփրեմ Կաթողիկոս, որք գտան 'ի մատենադարանի հօր իմոյ, և որք արժանի են՝ ըստ իմ կարծեաց՝ առանձին իմն ուշադրութեան։ Ծանօթ· Զ· Մ։

պիսկոպոսի) „Իշխանութիւն իմ ոչ անցանէ քան ըզ-սեամն սենեկի իմոյ. ոչ ներգործէ 'ի լսելիս իմոց յատկացեալ պաշտօնէից հոգևորականաց կամ մարմնաւորականաց“, և 'ի միում նուազի ևս յայտնապէս ասաց ցնա-ինքն ց'Ներսէս՝ թէ „'Ներսէս վարդապետ՝ միթէ ասելոյ բան չունիմք մեք. բան շատ ունիմք, այլ սպասեմք աւուրն իւրում“: Եւ դարձեալ՝ թէ „'Ներսէս վարդապետ՝ միթէ մեր կառավարութիւնն 'ի Հնդկաստան կամ 'ի Ռուսաստան այլոմք է եղեալ“, իբր թէ կամի ասել „ոչ մեք մեզէն արարեալ ենք զկառավարութիւնսն 'ի Հնդկաստան, կամ կարօտացեալ իցեմք քոյդ օգնութեան“: 'Նոյնպէս տրտնջէին 'ի ծածուկ և յայտնի անդամք ժողովոյն Էջմիածնի: Զայս լուեալ 'Ներսէս եպիսկոպոսի, մատոյց խնդրագիր յանուն Կաթողիկոսին և ժողովոյն՝ 'ի 10 Դեկտեմբերի 1812 ամի, յորում յետ յուշ առնելոյ զառաջին ծառայութիւնսն իւր յաւուրս Դանիէլ Կաթողիկոսի, և յաւուրս տեղապահ Բարսեղ արքեպիսկոպոսին և յաւուրս Նորին Եփրեմայ, ասէ թէ՝ Ջանք և աշխատութիւնք իմ ցայն վայր էր 'ի պատիւ Էջմիածնի. և լաւ համարիցաք, ասէ, (յայն աշխատութիւնն) առ ժամանակ մի ևս տոկալ, և կարծէաք զայն պատուաւոր իմն և հաճոյական դիզելումն... իսկ զի չեն եղեալ այնպիսի... չեն ինչ զարմանք, զի ըստ հրաշարան վճռաստուութեան սրբոյն՝ մարդ եմ ես վկայեալ մտօք խակութեան թերի խորհրդոց. և հաւատարեմ է առ իս բանն Տէրունի՝ զի աչք իմ թէպէտև զշիւղս ական այլոց քննեսցեն նրբապէս, այլ զգերանն զոր յինքեանս՝ բնաւին նկատել ոչ զօրեն: Այլ ձեզ ընդէր են 'ի զուր սրբազնակատար Տէր՝ այնքան առանձնական կուտակութիւնք կենամաշ կրից և յաճախութիւնք արտնջանաց. փոխանակ

զի չեմ ես բռնակալ ոք, չեմ ես դիմամարտ ոք ձերում Կաթողիկոսութեան· այլ՝ որդի եմ ձեր և ծառայ· ըստ որոյ ամենայն իրաւամբ կարող էիք բարձու իշխանութեամբ հրամայել մեզ 'ի բաց կալ 'ի դրանց ձերոց, և այնպէս ընդարձակել արժանապէս զիշխանութիւն ձեր, և այլն: Նոյնպէս և գիրապատիւ եղբարքն իմ առանց արտնջելոյ վասն վնասաբեր խորհրդոց, բանից և գործոց մերոց··· կարող էին միաբան 'ի միասին համաձայն կրդման իւրեանց արժանաւոր դատաստանաւ դատապարտել զդատապարտելի գործն իմ, և իշխանաբար մերժել զմեզ 'ի զբաջանութեանց անտի մերոց և խափանել զվնասն բարեկարգ կառավարութեան իւրեանց յայնցանէ, և այլն: Եւ ապա ասէ· „Ա՛յլ այժմ ահա ես իմովն յօժարութեամբ հրաժեշտ տուեալ այնմիկ պաշտօնատարութեան իմոյ (իմն անդամակցութեան Դողովոյն)՝ յիշեցուցանեմ (Դողովոյն) զբանն Տէրունի· վայ որ ասէ զչարն բարի և զբարին չար· և այնպէս ապա ամենախոնարհ երկրպագութեամբ խնդրեմ, և մանաւանդ ժռեմ և թախանձեմ··· յայսմ հետէ այլ ոչ ևս սպասել աւուրն իւրում, այլ խնայելով մարմնոյ իմ և հոգւոյ, բացայայտել զամենայն բան զոր ունիցիք զինէն մթերեալ վասն աւուրն իւրում, և արձանացուցանել զայնս 'ի գիր առանց ողորմութեան պարզ արդարութեամբ· ըստ որոց և ես համաձայն օրինաց պատրաստ եմ տուժել 'ի մարմնի իմում զարժանաւորն պարսաւելի և վնասակար խորհրդոց, բանից և գործոց իմոց, որով համանգամայն յառաջագայի և աղատութիւն հոգւոյ իմոյ 'ի պարտաւորութեանց անտի, և օգուտ հասնարակաց յապայս, ըստ բանի Առաքելոյն· „Որք մեղանչեն՝ առաջի ամենեցուն յանդիմանեսցի զի և այլքն երկիցեն“: Ա՛յլ և այսու ամենայնիւ··· մաղթեմ շնորհել ինձ

զխուղ. մի 'ի կարգս հանարակութեան միաբան եղբարց. ուր և ես ընդ նոսին վայելեցից զմնացորդս կենաց իմոց"։

Յաւուրս Եփրեմայ կենդանի էր դեռ ևս Դաւիթ եպիսկոպոս. որում թէպէտև հնար էր, ասեն, վերստին աղաղակել զաղգն, և ունել զԱթոռն 'ի ձեռն մարմնաւոր իշխանութեան խանից Երևանայ՝ որոց հաճոյացեալն էր առատաբաշխ ընծայատուութեամբ. սակայն չարար ինչ այնպիսի՝ զգաստացեալ թերևս երկիւղիւ Տեառն և կամ ձանձրացեալ խպառ յունայնութեանց աշխարհի, և պատուեցաւ յԵփրեմայ։ Եւ իբրև մեռաւ, թաղեցին զնա 'ի վկայարանի սրբոյն Դայիանեայ (1812)։

'Ի՝ ժամանակս Հայրապետութեան սորա մինչև ցամն 1827 աշխարհն Արարատեան, ընդ նմին և Աթոռն Էջմիածնի կայր 'ի խաղաղութեան և յանդորրու. զի ոչ պատերազմաց ինչ վրդովմունք ծագեցան ուստեք, ոչ գերութիւն, ոչ աւարառութիւնք յասպատակաց, և ոչ պահանջմունք հարկաց։ Պանզի թէպէտև տայր Աթոռն տարեկանս ինչ՝ խանին Երևանայ. այլ այն էր ըստ կարգեալ սովորութեանն՝ և ոչ առաւելագանց ինչ. մանաւանդ զի արքայորդին Պարսից Աբբաս Միրզայ գութ ևս ունելով 'ի վերայ Աթոռոյն՝ տարեկան ուռճիկս շնորհէր հարիւր թուման[34] սմին այսմ Հայրապետի։ Թող զայս. նաև ամենայն ուրեք 'ի Տէրութիւնս Օսմանեանց, Պարսից, Ռուսաց, ևս և յաշխարհին Հնդկաց, անդուլ անդադար շրջէին Նուիրակունք Էջմիածնի[35], և տուրք

---

[34] Աժէք միոյ թումանի յայնմ ժամանակի էր չորս մանէթ։

[35] Պաշտօնքն Նուիրակաց Էջմիածնի՝ հրամանաւ և հաճութեամբ Եփրեմ կաթողիկոսի շարադրեալք՝ այսոքիկ էին.

«Ա. Առաջին պաշտօն Նուիրակաց՝ յականջս ժողովրդեանն առ որս առաքեցան՝ ընթեռնուլ զկոնդակն քահանայապետական, յիշեցու-

բարեպաշտութեանց 'ի ժողովրդոյ լիով հասանէին ընդ ձեռն նոցա յԱթոռն: Բայց զարմանք մեծ այս են, զի յայսպիսում առատաձոիս բարութեան ժամանակի ընդ չափազանց պարտուք անկաւ Աթոռն, մինչ զի յետ սպառելոյ այնչափ անհամար արդեանց նուիրակութեանց և այլոց նուիրանաց՝ ալքեւացելոց 'ի տեղեաց տեղեաց, մինչև ցամն 1820, հարիւր ութսուն և չորս հազար մանէթ դիզեալ էին պարտք նորա՝ մուրհակքն, զորս տուեալ էր Հայրապետն Եփրեմ, և Միւնհոդոսն Էջմիածնի: Այսմ ոչ զայլ ինչ գտանեն պատճառ՝ իմաս-

---

ցանել նոցա զվարդապետութիւն Աւետարանի Ցեռուն, և միթարել զնոսա բանիւք սուրբ Գրոց, խրատել, և այլն:

„բ· Ցեղեկանալ վարուց և գնայից քահանայից և յորդորել և ածել զնոսա 'ի բարեկրօնութեան վարս, և ծանուցանել զպարտս պաշտաման նոցա:

„գ· Բաշխել նոցա զմեռոնն սուրբ:

„դ· Ընդունիլ զնուէրս և զընծայս՝ զորս յանուն Էջմիածնի կամ 'ի վայելս անձին իւր իսկ նուիրակին նուիրել ունէցին ազգն Հայոց:

„ե· Զնուէրս և զընծայս յանուն Էջմիածնի պահպանել զգուշութեամբ, և անկորուստ հասուցանել 'ի ժամանակին յԱթոռն:

„զ· Ճանաչել զինքեանս և ճանաչել զժողովուրդն՝ որոց են ինքեանք նուիրակ, և կշռել յամենայնի զարժանն ամենայն պարտաւորութեանց պաշտօնի իւրեանց, և լինիլ խաշնարած և ոչ անձնարած և պորտաբոյծ, և այլն“:

Պատուիրանք վասն նոյն նուիրակաց·

„ա· Հաստատ վարուք պահել զյարգ անձին իւրեանց և զքահանայապետին՝ յորմէ առաքեցան:

„բ· Յամենայն աւուր կանխել անխափան յեկեղեցի, և մի ծուլանալ:

„գ· Անխախտ սիրով կալ 'ի հարազատութեան Աթոռոյն, և մի ընդերկարել զգործս իւրեանց աւելորդ ժամանակաւ, այլ աւարտել յընթացս երից ամաց, և դառնալ յԱթոռն:

„դ· Զպահել առ ինքեան զաւելի պաշտօնատարս և չծանրանալ ազգին տարապայման աւելորդապաշտութեամբ:

„ե· Պահել զչափաւորութիւն 'ի հանդերձս և 'ի կերակուրս:

„զ· Զթախանձել զոք աւելի 'ի պահանջմունս տրոց նուիրակութեան· չանիծանել զոք, չբարկանալ, և այլն:

տունք և հանձնարեցք, բայց միայն ղշռայլ բարս Հայրապետին. որ կամելով յուծախել զեւր գովեչս՝ որովք և զփառս, առատաձեռն ցուցանէր զանձն առ ամենեսին, մանաւանդ առ Պարսիկ պարտապահանջս՝ շնորհելով յամենայն նուագս տեսութեան զծանրագին ընծայս, այն է՝ զաղգի ազգի բեհեզս, կերպասս, սփռոցս նկարէնս ծաղկայօրինուորակս, ոսկեայ և արծաթեայ անօթս, մատանիս, տուփս պատուական ակամբք ընտելուզեալս, զորս բերել տայր 'ի Կոստանդնուպօլսէ, 'ի Պետրբուրգայ և 'ի Հնդկաց։ Յովին ձեռնբացութեամբ, ասեն, բազմացոյց Եփրեմ զթիւ պարտուցն, և վաշխ 'ի վաշխից վերայ բարդեալ՝ առաւել ևս ածեցոյց զնոյն. մինչ անկարացեալ ապա

„է. Զամենայն նուիրանս ընկալեալս 'ի ժողովրդենէն գրել 'ի տումարի հանդերձ յիշատակութեամբ անուան տուողին. չափոյ տրացն, և այլն, և ապա յայտնել զնոյն քահանայապետին։

„Ը. Հոգալ վասն գանձանակաց ուր ուրեք և կայցեն, տեղեկանալ հարազատութեան կամ անհարազատութեան գանձապետաց, և ծանուցանել ՅԱԹՈՌՆ. և ուր չգուցէ գանձանակ յանուն ԱԹՈՌՆ՝ նորոգ հաստատել։

„Թ. Զլինել ձեռնամուխ յարդիւնս նուիրանաց եղելոց յանուն ԱԹՈՌՆ Երուսաղէմի կամ այլոց վանորէից։

„Ժ. Զձեռնագրել զոք առանց կամաց Առաջնորդի վիճակին։

„Ժա. Զածել 'ի վերայ ուրուք զվճիռ դատապարտութեան ըստ կամաց իւրեանց, այլ համաձայնութեամբ քահանայից և իշխանաց՝ բանիւք հեզութեան, և մի ցասմամբ, և այլն. և չառնուլ զփիլոն քահանայից վասն գոյն պատճառի յանցուածոյ։

„ԺԲ. Ունել սէր առ իւրաքանչիւր Առաջնորդս վիճակաց և առ նուիրակունս ԱԹՈՌՆ սրբոց Յակոբեանց՝ որ Յերուսաղէմ։

„Ցուեալ լինի նուիրակին համառօտութիւն այսր պատուիրանագրի, յորում յաւելեալ լինի և այն թէ՝ զի փոյթ ունիցին զհնագոյն գրչեայ գրեանս սահմանալ յաղագս գրատան ԱԹՈՌՆ, և ս արկանել քարոզութեամբ իւրեանց 'ի սիրտ ժողովրդեան զսէր ուսումնարանի և հիւանդանոցի յամենայն տեղիս"։

Ցեղեկութիւնքս այսոքիկ գտան 'ի մատենադարանի հօր իմոյ։ Ծանօթ. Զ. Մ։

վճարել զայն՝ առթիւ իւիք խոյս եւ (1821) յԷջմիածնէ, և գնաց նախ 'ի Հին Նախիջևան, ապա 'ի յաշխարհն Արցախաց ('ի Պ՝արապաղ), ապա անց 'ի սահմանս Ռուսաց 'ի նահանգն Միւնեաց 'ի գիւղն Ռանակոթ, անտի 'ի Տաթև, անտի 'ի Հ՝ընհեր կամ 'ի Հալինձոր, անտի 'ի Կէօրէս, անտի՞ 'ի Հ՝ուշի, անտի 'ի նահանգն Զորաբերդու 'ի գիւղն Կսապատ (որ էր տեղի բնակութեան նախ Մէլիք Ադամայ, և ապա եղեալ է՝ յայսմ ժամանակի՝ Մէլիք Պ՝անիի), անտի 'ի Օ՝էյու 'ի բնակարան Մէլիք Յովսէփու Թոռին միւս Մէլիք Յովսէփու Մեծն կոչեցելոյ, անտի 'ի Պ՝էրիշէն, անտի 'ի Գետաշէն, անտի 'ի Կէնչէ, և անտի 'ի վանսն սուրբ Նշանի 'ի Հ՝աղբատ, ուր և եկաց նա ամս վեց։ Եւ այս շրջագայութիւն նորա եղև 'ի միում ամի· և կային ընդ Եփրեմայ՝ Մարտիրոս եպիսկոպոս տեղապահ, Ընտոն եպիսկոպոս, Պիւրտ Յովհաննէս եպիսկոպոս, Ծաղկաբար Սահակ վարդապետ, Պ՝ըիմեցի Յովհաննէս վարդապետ, Լ՝էկոի Գրիգոր վարդապետ, Կարբեցի Յովսէփ վարդապետ· սարկաւագունք (յորոց մի էր և Թադէոս Ռէկնազարեան՝ որ պատմեաց զայսոսիկ), և այլ աշխարհական սպասաւորք· որոց գումարն լինէր իբրև փոքրիկ բանակ մի։ Եւ այս շրջագայութիւն էր այնու պատճառաւ՝ որպէս թէ ունի ժողովել զրամս 'ի նուիրանաց ժողովրդոց վասն ազատութեան Աթոռոյն 'ի պարտուց։

'Ի-լինելն Հայրապետին Եփրեմայ 'ի Հ՝ուշի (1822) գրեաց առ նա Գլխաւոր Կառավարիչն Պ՝րաստանի՝ Երմոլով, զի ելցէ 'ի սահմանացն Ռուսաց և դարձցի 'ի տեղի իւր՝ 'ի սուրբ Էջմիածին, և զի մի եղիցի պատճառ եղծման խաղաղութեան որ ընդ Պարսից Տէրութեան։ Բայց Եփրեմ՝ հրաժարեալ 'ի Կաթողիկոսութենէն (Յունիսի

20), և առաջադրեալ արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և վարդապետաց ընդ ինքեան եղելոց՝ յատկացուցանել փոխանակ իւր զայլ ոք 'ի պաշտօնի և 'ի կոչման Կաթողիկոսութեան և Պատրիարքութեան ամենայն Հայոց, ապաշնաց (Յուլիս 30) զԵրմոլովն և զԿայսրն՝ թոյլ տալ ինքեան ՄՇալ 'ի սահմանս Ռուսաց իբրև հասարակ ոք անձն, անպաշտօն [36]։ Եւ ապա, զկնի վեց ամաց, 'ի բանիլ պատերազմին ընդ մէջ Ռուսաց և Պարսից, երկուցեալ յահէ Խանին Երևանայ՝ որ խորհէրն կապանաք ածել զնա առ ինքն, փախստեայ չոքաւ 'ի Տփխիս. և ապա (1828 Յունվ. 15) դարձ արար փառաւորութեամբ յԷջմիածին՝ յետ տիրելոյ այնմ Ռուսաց, որպէս ունիմ գրել 'ի յաջորդ գլուխն։ Իսկ զվերոյնշանակեալ պարտուց զկէսն վճարեաց Նիկոլէս արքեպիսկոպոսն Տփխեաց, և մնացեալ կիսոյն (այն է 92,000 մանէթից) զաւելորդ տոկոսին բարձեալ ճիշդ հաշուաքննութեամբ, իջուցին 'ի վաթսուն և չորս հազար մանէթ. որք և վճարեցան 'ի

---

[36] Կաթողիկոսն Եփրեմ, որպէս տեսաք (Ծանօթ. 29), և որպէս ունիմք տեսանել յառաջիկայս ('է էլ. ԺԶ.), միշտ ցուցանէր զյօժարութիւն հրաժարելոյ 'ի Կաթողիկոսական պաշտօնէ։ Նախ առաջին եղոյց նա զայս յօժարութիւն իւր յամին 1812, և ապա աստ 'ի Շուշի, առաջադրելով արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և վարդապետաց ընդ ինքեան եղելոց „յատկացուցանել փոխանակ իւր զայլ ոք 'ի պաշտօնի և 'ի կոչման Կաթողիկոսութեան և Պատրիարքութեան ամենայն Հայոց"։ Արդարև, այսպիսի ցանկութիւն նորա ակներև տեսանի, նախ՝ 'ի կոնդակի նորա, գրելոյ, որպէս ասացաւ, 'ի Շուշի՝ 'ի 20 Յունիսի 1822 ամի, յանուն արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց և վարդապետաց ընդ ինքեան եղելոց (զպատճէն որոյ գտցես 'ի վախճան մատենիս, Ժ.), և ապա՝ 'ի գրութիւնն նորա, յ30 էն Յուլիսի նոյն ամի, 'ի Գիւլիստանէ, յանուն կայսեր Ռուսաց Աղէքսանդրի Ա., Զօրապետին Երմոլովի, և Ժառանգին Տէրութեան Պարսից Աբբաս Միրզայի։ 'Ի վերջին գրութեանց 'ի մէջ բերել պատշաճ համարեցաք միայն զնամակն նորա առ կայսրն Աղէքսանդր Ա. (տես 'ի վերջ մատենիս, Ժ.)։ Ծանօթ. Զ. Մ.

նուազս նուազս մինչև ցամն 1830, կէս մի յարծաթի զարդուց տաճարին, և կէս մի 'ի տրոց ժողովրդեան Ցփխիսայ և այլոց տեղեաց։

Յետ մեկնելոյ Հայրապետին Երիմայ Յէջմիածնէ, կառավարութիւն Աթոռոյն մնաց 'ի ձեռս քանի մի եպիսկոպոսաց, յորս յառաջագահ համարէին Յովհաննէս Կարբեցի՝ Աւագ Լուսարար կոչեցեալ, և Երիցեմ Մարսուանցի։ Եւ զի մուրհակատեարքն՝ յորոց բազումք էին Պարսիկք, օր աւուր խստիւ պահանջէին զպարտսն, գրեցին սոքա քանիցս անգամ ըստ հրամանի Խանին Երևանայ առ Երիցեմ՝ դառնալ վերստին յԱթոռ իւր, և հոգ տանիլ 'ի վճարումն պարտուց։ Եւ յոչն կամիլ նորա, Յովհաննէս եպիսկոպոս՝ որ զկատեալն էր զհետ բարձի և իշխանութեան, սկսաւ թեկն ածել զԱահասիրութենէ և խորհիլ հնարս ամբառնալոյ զանձն 'ի պատիւ Կաթողիկոսութեան։ Ուստի յօժարեցոյց զԽանն Երևանայ՝ առաքել զինքն 'ի Կոստանդնուպօլիս վասն հաւաքելոյ 'ի ժողովրդենէ դրամ 'ի նպաստ հատուցման պարտուց· սակայն ներքին նպատակ մտաց նորա էր յանձն ձգել զընտրութիւն Կաթողիկոսութեան։

ԳԼ. ԺԳ.

ՊԱՏԵՐԱԶՄ ՌՈՒՍԱՑ ԸՆԴ ՊԱՐՍԻՑ

1826—1827

Սկզբնական պատճառ պատերազմին Ռուսաց ընդ Պարսից։— Զօրավարքն՝ Մատրոսով, Բենկենդորֆ և Պասկիվիչ և Մեծ Ազիին Ներսես։— Քաղաքին Ռուսաց։— Պաշարումն և առումն Սարդարապատայ և Եչմիածնայ 'ի յԵրևանայ Պարսից։

ՕՐԱՑՈՒՆ ժամանակաւ բացաւ գուռն մեծի պատերազմին Ռուսաց ընդդէմ Պարսից. զորմէ կամեցեալ խօսել 'ի կարգի պատմութեանս, 'ի ծագմանէ անտի իրացն սկիզբն կալայց։

Զօրավար Պարսից Հասան Խան, որ ընդ Հիւսէյնի եղբօր իւրում երիցու արքայօրէն տիրէր Ադրարատեան աշխարհի իբրև ինքնագլուխ Սահմանապահ, 'ի զօրանալ բարձրանալ օր քան զօր յիշխանապանծ փառս՝ ամբարհաւաճեալ փքացաւ ընդ միտս. և ցանկալով միանգամայն ձգել երկայնել զբռնակալութեան իւրոյ զձեռն, գումարտակ զօրաց սփռեաց (1826 Յուլ.) շուրջ զսահմանակից գաւառաքն Շիրակայ, Աբցախայ և Շամախայ՝ որք ընդ իշխանութեամբ էին Ռուսաց. և արար մահուանս և գերութիւնս 'ի Հայազգի բնակչաց, ևս և Լուսաբերական անուանեալ Գերմանացի ժողովրդեանն, որք հաստատուած եկեալ 'ի սահմանաց Պետերբուրգայ՝ յամաց ինչ հետէ բնակաւորէին 'ի կողմանս Սոմխէթայ։

Այս անարգել անակնկալ յանկարծահաս արշաւանք՝ դիւրաւ յաջողեցաւ սոցա. քան որում զինուորութիւն Ռուսաց անկազմ անպատրաստ գոլով յայնժամ իբրև 'ի ժամանակի խաղաղութեան յանհոգս, չմարթացաւ իսկ

և իսկ փութալ զդէմ ունել այնմ. և վասն այսորիկ
ահ կալաւ զերկիրն ամենայն. մանաւանդ զի Թաթարք
և այլ Մահմետականքն ազինք բնակեալք 'ի նախայիշեալ
գաւառսն՝ ետ ընդ ետ միաբան միակամ խմբեալ խառնե-
ցան 'ի նոսա՝ ասպատակեց լինել յաւեր՝ յաւար՝ և 'ի
մարդագերութիւն։ Ընթացան տիրեցին յորս ոսք թա-
բեանց կոխեցին՝ չունելով ուստեք ամբարտակ դիմակալ,
բայց միայն զքաղաքն Հ՚ուշի ամրակառոյց 'ի լեռնագլխի.
յորում բաց 'ի գնդէ միոյ սահմանապահ զօրաց Ռուս-
սաց՝ կայր և ժողովուրդ յազգէ Հայոց յոգնաթիւ քան
զՄահմետականաց։

Եւ յորժամ արքայորդին Պարսից Աբբաս Միրզայ 'ի
յինանօրեայ պաշարման մեծաւ բանակաւն ճիգն թափէր
առնուլ զայս ամրոց, զորք Ռուսաց՝ որք ցան և ցիր
զոռանէին յայլևայլ տեղիս, ըստ հրամանի Գլխաւոր Կա-
ռավարչին Վրաստանի Ալեքսեայ Երմոլովի՝ որ նստէր
'ի Տփղիս, ժողովեալ խմբեցան 'ի մի ընդ զօրավարու-
թեամբ Գեներալ Կնեազ Մատաթովի Հայկազնոյ 'ի
սահմանս Գանձակայ. ուր և 'ի հանդիպիլ (Սեպտ. 3)
առաջապահ գնդին Պարսից՝ որ էր ընդ հրամանատա-
րութեամբ Միրզայ Մահմետայ անգրանիկ որդւոյ Աբ-
քայորդւոյն, առ Հ՚ամքոռ անուանեալ գետով, մարտ
սաստիկ եղեալ՝ հարին կոտորեցին անխնայ զքաջսն 'ի
հետևակ զօրաց նոցա, և զոմանս ևս վարեցին 'ի գերու-
թիւն. և որ առաւելն է՝ սպանին և զզօրագլուխ նոցին
զԱմիրխան անուն, որ էր քեռի արքայորդւոյն։

Յետ առնլոյ Մատաթովի զԳանձակ 'ի թշնամեաց
(Սեպտ. 4), և տիրելոյ շրջակայից նորին, եհաս առ նա
միւս ևս զօրագլուխ Ռուսաց Գեներալ Լէյտենանտ Ի-
վան Գէորգեվիչ Պասկևիչ սակաւաձեռն գնդաւ՝ առա-

քեալ յԱշրմոլովէ, որպէս զի երկոքին 'ի միասին երթիցեն անկանել 'ի վերայ մեծի բանակին Պարսից՝ որ պաշարեալն էր զամրոցն Շուշի։

'Ի լսել Աղբայորդւոյն զամօթապարտ խորտակումն որդւոյն իւրոյ, և զչարաչար կոտորած Պարսկական զօրուն, յանհնարինս ցասեաւ. և իմացեալ յազդարարութենէ Դաղթարաց զնուազութիւն զօրաց Ռուսաց՝ եկելոց 'ի Դանձակ, զիմեաց անդր զայրագին բազմագունդ հեծելովք և հետեւակաք, որոց թիւ համարէր լինիլ իբրև քառասուն հազար (և ըստ այլոց 70,000)։ Եւ քանզի զօրաց Ռուսաց անհնարին էր պատսպարիլ 'ի քաղաքի 'ի պատճառս ջրոցն նուազութեան, բարւոք վարկաւ Մատաթով ածել զնոսա 'ի բարձրաւանդակն մօտակայ զի յաջողագոյնս ևս կարող լիցի մարտնչել անտի. ուր և եթ բերել վաղվաղակի յամրոցէն զքանի մի սայլաբարձ թնդանօթս։ Եւ իբրև նշմարեցաւ (Սեպտ. 12) 'ի բացուստ հեծելագունդ թշնամեաց, հայեցեալ Մատաթովի և Պասկեւիչի ընդ դանդաղ շարժումն նոցին, փութացան զզօրս իւրեանց՝ որք ընդ ամենայն էին 7,000, յառաջ խազացուցանել կարգաւ 'ի խումբս խումբս՝ հանդերձ ամենայն կազմածովք մարտի և թնդանօթիւք։ Եւ ահա 'ի բաղխել սոցա և նոցա ընդ միմեանս 'ի տեղւոջ ուրէք եօթն վերստիւք հեռի 'ի Դանձակայ սկսան սաստկանալ արձակմունք հրազինուց և հարուածք ռմբաձգութեանց երկուստեք։ Առաջինն Պարսիկք միախուռն յարձակմամբ 'ի վերայ հեծելազօրացն Ռուսաց՝ ընկրկեցին զնոսա մինչև 'ի տեղի պատնշին՝ ուր կային խումբք երկու 'ի ռմբաձիգ զօրաց. այլ ապա 'ի սասանիլ ձախու կողմանն 'ի բաղխմանէ Շիրուանեան կոչեցեալ գնդին՝ զահի հարեալ չոքան 'ի փախուստ։ Յայնժամ և Պասկեւիչ՝ որ

կայր առ հեծելոցն խմբի, սաստիկ հրահոսութեամբ չորից պահեստական թնդանոթից յաջ թև թշնամւոյն՝ արար հարուածս մահու անհնարինս· և ընդ շփոթիլ նոցա 'ի խուճապ փախստեան՝ արձակեաց խումբ մի 'ի Դրակունեան զօրաց, որք պնդեալ զհետ՝ ցրուեցին հալածեցին զամենեսին։ Յայսմ պատերազմի գերեցան 'ի Պարսից արք հազար և հինգ հարիւր· ընդ որս և թնդանօթք երեք, և դրօշակք։ Իսկ թիւ անկելոց և վիրաւորաց 'ի Ռուսաց ասի լինել իբրև երկերիւր։ Փոքր միւս ևս և նոյն ինքն Աբբասյորդին ձերբակալ լինէր, եթէ չէր նորա ճողոպրեալ զանձն 'ի սահման իւրոյ Ցէրութեան՝ աշտանակելով 'ի նժոյգ օգապարիկ։ Իսկ Պասկևիչ առեալ այնուհետև զԼախիջևան և զամրոցն Աբբասապատ՝ տիրեաց կողմանցն այնոցիկ· յորմէ բորբոքեալ Պարսից հանհնարին զայրացուկս սրտի՝ սկսան կողոպտել, քանդել և հրձիգ առնել զընակարանս Հայոց՝ որք փախուցեալ թաքչէին յերեսաց կատաղութեան նոցա։

Յետ այսորիկ կրկին անգամ յաջողեցաւ Պասկևիչի բեկանել զզօրս Աբբայորդւոյն մերձ 'ի Հրիվանպուլախ, ուր կայր ամրոց շինեալ ըստ Եւրոպեան ճարտարապետութեանց։ Այլ զի զօրք Ռուսաց ոչ կարէին կալ անդ անվտանգ 'ի պատճառս տօթագին ջերմութեան՝ որում անընդհատ էին ամենեքին, Եհան Պասկևիչ զայրուձիսն 'ի բարձունս լերին Սալվարայ, և զհետեւակազօրն էած 'ի Թարաբաբա անուանեալ տեղին, բացաս 'ի Ղախիջևանայ ասպարիզաց 28· ուր 'ի ժամանել ձմերան՝ առաւ դադարումն պատերազմի։

Եւ սպա ընդ բանիլ գարնան (1827), նախընթաց զօրք Ռուսաց՝ ընդ որս էր և զենազարդեալն Հոգեւոր՝ հսկող Հովիւն՝ մեծ Երէին Ներսէս, յառաջ խաղա-

ցեալ առաջնորդութեամբ քաջի զօրավարին Աղեքսանդրի Ռէնկէնդօրֆայ՝ ի ջին յարձակածաւալ դաշտն Երաբատեան. .ուր իբրև մեծ եղեն յԷջմիածին՝ ելին անտի (Էջ. 13) փառաշուք հանդիսիւ եպիսկոպոսք, վարդապետք, և բովանդակ միաբան ուխտ եկեղեցւոյն՝ զարդարեալք 'ի զգեստս մեծափառս։ Հեղան զեղան անդր առ ժամայն և բազմութիւնք ժողովրդեան՝ ծերոց և տղայոց. գային խռնէին՝ ելեալս զմիմեանսք արարեալ։ Առայր բորբոքէր սիրտ նոցա անհանդուրժ 'ի սէր Հայրենեաց՝ տեսանելով 'ի պարտառաջս խմբին զարժանատիպ օրինակն ամենայն գերապանծ վեհանձնութեանց զմեծ Հովիւն Ներսէս, և առաջնորդութեամբ նորա՝ զեկեալ հասեալ զնորոգատուր պարգևս փրկութեան Հայրենի աշխարհին։ Ա՛նդ էր տեսանել զամենեցուն նոցա զդէմս զուարթափայլս՝ լիս անհամեմատ խնդութեամբ հոգւոյ։ Ամբառնային յամենայն բերանոց բերկրանուագ օրհնութիւնք առ Աստուած. զոհանային զանհաս զանքնին զքանչելի ողորմութեանց նորա, որով այդ արար տաճարի իւրում սրբոյ՝ թափելով զնա վերստին 'ի ձեռաց խաչատեաց ազին, որպէս երբէմն զԵրուսաղէմ... Զուարճալի էր տեսարանս, և թուէր իմն՝ եթէ թնդայ երկիր ընդ գարշապարաք նոցա յորոտընդոստ և 'ի դարձադարձ հընչմունս ահեղաձայն զանգակաց՝ զորս հարկանէին 'ի բարձրադիտակ աշտարակս մենաստանին։

Յետ այսօրինակ յուսապատար հրճուանաք մտանելոյ սոցա 'ի վանսն Էջմիածնի, արքեպիսկոպոսն Ներսէս և քաջ զօրավարն Ռէնկէնդօրֆ աջակցելով միմեանց՝ սկսան ամենայն փութով և լրջամիտ զգօնութեամբ հոգ տանիլ 'ի խնամարկութիւն հիւանդ զօրականաց, և 'ի կարգաւորութիւն պատերազմական հանդերձանաց առ պաշարումն

՝ամրոցին Երևանայ, և 'ի պահպանութիւն նորանուաճ երկրին։

'Ի լսել զայս Երքայորդւոյն՝ եկն բանակիցաւ երկուտասան հազարօք 'ի դաշտին Ոշականայ· և առաքեաց անտի գունդ մի հետեւակաց, որք սկսան (Օգոստ· 13) ռմբաձիկ լինել յարտաքին պարիսպն Էջմիածնի յաբևելից կուսէ մինչ ցաւուրս չորս· և այն ինչ ևս քան զեւս ջանային սաստկացուցանել զհարուածսն, իմացեալ՝ թէ Էֆանասի Իվանիչ Կրասովսկիյ զօրավար Ռուսաց՝ որ բանակեալն էր զօրօք 'ի ստորոտս լերին Երայի, փութայ հասանել 'ի Թիկունս պաշարելոցն՝ 2500 հետեւակօք, և 500 հեծելովք, չուեն դնան գիշերախառն 'ի բանակ զօրու իւրեանց։ Յայնժամ և Երքայորդւոյն ամաչապաղեալ՝ տայ ունել զկիրճս քարաժէռ ճանապարհացն՝ ընդ որս անցանել ունէին զօրք Ռուսաց։ Եւ ահա 'ի մերձենալ սոցա (Օգոստ· 17) սաստկացան հարուածք պատերազմի երկուստեք· այլ 'ի վերջոյ եկուն եղեալ Պարսից 'ի զենուց քաջաց՝ չոքան 'ի բաց [37]։

---

[37] Ո՛չ անտեղի համարիմ 'ի մէջ բերել ասառանօր՝ յիսկական ձեռագրէ Արհւոյն Ներսիսի՝ զբովանդակութիւն խօսակցութեան նորա ընդ Շահզատային Պարսից 'ի դաշտին Խորվիրապայ (Օգոստ· 1827), յաղագս այսր պատերազմի և կատարածի նորին, որ գտաւ 'ի մատենագրանի հօր իմոյ, և որ է այս·

„Օգտակար խօսելիք իմ, զորս համարիմ շահաւէտ վասն հասարակաց և վասն Շահզատային՝ այսոքիկ են·

„1· Ինքն Շահզատայն յորժամ կայր 'ի դաշտին Խորվիրապի, ասաց ինձ իւրով բերանով առաջի բազմութեան իւրոցն, թէ Ներսէս՝ քանի քանի կամեցայ ես որ Ռուսաց Կայսերն որդի լինիմ, այլ չեղև, և սատանայ չթողացոյց։ Երբ յայնժամ 'ի ժամանակի պատերազմութեան ինքն Շահզատայն որդի լինելն շահաւէտ համարէր վասն իւր, և այժմ պատերազմին շահաւէտ համարի, այն իւր հաճութիւնն է։

„2· Այս պատերազմութեանն պատճառ եղև զբոյցն վասն սակաւ

Զ՝ զորք Ռուսաց բաժանեալ էին յերիս գունդս, յորոց առաջինն անվտանգ եկն եմուտ Յէջմիածին. և վերջինն՝ առաջնորդութեամբ Կրասովսկուոյն գայր պատերազմելով ընդ թշնամին՝ որք մերթ ընդ մերթ յարձակէին 'ի վերայ. իսկ որք 'ի միջնում գնդին էին՝ համարիլով զանձինս յապահովի՝ իբրև սկսան անկանիլ յիզբ առուակի միոյ՝ որ հոսէր յայգեստանեայս, 'ի շինջուցանել զպապակ

ուելորդութեանց և պակասութեանց սահմանացն նշանակելոց 'ի գրախտատի հաշտութեանն. և

„3. Պատերազմն սկսաւ ինքն Շահզատայն այնպէս յանկարծօրէն յանցեալ 1826, Յուլիսի 17. և ահա 13 երորդ ամիսք են պատերազմութեանց Շահզատային և մինչ հինգերորդ ամիսք են պատերազմութեանց Ռուսաց. օգուտն 13 ամսոց վասն Շահզատային, և զնասն այն 5 ամսոց զնարդ համարեալ լինի, որն գտանի առաւել. վասն Շահզատային։

„4. Անցեալ տարի յորժամ զորք Ռուսաց 'ի քուն կային և զորք Պարսից ամենայն պատրաստութեամբ իւրեանց մտին 'ի սահման Ռուսաց. յառաջնումն ընդ յառաջել նոցա 'ի Շամքոր կիսիպաղ Մատթոսն ոչ աւելի քան չորս հազար զորք, և զնոսդ եղև. ով ընկալաւ յաղթութիւնն. և որքան առաւել եղև օգուտն կամ զնասն Շահզատայի։

„5. Յետ նորա առաքեալ 'ի կայսերէ եկն եհատս միայնակ նորին բարձր դերազանցութիւն Պասքևիչն առանց զօրաց. և ընդ յառաջ եալ Շահզատային մերձ 'ի Քիւրակ չայ միայն 7 հազար զորք. զնարդ փորձեցաւ օգուտն և զնասն և ում մեաց յաղթութիւնն։

„6. Այժմ սկսեալ է կայսերութիւն Ռուսաց զպատերազմ, ոչ ըստ օրինակի պատերազմութեանցն 'ի ժամանակս զօրավարութեանց Կնիրա Զիցիանովի կամ Գրաֆ Կուտոզովի և կամ այլոց՝ մանաւորապէս, այլ պատերազմ օրինակական. որպէս և յայտ առնեն ընդ ամենայն աշխարհ հրատարակեալ ծանօթութիւնքն վասն սկզբնաւորութեանց և կատարածի այն այս պատերազմութեանց, որոյ զարբանչն հայերէն՝ մատուցանեմ՝ ընդ այսմ ձերում՝ գիրաստիճանութեան զքանի օրինակ. և որպէս ունիք ընթեռնուլ անդէն, այս պատերազմն սկսեալ է կայսերութիւնն Ռուսաց առ 'ի ծանուցանել ոչ ճանաչողաց՝ զղջութիւն իւր, որպէս և ընթեռնուլ ունիք 'ի 5 երեսն ատրակի յայտարարութեանն 'ի 36 երորդ տողն, ուր գրեալ լինի. „Հարկադրեալ եղև Ռուսատան զղջութիւնն վասնել զջութեամբ.

ծարաւու իւրեանց, յարձակեցան յանկարծ 'ի վերայ հեծելազօրք թշնամւոյն՝ որք անդէն 'ի տեղւոջն դարանեալք էին, հարին սպանին 'ի նոցանէ անխնայ ոգիս թուով 1151· արբուցին զսուսեր իւրեանց ծարաւի յարենէ անկելոցն· և կալան կենդանւոյն ·անձինս աւելի քան

„և պատերազմի պատասխանել պատերազմաւ“, և այլն։ Եւ այս պատերազմն չունի վերջնալ առանց կատարելութեանց ամենայն հարկաւոր եղելոցն կայսերական մեծ վայելչութեանց, որպէս և ընթեռնուլ ունիք յիններորդ երեսն, սկսեալ 'ի 32 տողէն։ Ուր գրեալ լինի պարզապէս· „Այլքան յայտնի արհամարհութեանց, այլքան „անլսելի մոռացութեանց ամենայն պարտաւորութեանց՝ չէ պարտ „ՀԱՅԵԱԼ անպատիժ։ Վասնորոյ թագաւոր կայսրն յայտնէ զպատե„ռազմն Շահին Պարսից· և յայտնէ նմա նախ՝ թէ Պարսիկք ինքեանք „եղծին զդաշնադրութիւնն 'ի Կիւլիսատան· և ապա յայտնէ նմա, թէ „կայսերութիւն Ռուսաց ոչ գիցէ զդէնս, մինչև ոչ ապահովացուցէ „կատարելապէս զանդորրութիւն իւրոց սահմանաց, և ոչ առնուցու „'ի տէրութենէ Պարսից կամ զվնասն իւր յաղագս կորստեանց և „զկանաց“· այսինքն է վասն դերեաց, վասն սպանութեանց, վասն զանազան աւերութեանց, և վասն ամենայն պատերազմական ծախուց՝ այնպէս որպէս լինելոց իցէ համեմատ արժանաւորութեանցն իւրոց կայսերութեանն։ Եւ ըստ այմ՝ յայտարարութեանց իւրոց կայսրն ամենայն Ռուսաց՝ որ մուծեալ է զզօրս իւր 'ի սահման Երևանու և Նախիջևանու, ոչ եթէ սատուստ չունի յետս դարձուցանել, այլ թէ որպէս ունիք տեսանել յառաջ քան զլրումն Օգոստոսի ամսոյս, զօրք Ռուսաց անցեալ ընդ Երասխ յառաջնան 'ի Թաւրէզ, և տարածանին ուր և շահաւէտ համարին վասն 'ի մոի եղեալ նպատակի իւրեանց ըստ անդառնալի հրամանաց առաքողին զինքեանս Ինքնակալ կայսերն Մեծի։

„7· Դուք իսկ լաւապէս կարող էք զմտաւ ածել, որ նորոգ կայսեր ամենայն Ռուսաց առաջին պատերազմն է, և որքան հատանէ զօրութիւն նորա ջանալոց է զայս առաջին պատերազմութիւն իւր ըստ արժանի կայսերական պատերազմութեանց փառաւոր կացուցանել 'ի տեսիլ ամենայն աշխարհի։

„8· Անցեալ տարի զօրք Ռուսաց 'ի մէջ բարեկամական խաղաղութեանց գալով որպէս 'ի քուն միամտութեան իւրեանց, զօրք Պարսից այնքան կարողացան յառաջանալ յանկարծակի։ Այժմ զօրք Ռուսաց յառաջացեալք ստէպ վասն պատերազմի, զինքդ կարելի իցէ յուսալ, թէ աւելի ունիցին յառաջանալ· և իմաստուն մտաց անվայելչական են ամենայն այսպիսի կարծիք։

զերկերիւր։ Սակայն ոչ մեծ ինչ եղև թշնամւոյն այս յաղթանակ իւր՝ հայելով 'ի թիւ իւրոց դիականցն հնգապատիկ առաւելեալ։

Յետ աւուրց ինչ (Սեպտ. 5) զօրագլխապետն Պասկևիչ հկեալ զօրօք իւրովք՝ բանակ եհար առ եզերբք

„9. Զօրք Ռուսաց յանցեալ ամին ընդ յառաջ եղին ոչ աւելի քան զտասն հազար կամ պատերազմական կամ սահմանակալ։ Այժմ աւելի քան 110 հազար են որք յառաջոյ կան պատերազմականք կամ սահմանակալք. և եթէ զօրք Պարսից ոչ կարացին ըստ ըղձի իւրեանց ստանալ պատերազմաւ զյաջողութիւն յանցելումն ամի, այժմ զինչդ դովանի համարիլ ունիցի այնպիսի իղձ պատերազմութեանց Նայիպի Սալթանային։

„10. Պատերազմական գործք անծանօթ են վարգապետաց, այլ զի ամենայն ինչ մարգկային միտք կարող են հասանիլ և ճանաչել արժանապէս զանազան փորձառութեամբ՝ և օրինակաց անցելոցն համանմանեաց, ես որպէս հարազատ իմում բանաւոր ընտրութեանց, և որպէս հարազատ օգտակարացն ամենայն հասարակութեան հպատակաց, ես և օգտակարացն իւրոց Մեծութեան Նայիպի Սալթանայի որոյ շնորհն վայելեալ եմ առատութեամբ, և անմոռանալի ունիմ զամենայն բարերարութիւնն՝ զորս վայելեալ եմ յամենայն ժամանակս լինելոյ իմ 'ի ներքոյ հովանաւորութեանց նորին, ոչ կամիմ կեղծաւորիլ անարժան ամարգութեամբ և հաճոյական սուտ բանիւ ծածկել զճշմարտութիւնն որում վկայեն իմաստուն զատողութիւնք մարգկան, զի այս ամենայն պատերազմական աշխատութիւնք Նայիպի Սալթանային 'ի զուր են, և ամենևին անօգուտ վասն մեծութեան նորին։

„11. Լաւապէս յայտնի է նորին մեծութեան Նայիպի Սալթանային զի Նապոլիոն տիրեալ ամենայն Եւրոպիոյ կամ մեծի մասինն Եւրոպիոյ հազիւ ուրեմն կարաց վստահանալ մնանել 'ի սահման Ռուսաց ութ հարիւր հազար զօրօք, և գնացեալ եհաս մինչև 'ի Մոսկով մայրաքաղաք Ռուսաց. այլ այնու ամենայնիւ յայտնի է և այն, զի նա ոչ կարաց ելանել 'ի սահմանաց Ռուսաց և ժամանել անվանգ 'ի մայրաքաղաք իւր 'ի Պարիժ, այլ կորուսեալ զմեծ կայսերութիւն իւր և զահագին սէրութիւնն, 'ի կղզին Էլինէ վճարեաց զկեանս իւր։ Որոյ համեմատութեամբ երբ Նայիպի Սալթանայն մնալ 'ի Ղարապաղ անցեալ ամին միայն ութսուն հազար զօրօք, և ոչ կարացեալ ժամանել մինչ 'ի Գէնճէ, զօրք նորա տկարացան և ցրուեցան և հազիւ կարողացան յետ բազում աւուրց գտանել զիրեարս 'ի սահմանս Ղարատախու և Թավրիզոյ, հարկ է ոչ ևս ապաւինիլ յայնպիսի զօրս,

Հրազդան (Զանգու) գետոյն՝ հանդէպ ամրոցին Երևա-նայ· այլ անյաջող համարեալ կալ անգէն՝ խաղաց ապա Յէջմիածին, և անտի (Սեպտ· 12) ընդ Արևելոյն Ներսիսի 'ի գաւառն Արշակունեաց, ուր և բանակեցոյց զզօրսն մերձ Յէրասխ գետ։ Կամք էին նորա պաշարել առժա-

---

որք ոչ կամին մեռանիլ վասն Նայիպի Սալեթանային և սովոր են միշտ փախչիլ և զկեանս իւրեանց պահպանել փախստեամբ։

„12· Թէպէտ վախճանեալ գտանի այժմ ահարկուն թշնամոյն ամենայն Եւրոպիոյ Ալէքսանդր առաջին կայսր ամենայն Ռուսաց, այլ կենդանի է կայսերութիւնն և կարգաւորութեամբ Աստուծոյ՝ հզօր է յոյժ ժառանգաւորն կայսերութեան նորին Նիկոլայ առաջին կայսր և Ինքնակալ ամենայն Ռուսաց, որոյ այս առաջին է պատերազմն· ոչ է անարժան հաւատալ ինձ այսմ, զի թէ Ալէքսանդր կայսր եմուտ յաղթանակաւ 'ի Պարիզ քաղաք Նապոլիոնի, այժմ և դիւրին է Նիկոլայ կայսեր զօրաց մտանել 'ի թէհրան քաղաք Շահին Պարսից։

„13· Ի միում պատերազմի Նապոլիոնին՝ մեռանէին յերկուց կողմանց զօրաց ութիւր քան երեք հարիւր անձինք· այժմ 'ի 5 Յուլիսի պատերազմութեանն Նայիպի Սալեթանայի ընդ Նորին բարձր գերազանցութեան Իւան Ֆէոդորիչ Պասքեվիչի 'ի սահմանս Զոր սու, զբէ Նորին բարձր գերազանցութիւնն, զի մեռեալ են 'ի զօրաց Ռուսաց 2 օրեր ամբիցարք և 7 սալտատք, և 'ի կողմանէ Պարսից ևս մեռեալք և վիրաւորք կարեն լինիլ իբրև չորս հարիւր· և 100 ևս կալանաւորեալք կամ գերիք 'ի ձեռս Ռուսաց։ Եթէ մեռեալ լինէին 'ի պատերազմի անդ այժմ ութիւր քան 10 հազարք 'ի զօրաց Պարսից, և նոյնչափ ևս 'ի զօրաց Ռուսաց, դարձեալ չէր արժան ապաւինիլ Շահ-զատային 'ի հզօրեղութիւն զօրաց Պարսից· այլ զի և առանց մեռանելոյ բազմութեանց փախուցեալ են վասն զանձինս իւրեանց ապրեցուցանելոյ զօրք Պարսից, զինքդ արժան իցէ Նայիպի Սալեթանային դարձեալ ապաւինիլ 'ի բազմութիւն այնպիսի զօրաց՝ որք սովոր են փախչիլ շուտով վասն ապրեցուցանելոյ զանձինս իւրեանց։

„14· Եթէ զօրք Նայիպի Սալեթանային ունին զայս իւրեանց և կարող են պատերազմս յաղթօղ գտանիլ Ռուսաց, իսկ ընդէր ուրեմն թողեալ անդ 'ի Նախիջևան զբանակն Ռուսաց՝ որ ունի յառաջանալ 'ի Նախիջևան, եկեալ են այսր և ամրացեալ 'ի ստորոտ լերինն Արագածու· ընդէր ոչ պատերազմին ընդ բանակին Ռուսաց որ Նստի անդէն յԱպարան առանց պարսպի և ամրոցի, և ընդէր է 'ի զուր հրդեհել զպարուրթս 'ի վերայ պարսպաց Էջմիածնի, յորժամ 'ի վաղուց ևս զփորձ առեալ զիսէք, զի 'ի ժամանակս Նիքիտա Յիցիանովի գոլով 'ի մէջ պարսպաց Էջմիածնի 160 զօրք Պարսից, յեր-

մայն զնորակառոյց ամրոցն Պարտաւրապատայ՝ որ կայր 'ի հիւսիսոյ կողմանէ։ Եւ զի պակասեալ էին համբարք պաշարոյ՝ որուամ կարի պէտս ունէր զօրականն, Ներսէս եպիսկոպոս փոյթ կալաւ նախահոգ լինել զայնմանէ, և ապա 'ի պաշարումն մատչել բերդին։ և զիտելով՝ թէ

կուշաբաթօրէ մինչ 'ի շաբաթ օրն՝ հինգ օր նստեալ Յիցիանոսն այդր՝ ուր է այժմ զօրք Պարսից, և ոչ կարողացեալ համարիլ ինքեան օգտակար, եթող զպարիսպն Էջմիածնի, և գնաց 'ի Դավակերդ և անտի 'ի վերայ բուն բանակին Նայիպի Սալթանայի։

„15· Կարելի է՝ թէ կարծեալ են զօրք Պարսից, զի քաջքն 'ի զօրաց Ռուսաց գնացեալ են առ ինքեանս անդ 'ի Նախիջևան, և մնացորդքն ասա յԵրևան են հիւանդք նոցա և կաղք և երկչոտք կամ անյարմարքն 'ի պատերազմ, և դիցուք թէ այնպէս իսկ իցեն որպէս և կարծեալքն են, երբ պատերազմողքն ունին յառաջանալ, և զօրք Պարսից չունին խափանել նոցա զգնացս իւրեանց, զինչ օգուտ կարէ լինիլ Նայիպի Սալթանային յաղթութիւնն իւր ասա հիւանդաց և կաղաց յորժամ հզօրեալքն 'ի նոցունց ունին տիրել նահանգաց և քաղաքաց բազմաց և կատարել զհրաման կայսեր իւրեանց։

„16 Դիցուք թէ զօրք Պարսից ամենայն զօրաց Ռուսաց եղելոց 'ի սահմանս Երևանու և Նախիջևանու և բոլոր Վրաստանու կարողացան և զդէմ ունել այժմ, այլ ոչ է անյայտ ձեզ զի կայսերն Ռուսաց զոն զօրք մշտապատրաստք 12 հարիւր հազար (՞)· միթէ զամենայնն համարի Նայիպի Սալթանային՝ թէ կարող է զօրութեամբ որոյ իւրոյ վերջացուցանել, զի այնուհետև ապահովացի ինքն և փառաւոր լիցի։ Հարկ է ամենայն մարդկան, զի վասն ամենայն գործոց ըստ ամենայն զարագային բարւոք մտախորհ լիցի մինչև ցվախճան։

„17· 'Ի վերջանալ պատերազմութեանց՝ օգուտն վայելէ յաղթականն միայն այլ հանճարեալն նախանկատ՝ 'ի սկզբան պատերազմութեան կանխատես եղեալ, որոնէ զհնար պահպանելոյ զիւրն օգուտ։

„18· Վէրքն կամ եարայն քանի նոր է, բժշկութիւնն առաւել դիւրին է· այլ որքան հնանայ, այնքան դժուարանայ, և երբեմն ևս լինի ամենևին անբժշկելի։

„19· Ես, որպէս հոգևորական անձն և եպիսկոպոս Հայոց, անարժան է ինձ ըստ օրինակի խորհրդականաց խօսիլ զայսոսիկ յունկն Նորին մեծութեան Նայիպի Սալթանայի, այլ զի խորհրդականք ամենայն թագաւորաց չեն թագաւորք, այլ իւրեանց հարազատ և հաւատարիմ անձինք, ըստ այնմ և ես համարձակիմ ըստ կարգի այլոցն հարազատից Նորին մեծութեան ամենախոնարհաբար...“։

Դանիել· Զ· Մ·

'ի մեծ գեօղն Ընդհանքաց Կողբ անուն[38] ժողովեալ կան իբրև յամրոցի բազում Հայ բնակիչք Աշտարակ՝ Ոշական և Խարաքար անուանեալ գիւղուրէից՝ հրամանաւ Իւսէյին Խանի, առաքեալ կոչեաց անտի զոմանս յեւրեկլեաց՝ իմանալ, եթէ գտանիցի՞ ուրեք պաշար կերակրոյ 'ի պէտս զօրաց։ Եւ նոքա նոյնհետայն եռուն յօժարութեամբ աւելի քան զհազար քոռս ցորենոյ՝ զոր շտեմարանեալ ունէին 'ի գեօղ անդր· յայանեցին ևս՝ թէ կայ և գարի շատ։

Լուրախացեալ ընդ այս Պասկևիչի՝ մօտեցոյց (Սեպտ· 14) զբանակն 'ի Սարտարապատ[39]· ուր և մարտ եղեալ

---

[38] Այս գիւղ՝ որ կայ յարևմտից կողմանէ Երասխայ, հեռի էր 'ի բանակէն չորից ժամուց ճանապարհաւ։

[39] Պատշաճ գտանիմք 'ի մէջ բերել. ստանոր զգգուարութիւնն արքեպիսկոպոսին Ներսիսի առ Հայ բնակիչս Սարտարապատայ, որոյ օրինակն՝ գրեալ ձեռամբ նորին իսկ Ներսիսի՝ գտանի առ մեզ, և է այս·

„Հայոց բնակելոց 'ի Սարտարապատ 'ի մէջ բերդին։

„Ծանուցանել ձեզ հարկաւոր համարիմ՝ զի Ներին Բարձր Գերազանցութիւն գլխաւոր կառավարիչն զօրաց Ռուսաց որ յԵրևան՝ Իւան Ֆեոդորիչ Պասքեվիչն այնպէս զանօրէնութիւն իւր կարգադրեալ յայտնէ վասն ամենայն եղելոցն 'ի մէջ բերդիցն Սարտարապատու. և Երևանու՝ զօրաց բերդապահաց, և ժողովրդոց բնակչաց, զի թէ յօժարեցին նոքա յառաջ զթօփաձգութիւնն զօրաց Ռուսաց, և յառաջ քան զկործանումն պարսպաց բերդիցն ելանել յայանի կամ անյայտ կերպիւ, և թողուլ զհակառակութիւնն և զպատերազմն անօգտակար անձանց իւրեանց և սերնդոց և ժառանգաւորաց իւրեանց, այնպիսեացն առեալ լինիցի ազատ կամք՝ գնալ ապահովութեամբ ուր և կամք իւրեանց եղիցին, և որք 'ի նոցունց մնալոց իցէ 'ի հպատակութեան կայսեր Ռուսաց, ունիցի զայս կատարեալ՝ զի վայելել ունի զմեծ ողորմութիւն նորա լիապէս ապահովութեամբ· իսկ՝ որ ոք կամիցի յամառիլ յառաջ քաջամարտութեան իւրեանց և ոչ յօժարեցի յառաջ դիմել պատերազմութեանց հոգ ունել վասն 'ի բաց հեռացուցանելոյ զինքն 'ի հակառակութեանց և 'ի թշնամութեանց ընդդէմ ահաւոր զօրաց տիեզերատարած կայսերութեան ամենայն Ռուսաց, այնպիսիքն ունին մտանել 'ի ուր աններելի վրէժինդրութեամբ։

(Սեպտ. 16) ընդ ամրոցին աւուրս երկուս, յիրրոլդումն սկսաւ առաւել և սաստկացուցանել զհարուածն մեծամեծ ռմբաձգութեանց ասպնջ անուանեալ թնդանօթից, և կործանել զհարաւային պարիսպս ամրոցին. յորմէ երկուցեալ Հասան Խանի՝ որ անդն կայր, առաքեաց (Սեպտ. 19) ընդ երեկս պատգամաւոր մի, և խնդրէր ժամանակ գէթ զերից աւուրց: Բայց յառաջ քան զդարձ պատգամաւորին՝ բացեալ զդուռն արևելակողման՝ ճանապարհաց զօրք իւրովք 'ի փախուստ՝ օգնական իւր ունելով զաղջամուղջ գիշերոյն: Զօրք Ռուսաց զհետ սնդեալ՝ թէպէտև չկարացին ունել զնա, բայց մարտ եղեալ ընդ հետևակացն փախստէից՝ հարին 'ի նոցանէ, և 'ի գերութիւն վարեցին աւելի քան զերկերիւր. և ապա սիրեցին խաղաղութեամբ ամրոցին, յորում բաց յերեքտասան մեծամեծ թնդանօթից և յայլոց պատերազմական զինուց՝ գտաւ և չորեքտասան հազար քոռ ցորենոյ [40]:

„Ապաքէն պարտաւորութիւն ինձ համարեալ՝ փութամ յայտնել ձեզ այժմ, զի ամենայն կարելի եղանակաւ հնարս հնարեսջիք ծանուցանել եղելոցն 'ի բերդի ընտանեաց ձերոց և ամենայն ծանօթից վասն այնպիսի կարգագրութեանց կամաց Նորին Բարձր Գերազանցութեանն զլխաւոր կառավարչին զօրաց Ռուսաց, զի որք կարօղքն լինիցին, հոգ կալցին հեռացուցանել զանձինս և հանել 'ի պարապաց բերդիցն զինքեանս և ապրեցուցանել զկեանս իւրեանց“:

Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս:

1827. Սեպտեմբերի 12, 'ի Քեալակարկ գիւղն: Ծանօթ. Զ. Մ:

[40] Այս է օրինակ յայտարարութեանն Ներսէս արքեպիսկոպոսի առ կաթողիկոսն Եփրեմ վասն առման Սարատարապատայ.

„Արքազնագոյն Տէր ամենազորմած Հայրապետ.

„Յաջողութեամբն Ամենակարողին 'ի 17 ամսոյս պաշարեալ զՍարատարապատ, 'ի 19 աւուր երկու շաբաթու ընդ մուտս արևուն յանկարծակի զելեալ յարտաքս Հասան Խանն հանգերձ համայն զօրաք իւրովք թողին յաղթողաց՝ զամրոցն հանգերձ համայն ընակչաքն: Քանզի թնդանօթքն ահեղագործք քակեալ զանկարծելի կարծեալ

Թողեալ ապա Պասկևիչի անդանօր զորս 'ի պահպանութիւն, դիմեաց (Սեպտ· 24) հանդերձ բանակաւն ընդ Երևոյն Ներսիսի յԵրևան՝ պաշարել զամրոց նորին, յորում որջացեալ կայր փախստականն Հասան Խան· և յետ ումբաձիգ լինելոյ աւուրս ինչ, իմացեալ՝ թէ բնակիչք քաղաքին և բերդին յուսահատեալք են 'ի պաշարմանէն, ստիպեաց երկիցս (Սեպտ· 28 և 29) զՀասան Խան անձնատուր լինել ընդ փոյթ՝ խոստանալով արձակել զնա և զզօրսն որք ընդ նմա։ Այլ նա այսպէս պատասխանի տարտամ· „Տաց, ասէ, զամրոցն՝ եթէ թոյլ տացի ինձ խորհրդակցիլ նախ ընդ Աբբաս Միրզայի“։ Տեսեալ Պասկևիչի, թէ ժամակոչոյս առնել կամի նա զՊուսս, եդ 'ի մտի անխնայ սասակացուցանել զմարտն· և իբրև ետ մերձեցուցանել զշարս թնդանօթիցն 'ի պարիսպն, կարծելով թշնամեաց՝ թէ անդէն անդ յարձակիլ ունին սոքա, սկսան ումբաձիգ լինել գիշեր մի ողջոյն, բայց 'ի զուր· զի ինչ ոչ կարացին վնասել։

պարիսպն հարաւային հիմնայատակ փլուցին, յետ որոյ՝ ժամ էր, ընդ առաւօտն, 'ի փողոցի կարգել զպատերազմ։

„Ա. որպիսութեան պահուն զայս համառօտ ծանօթութիւն փութամ մատուցանել Ձեր Ցերութեանն 'ի միսմտութիւն և յուրախութիւն· զի այս կործանումն օրինակական գղջեալ զսիրտ ամենայն բերդապահաց։ Ցուսամ Աստուծով յետ սուղ աւուրց աւետել վասն կործանման Երևանու· զոր պաշարեն Ցեառն զօրութեամբ յաւուր շաբաթու, 'ի 24 ամսոյս։

„Մեռեալ 'ի զօրաց հզօրաց 'ի ումբկաց թշնամեաց 4, և վիրաւորք 2։ Իսկ մեռեալք 'ի փախուցեալ թշնամեաց աւելի քան զ350 և կալանաւորք աւելի քան զ150 ըստ հաստատակաց, այլ ասոյդ թիւ նոցա համարիմ ես աւելի բազմագոյն, զորոց չունեցայ ժամանակ առ ժամ ստուգել ուստի հաւատարիմ էր“։

„Վերափառութեան Ձեր խոնարհ ծառայ Արքեպիսկոպոս Հայոց Ներսէս։

'ի 1827, Սեպտ· 22, 'ի Սուրբ Էջմիածին, ընդ երեկս։ Ծանօթ· Զ· Մ։

Այպա 'ի դաղարիլ հրձգութեանց թշնամեացն, զօրք Ռուսաց պատրաստեցան (Հոկտ. 1) ամենայն զօրութեամբ յարձակիլ յառու

բերդին։ Երկու խումբք հեծելազօրաց արձանացան առ հարաւային և արևելեան դրօք արտաքին պարսպին։ Զօրագլխապետն Պասկևիչ ընդ այլ զօրս իւր եկաց մերձ առ դրունն հիւսիսային կողման առ 'ի խափանելոյ զփախուստ թշնամեաց։ Եւ ընդ հրամայել նորա՝ սկսան յաձախել զհարուածսն ահեղ ռմբաձգութեանց ամենայն սաստկութեամբ անդադար, մինչև անկան արտաքին և ներքին պարիսպք ամրոցին։ Յորմէ սարսեալ երկիւղաբեկ զօրացն և բնակչաց՝ որք էին անդէն, ինքնին բացին զդրունսն։ Յայնժամ և Ռուսք մտեալ 'ի ներքս՝ սիրեցին։ Իսկ Հասան Խան ոչ ևս մարթացեալ հնարել միւսանգամ զփախուստ, զօղեցաւ 'ի նորաշէն մզկթին՝ զոր հիմնեալ էր եղբայր իւր. բայց աւաղ դժբաղդութեանն. զի մատնեաց զնա վաղվաղակի երիտասարդ ոմն Հայ՝ որ լրտեսեալ էր զթաքուստ նորա յառաջնմէ։

Յառաջ քան զգալուստ զօրացն Ռուսաց՝ ածեալ էր Հասան Խան յամրոց անդր զոմանս յիրևիլի եպիսկոպոսաց Էջմիածնի. յորոց և ոմն Աստուածատուր անուն՝ այր լի աւուրք՝ վախճանեաց անդէն զկեանսն 'ի ժամանակս պաշարման։

Այսի թէ՝ զօրապետ ոմն Լէլեակին անուամբ՝ կորզեաց յանկարծ. ձեռամբացի զպատրոյգ հրակայծ 'ի բերանոյ մեծի թնդանօթին՝ որ փոքր միւս ևս մնացուն անհամարս ունէր զործել։

Ոչ պէտև առաւ բերդն, բայց Պասկևիչ կասկածելով՝ թէ գուցէ վերստին արշաւեսցեն անդր թշնամիք՝ հնարադրութեամբ Աբբաս Միրզայի, հրամայեաց կազմել պատ-

նէշտ շարժականս արուեստաստեղծեալս 'ի վերայ սայլից՝ առ 'ի կարող լինելոյ զդէմ ունիլ նոքօք յարձակմանց նոցին։ Եւ յետ կարգաւորելոյ զամենայն ինչ՝ յանձն արար զքաղաքական կառավարութիւնն քաջի զօրավարին Կրատովկեայ և սրբազան Երէցն Ներսիսի, և թողեալ անդր խումբս ինչ քաղաքապահ և բերդապահ զօրաց, դէմ եդ փութանակի չուել անցանել ընդ Երասխ (Հոկտ· 5), և գնալ յառաջին իւր բանակ՝ զոր թողեալ էր առ պաշարուն Պասրիժու։ Սակայն մինչ չև հասեալ էր նա անդր, ինքնին երաց քաղաքն զդրունս· և զօրք Ռուսաց տիրեցին այնմ, առանց ինչ պատերազմի։ Եւ 'ի մտանել նոցա անդր՝ ընդ առաջ ելին Հայազգի բնակիչք՝ հանդերձ դասուք եկեղեցականաց, և ընկալան զնոսա խնդութեամբ։

ԳԼ. ԺԳ.

ԳԱՅՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՑ ԸՆԴ ՊԱՐՍԻՑ

1827

Կոլոմն Հաղբատպետին Ղազարոսի Լազարեան 'ի Պետերբուրգայ։ — Գալ Պասկիէվիչի և Ղազարոսի Լազարեան 'ի Դարբեժ։ — Ռուսաստանի Հայոց։ — Պայմանք դաշնադրութեան 'ի Ցեյլիսդան։ — Հանդէս զինուորական ղրացն Ռուսաց։

ԶՕՐԱԳԻՏԱԿԱՆՑՆ Պասկևիչ տեսանելով՝ թէ ամենայն ուրիք յոյս ինքն տիրէ, զանին բազմաթիւ ժողովուրդք Հայոց, և միանգամայն կամելով զսիրտ նոցին գլուխել, կոչեաց 'ի Պետրբուրգայ հաճութեամբ Կայսեր զՀազարապետն Ղազարոս՝ զորդի մեծի իշխանապետին Հայոց Յովակիմայ։ Գիտանէր գիտէր, թէ Հայկազունք տառապեալք ճնշեալք 'ի բազում ամաց հետէ ընդ ծանրատաղտուկ լծով Պարսկային բռնակալութեան, ընդ տեսանելն զերեսանց համազգի զարդարեալ ճոխացեալ շքեղափառ պատուանշանօք և իշխանական մեծութեամբ, իսկ և իսկ յարիլ ունին 'ի սէր նորա, որով և ձգել յորդորամիտ յիզձ հպատակելոյ Կայսեր, և գաղթելոյ յերկիր Ռուսաց՝ յուսապատար տենչիւ ազատաշնորհ կենաց։ Եւ արդարև չվրիպեաց նա յայսմ. զի առաւել քան զոր ակն ունէր՝ արդեամբք ճշմարտեցան բաղձանք նորա և խորհուրդք՝ անդուլ ջանիւք և հանճարեղ տնօրէնութեամբք նորին քաջափայլ Գնդապետի՝ գերագով և արժանափառ հարազատածին որդւոյ թագաւորիկ մեր Հայոց Հայրենեաց, որպէս պատմութեանս կարգ ունի ցուցանել։

Լրիւ եկն Պասկևիչ 'ի Դաւրէժ (Հոկտ· 19), նոյն հետայն զիշխանն Հայկազուն զԼազարոս՝ կարգեաց գլխաւոր Պետ քաղաքին։ Այս գործ զօրագլխապետիս՝ անդր քան զչափ ուրախացուցեալ հրճուեցոյց զՀայազգի ժողովուրդս ոչ միայն զորս էինն 'ի քաղաքի անդ, այլ և զամենայն զբնակեալսն յայլևայլ նահանգս Ատրպատական աշխարհին· որք 'ի լոկոյ համբաւոյ և եթ շարժեալք՝ փութացան 'ի տես Ազգակցին իւրեանց՝ ազգասիրական բարեպաշտութեամբքն ամենայն ուրեք հռչակելոյ։ „Լուա՛ք, ասէին, զգալուստ Ձեր· ցանկայաք զՁեզ տեսանել· տեսա՛ք՝ և ուրախ եմք· այլ ընդ ուրախութեանս՝ է մեր յիրաւի և տրտմութիւն, և այն՝ ոչ սակաւ։ Ունիմք զՁեզ այժմ՝ երանի թէ և յաւիտեան· այլ որպէս՝ 'ի քաղցրութիւն մարդասէր իւնամոցն՝ զոր մեզ ցուցանէք, վայելել ունիցին մեր որդիք՝ ընդ լծով կալով օտարաց 'ի դարս դարուց։ Ո՛չ կամիմք զրկիլ 'ի Ձէնջ, վեհապանծ Իշխան, համարիւն մեր, համազգամ մեր, 'ի Ձէնջ ասեմք, և 'ի Ձերոյին Աստուածատունկ սերնդոյ բարգաւաճելոյ ընդ հովանաւոր Աջով մեծի Կայսեր Նիկողայոսի։ Դո՛ք մեր խնդութիւն տիրապէս· Դո՛ք մեր միակ մխիթար, և պարծանք ամենայն տարագրեալ որդւոց թշուառացելոյն Հայաստանի։ Ո՛չ մնամք· գնամք յո՛ և գնայք· հեռք մեր՝ ընդ հետն ոտից Ձերոց։ Ո՛ի՛ջնորդեցէք առ Կայսր՝ ձեռն կարկառել ողորմութեան· և մեք յօժար եմք կեալ և մեռանել ընդ տէրութեամբ նորա“։

Այս ամենայն լսէր գթոտ քաղցրութեամբ ըստ իւրումն մարդասէր բարոյից՝ Վաղուքապետն Լազարոս· տեսանէր ճանաչէր զնոցա զանկեղծութիւն սիրոյ առ ինքն և զբարեփոյթ յօժարութիւն 'ի նուիրել զանձինս

ընդ հովանաւորութեամբ Կայսեր. զոր և ծանուցանէր[41] Զօրագլխապետին ստէպ ստէպ։

Ի սմին ժամանակի Յառանգն Աթոռոյն Պարսից փորձիւ ի վերայ հասեալ, թէ չմարթի ինչ վճարել պատերազմաւ ի ձեռն խառնակոյտ անկիրթ խմբիցն՝ զորս ընդ իւրեւն ունէր, և թէ՝ յանհնարիցն է նհանջել զյառաջխաղացութիւն Ռուսաց ի ծոց Պարսկաստանի, հաճեցաւ դաշնադիր լինել ի հաշտութիւն։ Եւ վասն այսորիկ որոշեցաւ ի նմանէ և ի զօրագլխապետէն Ռուսաց տեղի ինչ՝ առ ի գալ անդ միմեանց ի տեսութիւն, և այն էր անուանեալն Տէյկարկան, ուր կայր մեծ բանակն Ռուսաց։ Պատարեցան պայմանքն. գեան Երասխ եղաւ սահման ընդ մէջ երկուց Տէրութեանց. մասն մի զօրաց Ռուսաց և՛ ի Դաւրիժոյ. ընդ որս և Քաղաքապետն Ղազարոս երթեալ ի Տէյկարկան՝ կարգեցաւ Զրամնատար մեծի բանակին. և դաշնադիրն առաքեցաւ առաքքայն Պարսից Գաթալի Շահ՝ զի ընկալեալ ձեռագրեսցէ ի հաստատութիւն։ Այլ կարի ծանր թուեցաւ նմա այն՝ վասն երկուց. մի՝ զի ի հնգետասաներորդումն գուբզայի՝ ըստ յառաջահոգ տեսութեան սրբազան Երկրոյն «Ներսիսի՝ նշանակեալ էր ազատ լինել որպէս Զայոց, այնպէս և այլոց. օտարազգի բնակչաց Արտաստանի՝ ամ մի ողջոյն ի փոխադրիլ կամովին յիրկիր իշխանութեան Ռուսաց՝ ընտանեօք. և միւս՝ զի Տէրութիւնն Պարսից պարտաւորեալ էր ի վճար պատերազ-

[41] «Ցունելս զպաշտօն Քաղաքապետի ի Դաւրէժ... գոլով հաւատակից (Հայոց)՝ պատուեալ ի Նոցանէ յաճախ հաղորդէի Ձերումդ Պայծառափայլութեան զզգացմունս Ջերմեռանդութեան Հայոց առ մեծ արքայն Ռուսաստանի, որ հաստատուն առնէ զբարօրութիւն ամենայն մարդոյ» (Թուղթ Ղազարոսի առ Պասկևիչ՝ գրեալ ի 24 Դեկտեմբերի 1829 ամի ի Ցփխիս)։

մական ծախուց՝ տալ 'ի գանձարանն Ռուսաց ութ քուլուլս ոսկւոյ [12]։

Իբրև ետես Պասկևիչ, թէ Հ՝ահն թելադրեալ յորդւոյ իւրմէ 'ի Հասան Ալի Միրզայէ՝ կամի ոչ զպայմանսն ուխտին ընդունել· և Աբբաս Միրզայ խաբուսիկ շողոմալաթութեամբ յուսադիր լինի առ յապաղելոյ զերսն, խաղաց պատերազմաւ վերստին 'ի Պաւլէժ· եմուտ 'ի Մինան, և էառ զԱրտաւիլ։

Զարհուրեալ Հ՝ահին 'ի սրաթռիչ արշաւանացս, և խիթացեալ՝ թէ գուցէ այլ ևս 'ի նելքս յարձակեսցին Ռուսք, յակամայ կամս զեկաւ ընդունել զպաշնադրութիւնն· որով և հաստատեցաւ խաղաղութիւն, և Աբբաս Միրզայ վերստին չոքաւ 'ի տեսութիւն Պասկևիչի 'ի Թաւրիզմէնչայ։

Թէպէտև ըստ դաշնադրութեանն պարտ էին Ռուսք մեկնիլ յամենայն նահանգացն՝ որոց տիրեալ էին յայն կոյս Երասխայ։ Այլ զի ոչ 'ի մի նուագ վճարեցան ութ քուրուլք ամբողջ· յայն սակս թողեալ Պասկևիչի զման ինչ զօրաց ընդ հրամանատարութեամբ գնդապետին Պ՝ազարոսի մնալ յԱտրպատական՝ ունել զքաղաքն Ղրմի՝ Խոյ և Մ՝ակու, իբրև յաւանդի՝ մինչև ցհատուցումն մի և կէս քուրուրի՝ մնացորդացն յութից անտի, չոքաւ ինքն 'ի Տփխիս։ Բայց մինչ չև մեկնեալ էր 'ի Տէյկարկանայ, ետ առնել անդ զհանդէս զինաշարժութեան զօրաց 'ի 8 Նոյեմբերի, յաւուր տօնի Ընուանակոչութեան Միխայէլ Պաւլովիչի եղբօր Կայսերս· ուր առաջիկայ գտաւ և Աբբաս Միրզայ։ Եւ քանզի երևելի իմն համարեցաւ

---

[12] Մի քուրուրն Պարսից համարի իբրև ութ միլիոն ռուբլի Ռուսաց կամ քսան միլիոն ղուռուշ ըստ Ցանկաց։

այն՝ առաջի եղից աստէն զնկարագիր նորին 'ի յայտարարական թղթոյն տպագրելոյ 'ի Տփխիս. որ պատմէ օրինակ զայս.

„'Ի 10 ժամու, ասէ, առաւօտեան Հրամանատար Կովկասեան գնդին Գ. Ներալ Էդիւդանտ Պասկևիչն հանդերձ բոլոր մեծամեծօք եկն 'ի բանակն՝ 'ի վրան եկեղեցւոյ, ուր զկնի Աստուածային Պատարագի մատուցան Տեառն Աստուծոյ աղօթք գոհութեան հանդերձ արձակմամբ թնդանօթից։ Օրքն կային շուրջ զիւորանաւ եկեղեցւոյն վառեալ յանթերի սպառազինութիւն չուոյ։

„Յետ Աստուածային պաշտօնի եկն Էբբաս Միրզայ ընդ 15 ամեայ որդւոյ Խոսրով Միրզայի և ընդ ուղեկցի իւրում Գ. Ներալ Լ. էյտէնանտ Սուխտելեն կոմսի։ Առաջի բանակին Էբբաս Միրզայ հանդիպեալ Հրամանատարի Կովկասեան գնդին՝ փոխադարձ եղանակաւ բարեկամութեան ողջունեցին զմիմեանս. ապա ընկալեալ 'ի Պանկրադիեվ Գ. Ներալ Մայոր Գնդապետէ զանգիր յայտարարութիւն և զտոմսակ զինուորական, էանց նա 'ի միասին ընդ Գ. Ներալ Էդիւդանտ Պասկևիչի մերձ 'ի ճակատ զօրացն. եհարց զօղջունէ նոցա, եկաց առ ընթեր իւրաքանչիւր գնդի, իւրաքանչիւր Մեծաւորի՝ քաղցրամոք բանիւք զողջոյն մատուցանելով։ Այսպա անցին զօրքն հանդիսաւոր քայլարկութեամբ. և ժառանգ Խազաւորութեանն Պարսից մեծագոյն ուշադրութեամբ կայր 'ի զնին նոցա. մաքրութիւն հանդերձից, վարժութիւն ունելոյ զհրացանս, արագութիւն և կարգ շարժողութեանն, հաւասարութիւն քայլարկութեանն. այս ամենայն 'ի զարմանս և յապուշ կրթէր զԷրքայորդին Պարսից։

„Յետ այսր հանդիսի Հրամանատարն Կովկասեան Գնդին հրաւիրեաց զԷբբաս Միրզայն յառանձին տա-

զաւար՝ պատրաստեալ վասն նորա, յորում էր մեծահաց նախաճաշիկ հանդերձեալ 'ի Հրամանատարէ Թիկնապահ գնդի 'ի Հ. Հիպով Գնդապետէ զոյգ ընդ այլ աստիճանաւորաց նորին գնդի՝ տօնախմբողաց զանուանակոչութիւն Վ. սեմափառ Մեծաւորի իւրեանց։

„Տաղաւարն զարդարեալ էր զինուորական կարասեօք 'ի վերայ երկուց կեդրոնական գերանաց՝ շրջապատելոց բրգամբք հրացանաց· ճառագայթէին փայլմամբք զինուց նշանատառք ինքնակալ Կայսերն և Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխանին Միխայէլ Պաւլովիչի։

„Վասն Աբբաս Միրզայի շինեալ էր 'ի սմին տաղաւարի առանձին սենեակ և զարդարեալ ըստ ծիսի Արևելեայց, յորում պատրաստեալ կայր սեղան վասն երից անձանց· 'ի միջավայրի նստաւ Աբբաս Միրզայ· յահեկէ՝ որդի նորա· իսկ յաջմէ՝ Հրամանատարն Կովկասեան Գնդին։ Իսկ 'ի մեծի վրանի պատրաստեալ էին յերկուց կողմանց սեղանք՝ զորովք բազմեալ էին գլխաւորագոյն անձինք ուղղկցաց Աբքայորդւոյն և Վ. ենեարալք մեր և Աստիճանաւորք· զասիական կերակուրս վասն Աբքայորդւոյն և իւրայնոցն պատրաստեցին խոհարարք նորա։ Հացկերոյթն՝ թէև նուազութիւն է յայսոսիկ կողմանս ամենայն իրաց, էր արժանաւոր հանդիսի Վ. սեմափառ Պատճառի այսր տօնախմբութեան, և հազիւ պակաս երևէր քան զինչոյս Մայրաքաղաքաց Եւրոպիոյ։ 'Ի շարունակել նախաճաշկին՝ դասք գուսանաց, փողարաց և երգեցկաց փոխ առ փոխ հարկանէին զնուագարանս և երգէին։ Կոչնականքն արբին վասն առողջութեան Ինքնակալ Կայսերն և Վ. սեմափառ Տօնակատարին աղաղակելով· Կեցցէ՞ արքայ, և արձակելով զթնդանօթս· յետոյ արբին վասն առողջութեան Աբբաս Միրզայի և

որդւոյ նորա՝ ցանկացողաց խաղաղութեան. և 'ի վերջոյ՝ վասն առողջութեան Ջրամանատարի Պովկասեան գնդին։

„Ղկնի վախճանի ինջոյիցն Աբբաս Միրզայ գոհացեալ զկոչնատեսանց՝ ել 'ի վրանէն. եկաց առ գուսանաքն և երգեցկաք. և ապա չոքաւ 'ի տուն“։

ԳԼ. ԺԴ.

ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍՆ ՆԵՐՍԷՍ ԵՒ ԶՕՐԱՊԵՏՆ ԿՐԱՍՈՎՍԿԻ

1827—1828

Յանդուգն կոչումն Էջմիածնի, Սարտարապատայ, Երևանայ և այլն զբաղելոյն Կրասովսկեայ և արհիեպիսկոպոսին Ներսիսի։—Զան+ ներսիսի 'ի ճոխաշարդել Բարեվայելուչ կարգօ+ զԱխուռն հանդէն Հայաստանեայց, զեկեղեցիս, զվանորայս, և այլն։—Հանդէս ազգհանուրնեան՝ որ կոչեցաւ Ներսէս Եպիսկոպոս յԵրևան։

Յետ տիրապետելոյ Ռուսաց՝ Էջմիածնի, Սարտարապատայ, Երևանայ, և ամենայն շրջակայ վայրացն, Կառավարութիւն երկրին (որպէս կանխեցի գրել՝ 'ի Նախընթաց գլուխսդ) յանձնեցաւ Զօրապետին Կրասովսկեայ, և Երհի եպիսկոպոսին Ներսիսի։ Սոքա երկոքեան՝ իբրև համամիտք համաշունչք յամենայնի, կամ ըստ Ռաջիմաստի ուրուն կանխագրելոյ՝ 'ի քառից աչաց առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք [43], աջակցելով միմեանց՝ ետուն զանձինս անձանձիր անխնայ և փոյթ բարեզարդ շինութեան և օգտի բովանդակ նահանգին՝ ազգի ազգի նախանձելի և գերօգտակար գործովք, 'ի կարգաւորութիւն Ռաղաքային և Զինուորական պաշտամանց, և յաւէտ ևս 'ի խնամարկութիւն Հայկածին որդւոց թափառելոց ասատանդելոց յերկսաց Պարսից 'ի ժամանակս պատերազմին, որք և գային ժողովէին անդրէն 'ի բնակութիւնս իւրեանց։

Երանի՛ թէ՝ Ազգանազեանս Դրոհի մերկացելոյ 'ի դարուց դարուց և արդէն իսկ յամենայն շքոյ նախնի բա-

---

[43] Նարեկացի 'ի յիշատակարան։

լեմասնութեանց՝ յաջողեալ էր գէթ երկեամ մի ընդ ՀՈՎՈՒԱԿԱՆ տեսչութեամբ Մեծի Վահանայապետիս Հովանաւորիլ. զի յայնժամ հասանէր մեզ սլդարև, որպէս ակն ունէաք տեսանել անշուշտ զՀայաստան զամենասիրելին մեր Հայրենի՝ անդրէն յաւերակաց իւրոց նորոգ վերականգնեալ. զեկեղեցեաց և զվանորէիցն բազմութիւն, ընդ որս և զՀայրապետանիստ Էթոռն համօրէն Հայաստանեայց՝ ամենայն բարեվայելուչ կարգօք ճոխազարդեալ, լինելով թերևս որպէս նաև՝ 'ի ձեռս քաջահմուտ Վեկավարի. և իբրև կառք՝ ընդ երասանաձգութեամբ ճարտար կառավարի, և իբրև առն՝ ընդ տնտեսավարութեամբ իմաստուն Ցեառն և հսկող Դիտի "։

Այ էր, որ կանխաւ յառաջ յաւուրս տէրութեան Պարսից՝ առ 'ի բառնալոյ զամենայն զբռնի զապօրէն ինքնակամութիւն 'ի Հայրապետական իշխանութեան, գուն գործէր կալգել տալ անդանօր զՍիւնհոդոս, այն է՝ զԻորհրդարան Ժողովոյ եպիսկոպոսաց կամ վարդապետաց իմաստնոց 'ի հոգողութիւն Համազգային Հոգևոր բարեկարգութեանց, որպէս ասացաւ։ Եւ սա ինքն եղև

" Ժամանակիս այսմիկ (1827 ամի) վերաբերին նաև եղեալքն 'ի Տերութենէն Ռուսաց „Ազգարարութիւն առ Հայս", և „Առաջադրութիւն Հայոց նոր սարքելոյ զօրքի համար", որոց տպագիր օրինակքն գտանին 'ի մատենադարանի հօր իմոյ, և որք՝ որպէս պատմեր Հայրն իմ՝ ջանիւք և աշխատութեամբ ներսէս արքեպիսկոպոսի սկսեալ էին կատարիլ, և Հայ զինուորքն՝ որպէս ինքն (Հայրն իմ) ականատես եղեալ էր՝ կրթեին յանգիման Էջմիածնի 'ի զինաշարժութիւն, ունելով զառանձին դրօշակ, 'ի վերայ որոյ նկարեալ կային՝ Մասիս, Ցապան նոյի, Սուրբ Դաստուածածին, և այլն։ Բայց ո՛չ ընդ երկար տևեաց այս, զի 'ի յաջորդ ամի, զկնի մեկնելոյն անտի արհիեպիսկոպոսին Ներսիսի 'ի Թեսարաբիա, զօրքն այն արձակեցան։ Զօրինակս յիշատակեալ „Ազգարարութեան" և „Առաջադրութեան", որպէս և „Ցուցակի" անուանց առաջին Հայ զինուորաց՝ գնեմք 'ի վախճան մատենիս (ԺԱ)։ Ծանօթ. Զ. Մ։

դարձեալ այժմ, որ զայն հաստատեաց (1827 Նոյեմբ· 16)՝ որոշելով (բաց յիւրմէ) յԱնդամակցութիւն նորին զանձինս հինգ· որոց անուանքն են այսոքիկ· ա·, Յովհաննէս եպիսկոպոս Պարբեցի։ բ·, Սահակ եպիսկոպոս Դարբինեան։ գ·, Ստեփաննոս եպիսկոպոս Դեղամեան։ դ·, Մանուէլ վարդապետ Հ՝ահինեան, և ե·, Յովսէփ վարդապետ Մատթէոսեան։

Ելնելի ինչ արդեօք քան զոր ասացիս՝ կարգ բանիցս բերէ ըստ իրաւանց՝ զերանաշնորհս Հովուէ ճահագրեալ աստէն 'ի գովեստ՝ յայտապատում զնորայն ցուցեալ զամենայն զլաւութեանց և զուղղութեանց գովանի կարգացն զհանդէս, և զոքնաջան փոյթեռանդն վաստակոց արգասիս 'ի հոգեկանս՝ նոյն և 'ի մարմնականս։ Այլ խիթամ չձգել ստգիւտ ինչ յանձն՝ իբրու 'ի կեղծաւորութիւն զլեալ կամովին։ Պարեն որք գիտենն փորձիւ՝ վկայել, թէ Պատմագրի շատ անգամ անժոյժ է սիրտ և անկար յաքողել զճշմարտութիւն։ Թէպէտև ուրեք ուրեք պատուել զլռութիւն՝ անանգոնելի յինէն դատեցաւ· բայց քաջայոյս գոլով՝ թէ ընթերցողն ազգասէր ինքնին զբազում ինչ 'ի չգրելոցն՝ զօրեսցէ գուշակել, դարձայց 'ի պատմել զոր ինչ զայսու ժամանակաւ։

Յանդուրանալ Արարատեան աշխարհի ըղձաւէտ խաղաղութեամբն՝ զոր ետես յազատութեան իւրում 'ի ձեռաց խաչամարտ Պարսից, Երհի եպիսկոպոսն Սերսէս՝ որ գիտէրն զմխիթարութիւն վշտակրեալ հօտին՝ որպէս 'ի մարմնաւորս՝ այնպէս և 'ի հոգևորս՝ հայթայթել միշտ, պարտ և պատշաճ վարկաւ զփրկապարգև շնորհս Կենսագործ Նշանի սրբոյ Խաչին, ակն յանդիման ամենայն ատելեաց և անարգուաց նորին՝ արժանավայելուչ փառաւորութեամբ շքեղ պանծացուցանել 'ի թափորական

հանդիսի ջրօրհնութեանն՝ զոր արար առ եղերբք Ֆրա-
զդան գետոյն ընդ եկեղեցւոյ Ռուսաց յաւուր մեծի տօնի
Աստուածայայտնութեան Տեառն (1828 Յունվ. 6)՝ ըստ
օրինակին, զոր նկարագրէ նա 'ի Թղթի իւրում առ
Պառավարութիւնն Էջմիածնի [45]։

„Ֆանդէս տօնախմբութեանց, ասէ, բոլորեալ լինէր
օրինակական իմն Քրիստոնէական մեծվայելչութեամբ,
եթէ ոչ անդէն 'ի ժամու յառաջ մատուցանելոյն 'ի գետ
զԽաչն ամենապատուական՝ բացեալ լինէին երկինք յոր-
դահոս ձեանց զդրունս. այլ և հանդերձ այնու ամենայ-
նիւ ըստ արժանաւորելոյ Ամենաբաւականին՝ նորազու-
արճ այսմ Աստուածազարդ մեծվայելչութեանց փրկական
տօնի աննահանջելի բարեպաշտութեամբ պարզ և ան-
խարդախ Քրիստոնէավայելուչ խորհրդոց հանդէս երե-
կուց եկեղեցեաց՝ Ռուսաց և Ֆայոց՝ ժամադիր միմեանց,
յառաջեալ յիւրաքանչիւր կողմանց 'ի գլուխս միաբա-
նութեանց երկուց ճանապարհաց ընդ զառ 'ի վայրն՝
որ ածէ 'ի կամուրջ։ Առաջինն դիմեալ 'ի կողմանց հիւ-
սիսոյ 'ի սուրբ Սարգիս եկեղեցւոյն Ֆայոց բնակելոց
'ի Զորագիւղ, և երկրորդն 'ի հարաւոյ 'ի սուրբ Նի-
կողայոս եկեղեցւոյն Ռուսաց՝ որ յամրոցի անդ Ան-
լեան՝ սրբեալ օրհնութեամբ, և նուիրեալ նախընծայ
տաճար սրբութեան ամենասուրբ Երրորդութեան։ Հնոր-
հաւորութեամբ միմեանց միացեալ 'ի միախումբ, և ձայ-
նակցեալ իւրաքանչիւր երգաբանութեամբ, ունելով յա-
ռաջոյ զճաճանչաւէտ բոլորակ Խաչին՝ 'ի ձեռս քահա-
նայի Ֆայոց, և 'ի թիկանց նորա զպատկեր գեղազարդ
ամենասուրբ Աստուածամօրն 'ի գիրկ այլում քահանայի.

[45] Այս Թուղթ գրեալ է 18 Յունվարի 1828 Երևան։

և 'ի Թիկանց նորա զմեծագիր հրաշակերտ Աստուածընկալ սուրբ Խաչն՝ սքօղեալ 'ի վերայ սկտեղ ամբարձեալ ձեռամբք երկուց Քահանայից, և 'ի Թիկանց նորա զմեռոնն եօթնալոյս կանաչագեղ սքօղեալ յոսկեզօծ Աղաւնակերպի՝ բազմեալ 'ի սկտեղ վերապատուեալ 'ի ներքոյ քառանկիւն ամպանման գեղատեսիլ վայելչազարդ հովանւոյ 'ի ձեռս զգեստաւորեալ պատարագիչ վարդապետի, և 'ի Թիկանց նորա՝ մեք՝ Արքիական մեծափառութեամբ սրբազան զգեստուց՝ ունելով 'ի ձեռս զՊաւազան և զսուրբ Խաչ· և ընդ աջմէ ամենեցուն և յահեկէ՝ զմոմ սպիտակ 'ի ձեռս դպրաց երկուց· և յառաջոյ սուրբ նշանացն նշանակելոց բուրվառ մի մի և երկու երկու· և հանդէս բազմութեան եկեղեցականացն հանդերձ վառիւք և մոմեղինօք յերկուս կարգս ձգեալ ընդ երկար կրողացն զսրբազանսն, տէրունականս։ Քահանայք առհասարակ ունելով զփորուրար և զշուրջառ պատուական, և Պատարագիչք քահանայիցն նաև զսաղաւարտ, ունելով 'ի գիրկս զԱւետարանն սուրբ։ Եւ ընդ աջմէ իմ և յահեկէ քահանայք Ռուսաց շուրջառօք և փորուրարօք· 'ի ձեռս առաջնոյն Խաչն Փրկչական՝ ելեալ 'ի գլուխ Թագ խաչին· և 'ի գիրկս երկրորդին՝ Աւետարան սուրբ։ Եւ ամենայն զօրապետք Ռուսաց խուռն բազմութեամբ զհետ ընթացեալ Նորին Պերազանցութեան Պ. Ներսէս Լ. Էյտենանդ Էֆանասիոյ Իվանիչ Կրասովսկւոյ առն ամենաբարեպաշտի և ամենաերկիւղած գերագոյն Աստուածասիրի և Պավալերի պարայածեալ զառաջաւորօք կարգի Հոգևորականաց՝ ունելով զզօրսն առհասարակ նախապատրաստեալ կարգ կարգ ընդ աստիճանս զառ 'ի վայրին՝ որ յատորոտ բերդին յարևմտից կողմանէ սկսեալ 'ի վերուստ մինչ յեզրն առուին հա-

զսրաւոր բազմութեամբ. և զքանի մի թնդանօթս ամ-
բարձեալ 'ի գլուխ քարափնեայ բարձրութեան յարևմտից
կողմանէ. և ժողովուրդքն Վրիստոնէից և Այլազգեաց
խռկեալք բազմութիւնք արք և կանայք ընդ ամենայն
կողմանս՝ ուստի երևելի լինէր սալայատակն տախտակեայ,
ուր կատարելոցն էին օրհնութիւնք ջրոցն. ընդ մէջ նո-
ցին անցեալ հանդէսն եկեղեցական գնայր իմանալի իմն
մեծագոյն զգացողութեամբ այցելութեանց երկնից. և
յանցանելն ընդ դուռն կամրջին՝ նուագարանք Ռուսաց
կարդաւորեալք ընդ երկայնութիւն կամրջին 'ի հիւսիսոյ
կողմանէ, սկսան հնչեցուցանել իւրաքանչիւր զիւր ձայն
հրաշաձայն, և այնպէս զերգ ընդ երգ դաշնակցեալ Հո-
գևորականաց և Մարմնաւորականաց՝ գնային ժամանէին
'ի տախտակակերտ սալայատակն, և կարգեալ յանցս ճա-
նապարհին զայլն առհասարակ զվառս և զմոմեղէնս և
զամենայն զվայելչականն հանդիսին Աստուածայայտնու-
թեան. խաչաբարձ քահանայք և վարդապետն մեռանակիր
մեօք հանդերձ կացեալ 'ի վերայ տախտակացն և կատա-
րեալ զաղօթսն օրհնութեան ջուրց, ահա իբրև եհաս
ժամ արկտնելոյ զԽաչն Ռուսաց և Հայոց 'ի ջուր
Հրազդան գետոյ՝ և հեղլոյ զմեռոնն սուրբ, բացան հրա-
ցանք ամենայն հանդիպահայեաց զօրականացն բազմու-
թեանց հազարաւորաց յարևելից կողմանէ գետոյն, և
թնդանօթք յարևմտից կողմանէ. և յաւարտ ընթեր-
ցուածոցն առեալ զամենայն զՍրբութիւնսն նովին կար-
գաւ, և միաբան ընթացեալ նոյնպէս մինչև ցգլուխս
միութեան ճանապարհացն, անդէն բաժանեալ ողջունիւ
միմեանց՝ գնացին Ռուսք յեկեղեցի իւրեանց 'ի բերդն,
և Հայք յեկեղեցի իւրեանց 'ի սուրբ Սարգիս"։

ԳԼ. ԺԵ.

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԷՍԻ

1828

Աստուծոյ նեղութիւն զտարաշխարհս սա՝ 'ի յորդորել զՀայկազն բնակիչս Պարսկաստանի 'ի լուսաւոր կրօնէ և կարասիօ՝ 'ի բնիկ Հայրենիս իւրեանց յերկիր Արարատայ։ — 6ժամարտութիւն Հայոց 'ի Թագաւորութիւն։ — 2ս Թագաւորաց և լուսաւոր Պարսից։ — Փոխադրութիւն նեղութիւնի 'ի Բեսարաբիա։

Ի ՏԻՊԵԼ Ռուսաց Դաւրիժոյ, և այլոց նահանգաց Ատրպատական աշխարհի, Արևի եպիսկոպոսն Ներսէս՝ որոյ փոյթ մեծ էր ժողովել թեւարկել զցրուեալ որդիս Հայրենեաց, և բարգաւաճել զաշխարհս մեր բազմամարդութեամբ, առաքեաց անդր անյապաղ զերկուս քարոզիչս յԷջմիածնէ, այս է՝ զՍտեփաննոս եպիսկոպոս Անովքեան և զԵպիկողայոս վարդապետ Արցախեցի, որք իբրև գնացին, սկսան ըստ պատուիրելոյ նորա յորդորել քաղցրութեամբ զՀայկազուն բնակիչս 'ի չուիլ կահիւք և կարասիօք 'ի բնիկ Հայրենիս իւրեանց յերկիր Արարատայ. զտանել անդ զՀանգիստ կենաց և զբարօրութիւն, և վայելել յանդորրու ընդ հովանեաւ խաղաղասփիւռ դրօշակի Կայսեր։ Եւ նոքա „յիշեցէք, ասէին, ո՛ղջիք նախնոյն Դիւցազանց, յիշեցէք զաւուրսն, յորս ընդ բուռն գաւազանաւ անգութ Պետութեան տառապէիք՝ հեծէիք՝ դառնադոյն մաշեալք ծառայութեամբ, որպէս երբեմն որդիքն Իսրայէլի առ Եգիպտացւովք 'ի կաւ և յաղիւս։ Ա՛ստակէիք, այլ ո՛չ 'ի վաստակս ձեր վայելէիք լիով։ Օտարին կայիք 'ի ծառայութեան. օտարին հարկանէիք հարկս։ Օտարք էին որք ձեզդ իշխէին,

օտարք աղգաւ, օտարք և կրօնիւք։ Զուտէին դոքա զձեր հաց՝ այլ զձեզ ինքն իբրև զկերակուր հացի՝ ըստ ասացելումն։ Ուստի, սիրելիք մեր և Այրենակիցք, ժողովուրդք սեպհական. զի՞ կայք, ո՞ւմ կայք. ելէք յերկրէդ, ելէք մեկնեցարուք 'ի միջոյ ազգացդ՝ յայլազգեն Բաղդէացւոցդ. եկայք յերկիր՝ զոր ցուցցէ ձեզ Աստուած, որպէս կանխաւն՝ Աբրահամու. փութացարուք յոր առաջնորդէն արդ 'Նոր մեր Յէսու՝ Արհիապանծ Հովիւն 'Ներսէս։ Թողէք զԵգիպտոսդ. մի ցանկայք սոխոյ դոքա և հոտած խստորոյ։ Պարձուցէք զդէմդ 'ի թշնամեաց Խաչին Քրիստոսի՝ որում էքդ երկրպագուք ճշմարտութեամբ։ Փութացարուք 'ի բնաշխարհ ձեր յԱյրարատ՝ 'ի լին և յամենապարարտն բարութեամբք, ուր լեառն Տեառն է՝ տուն Աստուծոյ՝ Սիօն Սրբութեան՝ Աթոռ գերագահ սրբոյն Գրիգորի՝ որ զձեզդ ծնաւ 'ի հաւատս ամբիծս։ Ա՛նդ հանգիցեն ձեր լալիք. անդ դադարեսցին մրմունջք ձեր հեծեծախառն. անդ վախճան առցեն ամենայն թշուառութիւնք՝ զորս թշուառացայքդ ցայսօր. անդ գտջիք, անդ տեսջիք և ճաշակեսջիք խնդութեամբ զպտուղս ցանկալի ազատութեանն՝ զոր պարգևեաց ձեզ ամենամեծ ողորմութեամբ իւրով՝ Աստուած. և 'ի մի բան՝ անդ ուրդիք ձեր, և որդիք որդւոց աճեսցեն բազմասցին Աբարչատուր օրհնութեամբ իբրև զաստեղս երկնից, և լցցեն զերկիր 'ի շինութիւն Այրենեաց դարուց 'ի դարս յաւիտեան"։

Ժողովուրդք Այոց, ոլք յառաջնմէ իսկ յոգիս ապաստանք՝ տաղտկացեալք էին 'ի կրել զլուծ Պարսից, ընդ լսելն զայսպիսի զհամոզալից յորդորս քարոզչացն՝ առանց ընդ բանս ինչ ածելոյ՝ յօժարամտեցին ելանել ընտանեօք 'ի բնակութեանց իւրեանց, և անդէն իսկ բա-

զումք 'ի նոցանէ պատրաստ էին 'ի չու՝ եթէ չէին արգելեալք 'ի ցրտաշունչ սառամանեաց ձմերայնոյն։

Այս 'ի մերձենալ գարնան (1828) զօրագլխապետն Պասկևիչ գրեաց (Փետր· 26) 'ի Տփխիսայ առ Պնդապետն Պազարոս՝ փոյթ տանիլ 'ի գաղթեցուցանել զՀայս 'ի գաւառսն Դարիջևանայ, Երևանայ և Ընդգիայ, և յանձն արար նմա ամենայնիւ զպաշտօն առաջնորդելոյ նոցա։ Եւ զի գտանէին և շատք 'ի բնակիչս գիւղորէից, որոց առ չքաւորութեան դժուարին լինէր գաղթել, ետ նմա 'ի գանձարանէ Տէրութեան քսան և հինգ հազար մանէթ արծաթ՝ առ 'ի բաշխել իւրաքանչիւր նոցա 'ի նպաստ ճանապարհի գումարս ինչ դրամոց իբրև 'ի փոխ, և առնուլ 'ի նոցանէ զցուցակագիր, որպէս զի զկնի հնգից ամաց հնար լիցի, ասէ, պահանջել զայնս։

Եւ նա սկսաւ այնուհետև ըստ պայմանացն նշանագրելոց 'ի Պասկևիչէ՝ որք բովանդակէին յիններևանան գաւրքայս, յուսալից առեալ զնոսա 'ի գիւտ բիւրապատիկ բարօրութեանց և օգտի ընդ տէրութեամբ Ռուսաց, յայտնելով՝ ոչ միայն զազատութիւն կրօնի, և զԸստուածային պաշտամանց զհամարձակութիւն՝ յոր ըղձակաթ յամենայն սրտէ բերէին, այլև զազատութիւն տուրևառիկ շահավաճառութեանց առ քաղաքացիս, և զպարգևումն շինականաց բաւականաչափ գետնոյ յերկրագործութիւն· զամն վեց ազատութիւն 'ի հարկաց, և զամն երիս՝ 'ի պարտաւորութեանց դատաստանի, և զայլ ամենայն առանձնաշնորհ և զհասարակաշահ՝ բարիսն՝ յորս վայելեն լիուլի՝ որք ընդ խաղաղական դրօշակաւ Կայսեր են ազինք։

Եւ զի զօրք Ռուսաց ընդ փոյթ (այսինքն՝ 'ի Մարտի 9) ելանել ունէին 'ի Դաւրիժոյ, թողեալ անդ զկի-

սազնդապետն Պայեր Կոնեազ Պովսէս Հաքարեան Նրկայնաբազուկ Էրզրումեանց՝ զԹոռն եղբօր Յովսէփայ Կաթողիկոսի՝ 'ի լինել վերատեսուչ գաղթման Հայոց քաղաքին և գիւղորէիցն, և տուեալ նմա յօգնականութիւն զյիսնապետս և զդրսամ 'ի նպաստ չքաւոր գաղթականաց, ինքն ընդ ոմանց պաշտօնակցաց չորաւ 'ի Պարսկաստան (Պարտ 1)։ ուր իբրև տեսին զնա Հայք՝ լցան խնդութեամբ, և աղաղակեցին մեծաձայն։ „Ողջ եկիր ազգակից և հաւատակից փրկիչ մեր“։

'Ի տեսանել Պարսից զխումբս խումբս գաղթականին հրդան տուեալ ամենայն ուստեք՝ յոգիս հարեալ զչարեցան։ և յահի մեծի լեալ՝ ծփէին 'ի սիրտս իւրեանց։ զի կարծէին ոչ՝ թէ 'ի սուղ միջոցի զրկեսցի Պարսկաստան յայնչափ բազմութենէ բնակչաց։ Եւ կասկածեալ՝ թէ գուցէ բռնի կամ ստիպանօք վարեն Ռուսք զՀայս, կարգեցին զերկուս ոմանս՝ որոց անուանք էին Միրզա Պասուտ, և Սեմենոյ։ ևս և զգործակալն Ընդղեսացւոց զՍ. Իլլոթ՝ գործակից լինել Լազարեան իշխանին 'ի վերատեսչութիւն գաղթականաց։ Բայց ապա յայտնի ցուցաւ 'ի փորձոյ, թէ նոքա ընդ քողով վերատեսչութեան հնարէին արգելուլ զՀայս։ „Գնացէք, ասէին, Պարսիկք ցդաղթեալս, գնացէք 'ի մատնել զանձինս ձեր և զորդիսդ յանզգրծանելի աքսորս“։ Թէպէտև ինչ ոչ զօրեցին այսօրինակ չարայուշ թելադրութիւնք նոցա առ Հայս, ոչք ոգւով չափ դառնացեալ էին յերեսաց նոցա։ սակայն այլ դժուարութիւն ել ընդ առաջ։ զի ընդդէմ ժէ յօդուածի դաշնագրութեանն՝ յորում քրիստոնէից ելելոց յԱրպատականէ պայմանեալ էր հնգամեայ ժամանակ 'ի վաճառել զայգիս, զշէնս և զայլ ստացուածս իւրեանց, Տէրութիւնն Պարսից արգել 'ի ծածուկ ա-

մենայն ումեք գնել զայնս։ Վասն այսորիկ աղերս 'ի մէջ ածին ՀԱՅՔ, զի Տէրութիւնն Ռուսաց վճարեսցէ զոնեա զերիր մասն ՄԵԱՍՈՒՑՆ՝ զորս ունէին կրկին կորստեամբ կալուածոց և անշարժ գոյից 'ի բաժանիլ իւրեանց 'ի բնիկ բնակութեանց։ Այլ իբրև ծանեան զանհնարաւորութիւնն այսորիկ, յանձն առեալ կամակար զամենայն զրկանս՝ ելին 'ի չու։ Եւ զի դեռ ձիւնաթաղ կային դաշտորայք, նեղութիւն մեծ կրեցին սոքա յայնժամ զճանապարհայն՝ ոչ կարելով գտանել ճարակ գրաստուց։ Ուստի կամաւ յապաղեցուցեալ առ վայր մի իշխանին Վազարու զուղևորութիւն այլոց դաղթականաց, դիմեաց ինքն նախ 'ի տեսութիւն Պասկևիչի (Մարտ 10) 'ի Ծոփաց գաւառի՝ ուր եկեալն էր նա, և ապա անցեալ ընդ Պաւրէժ, և կարգաւորեալ զորոց 'ի նմա զգաղթականացն չու, չոքաւ (Մարտ 16) 'ի նահանգն Սալմաստայ և Որմեայ· և շրջեալ ընդ քաղաքս և ընդ գլխաւոր շէնս, (Մարտ 23), յետ հասու լինելոյ իսկապէս յօժարամտութեան ՀԱՅՈՑ 'ի գաղթումն՝ եդ 'ի նոսա վերակացուս 'ի պաշտօնէիցն՝ զորս ունէր ընդ իւրև· և յանձն արար նոցա զկառավարութիւն գաղթմանն 'ի դէպ ժամանակի։

Եւ ահա 'ի բանիլ գեղածիծաղ գարնայնոյն՝ սկիզբն եղև չուոյ գաղթականաց, որք 'ի կողմանց կողմանց Արարատեանի հեղան զեղան գունդագունդ յեզերս Երասխայ։

Ընդ տեսանել Պարսիկ խուժանին զայնչափ զմիախուռն բազմութիւն գաղթելոց, և 'ի լսել զանուն Այսպէս Նիկողայոսի՝ զոր ստէպ ստէպ յիշէին սոքա բարեբանութեամբ, բրդեցան յանհնարին զայրոյթ· և զի չկարէին իւիք ՄԵԱՍԵԼ, քանզի յամենայն խումբս կային զօրք 'ի Ռուսաց, և զինուորեալ անձինք 'ի պահպանութիւն, առ

անժոյժ մոլեգնութեան իւրեանց՝ սկսան նզովս և հայհոյանս արձակել. ուր դիւրապատրաստ էին կորովիք Հայոց անդէն տա տեղեաւն վրէժխնդիր լինել և հանել ընդ կառափն նոցա՝ եթէ չէին արգելեալք 'ի վերակացուացն, որք փութային խաղաղարար և առանց արեան հեղութեան վճարել զամենայն ինչ։

'Ի խումբ այսոցիկ դաղթականաց յաւելան և քանի մի գերդաստանք 'ի բնակչաց Գաղուինոյ՝ քաջալերեալք 'ի բանից միոյ ուրուք տոհմակցի իւրեանց։ Այս հայեցեալ և այլոց բազմաց բնակելոց յայլևայլ 'ի մոտակայ և 'ի հեռաւոր տեղիս՝ փութացան ինքնայօժար զհետ դաղթելոց։

Ոչ կարեմք անցանել ասա լռութեամբ և զայլ նշանաւոր դիպուած մի, եղեալ յետ սակաւուց ինչ աւուրց։ Ուրհի եպիսկոպոսն Ներսէս, որ այսպէս փառաւոր հանդիսացոյց զանձն իւր յազատութեան հայրենի աշխարհիս մերոյ 'ի ձեռաց բարբարոսաց՝ փոխադրի 'ի Խեսսարաբիա, ըստ ցանկութեան Տէրութեան Ռուսաց, և պատճառքն այսպիսի որոշման նորա այսպէս ցուցանին 'ի գրութեան Ռենկէնդորֆայ առ Կաթողիկոսն Էփրեմ, 'ի 13էն Ապրիլի նոյն 1828 ամի, ընդ համարով 59, զոր արժան համարիմք ընդօրինակել ասատէն ամբողջութեամբ։

„Սրբազնասուրբ Գայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց, Աղորմած Հովուապետ։

„Փորձեալն մաերմութիւն բովանդակ ազգին Հայոց առ Կայսերական Գահն ամենայն Ռուսաց, միշտ դարձուցեալ է յինքն զառանձին ուշադրութիւն Միտպետացն Ռուսաց. և Թագաւորն և Կայսրն՝ որ այժմ երջանկաբար թագաւորէ, բազում անգամ արժանի արար զազգս զայս իւրում Արձրագոյն բարեհաճութեան՝ վասն ան-

զուգական հաւատարմութեան նորա առ Ռուսաստան, և մանաւանդ այնր՝ զոր եցոյց յընթացս վերջին պատերազմին ընդ Պարսից։ 'Ի Ռարձրագոյն համահաճութենէ ես դառնամ այժմ առ Ձերդ Արքազնութիւն այսու բացատրութեամբ։ Սուրբ կամք Օգոստափառ Մ՝իապետին մերոյ՝ 'ի յատկագոյն հովանաւորութիւն ամենայն Հայոց, հիմնեալ է յայն փրկական նպատակ բարերարութեան, զի ազգս այս միշտ վայելեսցէ զբարօրութիւն յամենայն կողմանս, հնազանդեսցի օրինաւոր իշխանութեանց, և մտերմութեամբն առ Ռուսաստան՝ ոչ դադարեցուցանելով զհասարակաց անդորրութիւն՝ ոչ արկցէ զինքն ընդ հալածանօք և չարակրութեամբք։ Ձեզ՝ Արքազնասուրբ Պատրիարք, որպէս Ծայրագոյն Հովուապետի ամենայն ազգի Հայոց առաւել ևս արժան է գործակից լինել պարտուպատշաճ կարգաւորութեամբք, առ 'ի հասանել 'ի նպատակ բարերարութեան Ամենողորմ Աստուծոյ մեր 'ի բարեաւոքել և յապահովել զվիճակ հօտին Քրիստոսի՝ յանձնելոյն Ձեզ յԱստուծոյ։

„Ուստի և անշուշտ հարկ է ընտրել 'ի Հոգևորական անձանց ընդ Ծայրագոյն իշխանութեամբ Ձերով եղելոց գյատկացեալս յարմարութեամբ և գյարգեալն համարմամբ, լինել մանակից 'ի հասուցանել Հայկեան սերնդոց՝ 'ի Ռեսսարաբիա և 'ի նմին սահմանակից գաւառսն գտելոց զբղձալին բարօրութիւն։ Նախ առաջին հարկ է 'ի տեղի արքեպիսկոպոսին Գրիգորի, որ կառավարէր զվիճակ Հայոց բնակելոց 'ի Ռեսսարաբիա, և որ ոչ 'ի բազմաց հետէ էառ վախճան, առաքել անդր այժմ իսկ զայլ արքեպիսկոպոս կամ տեղապահ ըստ տեսչութեան Ձերդ Արքազնութեան, այլ այնու՝ զի այս աստիճանաւոր ընտրեալ իցէ 'ի պատուականագունից 'ի Հոգևորական անձանց,

արժանաւոր հանդարտակաց հաւատարմութեան, որ և մարթասցի ձեռնտու լինել 'ի նոգատակն բարեկարգութեան, ըստ օրինակի հանգուցելոյ՝ Պատրիարքին Յովսէփայ Իշխանին Երկայնաբազուկ Երդութեանց, արքեպիսկոպոսաց՝ Դրիգորի և Յովհաննիսի՝ որ 'ի վիճակին Տփխիսայ, և նոյնպէս այժմեան Վրաստանեայց Հայոց Արքեպիսկոպոսին Գերսիսի, որ զարձոյց յինքն զառանձին Խարճրագոյն բարեհաճութիւն Թագաւորի և Կայսեր։ Կարի օգուտ է, եթէ Արքաշնագոյնն Գերսէս իցէ 'ի զօրութեան և 'ի կարողութեան ըստ թոյլտուութեան Ձերդ Արքաշնասրբութեան զայլ 'ի Ռուսարարիա, յանձնեալ հաւատարմութեամբ զամենայն գործս 'ի ժամանակի բացակայութեան իւր այլուստ յտրմնրաւոր Տեղապահի։ Օ այսմ առարկայէ սովին նամակաւ ընդ այսմ եղելով՝ դառնամ այժմ նոյնպէս և առ Գորին Խարճր Արքաշնութիւն։ 'Ի գրութեանց աստի խնդ՝ Դուք Արքաշնասուրբ Պատրիարք, կարէք լինել հաւատարիմ, թէ քանի ողորմութեամբ է տրամադրեալ Թագաւորն և Կայսրն առ ազգն Հայոց, և որքան ցանկայ մշանջենաւորել առ նա զիւր Ամենողորմ բարեհաճութիւն, այնու միամտութեամբ՝ թէ այս ազգ հաւատարիմ առ Կայսերութիւն Ռուսաց անպրդուելի պահեսցէ զիւր մտերմութիւն առ Խարճրագոյն Աթոռն։

„Որքան ըստ տեղեկութեան գործոց ազգին, այնքան և ըստ ջերմեռանդութեան զամենայն պարագայս որպէս նախ, նոյնպէս և այժմ ծանուցանէ Ձեզ ըստ առանձին ապստրանաց Ձերոց, Պատասկի Սէֆէանիկ Լազարևն, որ զտանի Խարճրագոյն հրամանաւ 'ի ծառայութեան առընթեր իմ. նա՝ և յայսմ հետէ և ունի լինել 'ի թղթակցութիւնս ըստ հարկաւոր առարկայից։ Դս ունիմ սպասել

Ձերում ծանուցման վասն այնոցիկ կարգաւորութեանց, զորս դատեսջիք յարմարագոյն 'ի սահմանադրութիւնս վիճակաց Ռեսսարաբիոյ և սահմանակից Հայաբնակ գաւառաց, առ 'ի յայտնել զայնմանէ Նորին Կայսերական Մեծութեան: Վասն բացայայտութեան այս թուղթ առաքի հանդերձ թարգմանութեամբ 'ի լեզու Հայոց: Յանձն առնելով զիս աղօթից Ձերոց, ունիմ պատիւ լինել գերակատար վերապատուութեամբ և նոյնօրինակ մտերմութեամբ Արքազնասուրբ Պատրիարք, Ողորմած Հովուապետ, ամենախոնարհ ծառայ Ա· Ռենկէնգօրֆ "":

Կոմս Ռենկէնդօրֆ գրէ նաև առ Երրին Ներսէս, 'ի 13էն Ապրիլի նոյն 1828 ամի, այսպէս·

„Արդի վիճակ Հայոց, եղելոց յայլևայլ կողմանս, դարձուցանէ յինքն զուշ բարերար ամենողորմած Կայսերս մերոյ: Կամք Կայսերս, որ առանձին իմն եղանակաւ պաշտպան ցանկայ լինել Հայկական սեռի, ունի զմիայն և եթ նպատակ, այն է՝ բարեբաստութիւն ազգիս այսորիկ ամենուրեք, հնազանդութիւն նորին իշխանութեանց, և հաւատարմութեամբ իւրով առ Ռուսիայ, առանց խանգարելոյ զհասարակաց անդորրութիւն, մի լիցի անկանիլ ընդ լծով թշուառութեան: Այսու դիտաւորութեամբ, Նորին Կայսերական Մեծութիւնն բարեհաճեցաւ հրամայել ինձ դառնալ առ Ձերդ Բարձր Արքազնութիւն, հրաւիրելով զՁեզ առ կարևորն, 'ի Ձերմէ կողմանէ,

" 'Ի վերայ ձեռագրին, յորմէ ընդօրինակեցաւ թարգմանութիւն թղթոյս, կայր գրեալ ձեռամբ Ներսէս արքեպիսկոպոսի այս բան· „Երկրորդ անգամ թարգմանէ այսպէս տէր Գաբրիէլն Սերոբեան Պատկանեանց որպէս այլ լաւագոյն թարգմանութիւն թերևս՝ եթէ գտանցի այնպէս": 'Ի մատենագարանի հօր իմոյ գտանի և առաջին թարգմանութիւն թղթոյս՝ յորոյ վերայ գրեալ կայ· „Ուղիղ է· Խաչատուր Եղիազարեան": Ծանօթ· Զ· Մ·

սակս վիճակին Լեսսարաբիոյ, և ՝ այոց՝ բնակելոց 'ի սահմանակից նահանգս, կարգադրութիւն, որ քան հմտութեան Ձերում և քան ջերմեռանդութեան առ հաւատակից ազգն Ձեր, Դուք համարել ունիք առ այն յարմարագոյն։

„'Ի պատճէնէ նամակի իմոյ առ Ս. Հոգեւոր Պատրիարքն ամենայն ՝ այոց, ընդ սմին եղելոյ, Դուք, Սրբազնագոյն ՝ այրապետ, տեսանել ունիք՝ թէ նա ևս հրաւիրի յօգնութիւն բարօրութեան ազգին ՝ այոց, որ աւելի քան զդար մի ցուցանէ հաւատարմութիւն առ Պայծառութիւն Ռուսիոյ։

„Ս՝ ան առաջիկայ խորհրդոյս յոյժ կարեւոր լինելոց էր՝ թէ առողջութիւնն և գործքն Ձեր թոյլ տացին Ձեզ գալ 'ի Լեսսարաբիա, ուրանոր և ես պատիւ և բերկրութիւն ունելոց էի անձամբ ծանօթանալ ընդ Ձեզ, ընդ արժանաւորագունի և մեծարեալ ՝ օվուսպետիդ։ Իսկ եթէ անձեռնհաս լինիք առ 'ի կատարել զայս, հաճեցարուք կարգադրել, զի այժմ իսկ առաքեսցի անդր ընդունակ և ծանօթ երկրին եպիսկոպոս ոմն, առ որ վստահութիւն ունիցի ազգն, որ և կարող իցէ ձեռնտու լինել յիրս բարեկարգութեան։ Ս՝ ան առաւել բացայայտութեան այսր գրութեանս, զնի ընդ սմին և թարգմանութիւն նորին 'ի ՝ այ լեզու“։

'Այն մեռք է նաև գրութիւնն Գլխաւոր Պառավարչին Ս՝ բաստանու կոմս Պասկեւիչի, որ ծանուցանելով, 'ի 17էն Մայիսի նոյն 1828 ամի, Պատրիարքին Ներսեմայ զԱյսերական ցանկութիւնն, 'ի միջի այլոց գրէ այսպէս.

„'Ի յարգի ունելով զհաւատարմութիւն Ազգին 'Այրարատի՝ առ Գահն Ռուսիոյ, զմեծամեծ գործս նորին և զհմտութիւն նորա 'ի կարգադրութիւն գործոց ՝ այոց,

ևս, յիմն ի կողմանէ, օգտակար համարիմ առաքել զՀովսեպեան զայն 'ի Լեհաստաբիա, մանաւանդ զի, նա ունելոց է իշխանութիւն և ազդեցութիւն ոչ միայն 'ի վերայ Հայոց՝ բնակելոց 'ի Լեհաստաբիայ, այլև 'ի վերայ եղելոց յայլևայլ նահանգս Տաճկաստանի, յորս մնալոց է ըստ Լուսաց։ Կրդեալ յայսպիսի պատճառաց, զառնամ առ Ձերդ Ս. հայրապետութիւն այսու խոնարհ իմով խնդրանօք, այն է՝ հրաւիրել զԱրմի-Եպիսկոպոսն Ներսէս դալ 'ի Լեհաստաբիա, և զկարծիք նորին զայսմանէ ծանուցանել ինձ"։

'Ի կատարումն այսպիսի վճռոյ և ցանկութեան Տէրութեան՝ Կաթողիկոսն Եփրեմ ուղարկեաց զՆերսէս Արմին գնալ 'ի Լեհաստաբիա [47]։

---

[47] Ամերիկացի քարոզիչքն՝ Էլի Սմիթ և Հենրի Դվայթ, 'ի մատենին ընդ վերնագրովս „Ճանապարհորդութիւն 'ի Հայաստան", („Elie Smith and Henri Dwight Missionary Rescherches in Armenia"), ապագրեալ 'ի Լմնոն յամի 1834, յերես 132—134, գրեն զՆերսիսէ և զփախագրութենէ նորին 'ի Բեսարաբիա զայս ինչ.

„Դիմելով 'ի Տփխիս՝ կարդէաք փառաւոր և ծաղկեալ տեսանել անդ զլայնատարած և զմեծաօգուտ դպրոցն վասն դաստիարակութեան Հայոց՝ զկառուցեալն յարքեպիսկոպոսէն Ներսիսէ, որ շատք է և պարծանք եկեղեցւոյ Հայոց։ Սակայն ընդ հասպ 'ի գերև եղեն յոյս և ակնկալութիւն մեր. քանզի 'ի վաղուց հետէ եղեալ էր Ներսիսի 'ի Տփխիս քաղաքէ։ Յորժամ Հենրի Մարտինն ճանապարհորդելով ընդ Ասիա՝ գնաց նոյնպէս 'ի տես Էջմիածնի, արքեպիսկոպոսն Ներսէս առաջին անգամ լինելով 'ի Աբեղեանս և տեղւոյս Եպիսկոպոսի՝ կառավարէր 'ի նմին ժամանակի զամենայն գործս եկեղեցւոյ Հայոց։ Զկնի այսորիկ վիճակաւոր արքեպիսկոպոս գոլով Աստրասանի և բնակելով 'ի Տփխիս, 'ի ձեռն խրատ ունէր գեղեցիկն պաշտօնս, և Հայք նկատէին զնա՝ իբրև զյաջորդ Կաթուղիկոսի՝ որ գլուխ է եկեղեցւոյ Հայոց։ Անուն նորա ծանօթ էր մեզ մի յանդամոց ազգի սիրելոց ընդ ամենայն կողմունս աշխարհի։ Թէպէտև բազումք 'ի փոքրասիոյ եկեղեցականաց նախանձ տանէին անուանն նորա և չսիրէին զնորա զբնչխանութիւն. սակայն աշխարհականք մեծաւ յարգանաք հայէին 'ի նա՝ իբրև յայր մեծիմաստ, լի գեղեցիկ զգաց-

Արքիեպիսկոպոսն Ներսէս եկեալ ՚ի Բեսսարաբիայ ամս վեշտասան, և յընթացս այսր ժամանակի ոչ զադարեաց յաշխատելոյ յօգուտ եկեղեցւոյ և ազգի։ Նա ոչ ինչ միշտ նաև կարօտելոց ազգի իւրոյ, և ջանայր հանապազ ժողովել զցրուեալ հայանկիցս իւր ընդ հզօր բազկաւ Կայսերութեան Ռուսիոյ, մանաւանդ զինի զաշնադրու-

---

մամբ և սիրով առ հայրենիս։ Ամենայն սկզբնաւորութիւնք նորա ՚ի մի նպատակ դիմէին, այն է՝ առ լաւն ուղղել զմտաւոր և զքաղաքական դրութիւն ազգի իւրոյ։ Քանի մի նորաձեւութիւնք նորա ըստ մասին հաւատոյ (°) առանց ընդդիմութեան ընկալեալ եղեն ՚ի Հայոց։ Ա՛ռ ՚ի սակաւացուցանել զթիւ քահանայից՝ ՚ի վիճակի իւրում յընթացս քանի մի ամաց ոչ ձեռնադրեաց զնոր եկեղեցականս. յայնապէս արգելեաց զուխտաձնացութիւնս և պատուէր ետ չընթեռնուլ զայսմանուրս յեկեղեցիս՝ ընդ իւրով կառավարութեամբ եղեալս։ Զգործոց նորա ըստ մասին դատաբարակութեան ճառեցուք յորժամ զրոյցք լեցին զդպրոցէ նորա։ Թափուր գոլով յաւետարանական լուսոյ, զամենայն զէջն իւր ուղղեալ էր միայն ՚ի լուսաւորութիւն մտաց ազգի իւրոյ՝ իբրև ՚ի միջոց աշխարհային օգտից։ Ոչինչ կարացաք ուսանել զնորհոգոց նորին ըստ մասին քրիստոնական, և ոչ զպատճառսն հեռացուցանելոյ զնա ՚ի Տփխիսոյ։ Զայս միայն պատմեցին մեզ, թէ անբաւականութիւն ինչ՝ ծագեալ ՚ի մէջ նորա և Պասկեվիչի, սկիզբն եղև ընդհակակալ հեռացմանն, և կամ՝ ճշմարիտ ևս ասել՝ աքսորմանն նորա ՚ի Բեսսարաբիա։ Գուցէ լուսաւորեալ և ազատասէր միտք նորա ազատիցեր նմա ՚ի նպատակս օգտաբերս վասն ազգի իւրոյ...

„Այսու եղանակաւ զգեալ յամենայնի ինքնակամ ներգործութեամբ Ռուսաց, և կորուսեալ զայս յոլովագիրդ զԱթոռն Կաթուղիկոսական՝ ստացաւ զպատուէր վիճակաւոր տրքեպիսկոպոսութեան ՚ի վերայ Հայոց՝ բնակելոց յարևմտեան մասին Ռուսիոյ՝ ՚ի Ցեռ ծովն սկսեալ մինչև ՚ի Սակասպիսեբուրգ։

„Ներսէս եթող զկնի իւր զգեղեցիկ յիշատակ ցանկութեան լուսաւորելոյ զազգակիցս իւր, այն է դպրոցն կարգացեալ ՚ի Նմանէ ՚ի Տփխիս։ Ապաքէն բերկրեցուցանել ուներ զմեզ տեսիլ այնր՝ յորժամ ծաղկեր ընդ Ներին հովանաւորութեամբ. սակայն զկնի եկանելոյ նորա ՚ի քաղաքէս՝ ոչ զբ դառաւ որ հոգս տարցէ այնմ, վասն այսորիկ և անկաւ այն ՚ի նախնի փաստոյ իւրոյ։ Ցեռ ինքն ապացոյց հայրենասիրութեան Ներսիսի կարէ լինել մերոյն։ Եթէ չինուածն այս Աղիսակերտ շինութիւն է այն երկայրակ բռնեալ յորտաքանա և

թեանն եղելոյ յԱնդրիանուպոլիս, և բարեաքել զկեանս նոցա։ Եւ այսպէս անուն նորա ցայն աստիճան սիրելի և պաշտելի եղև յաչս ամենայն ժողովրդեան, մինչ զի՝ զկնի մահուան Պատրիարքին Յովհաննու՝ միաձայն հաւանութեամբ ընդհանուր ազգիս՝ ընտրեցաւ նա Պատրիարք և Կաթողիկոս ամենայն Հայոց[48]։

յերկոցունց կողմանց զարդարեալ բազմութեամբ սեռաց։ Վաթսուն և կամ եօթանասուն հազար ռուբլիք պիտոյ էին վասն կառուցման գոյրոյիս. զորս գոգցես զամենայնն յթիկամոնից իւրոց եհան և նա ներսէս արքեպիսկոպոսն։ Քանզի չեղեն նմա ձեռնաու և ոչ իւիք, այլ միայն ցուցին նմա զպաշտպանութիւն իւրեանց յայսմ 'ի բարեգործութեան նորա յօգուտ հասարակաց։ Այժմ մեծ մասն նորին 'ի ձեռս նոցա է, զոր փոխեալ զարձուցեալ են նոքա 'ի պահարան զինուց զօրականաց։ Դիւրին էր ապաքէն կառուցանել զշինուածն՝ յորժամ գրամք 'ի ձեռին էին. ապայն բերել անել զարժանաւոր դասատաւս՝ գործ իմն գժուարագոյն էր։ Ապայն մին եկն 'ի Փարիզէ, երկրորդն 'ի Մոսկովայ. իսկ երրորդն յԻտալահանէ. հուսկ ուրեմն թիւս ուսուցչաց եհաս մինչև 'ի ատան կամ 'ի մեսասան. յորոց երեք սուսուցանէին զՀայ լեզու, երիսուք զՌուսաց, մին զՊարսից, մին զԳաղղիացւոց, մին զմաթեմատիկական մակացութիւնս, և մին զնկարչութիւն"։

Թարգմանութիւն յօգուտածոյս գրաւ 'ի մասանագարանի հօր իմոյ։ Ծանօթ. Զ. Մ.

" Զնկարագրութիւն վիշտասանամեայ առաջնորդութեան Արհոյն Ներսէսի 'ի Բեսարաբիա, ուս և ընտանեկան կենաց նորա, արարեալ 'ի Ցեր Յովհաննէս քահանայէ Թարթռիշեանց, տես 'ի „Ճռաքաղ" ամսագրի, հատոր Բ. 1860 - 1861 ամի, էջ 123 - 126, և 138 - 141։ Ծանօթ. Զ. Մ.

ԳԼ. ԺԱ.

• ՀՐԱԺԵՇՏ ԵՓՐԵՄԱՑ ԵՒ ԸՆԴՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆԻՍ

1828—1831

Դարձ Եփրեմ կաթողիկոսի յԷջմիածին։—Անդորրութիւն Ս. Աթոռոյն։—Թագաւորն Եփրեմայ առ կայսրն Ռուսաց և զանխ նորա վասն դարձուցանելոյ զնեբուս յԷջմիածին նպաստակաւ յանձնելոյ նմա զԱթոռն Հայրապետական։ — Հրաժեշտ Եփրեմայ.'ի կաթողիկոսութենէ։ — Ընդարձակութիւն Յովհաննու 'ի կաթողիկոսութիւն։ — Ժողով յԷջմիածին։ — Գալստեան ներսիսի։ — Յարութիւն վարդապետ Ալամդարեան։ — Հաստատութիւն Յովհաննէսի 'ի կաթողիկոսութիւն և օծումն նորա։ — Դարձ Էնփիրզեանի յԷջմիածին։ - Մահ Եփրեմ կաթողիկոսի։

Ի ՕԱՐԹՈՒՄՅԱՆԻ, Տեառն զօրութեանց զզօրութիւն զինու հզօր Կայսեր Ինքնակալի ամենայն Ռուսաց Նիկողայոսի Առաջնոյ, և 'ի թափել զՀայաստան 'ի ժանեաց Պարսկային բարբարոսական բռնակալութեան՝ խորտակելով զանուրն Ծանրատաղտուկ, ընդ որով տառապեալ երկնէր Դահն Գրիգորեան, ել և Կաթողիկոսն Եփրեմ 'ի Տփխիսայ՝ ուր էրն յայնժամ՝ և եկն եմուտ (1828 Յունվ. 15) փառաւոր հանդիսավիճութեամբ 'ի Սուրբ Աթոռ անդր, յորմէ զրկեալն էր եօթնամեայ տարագրութեամբ [49]։

Յորէ յայնմանէ և այսր վայելել սկսաւ Աթոռն յանդորրու և 'ի խաղաղ վիճակի ազատութեան. ոչ բռնութիւն յայնմ հետէ բարբարոսական իշխանութեան, ոչ հարստահարութիւն կեղեքչաց, ոչ համարձակադէմ խրոխ-

---

[49] Ո՛չ անտեղի համարեմ 'ի մէջ բերել 'ի վերջ մատենիս (ԺԲ) զԲան գովեստի շնորհաւորութեան 'ի գալուստ քահանայապետին Եփրեմայ յԷջմիածին յետ եօթնամեայ տարագրութեան, ասացեալ յայնմ ժամանակի 'ի ծնողէն իմմէ։ Ծանոթ. Զ. Մ.

տանք պարտապահանջից, ոչ սպառնալիք ինչ երկիւղի յուստեքէ, ոչ ահ արտաքուստ, և ոչ արհաւիրք 'ի ներքուստ։

Յետ այսորինակ գեղեցիկ բարօրութեան վիճակելոյ մեծի Աթոռոյն, քահանայապետն Երեմիա փութացաւ 'ի 18 Հոկտեմբերի նոյն 1828 ամի՝ յայտնել առանձին գրութեամբ իւրով՝ զզգացմունս անսահման շնորհակալութեան և անկեղծ երախտագիտութեան իւրոյ առ Կայսրն ամենայն Ռուսաց Նիկողայոս, խնդրելով 'ի Տորին Կայսերական Մեծութենէ բարեհաճիլ դարձուցանել Հնգամիածին զԱրին Ներսէս, առ 'ի յանձնել նմա զղեակ պատրիարքական կառավարութեան։ „Ընկալ Ինքնակալ Թագաւոր, գրէր Հայրապետն Երեմիա, զԵախագահ Աթոռն Էջմիածին, զԱրքազնասուրբ Սիւնհոդոսն Հայոց և զամենայն հկեղեցիս, որք ընդ նոքօք և զմիլիոնաւոր ազգս Հայոց 'ի Ռոյ հովանի հեզահամբոյր· պաշտպանեա նոցա, հանգո և պատսպարեա յամենայն զբպարտութենանց՝ որք ցայսօր ժամանակի վշտագնեան զնոսա [50]։ Ընդ սոսա բարեհաճեաց ընդունիլ 'ի գութ Ամենողորմ Տէրութեան Ռոյ և զԳերարժան Յաջորդն իմ զԱրձրապատիւ Արքազն Ներսէս արքեպիսկոպոսն։ Յօրէ յանձն առնէր իմ զայս աստիճան իմ, այս մեծանուն Հովիւ Եկեղեցւոյ անդադար վաստակի անօրինակ ջերմեռանդութեամբ յօգուտ Աթոռոյս, Արքազնասուրբ Էրարատեան Սիւնհոդոսին և համօրէն ազգիս։ Մանաւանդ 'ի ժամանակս

[50] Թէպէտև արժան էր ասատանօր բացատրել սակաւիկ մի և ցուցանել՝ թէ ոյք էին ասացեալ զբպարտութիւնքդ, զորս յիշէ նաև Կաթողիկոսն Ներսէս 'ի միում 'ի նամակաց իւրոց, գրելոց յամին 1844, ասելով վասն իւր· „Գոլով ամբաստանեալ առաջոյ Տէրութեանն չարաչար յոյժ“, սակայն մեք առժամս ոչ կարեմք տալ զբանկալի բացատրութիւնդ։ Ծանոթ· Զ· Մ։

*եօթնամեայ տարագրութեան իմոյ և հալածանացս 'ի Պարսից՝ դա միայն ընկալաւ զիս, սփոփեաց և սրբեաց զարտասուս իմ և զտրտմագին աւուրս ծերութեան իմոյ պէս-պիսացոյց կատարեալ որդիական մտերմութեամբ։ Հանայապետիդ այդմիկ յանձն է յինէն լինել պատկեր իմ, Արքազնասուրբ Երարատեան Միւնհոդոսի և բովանդակ ազգիս Հայոց առ պատուանդանս Ստուածապարգև Աթոռոյ Վրոյ։ Հայեաց՝ Ստուածընտիր Խաղաւոր 'ի պաղատանս նորա աչօք ողորմութեամբ Վրոյ և բարեհաճեսցես ուրախամիտ դարձուցանել զնա, զի նախ քան զվախճան կենաց իմոց յանձն արարից 'ի դա լիովին զղեակ Պատրիարքական կառավարութեան։ Ու ցաւագին ծերութեանս և զգայարանացս տկարութեան՝ որ զայրացեալն է այժմ և զայրանայ օր քան զօր, ցանկամ վաղագոյն գտանել զնա աստ. զի փոխանորդեալ զտեղի իմ, շարունակեսցէ ըստ Ստուածաձիր կարողութեանն բարեգոյն օրինակաւ զկառավարութիւն տանս այսորիկ՝ հանդերձ հաւատարիմ հպատակութեանն արժանաւոր ծառայութեամբ առ Խաղաւորութիւն Ձեր [51]»։

Այսպիսի ցանկութիւն Եփրեմ Կաթողիկոսի առ կենդանութեամբ իւրով յանձնել Ներսիսի զԱթոռն Հայրապետական, բացայայտ ևս ցուցանի 'ի գրութեան նորա առ Կոմն Պասկևիչ, 'ի 20 էն Դեկտեմբերի 1828 ամի, ուր 'ի վերջոյ յաւելու այսպէս. „Վասն որոյ ամենախոնարհաբար խնդրեմ և 'ի Ձերդ Պայծառափայլութենէ գթալով առ բազմամեայ ծերունիս՝ զինամողական միջնորդութիւն Ձեր միաւորել աղերսարկութեան իմոյ՝ մա-

---

[51] Զպատճէն ամբողջ գրոյն Եփրեմ Կաթողիկոսի 'ի մէջ բերեմք 'ի վախճան մատենիս (ԺԳ)։ Թարգմ. Հ. Մ։

տուցեալոյ Նորին Կայսերական Մեծութեան, արժանի արասցես զիս մարգարէական երանութեանն ոչ զկնի վախճանի իմոյ, այլ այժմ 'ի կենդանութեան իմում· զի թէ բարեհաճեալ Կաթողիկոսն շքով և Պրամատիւք փութացուսցէ առ իս զՆորին Խարձր Արքազնութիւնն՝ ես ինքնին ձեռամբ իմով ամենայն յօժարութեամբ ունիմ ըստ սովորութեան եկեղեցւոյն մերոյ օծանել զՆերսէս արքեպիսկոպոսն Ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց, և յանձնելով զամենայն պաշտօն և զտնտեսութիւն Կաթողիկոսութեան իմոյ նմա՝ զմնացեալ կեանս իմ միամտութեամբ պարապեցից յաղօթս և 'ի գետնամած երկրպագութիւնս առաջի սրբացեալ տաճարիս առ ամենազօր Թագաւորն տիեզերաց՝ զի անպարտելի արասցէ զսուրբ Կայսերութիւն Նիկոլայ Պավլովիչ Կայսերն համայն Ռուսաց և Թագաւորին մեր Հայոց· ընդ նմին և Զերդ Պայծառափայլութեան, և համայն կուսակալաց, զօրապետաց և զօրաց Նորին Մեծութեան [52]»:

Այս դիտաւորութիւն իւր՝ Կաթողիկոն Եփրեմ, յայտնեաց նաև Երևոյն Ներսիսի գրելով, 'ի 20 էն Հոկտեմբերի նոյն 1828 ամի, այսպէս·

„Յիսուսի Քրիստոսի Ծառայ Տէր Եփրեմ Կաթուղիկոս ամենայն Հայոց, և Ծայրագոյն Պատրիարգ Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի, և Աթոռոյս մեծի՝ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի: Ողջոյն եռանգեան սիրով մատուցանեմք՝ երբեմն որդի, և այժմ զուքապատիւ հաղբայր՝ Խարձր Արքազան Ներսէս Արքեպիսկոպոսի, և Եպսկոպոսի, հռչակաւոր բազմարդիւն Հովուի եկեղեցւոյ

---

[52] Զամբողջ պատճէն այսր գրութեան գտցես 'ի վախճան մատենիս (ԺԴ)։ Ծանօթ· Զ· Մ·

Քրիստոսի։ Այլ և զաղօթս արտասուախառն ջերմագին պաղատանաց վերառաքեմք առ Ամենաբարձրեալն Աստուած, զի անդառնալի աղօթիւք հայցուածոց սրբոյն Գրիգորի բազմաչարչար խոստովանօղ վկային իւրոյ, և Լուսաւորչի տանս Խորգոմեան, և շնորհիւ Քրիստոսահէջ Ցեղւոյս սրբութեան՝ հաճեսցի պահպանել ընդ հովանեաւ հզօր թևոց իւրոց յամայր ամանակօք անսասան միշտ և անդրդուելի՝ զմիակ յոյսդ և զանդամանդեայ սիւնդ հաստատութեան փոեալ ծերունեայս, և Աթոռոյս, և համօրէն Պիսբանութեան սորա. որոց ամենեցուն աչք առ քեզ հային, 'ի քեզ յուսան, և քև միայն ակն ունին յայսմիկ երկնախնամ բարեդէպ ժամանակիս տեսանել զհաստատեալն բարեզարդութիւն Քրիստոսեան Ցաճարիս։

„Գրեմ արդ առ անձկալիդ իմ զբացայայտն. քանզի ամք կենաց իմոց հոլովեալ ցութեներորդ թիւ, ընդ նմին զայրացեալ զտան յանձին իմում ակարութիւնք մարմնոյ և հոգւոյ մինչև իսպառ. տեսութիւն աչացս կարի ինն նուազեալ, ականջք իմ 'ի լսելոյ արգելեալ, ծունկք իմ տկարացեալ և համօրէն զգայութիւնք իմ ընդ հիւանդագին ցաւովք գրաւեալ՝ հարին ընդոտնեցին զիս գլխովին, և կամ արդ իբրև զկոճղ ինչ կիսայրեաց. լեզու իմ բարբառի, այլ միտք իմ ոչ օժանդակէ նմա. և այսր պատճառի աղագաւ՝ և ոչ իսկ կարացի մինչև ցայսօր թափանձիլ մտօք ըստ արժանւոյն յիմաստս իւրաքանչիւր գրութեանց Ձերոց՝ գրեցելոց 'ի 26 Յուլիսի և 'ի 7 Օգոստոսի 'ի Ցփխեաց, և 17 դարձեալ Օգոստոսի 'ի Պատարինէղբատու, զորս ունիմք ստացեալ յիւրեանց ժամանակս. զի արդարև թէպէտ եմ կենդանի, բայց իբրև մեռեալ և արդէն 'ի գերեզմանի եղեալ։ Զեմ

այն այժմ, զոր տեսեր յանջատիլ իմ 'ի քէն 'ի ճանապարհորդութեան իմում յԱթոռս· զի 'ի ճանապարհի անգ մեծամեծ փոփոխութիւնք յառաջացան ինձ ըստ համարէն մասանց և զգայարանաց ցաւագնեալս անձին· մինչև 'ի ժամանիլ իմ յԱթոռս՝ հազիւ զգալ զիս և զանկումն իմ հեղմամբ բաղմայորդ արտասուաց՝ առաջի սուրբ Տեղւոջն իջման Միածնի Բանին։

„Ահա վասն այսորիկ տեսեալ իմ զատապեալս անձն յայսգունակ վիճակ ցաւագին, և անշուշտ զգացեալ զմոտալուտ չուումն իմ յաստի կենաց, փութացայ 'ի 18 ամսոյս մատուցանել ամենախոնարհաբար զենդիր աղերսանաց առ Ամենազոստափառ Կայսրն ամենայն Ռուսաց և Մեծաւոր Հայաստանեայցս Նիկոլայ Պաւլովիչն, զի ամենողորմածաբար բարեհաճեսցի փութով արձակել առ իս զարժանաւոր յաջորդդ իմ ընտրեալ 'ի բիւրուց։ Եւ այսու գրով իմով յատկապէս զսուրբ անձն քո կացուցանեմ այսօր պարտաւոր առաջի Աստուծոյ, և նորին սուրբ պատկերի Ամենողորմած Կայսեր, և համարէն Միաբանութեանս և ազգիս, զի յընկալնուլ քո զբարձր հրաման Նորին Կայսերական Մեծութեանն՝ փոյթ յանձին կալցիս թարց իրիք զանցառութեան ժամ յառաջ ճեպել գալ և ժամանել ինձ յԱթոռս· զի քեզ միայն, որպէս հաւատամքն և յուսամք աներկբայապէս, հանդերձեալ է Աստուած ներգործել տակաւին զմեծամեծս իւր՝ յօգուտ և յերջանկութիւն ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց՝ տառապելոց 'ի չորեքհարիւր ամաց հետէ ընդ ծանրատաղտուկ լծով այլազգական բռնաւորութեանց, և 'ի պայծառութիւն բարեզարդութեան Ռուսաւորչեանս այս մեծ Դահի՝ խրթնացելոյ մինչև ցայժմ 'ի նոցունց յանհաւատիցն բարբարոսութեանց։

„Քրիստոսական է վճիռն, որ կարօղն է տանիլ, տարցի· ըստ որոյ իմ արդէն իսկ իբր եօթն ամաք յառաջ բարեաք նկատեալ և առաւել զչափ երկնաձիր զօրութեան ձերոյ և կարողութեան, համանգամայն և արժանաւորութեան՝ հաստատուն գրով հրաժարեցայ 'ի հայրապետական իշխանութենէն[53], և յայտնելով զայն Պայսերութեան ամենայն Ռուսաց, Թագաւորութեան Պարսից, և ընդհանուր ազգի մերում Հայկազնոյ, զձեզ միայն ընտրեալ յատկացուցի փոխանորդ իմ, և ընդհանրական ծայրագոյն կառավարիչ գերագահ Աթոռոյս, և հոգևորական գործոց համօրէն՝ վերաբերելոց առ սա և առ ազգ մեր գլխովին· համանգամայն և ժառանգ, և յաջորդ Հայրապետական նախագահ Աթոռոյս։ Այլ բարեսրտութիւն ձեր խոնարհութեամբ հրաժեշտ տուեալ, տակաւին զիշխանութեանս ծանրութիւն յիմ վերայ եթող· և միայն անխոնջ աշխատասիրութեամբ ձերով յամենայն կարևորսն յօգուտ Աթոռոյս և աթոռայնոցս և ազգիս համակ, և ամենաջերմեռանդն անձնադիր հաւատարմութեամբ՝ գտայք ինձ 'ի տարտամ ծերութեանս հզօր զօրաւիգն, ձեռնտու և օգնական, և յամենայնի քաջ սփոփարար, և դիւրիչ սրտիս վշտակրի· մինչև 'ի ջուել իմ 'ի Տփխեաց անտի յԱթոռս՝ անջատմամբ յամենաքաղձր տեսոյ անձկալեալդ իմոյ, տակաւին հարկեցայ ընդ իս բերել զանուն կաթուղիկոսութեանս· և ահա յայժմ վերջին տկարութեամբս վարակեալ, անուանակոչութեամբս այսու և եթ կամ պարտաւորեալ առ ոտնտեսութիւնս յանձն եղեալ ինձ յԱստուծոյ։

---

[53] Տես 'ի 36 երորդ ծանօթութեան, և 'ի յաւելուածի (ծ)՝ գՕրինակ հրաժարականին մատուցելոյ 'ի Շուշի քաղաքի, ևս և զնամակն նորա առ կայսրն Ալեքսանդր Ա։ Ծանօթ. Ջ. Մ.

„Սմին իրի՝ որպէս առ Նորին Պայսերական Ս՝ենծութիւնն, մատուցի զինգիր աղաչանաց իմոց. նոյնպէս և 'ի քէն յամենասիրելի եղբօրէդ իմմէ խնդրեմ արտասուօք հանդերձ՝ փութալ գալ ժամ յառաջ 'ի Հայրապետական Էթոռս՝ մինչ չև մեռեալ իցեմ. զի անձամբ իմով օծեալ զմիայն արժանաւորդ այսմ Էթոռոյ՝ Հայրապետ և Կաթուղիկոս ընդհանուր ազգիս, յանձն արարից գլխովին զնախագահ Էթոռս զայս 'ի քեզ 'իշխանութեամբ հանդերձ. որով հանդիցէ եղկելի անձն իմ զառամեալ՝ աղատ գտեալ 'ի առչորմանէ ըղձիցս և խղճահարութեանց: Եւ ըստ որում զգամ ես 'ի հոգի իմ, նախասահմանեալ մահն հասարակաց շրջապատեալ զինեա՝ սպասէ. այլ շունչ իմ յիս տակաւին յարատևէ, որպէս երբեմն առ ծերունին Սիմէօն, ոչ տեսանել զայն՝ մինչև տեսից զՕծեալն Ցեառն՝ զնոր շնորհալի Կաթուղիկոսդ Ներսէս. և ասացից յայնժամ, արդ արձակեա զծառայս քո Տէր ըստ բանի քում 'ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր ժողովրդեան քում Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ: Ողջ լեր, և կեցցէ անձն քո 'ի շրջանս ամաց յոլովից: Կաթուղիկոս ամենայն Հայոց Նփրեմ“:

Թէպէտև Կաթողիկոսն Նփրեմ այսպէս ջան և փոյթ 'ի գործ դնէր վասն դարձուցանելոյ զԱրհին Ներսէս 'ի Սուրբ Էթոռ անդր, և վասն յանձնելոյ նմա զՀայրապետական Էթոռն, սակայն աշխատութիւն նորա ոչ ել 'ի գլուխ [54], և սիրելին նորա Ներսէս, զկնի մեծ և կէս

[54] Անկարելի է չտալ առաջն զարժանին գովութիւն Հայրապետին Եփրեմի վասն այսպիսի ջանադրութեան նորա, և չնշմարել՝ զի եթէ նա 'ի սկզբան Կաթողիկոսութեան իւրոյ (որպէս տեսաք 'ի ԺԱ գլ.) արանջէր զՆերսէս վասն ջանադիր փութոյ նորա 'ի կարգաւորութիւն

ամաց, Բարձրագոյն կամաք կատարելապէս հաստատեցաւ Առաջնորդ Բնասարարիոյ[55], ուր և մնաց մինչ ցմահ Յովհաննէս Կաթողիկոսի և ցընարիլ իւր „անհասանելի կամքն Աստուծոյ“ Կաթողիկոս ամենայն Հայոց, այն է՝ մինչ ցամն 1845։

Այսպէս ահա, Բահանայապետն Եփրեմ վարեալ զիշխանութիւնն Հայրապետական այլ և ամս երկուս[56], իբրև ետես՝ թէ 'ի նուազել զգայական զօրութեանց իւրոց, և 'ի հզօրանալ օր ըստ օրէ ցաւազգած տկարութեան յանձն իւր (քանզի գոգ իբր զուրնամենիւք իմն էր), ոչ և ս մարթանայ ըստ պահանջել հարկին ձեռնհաս լինել 'ի կարևորագոյն ձեռնարկս աթոռային և ազգապիտան գործառնութեանց և հոգևոր պաշտամանց ոմանց պատկանելոց Պատրիարքական բարձր աստիճանի, որպիսի են՝ ձեռնադրութիւն եպիսկոպոսի, օրհնութիւն միւռոնի, և այլն, հարկեցաւ տալ հրաժեշտ յայնմ իշխանութենէ, զոր և յայտնեաց Փիւնհոդոսի Աթոռոյն գրով 'ի 8 Հոկտեմբերի 1830 ամի, համար 179[57], յանձն առնելով նմա առնել և զընտրութիւն Նոր Հայրապետի։

ազգային և եկեղեցական գործոց, 'ի վերջին ամս Հայրապետութեան իւրոյ՝ ընդ հակառակն՝ սիրեաց զնա 'ի սերտ սրտէ, և ոչ սակաւ աշխատեցաւ, թէև յանօգուտս, 'ի ցուցանել նմա զիւր առ 'ի սրտէ շնորհակալս՝ ցանկութեամբն բազմացուցանել զնա յԱթոռ Պատրիարքութեան։ Ծանօթ. Զ. Մ.

[55] Ցետ 'ի Կոնդակի Եփրեմ Կաթողիկոսի առ Արհին ներսէս, 'ի 26 Մայիսի 1830 ամի, որ կայ 'ի վախճան մատենիս (ԺԵ)։ Ծանօթ. Զ. Մ.

[56] Ուշագրութեան է արժանի եղեալն յայսմ միջոցի թղթակցութիւն 'ի մէջ Կաթողիկոսին Եփրեմայ և Դամնին Յովհաննու Պասկեւիչի 'ի մասին Արքեպիսկոպոսին Ներսիսի, չորից Եպիսկոպոսացն՝ Մինասայ, Գրիգորի, Առաքելի և Սարգսի, ևս և Յարութիւն վարդապետի Ալամդարեանն։ Զայս թղթակցութիւն, որպէս և զայլ կարևոր նիւթս արդի պատմութեան, հրատարակեցից՝ թէ ցէր յաջողեցէ՝ 'ի պատեհ ժամու։ Ծանօթ. Զ. Մ.

[57] Զօրինակ „Հրաժարականին“ գտցես 'ի վախճան մատենիս (ԺԶ)։ Ծանօթ. Զ. Մ.

Յընթեռնուլ Սիւնհոդոսի զայն հրաժարագիր, տեսեալ 'ի նմա զիրաւացի պատճառացն յառաջերումն, խորհուրդ եդեալ արժան դատեցին ընտրել 'ի Պատրիարքութիւն զԱռաջնորդաբար և զնախապատիւ անդամ իւր զՅովհաննէս արքեպիսկոպոսն Կարբեցի՝ որ հանդերձեալ էր ունել զԱռաջնորդութիւն վիճակին Տփխեաց, զոր վաւերացուցեալ ստորագրութեամբ իւրաքանչիւր Ընդամոյ՝ մասայց 'Նորին Օծութեան 'ի 13 Նորին ամսոյ, 136 համարով։

Եւ զի հաղորդակից էր այսմ խորհրդեան 'Նահանգապետն Երևանայ Պ. Ներսէս Մայիսօր Պ. Ասիլ Յովսէփիչ Լոնիբուդով, ծանոյց նա յոյժամ զայսմ եղելութենէ Կոմսին Յովհաննու Պասկևիչի՝ 'ի Տփխիս. որպէս և յետ սակաւ միոյ ծանուցին առանձին գրութեամբ և Սիւնհոդոսն և Կաթողիկոսն, առաջի առնելով ձիգ բանիւք մի ըստ միոջէ զամենայն զվնասս Աթոռոյն և զաղգի ազգի դէպս տարաձայնութեանց, որք մարթ էին յետաջ գալ յազգի մերում, մանաւանդ 'ի մեծ մասին անդ ժողովրդականաց մերոց սիրելոց յայլևայլ գաւառս և 'ի զանազան կողմանս Օսմանեան Տէրութեան՝ 'ի խափան մնալ ձեռնադրութեանց յեպիսկոպոսութիւն, ըստ որում սկըսեալ էին յայնժամ ոմանք 'ի վարդապետաց եղելոց յայլ տէրութեան դիմել յԱթոռ անդր յուսով եպիսկոպոսանալոյ. որոց 'ի չյաջողել ակնկալութեան՝ յուսակտուր լքեալ դարձ առնէին անդրէն 'ի տեղիս իւրեանց։ Եւ ծանուցանելով զընտրելոյ Սիւնհոդոսի զմիշեալ արքեպիսկոպոսն Յովհաննէս 'ի Պատրիարքութիւն, խնդրեցին 'ի նմանէ 'ի գործ դնել զմիջնորդութիւն իւր վասն հաստատելոյ զնա ոչ անագան յայն պաշտօն. զի մի, ասեն, յերկարել միջոցի յառաջացին մեծամեծ վնասակարութիւնք յազգի մերում։

'Ի հասուցանել Կոմին զայս ամենայն 'ի գիտութիւն Կայսեր, ընկալաւ պատասխանի, թէ առ ընտրութիւն Նորոգ Հայրապետի պիտի ոչ միայն հաւանութիւն ժողովոյ միոյ՝ այլև հաճութիւն ընդհանուր ազգի [58]:

Յայսմ ժամանակի Յովհաննէս ընտրեալն 'ի Հայրապետութիւն վարէր զիշխանութիւն արքեպիսկոպոսութեան Հայոց Վրաստանի 'ի Տփխիս. անդ գտանէր և Սերովբէ արքեպիսկոպոսն Կարնեցի: 'Ի լսել սոցա զայս, նոր խորհուրդ այնուհետև 'ի մէջ ածեալ՝ մտադրեցին տալ գուժարեր ժողովոյ Յէջմիածին 'ի հաստատութիւն ընտրութեանն: Եւ զի ձեռն օժանդակութեան Կոմին երևէր առ նոսա յայսմ ամենայնի, ըստ հաճութեան նորա ուղարկեալ փութացաւ (1831 Յունվ. 28) եպիսկոպոսն Սերովբէ Յէջմիածին. ուր սակայն և հարկեցուցիչ թախանձանաք ետ գրել հրաժարելոյն Եփրեմայ առ եպիսկոպոսունս և առաջնորդս եղեալս 'ի շրջակայ թեմս Աթոռոյն, որպէս և առ արքեպիսկոպոսն Վրաստանի զալ ժողովիլ յԱթոռն առանց ընդ բանս ինչ ածելոյ մինչ ցամիսն Մարտ:

'Ի գուժարիլ ժողովոյ 'ի 15 այնր ամսոյ (Մարտի 1831 ամի) ընթերցաւ նախ Բանն Եփրեմ Կաթողիկոսի [59], և ապա յերկրորդումն աւուր որոշեցին զերկուս

---

[58] Տե՛ս գրարձրագոյն Հրովարտակն, որ գտանի 'ի վերնան մատենիս (ԺԷ): Ծանօթ. Զ. Մ.

[59] Ասատանօր պատշաճ համարիմ 'ի մէջ բերել զգիշատակեալն Բան Եփրեմ Կաթողիկոսի, ըստ օրինակին՝ որ կայ 'ի մատենադարանի հօր իմոյ.

„Ասուածադուսմար հանդիսի ընդհանուր ժողովոյդ սրբազան Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց և խմաստուն վարդապետաց և քահանայից սրբակրօնից առ հասարակ գիտել լեցի.

„Այրն Ասուածոյ նախամարգարէն Մովսէս, 'ի կալ իւրում յաղօթս առ Ասուած, ասաց՝ ժամանակ ամաց մերոց անդադար, որպէս սար-

Կանդիտատս, այն է՝ հայրապետացու անձինս, որոց առաջինն էր Պարտիրոս արքեպիսկոպոս Տեղապահ, և երկրորդն՝ յիշատակեալ արքեպիսկոպոսն Աղթամարայ· և հատուածագիծ որոշմամբ ընդմիջեալ զթուղթ մի յերկուս էջս, 'ի միում՝ նշանագրելոյն զառաջնոյն անուն, և 'ի միւսումն՝ զերկրորդին· զոր և եռուն շրջաբերել յամենայն սահմանս Ուրարատայ և գաւառացն յայս կողս Կովկասու, որպէս զի իւրաքանչիւր ոք ստորագրեսցէ վասն ընտրութեան միոյ յերկոցունց՝ ընդ որ և հաճեսցի։ Ստորագրողք յերկրորդ էջն՝ ուր մակագրեալ կայր անուն

դի, և թիւ աւուրց մերոց 'ի նոսա եօթանասուն ամ՝, ապա թէ առաւել ևս ուժգնոն ամ և որ ինչ աւելի քան զայն ցաւոք և հեծութեամբք։ Զայս մարդարէն նկատմամբ կենաց և հասակի մարդկան ասաց· այլ թէ նկատեմք 'ի հանգամանս ազգաւոր թշուառութեց կենցաղոյս տեսանեմք զրեթէ զամենայն մարդիկ զգածեալս զգեղեալս տառապանօք, և ցաւովք և հեծութեամբք· ըստ որոյ և խմաստունն ասաց՝ թէ ամենայն աւուրք մարդոյ ցաւովք և զբօսանք իւր տրտմութեամբ։ Թէպէտ՝ ոմանց շատ և ոմանց սակաւ, ոմանց թոյլ և ոմանց սաստիկ, ոմանց կարճատև, և այլոց երկարատև բնաւորեցան լինել վիշտքն։ Սակայն քննելի է թէ ընդէր մարդարէն զանց արարեալ ասէն զմանկութեան զպատանեկութեան և զերիտասարդութեան հասակքն, զորս հանդերձ հեծութեամբքն ծերութեանն տեսակաւեն հասակի· յայտ է թէ, վասն զի 'ի ծերութեանն սովոր են յաւէտ առաւելուլ վիշտքն և անանձնասա մեալ 'ի մարդոյ մինչև ցմահ իւր, 'ի պատճառս խանգարման զգայարանացն, և յանկմանն յուժոյ և 'ի զօրութենէ, թող զմահն զոր մերձ տեսանէ յամենայն րոպէի։

„Այսպէս աւասիկ ոչ ինչ վերջացեալ առ յինէն յանարժանս գլխոյ՝ լրութեան ազգիս բազմադիմի վշտաց և տառապանաց, այլ ընդ ամենայ հասակիս ընդ իս 'ի միասին ամենայ, առաւելապէս յաւուրս հայրապետականս իշխանութեան 'ի վախճանի յայսմիկ 'ի ծերութեանս հասակի, յորում անցեալ ընդ զութենամենիւք զոլով՝ ալք իմ գատանին վառանեալ, և առաղջութիւն իմ մինչ խոպան խանգարեալ՝ յաւէտ չմն գորացեալ գոան յիս ցաւք իմ, և հեծութիւնք այնչափ մինչ ընկճեալ զիս գոգցես գլխովին։ Եւ զինչ մեայր ինձ այնուհետև, քայց թէ յիշել զԽահակ նահապետ և զՅակոբ, որոց տեսեալ հոգւոյ աչքք զվախճան իւրեանց, եկեալ մերձեցեալ, փոյթ յանձին կալան

Յովհաննու, առաւելեան յոյժ քան զԹիւ ստորագրողաց յառաջնում էջի։ Եւ ըստ այսմ տնօրինեալ ասացին զայն Թուղթ քաղաքատարածիր առ Ղոմն (որ ընդ այն ժամանակս գնացեալ էր 'ի Պետերբուրգ ըստ Կայսերական հրամանին), որպէս զի և նա հաստատեցէ 'ի գիտութիւն Կայսերի։

Յայսմ միջոցի լսելի լինէր 'ի քաղաքն Ցփխիս շշնջման տարածայն 'ի միջի ոմանց՝ որք տիեզերական հաւատարմութեանն առ նախկին Ընդաշնորդն իւրեանց Ընդեպիսկոպոսն 'Ներսէս՝ որ մնայր ընդ այն աւուրս

հոգալ 'աւանդել զոր պարան էր օրհնելով զորդիս իւրեանց, անդէն 'ի կենդանութեան իւրեանց. վասնորոյ և գրեալ կայ զաւանչոյն, թէև եղև իրրև ծերացաւ Իսահակ, և վատնցան աչք նորա 'ի տեսանելոյ, կոչեաց զնոսա զորդի իւր զերեց, և այլն։ Իսկ զերիզորդէն, որ հանդերձեալն էր օրհնել զՄանասէ և զԵփրեմ, և հնեաւաբար զամենայն զորդիս իւր, ասի, և աչք Իսրայէլի ծանրացեալ էին 'ի ծերութենէ մեծի, և ոչ կարէր տեսանել, և այլն։ Ըստ որոց և իմ ըստ հաստակիս առաւելութեան, և ծանրութեանս ամաց և վատաւորդ վատեալ, ծանրացեալ աչաց, և յաւազարութեամբ անձին վարակիալ; տեսեալ զմահ իմ առ դուռս հասեալ ժամանեալ, և միանգամայն նկատեալ թէ յանկարելեացն է ինձ այնուհետև կատարել զպաշտամունս վերարերեալս դպրութիւնական բարձր ասորմանի, մասուցի ինքնակամ զհրաժարականն իմ առ արքազան Սինոդն գերագահ Ամենայս, յանձնարարեալ նմա տնօրինել զարժանն յաղագս քնարութեան նորոյ դպրոցիս։

„Նոյն հրաժարումն իմ՝ 'ի ձեռն հայկազուն գլխաւոր սիեսի նահանգիս Ղենդրալ Մայորի և Ասպետի Պայծառափայլ Ընեակ Վասիլի Յովսէփիչ Բեհզուասովայ, հասեալ 'ի ծանօթութիւն Գլխաւոր հրամանատարի Վրաստանու և Հայաստանի՝ Պայծառափայլ Ղենդրալ Ֆելդմարշալ Կոմսի Երեւանու՝ Իսկան Ֆէօդորովիչ Պասկեվիչի, և 'ի ձեռն նորին 'ի տեղեկութիւն ամենողորմած Թագաւորական Կայսերն ամենայն Ռուսաց, և ամենաբարեպաշտ թագաւորի մերոյ, նորին Մեծութիւնն ևս ընկալեալ էր հաճութեամբ, և բարեհաճելով ամենողորմածաբար շնորհել ինձ զհանգիստս հրամայեալ էր ընտրել զնորոգ Հայրապետս գումարելով զմեզս հոգևորականաց ազգիս, ըստ վաղեմի սովորութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ։ Ըստ որոյ և մեք գրեցաք

յիշատակ Պատմեալ 'ի Լենսարարբիա։ Եղեն ամենք 'ի Ցիլիսիացւոց՝ որք զառաջինն անհաճ եկեալ ընդ ընարութիւն Յովհաննու, ուստի և չարանալին յանձն առին բարդել, այլ ապա ակնամայացեալ 'ի սարկանաց Պոմին ուղղագրեցին։ Բայց և այնպէս օր առուր բարձրանալոյ քրիստոնէին 'ի հրապարակս և յանկիւնս, և ձայնք այլ ընդ այլոց հնչէին, որպէս թէ յակամայից ինչ եղեալ իցէ հրաժարումն Պատրիարքին, և այլն։ Մինչև փոքր միւս ևս յերկուս դասս բաժանել ունէր ժողովուրդն, այն է՝ 'ի Ներսիսեան և 'ի Յովհաննիսեան, որպէս և երբեմն 'ի

զընդհանրական հրամանագիրս, առ որս արտաքոյ Աթոռոյս էին հոգևորականք յայլևայլ վիճակս և անհաւասիկ արդ ամենեքին եկեալ ժամանեալ համախմբեալ կարք առանն։

„Եւ այժմ ինձ ոչ ինչ մնայ, բայց միայն ասանել որպէս ցանկամ, զի ընտրեցի անձն յարժանագունից անտի հոգևորականաց 'ի պատրիարքութիւն ամենայն Հայոց, ոչ զոր են կամիմ, այլ զոր զարտաքոյն Աստուած պատրաստեալ իցէ վասն իւր ըստ անչափին նախախնամութեան իւրոյ, զի ըստ որում գրեալ է· մարդ հոգի յերեսս և Աստուած հոգի 'ի միտս։ Այն զի և խահակ նահապետ թէպէտև գնաւ կամէր օրհնել, ըստ որում անգրանիկ, այլ զի Աստուած ընտրեալ էր զՅակոբ, զի զնա սիրեաց· վասնորոյ զՅակոբ օրհնեաց որպէս զանդրանիկ։ Նոյնպէս և Յովսէփ թէպէտև կամէր, զի աջ ձեռն Յակոբայ, 'ի ասալ նորա զօրհնութիւնն՝ դիցի 'ի վերայ գլխոյ անդրանկին Մանասէի, սակայն Յակոբայ մարգարէական հոգւով ծանուցեալ զկամս Աստուծոյ, զաջ ձեռն իւր եդ 'ի վերայ գլխոյ Եփրեմի, և զնա օրհնեաց որպէս զանդրանիկ։ Վասնորոյ, ես ըստ որում ծառայեցից ձեր ամենեցուն ծառայիցդ Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ աղաչեմ սիրելիս Քրիստոսի, և ըստ որում Գլուխս և Հայրապետս ընդհանուր ազգանազեանս գրոնի, հրամայեմ ըստ իշխանութեանս խորհիլ և ձեռնարկել յընտրութիւնդ և վճարել զայն որպէս պարտն իցէ և արժան 'ի ձեր կարգմանէ“։

Հրաժարեալ Կաթողիկոս ամենայն Հայոց Եփրեմ։

№ 31· 'ի 15 Մարտի 1831 ամի, 'ի սուրբ Գահս։

Պատճէն, յորմէ ընդօրինակեցաւ բանս այս, ունէր և զայսպիսի ստորագիր· „Հանձնատ է նախատպին· Յովհաննէս վարդապետս Պրիմեր“։ Ծանօթ. Զ. Մ·

Պանիէլեան և 'ի Պաւլեան։ Կողմնակալք Սիսական կամ հակառակորդք Յովհաննէսի յայնմ ժամանակի հանուրէին այսոքիկ. Սիմէոն արքեպիսկոպոս Խղնունի, Նիկող Աղլուրեանց, Սողոմոն Աղուէսիշ բժիշկ, Կոկի Նոր Ինաթիսուտով, Եղայ Հիլմազան Պարսկով, Տարկ Օսխարիշ Լոռիս-Մելիքով, Միրզեան Դաւիթ Խաղոյեան, Պաւլիթ Խերեսինով, և այլք։

Յարութիւն վարպետեան Աղամդարեանց՝ որ յայնմ ժամանակի արգելեալ կայր 'ի սուրբ Նշան վանս Հաղբատայ չնչին ինչ պատճառաւ, բազում անգամ էր զի գրով, և էր զի միջնորդաբ ինդրէր յարքեպիսկոպոսէն Պարսատանի (քան որում էր ընդ իշխանութեամբ նորա) զհրամանագիր (Ռիլէտ) 'ի գնալ առ արքեպիսկոպոսն Սիսական սակայն չիրն ինչ լսելի ինդիրք նորա։ Տարաբաղեալ էր ընդ այն ժամանակս հոչակ 'ի քաղաքին ոլորեալ թէ Որբազանն Յովհաննէս՝ որ ընտրեալ է լինել յաջորդ արքայն Գրիգորի Լուսաւորչի, 'ի վերադարձի իւրում յԱթոռոյ անտի յետ արձակման ժողովոյն, կոչեալ պատճառաւ իւրք զԱղամդարեանն 'ի գեօղն Հուլավէր մերձ 'ի վանս Հաղբատայ՝ դիպ մահու արբուցեալ իցէ նմա։ Լուեալ զայս Յովհաննու, և խրխնջեալ թէ մի գուցէ օր ըստ օրէ այնպիսի տարաձայնութեամբք ապմուկ շփոթի 'ի ժողովուրդն յարիցէ և անուանարեկ լինիցի ինքն։ Զրեաց նմա վաղվաղակի գիր հրամանի 'ի 22 Մարտի։ Համար 244, ելանել գնալ յԷջմիածին։ Այլ նորա չառեալ զայն յանձն՝ խնդրեաց չառաքել զինքն անդր վասն դժնդակութեան (հոգոյն)։

Իսկ՝ զի 'ի յայտնել Յովհաննու զանցիցս զայսցանէ երկոցունց խորհրդակից բարեկամաց հարցն որք էին վիրոյանոգանեալ արքեպիսկոպոսն Սիրոպէ և Յակոբոս աՇն

Ջրպետեան այր աշխարհակոնացեալ, ըստ խորհրդատուութեան նոցա հաճեցաւ գրել 'ի 28 Մայիսի առ Միւնհոզեան, զի դառնալ զԸլամդարեանն վասն արարմանց իւրոց այսպիսեաց՝ արգելցեն 'ի Ս. կայսրանի տրոյն Էրիվանայ։ Եւ առ այս՝ նա գրել զարինակ մի զիշատագրոյ 'ի գիրսն Միւնհոզեան վասն նորա, յորում 'ի վէպ արկեալ զարարս նորա յաւուրց անտի քահանայութեան իւրոյ (քանզի շուշտակ էր) ցուցաներ զնա պարտաւոր յաւանեալոյն։ 'Ի սեսանելն զայս Մանուէլ վարդապետի Գահինեան Դիւմիւշխանեցւոյ՝ որ յայնմ ժամանակի գտանիւր առ նմա, սկսաւ հանդել զնա 'ի խաղաղասիրութիւն՝ առաջի դնելով զգանչելի անյիշաչարութիւն շնորհալի Հայրապետին 'Եղբսիսի՝ առ հակառակորդն իւր Դեղոյդ, և առ այլս։ Եւ կամեցեալ զգուշացուցանել զնա յապագայիցն կարծեաց՝ որք մարթէին պատճառիլ յայնպիսի հետաքննութեանց՝ մատոյց յացտարարութիւն օրինակ զայս. „Զայն ակար խորհուրդ իմ ոչ կարեմ գաղել 'ի բարերար Տեառնէդ, այսինքն Հաւատալ ամենայն հոգւոյ, և անմոռաց պահել 'ի յիշողութեան զանցան Գանիէլի և Դաւթի, ուր թէ նոքա եղկելուիք էին, քան այժմեանս եռանդիւնիք, և առաջինն անուաւոր անգղաղար հոլովման։ Յայսպիսիս կատարեալ զգուշութիւնն պարտիմ ասել, և հանդայն գործառնութեանց Բարձր Արարչութեանդ առեալ զբարի վախճան“։

Այլ զի Յովհաննէս ծանր էր նահանջել զկատարուածն առաջադիր խորհրդոյն՝ խնդրեաց գրով 'ի Տիզապահէ գլխաւոր հրամանատարութեան Ղազկառեան գաւառաց 'ի Դարեկաւոյ Խանգրատիսով Ղենդալէ հանել զՅարութիւն վարդապետն 'ի ձեռն մեծարգոյ իշխանութեան 'ի Ազատայանսի և հաստատանել մինչև յԵրմի-

ածին։ Այլ չև ևս 'ի գործ եղեալ խնդրոյս՝ եկն 'ի վերայ հրամանն 'ի Գլխաւոր հրամանատարէ (՝ի Պոմանէն) առ յիշեալ Գեներալն՝ թողուլ զԱլամդարեանն երթալ առ արքեպիսկոպոսն Սելիսէ վասն Պայսերական թոյլատուութեանն[60]։ Դանուցեալ Յովհաննու զայս հրամանն Ամին Ալամդարեանի, կոչեաց զնա առ ինքն 'ի Տփխիս, և ետ ճանապարհորդել 'ի 25 Յունիսի։

Յայսմ ժամանակի մարգամահ խօլերայն սաստկացեալ 'ի հիւսիսային կողմանս Պետերբուրգայ՝ մահուանս անհա-

---

[60] Ներսէս արքեպիսկոպոս գրէ 'ի Քիշնեւայ առ Յարութիւն վարդապետ Ալամդարեանց, 'ի 20էն Մարտի 1831 ամի. „Գոյ նախախնամութիւն Աստուածային անշուշտ մատակարար իւրոց արարչակերտութեանց անսահման յաւիտենիս, և պատգամ նորա առ այն հրաստարակեալ է։ Բանն իմ որ եղանէ 'ի բերանոյ իմմէ՝ մի դարձցի դատարկ, մինչև կատարեսցէ զոր ինչ կամիցիմ (Եսայ. 55. 11)։ Իսկ ապա ուր զմտաւ, և ասա՛ ինձ՝ այսոքիկ դիպուածք մեզ 'ի սահմանի նախախնամութեանց են մեզ՝ թէ արտաքոյ։ Եւ եթէ 'ի սահմանի, ընդդէմ ոչ ամենայն երկչնմտութեամբ պարտ իցէ մեզ հաստատիմ կացուցանել զքրիստոնէական բարեպաշտութիւն մեր։ Ապա եթէ արտաքոյ, քննեա՛ և տես՝ թէ վասն որոյ մերոյ անիրաւութեանց, կամ այլոց իրաւանց։ Կամ թէ զիարդ զմեզ յերկոսին 'ի նոսին պարտաւորի բանաւորութիւն կամ քրիստոնէութիւն հանգիստանալ 'ի ոմին պատահման։ Եւ եթէ դիտիցես, թէ իրաւունք մեր զանին զատապարտելք և ոչ անիրաւութիւնք, ընդդէմ ոչ որպէս ամենաբարեպաշտ քրիստոնեայ պարտաւոր զանձինս մեր չունիցիմք. համարիլ ամենայն երկչնմտութեանց և պակաւոր համբերութեանց։ Առաքելական է քարոզն մեզ։ Եթէ բարիս գործիցէք, ասէ՝ զիարդ և համբերիցիք, այն շնորհք Աստուծոյ են։ Բայց եթէ դիտիցես, թէ անիրաւութիւնք մեր զանին զատապարտելք և ոչ իրաւունք, առաւել և ստիպեն զմեզ իրաւունք ժուժիկելոյ ակամայիցն կամակոր յօժարամութեամբք. առ որ և ունիմք խրախոյս ազանչելի՝ խորոց Աստուծոյ խորհրդոյն։ 'Ի խրատու համբերութեան կոչք իրրև յորդիս մատուցեալ է 'ի ձեզ Աստուած։ Ղարին նախախնամութեանց տարաբնի մեզոյ է անանցանելի բանն. սուր երկայրի առ մեզ և առ հայածիչսն մեր։ Իմ է վրէժխնդրութիւն, և ես հատուցից՝ ասէ Տէր։ Եւ զբաղում ողորմութեանց Աստուծոյ առ իս, անլքանելի յաւուրս իմով բերանալիր պանծանաց տանիմ այս ամենայն անանկեալ անարժա-

մարս գործէր։ Եւ մեծանուն այրն կոչեցեալ Ցիպլիչ՝ որ գոգ ձեռն ինն էր Կայսեր, զրաւեաց զկեանս իւր 'ի ժամանացուոյ անտի։ 'Ի տեղի նորա կարգեցաւ ապա Կոմն Երևանայ Յովհաննէս Պասկևիչ՝ որ գտանէր յայնժամ 'ի Պետերբուրգ անգր։ Այն սա մատուցանելով Կայսեր զթուղթն բազմաստուրագիր վասն ընտրութեան Յովհաննու, խնդրեաց կացուցանել զնա Կաթողիկոս Հայոց, և եհան 'ի 30 Յունիսի զՀրովարտակ հաստատութեան Յովհաննու 'ի Կաթողիկոսութիւն[61], առաքելով նմա և զնշան Ասպետութեան Աղեքսանդրի Ն· աստիճանի (որպէս և հրաժարելոյն Եփրեմայ՝ զԱնդրէի առաքելոյ՝ Ն· աստի-

---

նութեանց ամենեցուն, զմտաւ ածեալ՝ զի թէ ամենայն իրաւունք մեր առ ամենայն մարդիկ՝ զտանին զատապարտք 'ի նոցունց ամենեցունց, անիրաւութիւնք նոցա զնոսդ ունին մնալ անդատապարտ 'ի Ցեռանէ իրաւանց։ Եւ եթէ յանցանք իմ առ Աստուած կամ առ մարդիկ եղեն պատժապարտ այսպէս, յանցանք այլոց մինթէ մեռցին առանց վրէժխնդրութեանց երկնից։ Աշտարինս համարեցան ինձ քան զամենայն վիշտս այլոց՝ փախուստն ձեր ցայն վայր 'ի սահմանաց աքժանաւորութեանց ձերում բարձր պատուոյ՝ մինչև մատանել 'ի վանդ զձեր մեծահոգութիւն և զանակնկալն ինձ՝ յօժարել զրել զայնպիսի դահավիժումն կարգաւորութեանց ձերոց մտաց, զոր չկամիմ նոգոգել տեսակաւ։ Ցարևոր ասենքանք առ այն՝ ամենարժան ձեզ համբերի բազում տրամութեամբ իմով, այլ ոչ ժուժեալ մինչ իսպառ, առանց զանցաւորութեան գրեցից առ Մինիստրն հոգևորական գործոց՝ խնդրել 'ի Գերին Կայսերական Մեծութենէ, 'ի վարձատրութիւն երեսնամեայ արիւնաքիրան ծառայութեանց իմոց Ցերութեան Ռուսաց, զձեզ և զԱիմն արքեպիսկոպոսն շնորհել ինձ և ընդարձակել ձեզ գալ ժամանել առ իս շնորհօք Աստուծոյ։··· Բարի է յուսալ 'ի Ցեր քան յուսալ 'ի մարդիկ· եթէ չէին ազգաւ մեզ բանք մարդաբէին, արդ ահաւասիկ քաջափորձ անձամբ անձին զփորձ առեալ ամենայն մարդկանց՝ վեհից և նուաստից, հոգևորականաց և մարմնաւորականաց, մերոց և օտարաց, կայ մեզ զբարբառ բարձրացուցանել՝ Աստուած ճշմարիտ և ամենայն մարդ սուտ···"։ Ծանօթ. Զ· Մ·

[61] Զօրինակ թարգմանութեան Հրովարտակիս գտցես 'ի վախճան մատենիս (ԺԸ)։

ճանի [62], և տեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոսի և Սերովբէ արքեպիսկոպոսի Ամտրախառնայ զԱննայի Ա-ստուածանի), բայց այսու պայմանաւ՝ զի 'ի կարեւոր դի-պուածս ըստ խորհրդոյ Ամբրոսիայ վարեսցի [63]։

Բայց այսպէս լինելոյ չեղև ուժեք կալ բնաւ ընդդէմ, ըստ որում հակառակիլ այնմ՝ էր հակառակիլ հրա-մանի Պայսեր։

Եւ Կաթողիկոսացեալն Յովհաննէս 'ի 6 Սեպտեմբերի 'ի Տփխիսայ՝ գնալ յԷջմիածին և ընդունիլ զօծուն իւր. որում տուան յարքունուստ վասն ճանապարհային ծա-խուց ոսկիք չորս հազար, զի մի ընդ պարտուք ինչ անկցի Աթոռն։ Ընկալեալ պատուէր 'ի Կուսակալէն Բանգրա-տիովայ, չօծանիլ, մինչև և ինքն ներկայացի անդ յետ իբր աւուրց ինչ։

Եւ եղև զի հարկեցեալ Կուսակալին ելանել 'ի սահ-մանս իւր վասն կարգադրութեան, յամեցաւ գնալ նորա յԷջմիածին. և ահա յետ սակաւուց, եկն այլ ոք ունիլ զիշխանութիւն Կուսակալութեանն Բարօն Ռօզէն անուն ('ի 7 Հոկտեմբերի)։

Ըստ հրամանի նոր Կուսակալին ելեալ 'ի Տփխիսայ 'ի 28 Հոկտեմբերի քանի մի աստիճանաւոր անձինք 'ի Տէրութենէն, ընդ որս և Սերովբէ եպիսկոպոսն և երթեալ յԷջմիածին՝ կատարեցին անդ զմեծահանդէս օծուն Հայրապետին Յովհաննու 'ի 8 Նոյեմբերի (1831), յաւուր տօնի Հրեշտակապետաց, 'ի Կաթողիկոսէն Ամբրոսիայ. զի

---

[62] Զօրինակ թարգմանութեան Հրովարտակին գտցես 'ի վերջն մատենիս (ԺԹ)։

[63] Տես զԲարձրագ. Հրովարտակն, որ կայ 'ի վերջ մատենիս (ԺԷ)։ Ծանօթ. Զ. Մ.

'ի նմին աւուր օծեալ էր ինքն, և 'ի նմին աւուր էօծ Մելքիսեթ զԱհակ [64]։

Եւ զի չև էին ծանուցեալ զայսմ ամենայնէ մերազն հասարակութեանն Կոստանդնուպոլսի, զկնի օծմանն՝ պատրաստեցին առաքել յԷջմիածնէ զԱրսեղ եպիսկոպոս, և զՅովհաննէս վարդապետ Հ՚ահրիարցի 'ի Կոստանդնուպոլիս յայտնել զօծումն Յովհաննու և տալ ընդունել զՀայրապետութիւն նորա ըստ օրինակի առաջնոց Կաթողիկոսացն՝ հանելով 'ի Պրանէ Օսմանեան զԲրուվարտակ (Ֆէրման [65])։ Այլ զի դժուարին, մանաւանդ թէ անհնարին իսկ էր նոցա առնել զայս ինքնին, առաքեցին նախ 'ի Տփխիս առ Կուսակալն նորոգ եկեալ Բարսեղ Լազէն զԱլուսա ոմն Էշլիմիլզեանց՝ խնդրելով տալ զպաշպորդ վասն երկուց անձանցն յիշելոց 'ի գնալ 'ի Կոստանդնուպոլիս։ Կուսակալն չկամելով առնել յանձնէ ինչ, ծանոյց Լախարարի Հոգևոր գործոց Պ· Բլուդովի· իմանալ զհաճութիւն Կայսերն առ այս [66]։

" Զհանգամանաց հրաժարման Եփրեմի 'ի կաթողիկոսութենէ, որպէս և զընտրութենէ իւրմէ և զօծմանէն՝ նորընտիր կաթողիկոսն Յովհաննէս ծանոյց Հայ հասարակութեան առանձին առանձին կոնդակաւք։ Զօրինակ կոնդակին, գրելոյ առ Առաջնորդն Բեսսարաբիոյ Արհին Ներսէս գտցես 'ի վախճան մատենիս (Ի)։ Ծանօթ. Զ· Մ·

" Զօրինակ կոնդակին, գրելոյ 'ի դիմաց կաթողիկոսին Եփրեմայ առ հասարակութիւնն Հայոց Կոստանդնուպոլսի, գտցես 'ի վախճան մատենիս (ԻԱ)։ Ծանօթ. Զ· Մ·

" Որպէս տեսանեմք 'ի գրութենէ Նախարարին Բլուդովի՝ 'ի 28 Դեկտեմբերի 1831 ամի, առ կաթողիկոսն Յովհաննէս, Թագաւոր Կայսրն առ այս չէ՛ ցուցեալ զհաճութիւն։ Այսպիսի են տեսանք Բլուդովի· „'Ի վերայ այսր ամենայնի ծանեալ ես 'ի գրութենէ Բարձրասահմանութեան Ձերոյ 'ի 20 էն Նոյեմբերի, թէ դուք կամիք առաքել 'ի Կոստանդնուպոլիս և 'ի Պարսկաստան զմի մի տրքեպիսկոպոս և վարդապետս վասն յայտնելոյ անդ բնակեալ Հայոց և պատրիարքին Կոստանդնուպոլսոյ զօծումն Բարձրասահմանութեան Ձերոյ 'ի կաթողիկոսութիւն ամենայն Հայոց· Հասուցանելով զայս

Ա՛յսմ այսպէս եղելոյ, յետ ամսօրեայ ժամանակի դեգերելոյ Պալատին 'ի Ցիխիս՝ ձեռս 'ի գլուխ եկեալ դարձ ալար յԷջմիածին։

Օգնի չորից ամաց, այն է՝ յամին 1835 'ի Յուլիսի 16, վախճանեցաւ հրաժարեալն 'ի Կաթողիկոսութենէ

'ի լուր կայսերն և Թագաւորի, ես առաջի արարի Նորին կայսերական Մեծութեան՝ թէ ըստ գատողութեան իմոյ աւելորդ համարիմ զառաքումն 'ի Պարսկաստան և 'ի Ցէրութիւնն Օսմանցւոց սրաշակի դեսպանութիւն 'ի հոգևորականաց։ Անհնար է այժմ խոկութեամբ վերին ըստ նախկին օրինաց. քանզի յառաջագոյն վասն հաստատութեան նորոգ Պատրիարքաց խնդրէին Ֆէրմանս 'ի Ցէրութենէն Պարսից և Օսմանցւոց. իսկ յայսմհետէ ըստ Բարձրագոյն կայսերական հրամանի, զոր յայտնեալ եմ՝ ես կենդանին Ալարշաւ Գրաֆ Երևանու Պասկևիչին 'ի վերջն անցեալ 1830 ամի, թէ ստացին (Ֆէրմանս) միմնորդութեամբ արքունի գործակատարաց մերոց 'ի Թէհրան և 'ի Կոստանդնուպոլիս՝ մի միայն հրաման վասն անդ բնակեալ Հայոց յաղագս թոյլատրելոյ նոցա յանձնայն մեծամեծ հոգևորական պէտս իւրեանց դիմել յԱթոռն Էջմիածնի։ Բայց հաստատումն Պատրիարքաց պատկանի միայն տէրութեան Ռուսաց, յորոյ 'ի սահմանս գտանի և Աթոռն Կաթողիկոսութեան Հայոց. իսկ որ ինչ վերաբերի առ կոնդակս Բարձրատիճանութեան Ձերոյ և Պատրիարքին Եփրեմայ և առ այլ թղթագրութիւնս, այնքիկ հեշտեաւ և առանց ինչ ծախուց կարեն հասանել 'ի ձեռն արքունի գործակատարաց մերոց. որոց ըստ Բարձրագոյն կայսերական կամաց յանձնեալ են ամենայն գործողութիւնք վասն կարգելոյ զանարգել հաղորդութիւնս Պարսից և Օսմանեան Հայոց ընդ Աթոռոյն Էջմիածնի. ընդ այս առաջարկութիւն իմ բարեհաճեցաւ և Նորին կայսերական Մեծութիւնն։

„Ցայտնելով զայս Բարձրատիճանութեան Ձերում, պարտ անձին համարիմ խոնարհաբար խնդրել 'ի Ձէնջ, ողորմած Տէր, եթէ յիշեալ հոգևորականք դեռ ևս չեն գնացեալ, թողուլ զառաքումն նոցա. իսկ զիոնգակս Ձեր և զայլ գրութիւնս 'ի Կոստանդնուպոլիս և 'ի Պարսկաստան առաքել յանուն գործակատարաց մերոց, վասն հաստատեալոյ իրաքանչիւրում ըստ պատկանելոյն. բայց միայն առնել զայս որպէս այժմ, նոյն և առ ապագայն, 'ի ձեռն գրութեան Ձերոյ ընդ գլխաւոր Կառավարչին կողմանցդ՝ Ղեներալ Ադիւտանտ Բարոն Ռոզէնին“։

Պատճէն այն գրութեան Բլուգովի, յորմէ ընդօրինակեցան բանքս, գրեալ էր ձեռամբ Արհւոյն Ներսէսի։ Ծանոթ. Զ. Մ.

Հայրապետն Երիցեմ։ Յվերջին ժամն Հայրապետիս և զհանդէս թաղման նորա՝ այսպէս նկարագրէ Կաթողիկոսն Յովհաննէս 'ի կոնդակի իւրում առ Ս. Ի՞ճակաւոր արքեպիսկոպոսն Ռեստարաբիոյ և 'Նոր-'Նախիջևանայ 'Ներսէս 'ի 27էն Յուլիսի նոյն 1835 ամի համարաւ 428։

„Խորին զգացմամբ բարեհամբոյր մահուան Ծերունազարդ Սրբազանեալ Հայրապետին մերոյ Երիցեմի, զրէ Կաթողիկոսն Յովհաննէս, պարտաւորիմք ծանուցանել Ձերում Բարձու Սրբազնութեան, թէ նա երանեալ Հայրապետն լցուցեալ զչափ սահմանի կենաց իւրոց՝ մինչ եհաս 'ի վերջին կէտ չուելոյ յաստեացս յերկնային գաւառ, սկսաւ օրհնել զմեծ կայսերութիւն ամենայն Ռուսաց, և զՁեզ իսկ յանուանէ, և զեկեղեցիս և զազգ Հայոց, և զմեզ ընդ մերում միաբանութեան, և այնպէս զմայրելի ինն եղանակաւ իբրև 'ի քուն քաղցրութեան աւանդեաց զհոգի իւր՝ իւրումն Ամարչի 'ի 16 ամսոյս ընդ երեկս։ Մ'ևք կարգաւորեալ մեծահանդէս փառաւորութեամբ զյուղարկաւորութիւն նորա և զթաղումն՝ տարեալ հանգուցաք զնա 'ի գերեզմանի 'ի 18 երորդն նշանակեալ (Յուլիսի) ամսոյս, որում ներկայ գտան պայծառափայլ Իշխան Հայաստանի Անիաղ Ռեհրուդովն և բազմութիւնք աստիճանաւորաց և քաղաքացեացն Երևանայ։ Ա՛ռ որ մնայ մեզ այժմ օրհնութեամբ բարերալ կամաց Ստեղծողին զնա՝ ասել, պատուական Դուլուխ Ձեր ողջ եղեցի, և յաւելցէ Ձեզ Տէր կեանս բարերջանիկս, համանգամայն մնայ մեզ և Ձեզ աղաչել զերեսս մարդասիրութեան նորա, որպէս զի նա ինքն ըստ մեծի ողորմութեան իւրում լուսաւորեսցէ զհոգի սրբազանեալ Հայրապետին Երիցեմի լուսով երեսաց իւրոց, արասցէ զնա դասակից, պսակակից և աթոռակից երանելեացն զնգից՝

սրբազան Առաքելոց և Հայրապետացն սրբոց, արժանացուսցէ զնա տեսութեան մեծ վայելչութեան փառաց սուրբ Աստուածութեան իւրոյ, և տացէ նմա զանեզրական հանգիստն յաւիտենից, և զՀեզ և զմեզ և զամենայն զբանաւոր հօտ սրբոյ Լուսաւորչին միխիթարեսցէ իւրով սրբով“ :

ԿՈՆԴԱԿՔ, ՀՐՈՎԱՐՏԱԿՔ,

ԵՒ ԸՅԼԵՆ։

Ա.

ԿՈՆԴԱԿ

Սիմէոն Կաթողիկոսի առ Պղատոն արքեպիսկոպոսն Մոսկովայ։

Յիսուսի Քրիստոսի ծառայ Սիմէոն Կաթողիկոս Մեծի Սուրբ Էջմիածնի, Քրիստոսի և լուսակառոյց Աթոռոյ 'ի տաճարին Էջմիածնի, Քրիստոսական սուրբ և միահամբոյր խաղաղութեամբ, ճշմարիտ սիրով ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ, և մերովն եղբայրական և ջերմեռանդ բարեկամութեամբ յայտ առնեմ ձեզ, սրբազոյն և բարեծնունդ եղբօրդ մերում առաքինագոյն և ողորմածագոյն արքեպիսկոպոսիդ և հովուապետիդ արքայական մեծապատիւ քաղաքին Մոսկովայ և շրջակայ հօտից Քրիստոսի ձեզ յանձնելոց, Պղատոնի արժանաւորիդ բարի Հովուին իշխանութեան։ Պարտիմք մեք ըստ բանի Քրիստոսի Փրկչին մերոյ՝ սիրել զմիմեանս, որպէս և նա ինքն սիրեաց զմեզ՝ տուեալ զանձն իւր 'ի փրկութիւն մեր; վասն որոյ և եղաք մեք աշակերտք միայնոյ և նոյն իսկ հրկնաւոր վարդապետին՝ կապեալք միով նովին հոգւով և արբեալք քաղցրագոյն կաթամբ վարդապետութեան նորա, բաց յայսմանէ գոլով մեք ընդ սուրբ ըծափ կենսատուին մերոյ, ոչ ինչ զմերձաւորս՝ այլ զհեռաւորս հարկիմք սիրել այնու ճշմարիտ սիրով, որով հրամայէ մեզ սիրել նոցն քաղցրագոյն լուծն. վասն զի զի՞նչ արդեօք կարէ մեզ զայն արգելել, ոչ հեռաւորութիւն տեղւոյ, ոչ զանազանութիւն ազգի կամ բար-

բառոյ, ոչ ընթացք ժամանակի, ոչ տարածութիւն գիտոց
ըստ գրոց և ոչ այլ ինչ նման սոցին պատահմունք· զի
սէրն է պարգև Աստուծոյ· վասն որոյ և հարկաւորէ զմերս
եղբայրութիւն համբուրիլ զձեզ սուրբ սիրով, ընդ նմին
և որոտաձայնն համբաւ զառաքինութեանց ձերոց հռչակել
զբարեպաշտութիւն ձեր· յաւէտ քան զայս հոգևոր սիրին
մեր Յովսէփ արքեպիսկոպոսն ամենայն Հայոց բնակելոց
'ի սիրելիսն ձեր Հայաստանս, ապրի առնել մեզ [illegible]
բարեարարութեանց ձերոց ոտն մեզ, որպէս թէ գուք զհան-
ճայն ազգն մեր ընդարձակ սիրով արժանիս առնէք հայ-
բարեանն ինամոց ձերոց և յայդ ինամս պահպանէք· նոյն-
պէս և զձեզմարիս Ջերմեռանդութենէ ձերմէ և զսիրոյ,
զոր ունիք առ լուսակատոյց Աթոռն որդոյ Էջմիածնի
և առ մեզ առ նուաստագոյնս, այսու գրով արտաս-
ուրեալք պարտիմք և մեք զգանկալի եղբայրդ մեր մտեր-
մաբար սիրել· և թէպէտ մեք այժմ ոչ ամենայն և ոչ
զգրաւորն ընդ ձեզ չունիմք ծանօթութիւն· սակայն
զարմանալի և քաղցրագոյն համբաւ առաքինութեանց
ձերոց ձգէ զմեզ առ սէր ձեր· վասն այսարիկ առատաբար
սիրոյ ինդրեմք եղբայրութեան ձեր յայտնել մեզ զայն
սէր՝ որ արտաքին նշանաւ և բարեգործութեամբ մեզ զնոյն
Ջերմեռանդութիւն, այն է սիրելագոյնդ գծագրութեամբ
գրոյ ձերոյ բարեհաճեալ առ մեզ։ Օ, ազգ մեր 'ի միասին
ընդ արքեպիսկոպոսին Յովսէփոյ ապրանքս պակաս
պանել յաղարմութեան և 'ի Հայրական հովանաւորու-
թեան, զՋերմեռանդութիւն և զսէր ձեր առ [illegible]
յիսկայաձգէք առաքիչն Գ մեր Ջ [illegible] Յով-
սէփայ գուցէք։ Արդարեն կատարեալ [illegible] ձեզ պատկանին, զարգանալ օգնականութեան խրոխտ արդ-
ուոյ որոյ վասն զձեզ զարգացեալ Հայրդ, զհոգեմտաս

թեամբ յարգել պատուաւորիմք. տաճար սրբոյն Յովսիփանոսի պատրաստուրի աղօթել առ Աստուած զառողջութենէ և զբարեկենդանութենէ Աստուածապատ գլխոյ տիրելագոյն մերոյ և գորովագութ հովանաւորի Գրիգորի Կայսերուհւոյ ամենազորմած Խաղուհւոյ Եկատերինեայ Ալեքսէեվնային, նոյնպէս և ամենասիրելի որդւոյ նորա, որոյ Խաչի օգնականութեամբն ծաղկազարդելոյն, անդրին Դաւանգի Պաւէլ Պետրովիչի. և բարեհաճեալ զուգակցի նորա բարեպաշտ Խաղուհւոյն և մեծ Իշխանուհւոյ Մարիայ Գէօրգիէվնային, այլև բարեպաշտ և մեծ Իշխան Աղեքսանդր Պաւլովիչին և ամենայն զօրաց և զօրականաց նորա, զԱստուածահաստատ Խաղաւորութենէն, զաթոռոյ և զԱրքունական Դաւանգութենէն: Խաղաւորն Խաղաւորաց Քրիստոս պահեսցէ զնա 'ի բազում ամս ընդ սիրելագոյն որդւոյ նորայ և ժառանգի փառաւոր յաղթութեր 'ի վերայ ամենայն թշնամեաց նոցա 'ի փառս և 'ի պատիւ անուան սրբոյ խաչի Փրկչին մերոյ, 'ի հաստատութիւն սրբոյ եկեղեցւոյ նորա և 'ի փառս ամենայն հաւատացելոց 'ի նա և մանաւանդ մեր հարստահարելոցս: Այսու աղաչաւ խնդրեմ 'ի բարեծնունդ սիրոյ ձիրսն, զի Աստուածապատակ և մեծ Պետրուհին ևս առատութեամբ և ողորմութեամբ առ մեզ, առ սուրբ Աթոռս և համայն եկեղեցիս մեր զերազանց ողորմութեամբ, բարեհաճութեամբ և յուսադրանօք կոչելով 'ի բարձրագոյնն իւր հովանաւորութիւն, և ընկալեալ երբև զեւրս բարեհաճեցի պարգեւել զողորմածագոյն իւր Խրովարտակ. զնոյն և դուք, բարեծնունդ եղբայր մեր, մի արհամարհեսջիք գործել, իսկ զմեզ զանկար և ցաւօք վհատեցեալ եղբայր ձեր մի տեսջիք մոռացման, այլ երբեմն ախորժագոյն դրեալ ձեռամբ մի անտես առնէք վերադարձել զմեզ

իբրև զայնպիսիս՝ որ 'ի միջի մարդակերպ գայլոց պատառողաց գտանին յանդգնալ ծաղրածութեան և յայլ բազում նեղութիւնս։ Ողջ լերուք 'ի Տէր։ Գրեցաւ 'ի մարդնկութեան փրկչին մերոյ 'ի 1778 ամի, 'ի 14 Մայիսի, յԱստուածաշէն Էթոռն ամենայն Հայոց 'ի սահմանին Էջմիածնի։

Ի նշան ուղղութեան սէրոյ ու սիրելագոյն եղբայրն իմ Խաչատուր Յարութիւնոս

Սիմեոն Կաթողիկոս։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Պղատոն արքեպիսկոպոսին Մոսկովու ու Սիմեոն Կաթողիկոս։

ԽՈՐՀՐԴ՝ Պղատոն, ողորմութեամբն Աստուծոյ արքեպիսկոպոս արքայանիստ մայրաքաղաքին Մոսկովու և Կալուգայի, Անդամ Արբազնական և Կառավարչական Ռուսաստանեայց Միւնհոդոսի, դերապատիւ Տեառն Սիմէոնի գլխաւոր Հովուապետի և Հօր ամենայն Հայոց, Շնորհ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մասնակցութիւն Հոգւոյն սրբոյ և բարեդրութիւն ներքին և արտաքին մարդոյն աղօթիւք ցանկայ։

Յարգելի գրութիւն Սրբութեան Ձերոյ, յուղարկեալն առ իս ընդ արժանապատիւ արքեպիսկոպոսին Յովսէփայ, ստացայ, և գոհացայ զՀովուապետէն Քրիստոսէ, որ քատ ներդգրածութեան շնորհաց իւրոց անօրինեաց առ իս սիրով զօծութիւն ձեր։ Այս է գլխաւոր աւետարանական հրաման, զի սիրեսցուք զմիմեանս, և եթէ ամենայն քրիստոնեայք հարկին այսու սուրբ յօրիս միաւորիլ, քանի՞ առաւել այնոքիկ, որոց Գլուխն եկեղեցւոյ Քրիստոս

յանձնեաց հովուել զիւր հօտ, պարտին այսու առաքի-
նութեամբ դարձուցեալ լինիլ, զի և այլոց ցուցցին զար-
ժանաւորն հետևման օրինակ։ Այսու աղագաւ ըստ զօ-
րութեան նոյն հրամանի Փրկչին մերոյ զգայակից լինելով
հոգւոյ ձեր բարեյօժարութեան, և զբացակայս իբրև զներ-
կայացեալս քրիստոնէականն ընդունիմք սիրով և զեղբայ-
րականն 'ի Քրիստոս տամ զարբազնութեան ձերում
զհամբոյր։ Այդ բարեսիրտն իմ յօժարամտութիւն առ
անձն ձեր հաստատեսցէ յարգելագոյն Յովսէփ արքեպիս-
կոպոսն, զոր ըստ բազմիցս ընդ նմա տեսութեան և խօ-
սակցութեան գտի համեմատ յուսոյ ձեր 'ի նա, և թէ
զյանձնեալն նմա 'ի սրբազնութենէ ձերմէ զպաշտօն ունի
կատարել 'ի գովութիւն և 'ի պատիւ համայն միաբանու-
թեան ձեր։ ընկալարուք, արժանայարդ Տէր, զայդ երաշ-
խաւորութիւն իմ իբրև այնպիսի անձին, որ հարկ հա-
մարի ինքեան ցանկալ զբարի և լինել բարեսիրտ առ
այնոսիկ ևս՝ ընդ որս չէք ինչ հասարակաց. բաց 'ի մարդ-
կութենէ։ ուրեմն որքան ևս առաւել ընդ անձն ձեր՝
պատուական հովուութեամբ եկեղեցւոյ Քրիստոսի, և առ
աղգ Հայոց՝ որ բաց 'ի պատուոյ քրիստոնէականութեան,
փառաւք քաջութեան, ևս և բարի կառավարութեան 'ի
նախկին ժամանակս բարգաւաճեալն էր։ վասն զի չէ ինձ
անյայտ, թէ քանի հռչակեալք են 'ի պատմութեան անուա-
նք Հայկայ, Տիգրանայ, Արշակայ և Տրդատայ, յորոց
հիմնադիր եղև և փառաւորեցաւ աշխարհ Հայաստանի։
Որքան առաւել մտախորհ լինիմ զայնոցիկ ծաղկեալ
ժամանակացն Հայաստանի, այնքան առաւել զայժմեան
ծառայեցուցեալն 'ի բարբարոսաց դրութենէ նորա կա-
րեկցութեամբ հարուածիմ, իրաւունք Տեառն անքնին
են, և ամենայն գործք նորա արդարք։ բայց զի ընդ ար-

դարութեան և բարութիւն նորա անբաժան է, ուրեմն ես 'ի սրտէ և իբրև քրիստոնեայ ցանկամ և աղօթեմ առ բարեգթածն Աստուած, զի թեթևացուսցէ և 'ի սպառ եղծցէ զծանրացեալ 'ի վերայ ձեր լուծ բռնութեան, և ազգին Հայոց դարձուսցէ զնախկին փառս իւր· զվշտացեալն քրիստոնէականութիւն ուրախացուսցէ ազատութեամբ: Իսկ ցայնժամ մինչ բարեհաճեսցի այդ բարեբախտիկն հանդիպել ձեզ վիճակ, զգեցարուք զզէն խոհեմամիտ համբերութեան և Ջերմեռանդ առ Աստուած աղօթից ընդդէմ զօրաւորն վասն ձեր փոյձութեան թշնամւոյն· և 'ի հովուական անձին ձեր ցուցէք և պլոց կպատկեր բարեհոգութեան: 'Ի վերայ այսր ամենայնի յայտնելով Արքազնութեան Ձերում զՋերմեռանդ յարգանս և զանկութիւն, զի տրտմութիւն և արտասուք ձեր ժամանեսցին յականջս Տիառն Սաբաւովթի, և նա զօրացուսցէ զառողջութիւն ձեր 'ի բարի հոգսարարձումն աւետարանական բևեռին: Խարեկամական և եղբայրական 'ի Վրիստոս սիրով մնամ Արքազնութեան Ձեր բարեացակամ և Ջերմեռանդագոյն եղբայր և ծառայ

Պլատոն արքեպիսկոպոս Մոսկուայ:

'Ի 10 Ապրիլի 1779 ամի 'ի մայրաքաղաքն Մոսկով:

Բ.

ՀՐՈՎԱՐՏԱԿ

Եղեալ Բ. Կայսերական Ռուսաց առ Պարիզիս Սիմեոն։

(Զկնի կայսերական տիպոսի)

ԳԻՏՈՒԹԻՒՆ Սիմէոն Պատրիարքի, և այլ ամենայն պատուելի Հարիւրապետաց, Ցանուտէրանց և համայն պատուելի Հայկազանց՝ մերս Կայսերական ողորմութիւն և շնորհք։

Յայտ առնեմք սովին ողորմութեան մեր թղթով, զի Սիմէոն Պատրիարք ամենայն Հայոց՝ որ բնակեալ է 'ի մեծն Հայաստան 'ի Ալաբշապատ քաղաքի, առաքեալ էր յատկապար գրով իւրով վարդապետ զոմն Դաւիթ անուն՝ յարքայանիստ քաղաքն Մոսկով, և խոնարհութեամբ մեծաւ խնդրեալ էր 'ի մէնջ՝ զի 'ի մերմէ Խարճրագոյն Կայսերութենէ շնորհեսցուք նմա զթուղթ՝ առ 'ի պահել զայն ՅԱՐԹՈՒ անդր 'ի գանձարանի տաճարին 'ի յիշատակ յաւիտենական ողորմութեան և շնորհաց մերոց։ Արդ՝ որպէս յառաջ քան զայս Խարճրագոյն նախնիքն մեր և յաւիտենական փառացն արժանաւորք՝ մեծն Պետրոս Կայսր, և Կայսերուհի Եկատարինէ Ալեքսիոփնայն յօժարեցան պահել զպատուելի ազգն Հայոց վասն Արիստոնէութեան առանձին շնորհօք Կայսերական ողորմութեան իւրեանց (զոր ցուցանեն և թուղթքն առաքեցեալք 'ի նոցունց յամի Տեառն 1724 և 1726, առ Պատրիարքն այնր ժամանակաց՝ Լայպի և Նիկիտէս, և առ Հարիւրապետս և առ Ցանուտեարս և առ ամենայն պատուելի Հայկազունս)։ Նոյնպէս և մեք ընթացեալ զհետ

յիշատակեալ Խարձրագոյն նախնեաց մերոց՝ հաւասա-
բապէս շնորհեցաք որպէս զեպրապատիւ Միմէոն հաստա-
տուն Պատրիարքին, այնպէս և յաջորդելոցն յետ նորա
յաթոռ Պատրիարքութեան, և հարիւրապետաց և տա-
նուտէրանց և ամենայն պատուելի ՝այկազանց՝ պահել
ընդ խնամովք շնորհաց մերոյս Պայսերական ողորմու-
թեան· որպէս զի և ազգ ՝այկազանք, բնակեալք յերկրի
Ռուսաց Պայսերութեան մերոյ՝ կալցին զզաւանութիւն
իւրեանց հոգևորական կանոնօք և եկեղեցական կարգօք
ընդ կարգաւորութեան նորա (այսինքն Պատրիարքի)։
Զ՝ասն որոյ յորժամ 'ի խնդրել սոցա՝ առաքեսջիք վասն
նոցա արքեպիսկոպոս ՝այոց և կամ զայլ ոք 'ի հոգևո-
րական պաշտօնէից վկայական գրով Պատրիարքին· զի
առանց այնր վկայականի ոչ լինին ընկալեալ 'ի Պայսե-
բական տէրութեան մերում։ Ուստի և 'ի մէնջ հրաման
եղև առ արտաքին քաղաքապետսն մեր, և տուաք հրո-
վարտակ։ Այլև յուսացուցանեմք ամենայնիւ զյիշեալ
Միմէոն Պատրիարքն և զպատուելի հարիւրապետսն և
զտանուտէրսն և զամենայն ՝այկազունսն և յաւէտ զորս
են ընդ հովանեաւ մեր Ռուսաց Պայսերութեան՝ պահել
զնոսա 'ի ներքոյ մեր Խարձրագոյն Պայսերական խնամոց
և հովանաւորութեան։ Ու ընդ նմին յայտնեմք, զի Եշխարք
Արբոյ Կարապետին և Մ՝կրտչին Քրիստոսի, սրբոյ Կուսին
՝Ռիփսիմեայ, և մեծի նահատակի սրբոյն Գ՝էորգեայ, և
մնան 'Լեյեան տապանին՝ որք առաքեալն էին առ մեզ
'ի Միմէոն Պատրիարքէ ընդ ձեռն Դաւթի վարդապետի,
առանձին հաճութեամբ մերով ընկալեալ եղև· և զնա
ինքն զ՝Դաւիթ վարդապետն դարձուցաք ասսի յաթոռ
Պատրիարքութեանդ սովին Պայսերական գրով մերով·
յուսացեալ թէ կարող է նա յայտնել ամենայն պա-

տուաւոր Հայկազանց զմեր առ նոսա Կայսերական ողորմութիւն և շնորհ. որով մնամք և մնք։

Տուաւ այս թուղթ յարքայանիստ քաղաքի մերում՝ 'ի Ս. Պ. Լուրդ կնքեալ մերով Խաղաւորական մեծ կնքով 'ի Յունիսի 30, 1768 ամի։

Գ.

ՀՐՈՎԱՐՏԱԿ

Պղտոյ Ա. կայսեր Ռուսաց առ Պատրիարքն Ղուկաս։

(Զկնի Կայսերական ընդարձակ տիտղոսի)

ԳԻՐՈՒՊԱՏԻՒ Պատրիարքիդ Ղուկասու, և ամենայն պատուելի Եկեղեցւոյ, Հարիւրապետաց, և Կառավարչաց և ամենայն պատուելի ազգի Հայոց՝ մերս Կայսերական ողորմութիւն և շնորհաւորութիւն։

Ցայսու մերով Կայսերական ողորմութեան Հրովարտակաւ յայտ առնեմք, զի գերապատիւ Պատրիարքն ազգի Հայոց Ղուկաս բնակիալն 'ի մեծ Հայաստան 'ի Վաղարշապատ քաղաքի, ընդ արհիեպիսկոպոսին Յովսէփայ կարգեցելոյ 'ի նմանէ 'ի Հովուապետութիւն 'ի մերում Կայսրութեան, առ մեզ առաքեալ նամակաւն շնորհաւորելով զմեզ զբազմիլ մեր 'ի մեր Հայրենի Գահ Կայսրութեան ամենայն Ռուսաց՝ խնդրէ յորատեալ առնել ամենողորմածօրէն զԱրքայական հովանաւորութիւն մեր առ Հայկազունս բնակեալս 'ի ներքոյ մերոյս Կայսերական գաւազանի, և շնորհել ինքեան զԱրքայական Կայսերա-

կան ՝ի ովաբաակ մեր. որպէս զի պահպանեցի այն յայնմիկ 'ի գահաւոր տաճար իւրում յԷջմիածին 'ի յիշատակ յաւիտենական մերս ողորմութեան և բարեհաճութեան։ Նոյնպէս և վասն ՝ի այոց բնակելոց ընդ Խարբերդոյն իշխանութեամբ մերով 'ի մերում Պայսերութեան (ինդրեմ)՝ զի ըստ հոգևորական վիճակի կացցեն մնասցեն նոքա միշտ (որպէս կացեալ են ցայժմ) ընդ վերահասութեամբ իւրով. և զի բաց 'ի վերոյիշեալ արհիեպիսկոպոսին Յովսէփայ՝ որ է կարգեալ 'ի Պայսերութեան մերում կառավարիչ հոգևորական 'ի վերայ ՝ի այոց բնակեցելոց առ մեզ, կարգումն այլոյ եպիսկոպոսի. ևս զկնի նորա 'ի վերայ նոցա՝ կախեսցի զընտրութենէ իւրմէ և կամ զկնի եղեալ Պատրիարքաց ըստ պատկանաւոր վկայութեան իւրոյ և իւրոց յաջորդաց։ Երդ՝ որպէս նախ քան զայս Խարբերդոյն նախնիքն մեր երջանիկք և յաւիտենական փառաց և յիշատակաց արժանաւորք՝ մեծն Պետրոս Թադաւոր և Ինքնակալ, Եկատարինէ Ե. Թագուհի և Պայսերուհի, և ամենասիրելի ծնողն մեր Թագուհի և Պայսերուհի Եկատարինէ Ալեքսիէվնայն, պապաւելի ազգն ՝ի այոց՝ յազգս քրիստոնէութեան բարեհաճեցան պահպանել յաւիտեան Պայսերական խնամով (որպէս վկային հրովարտակքն առաքեալք 'ի 1724, 'ի 1726 և 'ի 1768 առ Պատրիարքն եղեալս յայնոսիկ ժամանակս՝ Դասպի, Ներսէս, և Սիմէոն, և առ ՝ի արքեպիսկոպոս և առ Կառավարիչս, և առ բոլոր ազգն ՝ի այոց). նոյնպէս և մեք հետևելով հաճութեանց յիշատակեցեալ Վ. Հայրապետաց նախնեաց մերոց, հաճեցաք ըստ օրինակի նոցա, որպէս զգերապատիւ Պատրիարքն Պ. ուկաս, այնպէս զապագայ փոխանորդս Պատրիարքական աթոռոյ նորին, նաև զՊ. Էլիքան, զ՝արքեպիսկոպոսն և զԿառավարիչն և զամենայն զպատուելի

ազգն Հայոց մերովն Պայսերական ողորմութեամբ և բարեյօժարութեամբ պահպանել։ Եւ ոչ պակաս քան զնոսին բարեհաճիմք՝ զի Հայկազունք բնակեալք 'ի Ռուսաց Պայսերութեան մերում՝ եղիցին ըստ հոգևորական պաշտամանց և արարողութեանց ընդ իշխանութեամբ նորին յիշեալ Պատրիարքի և յաջորդաց նորուն Պատրիարքական Էթոռոյ, որպէս եղեալ են յառաջ քան զայս։ Ուստի և հաճիմք ամենողորմածարար, զի և յապայն 'ի Պոյսերութեան մերում նոյն արքեպիսկոպոսն և կամ այլ հոգևորական ատենդանաւոր անձինք ընկալեալ լիցին՝ եթէ առաքեալ իցեն 'ի վերոյ յիշեալ գերապատիւ Պատրիարքէն կամ 'ի յաջորդաց նորին, և ունիցին 'ի նոցունց վկայականս, և առանց նոցին մի՛ իշխեսցի մատանել 'ի Պայսերութիւն մեր։ Այսոր և ըստ կարգաւորութեան մերում՝ տուեալ են հրամայեալք կողմնակալաց մերոց եղելոց 'ի սահմանսն։ Սակայն՝ մեք զիրաշտակեալ Պատրիարքն Լուկաս, և զպատուելի Մէլիքան և զՀարութիւնտան և զԱռաւարիչն և զհամայն Հայկազունսն՝ մանաւանդ զգտեալսն 'ի Պայսերութեան մերում 'ի Ռուսաստան՝ յուսացուցանեմք, թէ մերս Բարձրագոյն Պայսերական ողորմութիւն և հովանաւորութիւն ունի՝ միշտ տեսել 'ի վերոյ նոցա անխոտան։

Տուաւ այս թուղթ յարքայանիստ քաղաքի մերում՝ 'ի Ս. Պ. Ռուրգ կնքեալ մերով թագաւորական մեծ կնքով 'ի Փետրուարի աւուրն, յամին 1798։

Դ.

ՀՐՈՎԱՐՏԱԿ

Պետրոսի Ա· կայսրէ Ռուսաց առ Պատրիարքն Յովսէփ։

(Զկնի կայսերական ընդարձակ տիտղոսի)

ԳԻՏՈՒԹԵԱՆ Հայոց Յովսէփայ Պատրիարքին, և այլոց ամենից պատուաւոր Մէլիքաց, Իւզբաշիից և Կառավարչաց և բոլոր պատուելեաց Ազգին Հայոց 'ի մերս Կայսերական Մեծութեան ողորմութիւն և շնորհաւորութիւն։

Այսու Մերով Կայսերական Հրովարտակաւ բացայայտեմք, որ որպէս հրջանիկ և յաւիտենական փառաց սրժանի յիշման, Խարձրագոյն Նախնիքն մեր նոցին Մեծութիւնք Ինքնակալ Կայսր և Թագաւոր Մեծն Պետրոս և Թագուհի և Կայսերուհի Եկատարինա Առաջներորդն, և սիրելագոյն ծնօղն Մեր Թագուհի և Կայսերուհի Եկատարինա Էլիքսիոմնայն, զպատուելի Ազգն Հայոց՝ յաղագս Քրիստոնէութեան, յատկապէս Կայսերական ողորմութեամբ պահպանել բարեհաճեցան, որպէս և 'ի նոցունց Մեծութեանց 'ի 1724 և 'ի 1726 և 'ի 1768 թուոջ, առ այնս ժամանակի հղեալ Էսայի՝ Ներսէս և Միմէոն Պատրիարքացն Հայոց, և Իւզբաշիից և Կառավարչաց և ամենայն Պատուաւորաց Ազգին Հայոց առաքեցեալ Հրովարտակքն ցուցանեն։ 'Ի Մէնջ ևս, անցեալ թուոջ 1798 ին Մերով Կայսերական Հրովարտակաւ, տեղոյն Պատրիարքին Լուկասու, նոյնն վերահաստատեցաւ· և Խարձրագոյն իշխանութեամբ Մերով ամենողորմածաբար բարեհաճեցաք, որ 'ի Մերս Կայսերութեան

բնակեալ Հայոց ենթ Հոգեւոր կացութեանց լեալքն՝ լե-
նիցին ներքոյ նորին իշխանութեան. և կարգիչ 'ի նմանէ՝
ներ կայսերութեան Մերում արքեպիսկոպոս Հայոց, վասն
կառավարութեան անձանց Հոգեւորականաց Հայոց բնա-
կեցելոց 'ի Մերս կայսերութեան։ Եւ ընդ այսու կերպիւ
նախ և յապայն՝ առ Նոսա կարգեցեալ արքեպիսկոպոսք,
լինիլ ընտրեցեալ 'ի նորին Պատրիարքէ, և յաջորդաց
նորին Պատրիարքաց. որք և ունելոց են ըստ պարտաւո-
րութեան 'ի նմանէ, կամ յաջորդաց նորին զհաւատի
վկայականս։ Եւ զի որպէս նոյն Դերապատիւ Պատրի-
արքն Ղուկաս, որ մինչև ցայժմ կենդանին էր և փո-
խեցաւ յաշխարհէ, և 'ի տեղի նորին ընտրեցաւ յատուկ
բարեհաճութեամբ Մերով՝ ընդ համահաճութեամբ բո-
լոր ազգին Հայոց՝ առ 'ի Պատրիարքութիւն գերապա-
տուելին Յովսէփ՝ լեալն յառաջ քան զայս արքեպիս-
կոպոս Հայոց, որ նոյնով աստիճանաւ 'ի Մերում կայ-
սերութեան բնակեալ հպատակացն Մերոց Հոգեւորակա-
նացն Հայոց կառավարեալ բազում կերպիւ պաշտօնս և
արդիւնաւորութիւնս հցոյց իսկական հաւատարմութեամբ
և հարազատութեամբ իւրով Մերոյս կայսերական Դա-
հոյի։ Վասն որոյ և Մեք որքան ըստ օրինակի վերոյ
յիշեցեալ Խարթաղունից նախնեաց Մերոց այնքան և
ևս առաւել բացայայտեմք զՄերս յատկագոյն բարեհա-
ճութիւն առ այնքան ջերմեռանդ նորին աշխատակցու-
թիւն, յուսալով յամենայն ժամանակի պահպանիլ՝
որպէս 'ի նմանէ Յովսէփայ Պատրիարքէ, այսպէս և
յապագայն 'ի տեղի իւր յաջորդողաց Հայոց Պատրիար-
քութեան Էթմոռոյ. սոյնպէս և 'ի Մելքեայ և Իւզբաշեայ
և 'ի Կառավարչաց և յամենից պատուելի Հայոց ազգին։
Ուստի և շնորհեցաք յատուկ Մերս կայսերական ողոր-

մութիւն և բարեհաճութիւն խրոյ Պատրիարքին Յովսէփայ. և յաջորդաց նորին Պատրիարքական Աթոռոյ և հետևեցելոցն 'ի Մերս Կայսերութեան բնակեալ Հայոց ազգին Մեզ հպատակելոց՝ ունիլ զհոգևորական կացութիւն և զեկեղեցական կարգաւորութիւն կախեալ 'ի նոյնոյ նորին յիշեանութենէ ըստ առաջնոյն։ Եւ յուսամք՝ թէ ոչ թողու նա 'ի տեղի իւր վասն կառավարութեան ընտրելով 'ի նոցին Հայոց հոգևորականաց՝ եթէ ոչ այնպիսի հաւատարմագոյն արքեպիսկոպոս, որ 'ի Կայսերական Աթոռոջ Մերում այնպէս արիւբար և հաւատարմութեն Հովուապետելոյ հոգունակութիւն ստանիցէ. որպէս նա ինքն եղոյց մինչև ցայժմ։ Արդ ամենողորմածաբար հրամայեմք, որ 'ի նմանէ առ Կայսերութիւն մեր առաքեալ Հայոց արքեպիսկոպոսք՝ կամ այլ կարգաւորք՝ լեցին ընկալնեցեալ առանց արգելման՝ եթէ իցեն վկայական գրով 'ի նորին Պատրիարքէ. թարց որոյ ոչ ումեք մտանել. այր սակս և կարգեցելոց 'ի Մէնջ սահմանաց Մերոց կուսակալաց հրովարտակաւ պատուիրեցեալ է։ Եւ մեր վերոյ յիշեցեալ Գերապատիւ Պատրիարքին Յովսէփայ, և պատուելի Մելիքաց և Իւզբաշեաց և Դառավարչաց և համայն Հայկազնէից, և մանաւանդ 'ի Ռուսաստան Կայսերութեան Մերում եղեալ Մեզ հպատակաց՝ յուսապրեմք որ Մերս Կայսերական ողորմութիւն և հովանաւորութիւն 'ի նոսա միշտապէս անխափան տևելոց է։

Տրեցեալ եղև 'ի Սանկթպետերբուրգ Մերով Խաղաւորական Մեծ կնքով. 'Ի Յուլիսի 28, յամի 1800։

Դանիէլ. Հրովարտակս այս թարգմանեալ է 'ի Գրիգոր վարդապետէ և կատարեալ Զոքարեանց։ Դանիէլ. Զ. Մ։

Ե.

ՕՐԻՆԱԿ ԴՐՈՇՆ

Կոյսեր Ռուսաց Պետրոսի եւ Յովսէփ Պատրիարք Հայոց։

ՊԻՏՐԱՊԱՏԻՒ Յովսէփ Պատրիարք։ Ըստ համեմատութեան ընտրելոյ ամենից Հայկազուն ժողովրդոց զձեզ գերապատիւ Հայրապետ, 'ի սոյն արժանաւորութիւն, և առ 'ի յարգութիւն ջերմեռանդ գործառութեանց ցուցելոց ձեօք բարի նախանձաւորութեամբ հօտին քում բնակելոցն 'ի Կայսերութեան Մերում ժողովրդեանն Հայոց Հպատակաց Մերոց հաստատեալ զձեզ ըստ օրինակի առաջնոց, Մերով Կայսերական հրովարտակաւ 'ի նոյն նորոգ արժանաւորութեան։ 'Ի բացայայտութիւն յատկագունի Մերոյս առ ձեզ բարեհաճութեան, և այժմ ոչ զանց արարաք Մեք ամենողորմածօրէն նախագրել որոց պատկանիւր՝ ստացեալն 'ի ձէնջ 'ի գանձարանէ Մերմէ ռոճիկս փոխարինել զայս վասն ձեր մշանջենաւորական ռոճիկ, մինչև ցմահ, բաց յայնմանէ տալ ձեզ 'ի Հաշտարխան մէկ հազար ռուբլի դրամ, և վասն այնմ տալ ձեզ հարկաւոր թուով ուղղևորակս, 'ի ձիաւոր զօրաց Մերոց մինչև ցԹիֆլեզ ընդ միոյ Օֆիցերի։ որոյ վասն նախագրեցաք մերոյս Պ. ենրալ Լ. էյտէնանտին և Հաշտարխանու Պ. ոյէնների Պուբէրնաթօր Կնօրինղին, որպէս զի և 'ի ԹԻՖԼԷԶ կարասջիք դուք ընկալեալ լինիլ ըստ պատկանաւորութեան աստիճանի ձերոյ պատուով, ասկս որոյ ներ եղեալ սմին 'ի յանուն Նորին Արձրութեան Արթալինու և Կախէթու արքային Գէորգայ Հերակլեանին՝ հրովարտակաւս Մերով ծանուցաք, և

սոյնս թարց հարկաղրութեան ճնայ 'ի կամս ձեր, նախ քան զձեզ առաքելն և կամ իւրովին մատուցանելն։ Ո՛չ և ս զանց արարաք Մեք միաւորել նմա սակս ընկալման ձեր, նմանապէս հրամայել յիւրմէ, բարեսպահովութեամբ և նոյն տեսակ վերապատուութեամբ հասուցանել զձեզ 'ի յԱյրարատ։ Եւ հաւատարմացուցանեմք ձեզ որ 'ի տեսնել ձեր 'ի ջերմեռանդ հպատակութեան՝ որ առ մեզ և առ յաստան Մերս Կայսերական ողորմութիւն յամենայն ժամ առ ձեզ տարածեալ լինի։ յար ճեռամբ ձեզ Կայսերական Մերով ողորմութեամբ, և բարեհաճութեամբ։

Իսկն Կայսերական ձեռամբն ստորագրեցեալ է այսպէս

„Պաւել"։

'Ի Պատչին քաղաքի, Հոկտեմբերի 30ին 1800 ամի։

Ծանօթ. Թուղթս այս թարգմանեալ է 'ի Գրիգոր Վարդապետէ և կատարեալ Զաքարեանց։ Ծանօթ. Զ· Մ։

ՕՐԻՆԱԿ ԹՈՂԹՈՑՆ

Կոյսեր Ռուսաց Պօղոսի առ Արտայ Վրաց և Կախէթու Գէորգի Հերակլեան։

Լուսափայլ Վրաց և Կախէթու Արքայ Գէորգ Հերակլեան։ Ըստ թելադրութեան ընտրեցեալ յամենայն ժողովրդենէ Հայոց 'ի Պատրիարքութիւն, եղեալն 'ի դրան Մերում արքեպիսկոպոսն Յովսէփ Իշխան Ներկայնաբաղուկ Արղութեանց, Մեք ամենողորմածաբար հաստատեալ զնա 'ի սոյն արժանապատուութեան Մերով Կայսերական Հրովարտակաւ, և 'ի յարձակելն զնա՝ գրեցաք 'ի Մէնջ Մերս Վենիրալ Լէյտենանտին, և Հաշտարա-

խանու զինուորական Գուբերնաթոռ Կնօրինղին, տալ նմա սակս ճանապարհորդելոյ մինչ ցԹիֆլիզ պատկանաւոր թուով ձիաւոր զօրս ընդ միոյ Օֆիցէրի, թողուամք Ձերդ Խարձրութեան, 'ի զալ նորին Պատրիարքի 'ի կալուածս Ձեր՝ ընկալնուլ ըստ տեղեկութեան Ձերում ըստ յառաջնոց ծիսի և սովորութեանց, և անտի նմա պատկանեալ ճանապարհն ուղեկցել ըստ պտտշաձեալ սրբազոյն աստիճանի նորին յարգանօք, տալով և 'ի քէն սակս պահպանութեան հարկաւոր թուով արս։ Մեք յուսամք որ Ձերդ Խարձրութիւն առաւել վասն այնմ յաւելցէ հետևողութիւն իւր, որ նա Պատրիարքն գոլով արքեպիսկոպոս 'ի Կայսերութեան Մերում, հաստատեցեալ ևս է 'ի Մէնջ 'ի սոյն նորոգ արժանաւորութեան իւրում։ Յարգանաբար Ձեզ Մերս Կայսերական ողորմութեամբ, բարեհաճ։

Պօղոս։

1800, Հոկտեմբերի 30։ 'ի Պ. ատչին։

Ծանօթ. Թուղթս այս թարգմանեալ է 'ի Գրիգոր Վարդապետէ Զաքարեանց։ Ծանօթ. Զ. Մ։

Զ.

ՀՐՈՎԱՐՏԱԿ

Կայսէր Ռուսաց Ալէքսանդրի Ա. առ Պատրիարքն Դանիէլ։

(Զմնի կայսերական ընդարձակ ուղղոսի)

ԳՆԻՐԱՏՈՒՆԻ Պատրիարքին Դանիէլի և համայն պատուելի Մելիքաց, Հարիւրապետաց և Կառա-

վարչաց և համարէն պատուելի Հայոց ազգին Մերս Կայսերական ողորմութիւն և շնորհաւորութիւն։

Յայտնեմք այսու Մերս ողորմութեան Հրովարտակաւ, զի Դանիէլ Պատրիարքն Հայոց՝ ձեռամբ ալքեպիսկոպոսին իւրոյ Ներսեմայ գտանեցելոյ 'ի մերում Կայսրութեան՝ խնդրեալ էր գրով առ 'ի մէնջ ամենախոնարհաբար՝ զշնորհս առնել ինքեան Մերս Կայսերական Խարճրագոյն Հրովարտակաւ, զի մեասցէ այն 'ի մէջ Ցաճարի Աթոռոյն 'ի Սուրբ Էջմիածին յաւիտենական յիշատակ ողորմութեան և բարեհաճութեան մերոյ։ Եւ զի յառաջ քան զսոյն վսեմական նախնիքն մեր երանական և յաւիտենական փառաց արժանաւոր յիշատակքն՝ Նոցին Մեծութեան թագաւոր Կայսր Մեծն Պետրոս, թագաւոր Կայսրն Եկատարինէ Ա·, նոյնպէս և թագաւոր Կայսրն Եկատարինէ Բ·, և սիրելի ծնօղն իմ թագաւոր Կայսրն Պօղոս Պետրովիչ՝ զպատուելի ազգն Հայոց յաղագս քրիստոնէութեան ենթ Կայսերական յատուկ ողորմութեան իւրեանց ունիլ բարեհաճեցան· որպէս ցուցանեն հրովարտակքն Նոցին Մեծութեանց 'ի 1724, 1726, 1768, 1798 և 1800 ամս առաքեցեալք առ Պատրիարքունսն եղեալս յայնոսիկ ժամանակսն՝ Նասայի, Ներսէս, Միմէոն, Ղուկաս և Յովսէփ, առ Մելիքս, Հարիւրապետս, Կառավարիչս, և առ համարէն պատուելի ազգն Հայոց· Մեք ևս հետևելով մերոց յիշատակեալ վսեմական նախնեացն հետոց՝ հաւասարապէս համահաճիմք որպէս զներկայ ամենապատուելի Պատրիարքն Դանիէլ, նոյնպէս և զապագայ յաջորդս նորին Պատրիարքական Աթոռոյ· ևս և զՄելիքս, զՀարիւրապետս, զկառավարիչս և զհամարէն պատուելի ազգն Հայոց՝ պահպանել ենթ Կայսերական ողորմութեան մերոյ և բարեհաճութեան։ Դմանապէս ևս

շնորհեմք Մեք յիշեալ Դանիէլ Պատրիարքին և յաջորդացն իւրոց Պատրիարքական աթոռոյ, զի 'ի Մերում Կայսերութեան ամենայն Ռուսաց գտանեցեալ զազգն Ս. այոց՝ ըստ օրինաց իւրեանց, ըստ հոգևորական հանգամանաց և ըստ եկեղեցական արարողութեանց՝ ունիլ ընդ հոգևորական կալգաւորութեամբ իւրեանց՝ այնպէս, որպէս և յառաջն էր։ Եւ վասն այսորիկ յորժամ պիտոյ լիցի նոցա առաքել առ նոսա զարքեպիսկոպոս Ս. այոց կամ զայլ աստիճանաւոր 'ի հոգևորական կարգէ գրաւոր վկայութեամբ նորին Պատրիարքին, ընկալեալք լիցին, առանց որոյ նոքին այլով կերպիւ 'ի Կայսերութիւն Մեր ոչ լիցին ընկալեալք։ Եւ որ 'ի Մէնջ տուեալ եղև հրամանն հրովարտակաւ Մերս սահմանական կուսակալաց։ Եւ այլով ամենայնիւ Մեք զյիշեալ ամենապատուելի Պատրիարքն Դանիէլ և զպատուելի Մելքիս, զՍարիւրապետս, զԿառավարիչս և զամենայն պատուելի ազգն Ս. այոց, և յատկապէս զեղեալսն 'ի Մերում Կայսերութեան ամենայն Ռուսաց յուսադրեմք, Մերովն Կայսերական Խարիզագոյն ողորմութեամբ և հովանաւորութեամբ, որք հանապազ և միշտ եղիցին ան 'ի բաց բառնալի։

Տուեալ եղև 'ի Սանկտպետերբուրգ Մերովն թագաւորական Մեծ կնքով. 'ի Մայիսի 19, 1802 ամի։

Լ.

ՀՐՈՎԱՐՏԱԿ

Կայսեր Ռուսաց Ալեքսանդրի Ա· առ Պատրիարքն Եփրեմ։

(Զկնի կայսերական ընդարձակ տիրազսի)

ԳԻՏՈՒԹԱՆԻՒ Պատրիարքի Հայոց Եփրեմայ և այլ ամենայն պատուաւոր Մելիքաց, Իւզբաշեաց և Կառավարչաց և բոլոր պատուելի ազգի Հայոց, 'ի մեզ Կայսերական Մեծութենէ ողորմութիւն և շնորհաւորութիւն։

Ահա մերով Կայսերական մեծ հրովարտակաւ յայտնեմք, զի որպէս յառաջնմէ Բարձրագոյն նախնիքն մեր զպատուելի ազգն Հայոց՝ յաղագս Քրիստոնէութեան յատկապէս Կայսերական ողորմութեամբ պահպանել բարեհաճեցան (որպէս վկային Հրովարտակքն առաքեալք առ Պատրիարքս, առ Մելիքս, առ Իւզբաշիս և առ Կառավարիչս, և առ ամենայն ազգն Հայոց եղեալս 'ի ժամանակն յայնոսիկ), 'ի Մէնջ ևս յանցեալ 'ի 1802 թուականի Կայսերական հրովարտակաւ Մերով առ տեղւոյն Պատրիարքն Դանիել նոյնն հաստատեցաւ, և ամենողորմածաբար հրամայեցաւ Հայազգի բնակչաց եղելոց ընդ Բարձրագոյն իշխանութեամբ Մերով 'ի Մերում Կայսերութեան, զի ըստ հոգևորական վիճակի եղեցին 'ի նոցանէ իշխանութեան նորին, և կարգեսցի 'ի նմանէ 'ի Կայսերութեան Մերում արքեպիսկոպոս Հայոց վասն Հոգևոր Կառավարութեան Հայոց բնակելոց առ մեզ· Նա և յապայն ևս կարգումն Արքեպիսկոպոսի 'ի վերայ նոցա եղիցի ընտրութեամբ և պատշաճաւոր վկայականաւ նորին Պատրիարքի կամ յաջորդաց նորին։ Եւ զի գերա-

պատիւ այն Պատրիարք փոխեցաւ 'ի ժամանակեան կենաց ատի, 'ի յատուկ բարեհաճութիւն մեր ընտրեցաւ 'ի նորուն տեղի 'ի Պատրիարքութիւն համահաճութեամբ բոլոր ազգի Հայոց գերապատուելին Եփրեմ. այն՝ որ յառաջ քան զայս գոլով արքեպիսկոպոս Հայոց մերոց հպատակաց բնակելոց 'ի Պայսերութեան մերում՝ կառավարելով հոգևորապէս ըստ բազմաց դիմաց եցոյց զեսկական ջերմեռանդութիւն և զհարազատ մտերմութիւն առ Գահն Պայսերական։ Վասն որոյ ըստ չափու և օրինակի Խարձրագոյն նախնեաց Մերոց, և առաւել ևս 'ի բացայայտութիւն մերս յատկագոյն բարեհաճութեան առ այնքան եռանդագին աշխատակրութիւնս նորին, յուսադրելով պահպանել՝ յամենայն ժամանակի որպէս զյիշեալ Պատրիարքն Եփրեմ, այնպէս և յապագայն զյաջորդողն 'ի տեղի նորա յաթոռ Պատրիարքութեան Հայոց, նաև զՄէլիքս, զԽուզբաշիս և զՊառավարիչս, և զբոլոր պատուելի ազգն Հայոց՝ ընդ յատուկ Պայսերական ողորմութեամբ և բարեհաճութեամբ Մերով, հաճիմք՝ զի նա ինքն Պատրիարքն Եփրեմ (որպէս և յաջորդողքն 'ի Պատրիարքական Աթոռս նորա) ունիցի զՀայազգի հպատակսն մեր բնակեալս 'ի Պայսերութեան Մերում՝ ըստ հոգևորական վիճակի և ըստ եկեղեցական արարողութեանց նոցին՝ ընդ վերատեսչութեամբ իւրով ըստ առաջնոցն. և յուսացեալ՝ թէ ոչ զանց առնէ նա կարգել 'ի տեղի իւր վասն հոգևոր կառավարութեան ժողովրդոցն զայնպիսի հաւատարմագոյն արքեպիսկոպոս ոք, որ ունիցի զնոյն և նման ջերմեռանդութիւն առ գահն Պայսերական, և փոյթ հոգողութեան առ հօտն յանձնեցեալ ինքեան (որպէս նա ինքն եցոյց մինչև ցայժմ), հրամայեմք ամենողորմածարար՝ զի արքեպիսկոպոսն Հայոց կամ այլ

հոգևորական անձինք առաքեալ 'ի նմին Պատրիարքէ վկայական գրով 'ի Կայսերութիւն մեր՝ ընկալեալ լեցին անարգել· իսկ առանց վկայագրի մի ընկալցին· որոյ վասն և պատուիրեալ է հրովարտակաւ մերով կուսակալացն կարգեցելոց 'ի մէնջ 'ի սահմանսն։ Այլ և մեք վերոյիշեալ Պատրիարքին Երեմայ, և պատուելի Մէլէքաց, և Իւզբաշեաց, և Կառավարչաց և ամենայն Հայկազանց, ի մանաւանդ հպատակելոցն մեզ 'ի մերում կայսերութեան հաւաստի առնեմք՝ զի մերս Կայսերական ողորմութիւն և հովանաւորութիւն 'ի վերայ նոցա ունի յարատևել անխափան։

Տուեալ եղև 'ի Սանկտ-Պետրբուրգ Մերով թագաւորական Մեծ կնքով· յամի Տեառն 1809 'ի Սեպտեմբերի 30։

Ը.

ԹԱՂԹԱՄԱՆՈՒԹԻՒՆ

Յոգեոր-ական հինգէ Մարդին Անէղայի կրօնաւորի ընդ վերնէրովն· „Անց 'ի Սուրբ Էջմիածին յամն 1812 'ի 12 մեհեանն Սեպտեմբերի“։

'Ի չլինիլ երիվարացն մերոց 'ի պատրաստի ըստ իմում կարգադրութեան, վասն որոյ միայնակ հեծեալ գտի զՇանապարհն իմ առ Էջմիածին, որ քրքև երկու և կէս մղոնաւ հեռի էր 'ի տեղւոջէ մերմէ· ապա ուղղելով զընթացս իմ դէպ 'ի մեծ եկեղեցին, գտի զայն շուրջ պատեալ քանի մի շինութեամբք և պարսպաւք։ 'Ի մուտս նորին տեսի դաւիթ լայնատարած, յորում վեղարաւոր և սեւազգեաց վարդապետք ոմանք շրջէին զեկեղեցեաւն։

Ընդ 'ի տեսանել զՀայկական տաճարն, մուծին զիս 'ի

բնակարան Պատրիարքին (այսինքն՝ Հայրապետին), ուրանօր զաւ զերկու եպիսկոպոսունս (որոց մին էր Ղերսէս) նստեալ 'ի նախաձաշիկ իւրեանց, որք էին՝ փիլաւ, խորովածք, գինի, օղի, և այլն. և Սերաֆինս (այն է՝ Սերովբէ) ընդ նոսա. և իբրև խօսեցաւ նա 'ի լեզուս Ընդղլական, Պաղղլական և Իտալական, կարի դիւրապէս խօսակցէի ընդ վանեբէցսն իմ. զկնի նախաձաշկին, Սերաֆինս եցոյց ինձ զսենեակ մի պատրաստեալ վասն իմ, և նստեալ պատմեաց զամենայն զանցսն իւր։ Իսկական անուն սորա ըստ Հայոց՝ է Սերովբէ, ծնեալ 'ի Կարին 'ի Լատինա-Հայք ծնողաց. հայր սորա մեռանելով 'ի ժամանակս մանկութեան իւրոյ, մայրն յանձնէ զսա 'ի ձեռս քարոզչաց ոմանց տանիլ 'ի Հռոմ յաղագս կրթութեան. անդանօր պարապեալ յընթերցմունս գիտութեանց իբրև 8 ամ, եղև կատարեալ Եւրոպիացի. 'ի տասնեւութ կամ 'ի քսան ամս հասակի իւրոյ թողու զՀռոմ և դառնայ 'ի լեառն Լիբանան, ուրանօր ձեռնադրի և աչք իւր բանին 'ի տեսանել զեպրէական կարծեցեալ իրաւունս Պապին. զկնի այսորիկ ընդունի զդասանութիւն Սուրբ եկեղեցւոյ Հայոց 'ի Կարին. անտի գայ 'ի Կարս, յետ որոյ ելթայ 'ի Խաղզատ. յայսմ ժամանակի ընկալեալով զհրաւէր 'ի Պատրիարքէն Էջմիածնոյ գալ 'ի միաբանութիւն իւր, հաւանի սա, այսու պայմանաւ զի մի 'ի շարս հասարակ վարդապետաց համարիցի. և ըստ այսմ պայմանի այնպէս է զանազանեալ օրպէս և արժանաւորութիւն գիտութեան իւրոյ և ամենառատ ծանօթութիւնք իւր պահանջէին։ Ցանայ սա սփռել զեշխանութիւն իւր 'ի վանս այս, առ 'ի կատարելագործել զառաջարկութիւնս ինչ՝ զորս սահմանեալ է 'ի պէտս յառաջադիմութեան Հայոց։

Մինասականս այս կամ լաւ և ասել ընդհանուր ազգ ՝այոց են ընդ իշխանութեամբ ՝Ներսիսի՝ միոյ յԱրք Ե-պիսկոպոսաց անտի· քանզի պատրիարքն Երկրեմ է անու-անակիր և եթ, և 'ի բազում հղանակս տարւոյ յանկողնի հիւանդութեան տեսանի։ Երբև երկք ամաք յառաջ, սմին այսմ ՝Ներսիսի յաջողեցաւ յառաջադրել զգործ ինչ՝ որ էր հաստատել զԱիւնհոդոս 8 եպիսկոպոսաց՝ վասն կառավարութեան գործոց եկեղեցւոյ և հարկիւ՝ ինքնին է լինելոց ամենիշխան։ Պատրիարքն օծանի 'ի ձեռն 12 արքեպիսկոպոսաց։ Մի 'ի յանդամոց Աիւնհոդոսին որ է պրն ոմն նուազ ըստ կարեաց, համարձակեցաւ երբեմն անջատել 'ի ՝Ներսիսէ։

Հաւարկայն՝ զոր Սերովբէ ունէր 'ի· սրտի՝ էր հաստատել զդպրոց իմն առ 'ի գաստիարակել զմանկունսն ՝այոց, յարհեստ ճարտասանութեան, տրամաբանութեան, և այլոց գիտութեանց· վայելչութիւն առաջարկութեանն այսորիկ, 'ի բազմաց խոստովանեցաւ, սակայն ոչ կարացին համաձայնիլ, թէ ուր կարուացի դպրատունն։ Սերովբէ, մտածելով զվտանգն՝ որում տեղի Աթոռոյն էր ենթակայ, 'ի լինելոյ նորա 'ի միջի Ռուսաց, Պարսից և Օսմանցւոց, վասն որոյ խորհեցաւ հաստատել զայն 'ի Ցփխիս· իսկ ՝Ներսէս, ընդ հակառակն, խորհելով թէ Ընչմիածին է տեղեն հաստատեալ՝ հիմնեալ և սրբեալ յերկնուստ ըստ տեսլեան Արքոյն Գրիգորի Լուսաւորչին, և Աթոռ նորա՝ վասն որոյ խորհի ունիլ զայն աստ։ Անարկութիւն Սերովբէի ընդ առաւօտն ողջոյն, էր զմոլորութենէ և զսընոտիապաշտութենէ ժողովրդոյ իւրեանց, և երևիւթ թէ ցաւ մեծ և տրտմութիւն պատճառէին սրտի նորա· մտադիր եմ, ասէր, զկնի քանի մի ամոց փորձառութեանց, թէ զինչ արդեօք առնել կարիցեմ աստ ունիմ դառնալ

'ի Հնդիկս. և ապա գրել և 'ի տիպ արձանացուցանել զքանի ինչ գործս, 'ի Լուսաւորիչ զժողովուրդ մեր 'ի հաւատս Աստուածպաշտութեան. որով և մուծցի բարեկարգութիւն ինչ յաղգ մեր։ Իսկ առ 'ի քաջալերել զնա յայսպիսի երանելի գործ յորդորեցի նմա ըստ իմ կարեաց, խոստանալով մեծ իմն նպաստաւորութիւն յԱնգղէնացւոց, ազդելով նմա ըստ օրինակի Լոութերի և այլոց բարեկարգչաց Եւրոպիոյ, թէ զնարդ և դժուարինս թուիցին գործք բարեկարգութեանց՝ Ամենակարօղն Աստուած անելիմիտ օժանդակեսցէ նմա։ Այլ և յիշեցի զղարհուրելի անիոյթութիւն եկեղեցականաց Հայոց քարոզել ժողովրդեան իւրեանց զանկալի և զուրախարար Աւետարան Փրկչին՝ որ ոչ երբէք կատարի։ Ու այս, Սերովբէ չարար ինչ պատասխանի, բայց թէ՝ ողբալի իմն է զի ժողովուրդք մեր, ոչ երբէք յետս կոչին 'ի մեղաց և անօրէնութեանց իւրեանց։

Իրրև հնչեցին զանգակք երեկոյեան Աղօթից՝ գնացաք 'ի միասին ընդ նմա 'ի մեծ Եկեղեցին։ Եկեղեցականքն էին տասն Եպիսկոպոսունք և այլ վեարդապետք հանդերձ երգչիկ մանկամբք կիսաբոլոր ձևով խմբեալ առաջի սեղանոյն. որոյ աղաղաւ՝ դրունք Եկեղեցւոյն բացեալք էին առ 'ի երևիլ արտաքուստ։ Սերովբէ՝ գնաց 'ի տեղի իւր և տեսի զնա կատարել զոմանս յարարողութեանց երեկոյեան ժամուն. ապա առեալ զիս եմուտ յեկեղեցին, ոչ կասելով 'ի ցուցանելոյ զազգիտական սնոտիապաշտութիւնս ժողովրդեան իւրեանց։ Յառարկայս և 'ի խօսակցութիւնս իւր թուիւր ինձ թէ տեսանէի զմանաւոր ինչ Ցեացորդս Լատինական ներհակութեան, ընդդէմ Լութերի։

Վարդապետք Մենաստանիս այսորիկ առ հասարակ

ճաշեն 'ի միասին 'ի սեղանատանն, 'ի մեռասանելոյդ ժամուն· իսկ 'ի գիշերի՝ ամենայն ոք ընթրէ յիւրումն սենեկի։ Ներսէս, Սերովբէ, և այլ երկու կամ երեք եպիսկոպոսունք ունին զյատկացեալ սեղան· և հաւասիս 'ի սեղանատանն ճաշեն, ուրանօր յաճախ զասանին··· անձանց և կերակրոց։

Ինդրեցի 'ի Սերովբէէ զԹարգմանութիւն 16 երդոյ Սաղմոսին Հայկական Թարգմանութեան, որ և Թարգմանեալ յուղիղ Լատին մատոյց ինձ։ Օրինի միջօրէի գնացի 'ի տես Պատրիարքին, անդ էր տեսանել հիւրընկալութիւն անչափ քաղաքավարութեան և մեծի յարգանաց· բազմեալ էր նորա 'ի վերայ աթոռոյ ինչ նման Գահոյից զետեղեալ 'ի կեդրոն բնակարանին։ Ամենայն ոք յոտին կայր առաջի նորա, բաց յերկուց երիցագոյն արքեպիսկոպոսաց· 'ի մի կողմն Պատրիարքին, աթոռ մի նստեալ կայր վասն իմ, յաջակողմն իմ կայր Սերովբէ Թարգմանեալ զնոսս մեր։ Պատրիարքն ունէր զտեսիլ իշխանական քան թէ յարդական։ Առաբկայք խօսակցութեան իւրոյ՝ էին խոստումն անկեղծ սիրոյ և մտերմութեան, փափագումն յուսոյ իւրոյ ազատիլ 'ի մահմեդական ծառայութենէ, և հարցաքննութիւն Թարգմանութեանց իմոց սուրբ գրոց· այլև ապաչէր զի զԱմենաստանն համարիլ իբրև զբնակարան իմ։ Արդարև հոգունակութիւնք և բարերարութիւնք սոցա անսահմանք են վասն իմ՝ զի Ներսէս և Սերովբէ յառաջէին զամենայն զինդրելն իմ։ Ասացի. ցՊատրիարքն՝ թէ այնչափ երջանկութեամբ կեամ աստանօր մինչ զի՝ եթէ պարտականութիւնք մեր թոյլ տացեն՝ կարի ուրախ լինէի լինիլ մի 'ի միաբան վարդապետաց իւրեանց· ընդ այս ասացուածս իմ, ժպտեցաւ, և կարծելով՝ թէ կարի շտապեցայ, վասն

որոյ ասաց՝ թէ ունիմ բաւական։ Թիւ նոցա ըստ իմ կարծեաց է 100։ Այն այս Եկեղեցի, ասեն, յոյժ հարուստ է լեալ գանձիւք իբրև 10 ամօք յառաջ քան զայս, մինչ երկու խառվարար Պատրիարքունք, կռուելով ընդ միմեանս (որոց մինն է մինչև ցայսօր 'ի Մենասատանի աստ անկեալ 'ի շնորհաց), մեծ մասն գանձուն վատնեցաւ՝ տալով զկաշառս դատաւորաց Պարսից առ 'ի ընկենուլ զմիմեանս յԱթոռոյ. սակայն դիւրին է ոչցա ընուլ զգանձարանն՝ քանզի երևելի վաճառականք Հայոց՝ որք 'ի Հնդիկս՝ են ընդ իշխանութեան վանիցս և Պատրիարքիս։

Արկին խօսակցեցայ ընդ Սերովբէի յաղագս անօրինեալ բարեկարգութեան իւրոյ, ասելով՝ թէ որովհետև հպարտեալ ես դու առ 'ի դատարակել զմանկունս Հայոց 'ի Մենասատանի աստ՝ ուրեմն անկ և արժան է քեզ ազդել յարաժամ զոր ինչ պատշաճ և վայելուչ է գործոյն այնորիկ, որ և ծանոյց՝ թէ ընդդիմադրութիւն իւր վասն զպրատանն լինելոյ յԱշմիածին էր՝ քանզի 'ի մէջ գիշերոյ մինչև ցծագել արևու ամենայն վանականք պարտին յաղօթս լինել յեկեղեցւոջ, որ պատճառէ զամենեսեան ննջել 'ի մասանելն արևու։

Զարդասպեռք Մենասատանիս այսորիկ են առհասարակ 'ի մերձակայ գիւղորէից Երևանու, և ըստ մեծի մասին 'ի սկզբանէ եղբեցիկք են լեալ. յայսպիսի ձեռս է անկեալ պերճ և հզօր հիմնս այս։ Զուներն սոքա ուխտաւորութիւն ինչ 'ի վերայ իւրեանց, բաց 'ի միայնակեցութենէ և յանամուսնութենէ։

Ծանօթ. Զի դէջի, որով գրեալ էր օրինակն թարգմանութեան յօգուտածոյս, որ գտաւ 'ի մատենադարանի հօր իմոյ, ակն յայտնի դուցանէ՝ թէ ստացեալ է այն 'ի Հնդկաստանէ։ Ծանօթ. Զ. Մ։

Թ.

ՕՐԻՆԱԿ

Ա-ՀԼԻՔՈՒԹԻՒՆ ԵՂԵԼՈՅ Ի ԻՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՌ ՀԱՅԿԱՆԵԱՅ ԻՇԽԱՆԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ ՅԱՄԻ 1813։

ՊԱՏԿԱՆԱՐ խորհրդածութեան ժողովոյն Էջմիածնի յաղագս բարեկարգ կառավարութեանց ամենայն ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց յառաջարկելոյ խորհրդածութեան իշխանաց Հայկազանց՝ որք ի Կոստանդնուպօլիս։

Ա։ Յաղագս ժողովոյն Լարձրագոյն խորհրդարանին Էջմիածնի հարկաւոր համարի ժողովն, զի ի գիմաց խորհրդարանին Պօլսոյ մերազանց, այս է Լ՝օնճային Ամիրայից ի սուրբ Աթոռն գտանիցի ոմն անդամ խորհրդարանի հոգևորական կամ մարմնաւորական, այլ զգօն, խոհական և հաւատարիմ կացուցանողաց զինքն, զի՝ ի ձեռն նորա ազգաօգուտ խորհրդածութիւն խորհրդարանին Էջմիածնի՝ եղեցի հաւատարիմ, հաճոյական և պատուաւոր առաջի խորհրդարանին Պօլսոյ։

Բ։ Համաձայնութիւն հոգևորականաց և մարմնաւորականաց մերազանց, որք ընդ տէրութեամբ Օսմանեան, համաձայն բանից Դանիէլ Կաթողիկոսի արձանացուցեալ ի գիր յաղագս մշտնջենաւոր հաստատութեան բարեկարգութեան կառավարիչ ժողովոյն՝ տպագրեսցի։

Գ։ Ըստ օրինակի Աբբատ Միրզայ Հ՝ահզատայի ռաղամին, ի մէջ Հրովարգակի Սուլթանին Օսմանեան և շարակարգել զսուրբ ժողովն գործակից Կաթողիկոսին։

Դ։ Սահմանել վասն իւրաքանչիւր Վ՝անորէից և անապատաց թիւ և քանակութիւն կարգաւորեալ վիճակաւորութեան և այլոց պաշտօնէից և կանոնել վասն իւրա-

քանչիւրոցն հանգերձ և կերակուր, և արգելուլ բոլորովին ղժողովարարութիւնն ըստ կամաց առաջնորդի և միաբանութեան նոցա։ Իսկ վասն այլ ամենայն մարմնաւորական կառավարութեան ամենայն վանորէից և անապատաց, ևս և վասն Էջմիածնի, կարգել 'ի Կոստանդնուպօլիս ժողով մի արժանահաւատ արանց, որք 'ի պատկանեալ ժամանակի համահաճութեամբ Պատրիարքին և սուրբ ժողովոյն և Պատրիարքին Պօլսոյ և երևելեաց ազգին ընտրեսցեն 'ի վարդապետաց իւրաքանչիւր վանաց և կամ յարտաքնոց՝ զարս հարազատս և առաքեսցեն քահանայապետական կոնդակաւ. որք շրջեալ ընդ ամենայն ազգս Հայոց՝ զամենայն նուէրս ժողովրդեան յանուն իւրաքանչիւր վանորէից և անապատաց հաւաքեալ ընդ ամենայն տեղիս՝ բերեալ հասուցեն 'ի Կոստանդնուպօլիս առ կացուցեալ ժողովն, և այլն։

Ի՝. Յատկացուցանել վասն ամենայն ազգի մերում եպիսկոպոսարանս կամ վիճակ եպիսկոպոսական բաւական չափով։

Ի՞. Յաղագս շատաշրջիկ եպիսկոպոսաց, վարդապետաց և քահանայից, հրաման. տարածել համազգային կամակցութեամբ ընդ ամենայն տեղիս առ ազգս Հայոց ամենեքին ոչ ընդունիլ հրամանագրոյ քահանայապետի կամ պատրիարքի զեպիսկոպոսունս կամ զվարդապետս և կամ զքահանայս։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Քօլէն Աբրահամ Պապրիէրէի Կոստանդնուպօլսոյ յ3ին Մայիսի 1814-ին։

ԻՆԱՐԻԱՐՈՒԹԻՒՆՆ սահմանիչ Միւնհօթն՝ ըստ գրութեանց լուսաւոր Յովհաննէս եպիսկոպոսին, ունի

զարժանաւոր բանս, որպէս կարձել զվայրաշրջիկ եկեղեցականս, զառանց վկայականի ժողովարարս, և այլն։ Բայց խոհական մտաց քննութեամբ գտանի 'ի նմա խռովարիթ ոճիր, ծանր դժուարութիւն, խիստ բռնակալութիւն, և այլն և այլն։

Խռովարիթ ոճիր· նախ՝ զի առ կենդանութեամբ քահանայապետին կացուցանէ զերկուս ընտրեալ սպասաւոր զարշապարին։ Երկրորդ՝ զի սկսանի եպիսկոպոսաց ժողովոյ անուամբ, և վճարի միոյ յեանոյն ընտրութեամբ, որպէս և յայտ է։

Ծանր դժուարութիւն՝ զի յայսմ դառն վիճոցի՝ որ խորհրդազգած եմք սրբոյ գահիդ նեղութեանց և պարենի հարկաւորութեանցն 'ի մայրաքաղաքիս մեծ դպրոցի ծախս հայթայթէ։

Խիստ բռնակալութիւն, զի զԸստուածարեալ քահանայապետիդ՝ որ Ընտուածատիպ զգաստութան օծութեամբ ինքնիշխան գլուխ եկեղեցւոյ ես յարգեալ ընդ լծով հպատակութեան ալիկանէ· թոչ և զայլն· զորս ծայրագոյն գիտութեամբ ձեր չընդունել և չհաճիլդ յուսալով, ինդրեմք զայսր ամենայնի ազատ կամեցողութիւնդ խորհրդաբար գրել մեզ· որում կարեօք չափ պատրաստ եմ յամենայն 'ի կեանս ըստ հարաշատութեանս ջանալ ապահով ազատ յարգութեանդ, և բնաւորեալ բարերար կամացդ միշտ կատարման· ողջ լեր։

Աբրահամ պատրիարք Կոստանդնուպոլսի։

1814 Մայիս 3 'ի Պատրիարքարանս։

Ժ.

ՕՐԻՆԷԿ

Հրաժարականի Եփրեմ կաթուղիկոսի մոտ ուղարկեալ 'ի Շուշի։

Յիսուսի Քրիստոսի ծառայ Եփրեմ Կաթուղիկոս ամենայն Հայոց և Նոյրագոյն Պատրիարք Արարատեան Աստուծոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. սրբազան Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց և Վարդապետաց ելելոց ընդ իս աստէն 'ի Շուշի քաղաքի։ Այսու գրութեամբ իմով ծանուցանեմ զէսկութիւն ուղիղութեան անձին իմոյ, զի որպէս և դուք իսկ գտանիք ականատես՝ պակասի ահա օր ըստ օրէ յամենայն կարողութեանց իւրոց ներքնոց և արտաքնոց, և ծերութիւն իմ ծանրանայ ինձ՝ մինչև ոչ բաւական լինիլ զպաշտօն հարկի կոչմանն իմոյ կալնուլ կատարեալ. ուստի՝ զի մի անհոգացեալ մինչ իսգտա՝ ծանրացուցից ինձ զիմ պարտաւորութիւնն 'ի մասինս յայսմիկ, 'ի բաղում ժամանակաց հետէ խոկալով հանապազ յաղագս կարևորացն ինձ և օգտակարացն ընդհանրական գահոյի և մայր եկեղեցւոյ ամենայն Հայոց Արարատեան Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝ նա՛ իսկ լրութեան ազգի և եկեղեցւոյ սրբոյն Գրիգորի Մեծի Պարթևի յանձնեցելոյ իմումս հովուապետութեան՝ բարւոք գտանցայ ես յիմում խորհրդեան՝ մեկուսանալ յայսկոյս, և 'ի բաց հրաժարեցուցանել զանձն իմ 'ի պարտաւորութենէ անտի Պատրիարքական կոչմանն մերում, յանձնելով զծերութիւն իմ դարձեալ բարերար հովանաւորութեան Գլորին Գ. Մեծութեան ամենայն Ռուսաց՝ որոյ ամենողորմած Վրամատիւն գտայ

ես զառաջինն հաստատեալ յայն կոչումն իմ· և յոյս իմ 'ի սմին հզօրացեալ եղև յիս՝ թէ Աստուածանման հայեցողութիւն նորա չունիցի անտես առնել՝ ոչ զիս, ոչ զՊատրիարքական Աթոռն ամենայն Հայոց, և ոչ զՄիաբանութիւն նորա, և ոչ իսկ զԼոլոր հօտն՝ որոյ ես ցարդ կրէի զկոչումն Կաթողիկոսութեան և Հովուապետութեան։ Այսաքէն այժմ ահա 'ի գլուխ այսր ամենայնի իմոց խորհրդածութեանց՝ զոր ընդ ժամանակս ժամանակս քանիցս քանի անգամ յայտնեալ եմ ձեզ և ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց մերազանց եղելոց յԱթոռս սուրբ Կաթուղիկէ Էջմիածնի և յամենայն սահմանս իշխանութեան Սմանցւոց, և բանիւ և թղթովք յանգաւորելով զայն ամենայն այսու իմովս սեպհական ձեռագրով արձանացուցանեմ ահա և հաստատեմ, զի ես յայսմ հետէ ազատակամ ընտրութեամբ իմով և ինքնայօժար անբռնադատ կամօք հրաժարեալ եմ բոլորապէս 'ի Կաթողիկոսական և 'ի Պատրիարքական կոչմանէ անտի իմոյ, և յամենայն պարտաւորութեանց նոցին· և մի միայն հոգևորական կոչմամբ իմով ցանկացեալ եմ կալ ուրեք 'ի տեղի ապահով 'ի ներքոյ քաղցր հովանաւորութեան և հզօր թևոց իւրոյ Կայսերական Մեծութեան ամենայն Ռուսաց և լինիլ աղօթարար վասն ամենողորմած Աթոռոյ նորա և վասն ամենայն ազգի Հայոց և փրկութեան հոգւոյ իմոյ· յետ որոյ դուք և եղբարք միաբանակիցք ձեր՝ որք յԱթոռն Էջմիածնի՝ համաձայնութեամբ ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց ազգին Հայոց, կարող էք յատկացուցանել փոխանակ իմ զայլ ոք բաւական 'ի բառնալ զհոգս պաշտօնի և կոչմանս Կաթողիկոսութեան և Պատրիարգութեան ամենայն Հայոց և Պատրիարգական Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի·

ոյլ վասն և իւրոյ Կայսերական Մեծութեան ամենայն Ռուսաց՝ Լեհ և Դատանդի Թագաւորութեանն Պարսից և ամենայն հասարակութեան հոգևորականաց և մարմնաւորականաց Հայոց, որք 'ի Ռուսաստան և որք 'ի Կոստանդնուպօլիս և յամենայն սահմանս զանազան իշխանութեանց գտանին տարածեալք, ունիմ յայտնել սոյնասարաս գրութեամբ և խնդրել ղայցելութիւն նոցա իմումս ծերութեան և Աթոռոյ Արարատեան և ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց Հայոց՝ որոց ունիմ ես զպարտաւորութիւն այժմ և միշտ։ Յամի 1822, յամսեանն Յունիսի 20։ Գրեցի զայս արձան իսկութեան հրաժարանաց իմոց իմովս սեպհական մատամբ, զոր և ստորագրեմ ահա հրաժարեալ 'ի Կաթուղիկոսութենէ և 'ի Պատրիարգութենէ ամենայն Հայոց

Ներսէս։

Ըստ հրամանի իւրոյ Բարձրագոյն սրբազնութեան յիւրաքանչիւր ներկայութեան ստորագրեմք զսոյն իսկական ձեռագիր կամակար հրաժարանաց նորին գտանեցեալքս ընդ ինքեան 'ի Շուշի անդամք սուրբ Յովհաննէս Բարձրագոյն Խորհրդարանի սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի

Տեղապահ Պետրոս արքեպիսկոպոս։
Անտոն եպիսկոպոս։
Յովհաննէս եպիսկոպոս։

ՆԱՄԱԿ

Եփրեմ կաթողիկոսի առ կայսրն Թեոդոս Ալեքսանդր Ա·

Ամենողորմած կայսր Ինքնակալ Ամենայն Ռուսաց

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊԱՒԼՈՎԻՉ

Աստուածազուր խնամակալ իմ, ակնկալութիւն իմ, և ամենայն միաբանութեան իմոց հոգևորականաց, Աղօթարար Ձեր և

Յիսուսի Քրիստոսի ծառայ Եփրեմ Կաթողիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ Արարատեան Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝ ամենախոնարհ երկրպագութեամբ Ամենողորմած Աթոռոյ Ձերում Կայսերական Մեծութեանն մատուցանեմ նախ ամենակատար գոհունակութիւնն բազմապատիկ օրհնութեամբ օրհնաբանեալ անուան Անուան և Ընձին և Աթոռոյ ամենազոստափառ Ձեր տէրութեանն՝ որոյ ամենաքաղցր հովանաւորութեամբն գտայ ես երանական իմն բարեբախտութեամբ ապահովացեալ յամենայն ժամանակն լինելոյ իմ վիճակաւոր արքեպիսկոպոսութեամբ Հայոց 'ի Ռուսաստան զամն իբրև երկոտասան· և 'ի վերայ այնր ևս վերապատուեալ գահակալութեամբ Արարատեանն Պատրիարգական Աթոռոյ սրբոյն Գրիգորի մեծի Պարթևի և Լուսաւորչի ամենայն Հայոց և նախագահ առաջնորդութեամբ ընդհանուր ազգի և եկեղեցւոյ նորա։

Այս վստահացեալ 'ի Ձեր Աստուածանման մարդասիրութիւնն համարձակիմ առաջի առնել ամենալուսափայլ բարերար հայեցողութեան Ձերում Կայսերական Մեծութեանն որպէս առաջի միակ ամենաբաւական բժշկի՝

զխոստովանութիւն որպիսութեան ցաւալի անձին իմոյ և կացութեան. զի յօրէ մտանելոյ իմ յԱթոռ պատրիարգութեան ամենայն Հայոց սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝ որ յԱրարատ՝ օր ըստ օրէ ծանրացան 'ի վերայ իմ հոգք Պատրիարգական Աթոռոյն. յորս թէպէտ ամենայն զօրութեամբ և կարողութեամբ մարմնոյ իմոյ և հոգւոյ յարատևեալ մինչև ցայժմ զամն իբրև երկաթասան, միշտ ապագայ յուսով երկայնամտեալ փութացայ կրել զամենայն յոժարութեամբ, և ջանացայ բազմօք՝ զի թերևս կարող եղէց վերածել յիւր առաջին վերանորոգութիւնն զմիակ պարծանքն ամենայն անպյծելու ազգի Հայոց զԱթոռ Պատրիարգութեանն մեզ յանձն եղեալ, այլ ապրարտիզ գտեալ մինչ իսպառ՝ ոչ երբէք և ոչ իւիք ոչ կարողացայ հասանիլ ցարդ այնպիսի իմոց բաղձանաց. զի ընդ հակառակն միշտ մեզ յառաջ բերեալ ժամանակն զեւրն հզօրեզ ներգործութիւն, փոխանակ ակնկալեալ բարեաց Պատրիարգական Աթոռոյն, օր քան զօր հզօրացան նաև անակնկալ չարիք 'ի վերայ հասապրակութեանն ազգի Հայոց ընդ բազում տեղիս՝ որոմ և բազմացան, ծանրացան 'ի վերայ իմ և Աթոռոյ Արարատեանն և ամենայն մերոց հոգևորականաց անբերելի դժուարակրութիւնք, նա մանաւանդ ծանրութիւնք բազմատակոսի պարտուց՝ յորժամ և ծերութիւն իմ առաւել քան զամենեսին ծանրացեալ 'ի վերայ անձին իմոյ և պակասեցուցեալ յամենայն կարողութեանց, կարձեաց մինչ. իսպառ նաև զընթացս այնպիսի յուսոյ բարեաց և ապագայ ակնկալութեանց. ուստի՝ զի մի և ես ծանրացի ինձ պարտաւորութիւնն իմ Աթոռոյ և ազգի Հայոց վասն իմոցմն անհոգանալոյ, ընտրեցի ես մեկուսանալ յայսկոյս՝ և 'ի բաց հրաժարեցուցանել զանձն իմ 'ի պարտաւորութեանց

անտի Պատրիարգական կոչման՝ իմոյ յանձնելով զծնրութիւն իմ դարձեալ բարեբար հովանաւորութեան ներոյ Կայսերական Մեծութեանն՝ որոյ ամենողորմած ողորմութիւն զոտայ ես հաստատեալ յայն կոչումն իմ։ Եւ յայսմ ևս առաւելաւ ինձ տարաբախտութիւն իմ, զի 'ի սակաւ ներողութեանց անտի ճանապարհորդութեան իմոյ և 'ի վերաժամանելոյ ցրտութեանց և ձեանց՝ վտանկեալ մինչ իսպառ ամենայն անձնական առողջութիւն իմ, աչք իմ և ականջք ևս որք 'ի վաղուց ենթարկեալ զտանջին տկարութեանց հասակի ծերութեան իմոյ, ամենևին նուազեցան 'ի տեսութեանց և 'ի լսողութեանց։

Այց 'ի վերայ այսր ամենայնի յոյս իմ հզօրագոյն է յիս՝ թէ Աստուածանման բարեգութ հայեցողութիւն ձեր չունիցի անտես առնել՝ ոչ զծերութիւն 72 ամեայ հասակի իմոյ, ոչ զՊատրիարգական Աթոռն ամենայն Հայոց, ոչ զմիաբանութիւն հոգևորականաց նորա, և ոչ իսկ զբոլոր հօտն որոց ես ցարդ կրէի զկոչումն Կաթողիկոսութեան, Պատրիարգութեան և ընդհանուր հովուապետութեան· ուստի զիս և զամենեսին զնոսա այսու իմովս ամենախոնարհ խնդրագրով յանձնելով Ձերումդ Կայսերական բարեգթութեանց և անսահմանափակ տիեզերատարած մեծ ողորմութեանց՝ եզբակացուցանեմ վասն իմ, զի ես յայսմ հետէ ազատակամ ընտրութեամբ իմով և ինքնայօժար անբռնադատ կամօք հրաժարեալ իսկապէս 'ի Կաթուղիկոսական և 'ի պատրիարգական կոչմանց անտի իմոց և յամենայն պարտաւորութեանց նոցին, ցանկամ մի միայն հոգևորական կոչմամբ իմով կալ ուրեք 'ի տեղի ապահով 'ի ներքոյ քաղցր հովանաւորութեան և հզօր թևոց Ձերոյ Կայսերական Մեծութեանն 'ի լինիլ ազօթարար վասն ամենողորմած Աթոռոյ Ձեր և վասն ամենայն

ազգի Հայոց և փրկութեան հոգւոյ իմոյ. յետ որոյ սուրբ Յողովն Խարձրագոյն Խորհրդարանի Երարատեան պատրիարգական Աթոռոյն սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի համաձայնութեամբ միաբանակցաց իւրեանց և ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց Հայոց կարող են ըստ օրինի յատկացուցանել փոխանակ իմ զայլ ոք բաւական 'ի բառնալ զհոգս պաշտօնի և կոչման Կաթողիկոսութեան և Պատրիարգութեան ամենայն Հայոց և Պատրիարգական աթոռոյն Երարատեան. առ որ և իմ աղաչանք Ձերում Կայսերական Մեծութեանն այս են միայն՝ զի մարդասիրութիւն Ձեր և ամենողորմած խնամակալութիւն՝ որպէս 'ի մասինս յայսմիկ նոյնպէս և 'ի մասին պաշտպանութեան Աթոռոյ Էջմիածնի և ամենայն հոգևորականաց նորա և անայցելու ժողովրդեան՝ վասն անուան քո մեծի, և վասն անուան Յիսուսի Աստուծոյ մի՛ պակասեսցի նոցա այժմ և միշտ։

Եւ ես կատարեալ զգացողութեամբ ամենայն անցելոցն և ներկայից և ապագայից կամ և միամտ յամենայն աւուրս մնացորդ կենաց իմոց միշտ շնորհապարտ և ամենաջերմեռանդ աղօթարար վասն ամենողորմած Աթոռոյ և վասն անգին կենաց Ձերում ամենօգուտափառ Մեծութեանն, հրաժարեալ 'ի Պատրիարգութենէ ամենայն Հայոց և Աթոռոյ Երարատեան՝ խոնարհ ծառայ և աղօթարար

Ներսէս։

1822· Յուլիսի 30· 'ի Գիւլիստան։

ԺԱ.

ՕՐԻՆԱԿՐ

Ա.

Ապրարարութիւն առ Հայս։

ՅԱՌԱՋԻՆ, ամի 'ի մտանել զօրացն Պարսից 'ի սահմանս մեր՝ հանդիսացան ՝այք քաջութեամբ ընդդէմ թշնամեաց, անյողդողդ հաստատութեամբ 'ի կրեալ թշուառութիւնս, անսահման ջերմեռանդութեամբ առ Քրիստոնէական կրօնս և գովանի հաւատարմութեամբ Տէրութեանն Ռուսաց։

Բազաւոր Պարսն ակնարկեալ ողորմածարար 'ի ջերմեռանդութիւն ինքեան հաւատարիմ ազգին ՝այոց, և թէպէտ զօրք Ռուսաց բաւականք են 'ի հարկանել զթշնամիս առանց գործակցութեան այլոց, բայց 'Նորին Աստուծութեան հաճոյ եղև 'ի ներկայ պատերազմիս ունել 'ի մէջ քաջայաղթ զօրաց իւրոց զյատուկ գունդ կազմեալ յատուկ եղեալ ՝այոց։

Յելանելն Ռուսակալի կողմանցս 'ի Տփխիսայ առ 'ի անձամբ անձին առաջնորդել զօրացն 'ի ճակատամարտ ընդդէմ թշնամեաց, յանձն արար ինձ կատարել զկամս ինքնակալ Պարսերն։

՝այք ուրախամիտ յօժարեցան ընդ հրաւէրն՝ որ եղև նոցա։

Երրորդում աւուր զկնի յայտարարութեանն՝ տեսի ես զառաջին գունդն ՝այոց ժողովեալ՝ հրացան 'ի ձեռին։ Յառաջիկայութեան իմում կատարեցաւ թաքոր օրհնութեան, և նորընտիր զօրականքն կացեալ ընդ հովանեաւ

սուրբ Դրօշակի՝ յուղի անկան գործակից և փառակից լինել զինուորութեան Ռուսաց։

Դաջ գիտեմ, թէ բազումք յեղբայրակցաց նոցա կամիցին զհետ երթալ այնպիսի գերապանծ օրինակի. ուստի կարևոր համարիմ հրատարակել զԱռաջադրութիւն վասն Հայազգի գնդին, զի իւրաքանչիւր ոք՝ որ յօժարակամ 'ի նոյն մտանէ, կարասցէ գիտել. թէ ցո՞ւչափ ժամանակ և ո՞պիսի դաշամբք պարտաւորի ծառայել։

Ահա Հայք, Ջերմեռանդութիւն ձեր արժանապէս վարձատրեալ է։ Ակնարկութիւն Մեծի Թագաւորի է 'ի վերայ ձեր։ Դուք ունիցիք ընդ սեփական դրօշակօք ձերովք զսեփական գունդս։ Զեզ բաշխի զէն վասն հաստատելոյ զանդրդրութիւն նեղեալ եղբարց ձերոց, վասն պարգևելոյ զապահովութիւն ընտանեաց ձերոց, վասն գտանելոյ զողորմութիւն ընտանեաց ձերոց, վասն գտանելոյ զողորմութիւն Թագաւորի և վասն պաշտպանելոյ Հայրենեաց։ Տփխիս. 24 Մայիսի 1827 ամի։

Հրամանատար զօրաց Վրաստանի,
Վոյեննոյ Ղուբերնագօր Տփխիսայ
Ղինրալ Ադիւտանտ Սիպիրեանն։

Ռ.

Ա-աջադրութեան Հայոց նոր սարքվելոյ գնդի համար։

1. Հայոց զօրքը կունենայ բատալիոններ։

2. Բատալիոնի մէջ են մտնում Հայք իրանց սեփական ցանկութեամբն։

3. Արանք վերենկալնվում 18 տարեկանից մինչև 30 տարեկան մարդիկ, ամա էս կանոնն հիմի չէ կարող դայիմ

պահպանվիլ, միայն պահանջվում է, որ մարդս բաւական զօրութիւն ունենայ պախօդ գնալու համար։

4· Նրանք ազատ կուլին իրանց օղլուշաղոցին ամենայն խարջ տալուցն և Ծառայութենիցն, քանի ժամանակ որ էս Ծառայութեան մէջն կուլին։

5· Նրանք պէտք է կապվին միայն Ծառայել էնքան ժամանակ, քանի կռիվն Ղզլբաշի հետ կու երկարվի, իժում նրանք կու ազատվին գնալ իրանց տներն, կամ մնալ Ծառայութեան զօրքի մէջ։

6· Նրանց առջեվն կարգվելու ժամանակին կրկարդան Մեծ Պետրոսէն գրած ղշուն խաղացնելու կարգն և էն պատիժներն, որն որ կու վայելէ օրէնք կոտրողին, և դապուլ են անում էնդունցն· ինչպէս որ ղշունի չինովնիկներն։

7· Նրանք օրթում են ուտում հաւատարիմ Ծառայութեան համար։

8· Այս կանոններու վրա վերենկալվում ամէն ցանկացողներն և նրանց ապրուստ կուտան խազնայից, մինչև լեցվի առաջին բատալիոնի կարգը։

9· Կազմվածք զինուորութեանն·

Հտաբ Օֆիցեր.....	1։
Կապիտանք.....	2։
Հտաբս Կապիտանք.....	2։
Պօռուտչիկ.....	4։
Պոտպօռուչիկ.....	4։
Խազինադար.....	1։
Ադիւտանտ.....	1։
Օռուռնա ածողք.....	4։
Բարաբան ածողք.....	4։
Ունտեր Օֆիցերք.....	80։

Զինուորք . . . . . 800։

Զինուորաց սէլապանք . . . 40։

10· Օֆիցարներուն տեղ ջոկվում են Ռնտէր Օֆիցարներեմէն հրամանաւ Գլխաւոր Զօրապետին, իրանց զօրաղութեան, խելքի և ջերմեռանդութեան գօրա։

11· Իրանց յատուկ քաջութեան համար կու յայտնըվին վարձ ստանալու առաջին Օֆիցերական չինով։

12· Զարթնէ (՞) էստուրն իւրաքանչիւր բատալիօնի մեծաւորն կուլի Շտաբս Օֆիցեր կամ Կապիտան ներկայ ծառայութեան, որ պիտի լինի Հայոցմէն։

13· Զմէն բատալիօնի համար նշանակվում են Վահանայ և Հէքիմ բնակչացմէն։

14· Զմէն բատալիօնն կու բաժանվի յութն հարիւրս· հարիւրն 'ի տասն տասնեակս։

15· Իւրաքանչիւր զինուորի խազնիցը կուտան թվանք, թասմա գոտիկով պարկ, երեսուն քշելու գուլլով, բարութով և տասն չախմախի քարով։

16· Իւրաքանչիւր զինուորն պիտի ունենալ իւր սեփական խանջալն և տիլոյի պարկն ուսոյ վրա չորս օրվան պաշար տանելու համար։

17· Ռնտէր Օֆիցերներն ունենան թուր խանջալի տեղ։

18· Օֆիցերներն ունենան մին ջուխտ դաբանչա, և թուր։

19· Շուրեր։

Ղուխէն բօղ մահուտից։

Զրխալուխն նաշուրի մուգ ռանգն։

Շարվարն նաշուրի էլի էն ռանգն։

Գդակն վրացու նման։

Նշանջի։

20· Ամէն չինովնիկ ստանայ տօնլուխ ինչպէս զինուորական աստիճանաւորներն ներկայ ծառայութեան։

21· Շուրի տեղ ստանան զինուորքն 10 մանէթ սպիտակ դրամ մէկ տարուն, և Ունտէր Օֆիցերներն 15 մանէթ։ Այս փողովն պիտին շուրիր կարել իրենց համար, մինչև կառավարութիւնն կարգեսցէ տալ նրանցն շուրիր խազինիցն։

22· Այդ զօրքին կուտան չատիրներ։

23· Բարաբանչիկ և զուռնայ ածողներն պէտք է հանել պօլկերէմէն։

24· Պաշար ստանան ինչպէս ներկայ զօրքն։

25· Այրը որ կարելի կուլի կրշինվին պրովիանտսկոյ և կոմիսարիատսկոյ դավթարներ և կուտան նրանցն տասն օրվայ պաշար։

26· Ինչվախտ որ դաւթար և պաշարն կուտան, էն օրվանիցն օրական տօնլուղն կու վիրջանայ։

27· Իւանդներուն կու ընդունին և կու պահպանեն զինուորական հիւանդանոցներումն։

28· Ուրաքանչիւր տասն զինուորն կունենայ մէկ բեռ բարձելոյ ձի, վրան, պղինձ և երկու փութ և քսան ու հինգ ֆունթ սուխարի· քսանի համար կուլի մէկ մշակ։ Յիսունի համար մէկ կացին և մէկ թի։ Ամէն մէկ հարիւրը մին դաստայ կուլին։

29· Ծառայութիւն·

Պիտին գիտենալ շատ հարկաւոր մասն եագրի խաղալուն և նշանին միզնել, բաժանվիլ, քսանն միասին, հարիւրն միասին նաև բիրթ կապել։

Պարտուլ կանգնիլ ամենայն հարկաւոր զգուշութեամբ։

Ծանրաբեռնեսցեն նրանցն և չնեղացնեն ուրիշ բաներով։

Ամենու վրա աւելի պահանջվում է կատարեալ և մունջ հնազանդութիւն մեծաւորաց։

Խաղաղացնելու խօսքերն պիտի լինիլ՝ այոց լեզուովն։

Հլեանց կուտան կարճացրած կանոններ Մեծին Պետրոսի և ուրիշ սահման կալգին ծառայութեան։

Տփխիս. 24 Մայիսի 1827 ամի։

Հրամանատար զօրաց Վրաստանի,
Վալենտին Ղուբերնատոր Տփխիսայ,
Գիներ. Ադիւտանտ Սիպիաղին։

Ծանօթ. Այս երկու վկայագիրքս ընդօրինակեցան 'ի սպագիր օրինակաց։ Ծանօթ. Զ. Մ։

Գ.

Ճոցոյի անուանց Հայոց Զինուորաց 'ի 13 Մայիսի 1827 ամի։

Կապիտան Եպգոր Լազարեան։
Պրապորշչիկ Դաւիթ Կօրղանով։

Ոչխոտ Օֆիցերք։

Ալեքսանդր Նազարով
Յարութիւն Խանդամով
Դաւիթ Կօրղանով
Սօլոմոն Ժանղուլով
} Տփխիսեցիք։

Դաբրիել Տէր Մէլքիսէդով, Ղարաբաղցի։
Կարապետ Բագալով, Ղարաբաղցի։

Ոնդէր Օֆիցերք։

1. Մարգար Բաբայեան, Ուրումեցի։
2. Լազար Սարգիսով, Ուրումեցի։
3. Աւագ Յոհաննիսեան, Ուրումեցի։
4. Աւետիք Արզումանով, Սալմաստեցի։
5. Յակոբ Արզումանով, Սալմաստեցի։
6. Խուդավերդի Մանուկեան, Ուրումեցի։

7· Գրիգոր Պողոսեան, Սալմաստեցի։
8· Հիէմուրազ Շողատով, Իմերէթեցի։
9· Մուրադ Սահակեան, Էջմիածնեցի։
10· Յարգիս Մարգարով, Խոյեցի։
11· Ալահվերտի Միքայէլեան, Ղարաբաղցի։
12· Յովհաննէս Բաղդասարեան, Ղարաբաղցի։

Զինուորք

1· Յովսէփ Իշխեան, Ուրումեցի։
2· Ռունիաթ Ահարոնեան, Ուրումեցի։
3· Նաներ Յովսէփեան, Ուրումեցի։
4· Խուդավերդի Յակոբեան, Սալմաստեցի։
5· Վարդան Յարութիւնեան, Սալմաստեցի։
6· Գէորգ Բաղդասարեան, Սալմաստեցի։
7· Յակոբ Ալահվերտեան, Սալմաստեցի։
8· Ասադ Յարութիւնեան, Սալմաստեցի։
9· Յոհան Մարտիրոսեան, Սալմաստեցի։
10· Գաւիթ Ռուստամեան, Սալմաստեցի։
11· Ղազար Աբրահամեան, Թիֆլիզեցի։
12· Խանղբիվերտի Զաքարեան, Սալմաստեցի։
13· Մանուկ Յոհանեան, Սալմաստեցի։
14· Ասադ Յոհաննիսեան, Երևանցի։
15· Յարգիս Ղազարեան, Բայեզիտեցի։
16· Մարտիրոս Թումանեան, Սալմաստեցի։
17· Մուրադ Մանուէլով, Սալմաստեցի։
18· Յարգիս Զալաբեան, Սալմաստեցի։
19· Օրդու Սարգսեան, Սալմաստեցի։
20· Միքայէլ Սարգսեան, Սալմաստեցի։
21· Մարգար Յոհաննիսեան, Ուրումեցի։
22· Ասադ Պողոսեան, Ուրումեցի։
23· Լոլի Մէլիքեան, Խոյեցի։
24· Պախրադ Սաֆարեան, Սալմաստեցի։
25· Ղարաբ Գրիգորեան, Սալմաստեցի։
26· Շախղելդը Շիւվարշիզով, Ուրումեցի։
27· Գովլաթ Պողոսեան, Երևանցի։
28· Ուսադ Ադրամանով, Սալմաստեցի։
29· Յարութիւն Ղազարեան, Սալմաստեցի։
30· Այվազ Ղազարեան, Սալմաստեցի։
31· Դիգար Յոհաննիսեան, Սալմաստեցի։
32· Կարապետ Եղիազարեան, Սալմաստեցի։
33· Գրիգոր Ասադեան, Սալմաստեցի։
34· Ալահվերտի Ղազարեան, Սալմաստեցի։

35· Յոհան Յարութիւնեան, Սալմասեցի։
36· Ենովք Յոհաննիսեան, Սալմասեցի
37· Շահբազ Յովսէփեան, Սալմասեցի։
38· Յակոբ Յոհաննիսեան, Խոյեցի։
39· Յոհան Սազաթելեան, Սալմասեցի
40· Յարգիս Խալաթեան, Սալմասեցի
41· Ղազար Գասպարեան, Ուրումեցի։
42· Պազար Տէր Սարգսեան, Սալմասեցի
43· Ղազան Գրիգորեան, Խոյեցի։
44· Ղրզուման Սարգսեան, Սալմասեցի։
45· Ղազարոսի Վարդանեան, Սալմասեցի։
46· Յակոբ Մուրադխանով, Ուրումեցի
47· Խուդա Ալահվերտեան Սալմասեցի
48· Յոհան Տէր Ղազարեան, Սալմասեցի։
49· Պօղոս Խանամիտով, Սալմասեցի։
50· Կարապետ Այվազեան, Պախրաքեցի։
51· Օշաքար Յոհաննիսեան, Ուրումեցի։
52· Կարապետ Խաչատուրեան, Ուրումեցի։
53· Իսանղրիվերտի Մխիթարեան, Ուրումեցի։
54· Խուդավերտի Սողոմոնեան, Ուրումեցի։
55· Խուդավերտի Աւաքեան, Խոյեցի։
56· Ներսիսոս Պօղոսեան, Սալմասեցի։
57· Ֆոխվերտի Յոհաննիսեան, Սալմասեցի։
58· Ովսէս Գրիգորեան, Սալմասեցի
59· Խաչատուր Կարապետեան, Ուրումեցի
60· Յարութիւն Յոհաննեսեան, Սալմասեցի
61· Կարապետ Մուրատեան, Սալմասեցի։
62· Յոհաննէս Մէքրոյեան, Սալմասեցի։
63· Կարապետ Խանգիալդեան, Սալմասեցի
64· Խաչա Ղազարեան, Ուրումեցի։
65· Յարութիւն Խաչատուրեան, Ուրումեցի։
66· Մկրտիչ Մինասեան, Սալմասեցի։
67· Վարդան Շահնազարեան, Սալմասեցի։
68· Խաչատուր Յակոբեան, Ուրումեցի։
69· Ղազար Միրզոյեան, Վանեցի։
70· Յարութիւն Յոհաննիսեան, Ղարաքաղցի։
71· Յարգիս Արզումանեան, Ուրումեցի
72· Վարդան Յոհաննիսեան, Ուրումեցի։
73· Պազար Սաֆարեան, Խոյեցի։
74· Յարգիս Շահբազեան, Սալմասեցի։
75· Յարգիս Այվազեան, Սալմասեցի։
76· Յոհաննէս Բաղդասարեան, Սալմասեցի։
77· Յոհաննէս Ենիշբօրով, Նախիջեւանեցի։

78· Գէորգ Յարութիւնեան, Բա-
յազիտեցի։
79· Սարգսն Խաչատուրով, Ղա-
րաբաղցի։
80· Հայնազար Մուրատեան,
Ղարաբաղցի։
81· Փիլիպոս Պետակով, Էջմի-
ածնեցի։
82· Կարապետ Պետրոսեան, Էջմի-
ածնեցի։
83· Յոհաննէս Վարդանեան,
Էջմիածնեցի։
84· Մանուկ Եղազարեան, Էջմի-
ածնեցի։
85· Մանուկ Ալահվերդեան, Ու-
րումեցի։
86· Մատթէոս Խօջայեան, Ատա-
նացի։
87· Հայպաղ Ղազարեան, Ու-
րումեցի։
88· Գէորգ Ադաքելեան, Թի-
ֆլիզեցի։
89· Ալավերդ Իսկանդարեան,
Ղազախեցի։
90· Մաքար Ալէքսանեան, Էջմի-
ածնեցի։
91· Յակոբ Մաղմանեան, Թիֆլի-
զեցի։
92· Օրուպ Եղիազարեան, Թի-
ֆլիզեցի։
93· Կարապետ Բաղայեան, Ար-
զրումեցի։
94· Սարգիս Ղամբարեան, Ղար-
սեցի։
95· Լուսէ Մաթոսեան, Թիֆլի-
զեցի։
96· Գաւիթ Ղազարեան, Թիֆլի-
զեցի։
97· Սարգիս Յոհաննիսեան,
Սալմաստեցի։
98· Սուսամ Լազինով, Թիֆ-
լիզեցի։
99· Գէորգ Գալստեան, Թիֆլի-
զեցի։
100· Հուսէին Ղազի օղլի, Թիֆ-
լիզեցի։
101· Հայի Ժանժուղազեան,
. . . . . .
102· Գայիսօտրով Էյլարով, Թի-
ֆլիզեցի։
103· Գրիգոր Աբիմելիքով,
Թիֆլիզեցի։
104· Յարութիւն Անտոնեան,
Ղարաբաղցի։
105· Յովսէփ Սարգսեան, Բաղ-
դատեցի։
106· Գ. Սվա Շաբուրով, Սգնա-
խեցի։
107· Ծղալօբա Պարունբէկով,
Թիֆլիզեցի։
108· Գէորգ Դուկանով, Թիֆլի-
զեցի։
109· Պօղոս Յոհաննիսեան, Ե-
րևանցի։

Ծանօթ. Անուանքն յայսմ ցուցակի տպագրեցան համաձայն ձեռագիր օրինակին՝ յօրինելոյ 'ի 1827 ամի 'ի Մայիսի 13, և որ գտանի առ մեզ։ Ծանօթ. Զ· Մ·

ԺԱ.

ՐԸՆ

ԳՈՎԵՍՏԻ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ

'Ի գաղտուստ քահանայապետին մերոյ Յհոան Եփրեմայ 'ի սեպհական գահ իւր յիշեալածին յետ եօթնամեայ տարագրութեանն.

Ա՛ստուծոյ 'ի Մ՚ասուրայ Դպրի Զմիտոնացոյ։

Ի՞նչ հիացման տեսիլ, նորաբո՛ւնչ տեսարան, ժամ ահա քաջալատեսիս՝ զփարիզին հնչեցուցանել նուագ „Փրիզին 'ի սենեակս մեր, երգեսցուք զսէր“ (Երգ)։

Ընտիրք են քեզ Մայր սուրբ պանծալի Սիօն հոգևորական տխրագլխտեսին այն քո փեսայ՝ որ եօթնամեայ տարագրութեամբ ոսկրամաշ կիզանէր 'ի սէր քումդ կաթոտանաց, հանգիսաւ աւանդիկ 'ի Մայրութեան քո գիրկս՝ զնիրունեան երգելով թերևս հոգեկիրն Փիլիոնիի զառ Ստուած գոհաբանութեանն ազերս „Արդ արձակեա զծառայս քո 'ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն ժողովրդեան քո“ (Լուկ. Բ. 29)։ Ի՛նչ որ գոչէիրդ երբեմն արտասուք 'ի ծնօտս „Գնացէք որդեակք՝ գնացէք, զի ես մնացի աւերակ. մերկեա արդ 'ի քէն զհանգերձ սգոյ լպկանաց քոց, և տես զկեալ ուրախութիւնն քեզ յԱստուծոյ. զի ահա՛ սիրեալ զան որդիքն քո՝ զորս յուզարկեցեր, զան ժողովեալք... զուարճացեալք փառաքն Աստուծոյ“ (Բարուխ. Դ. 37)։ „Հաս քեզ օր հատուցման և ամ փրկութեան“ (Եսայ. ԿԴ. 4)։

Ընտիրք են խնդութեան և քեզ իսկապէս Վահանայապետդ մեծ՝ հայրդ մեր պարծանաց՝ փեսայդ բարեփառ Սիոնի. Մա՛ռ՝ մնա այսուհետև անկեղակարծ

'ի գերալրականն այն բերկրանաց հանդէս՝ որում ցանկ տենչայիր, զոր միշտ խնդրէիր, հոգւով համբուրէիր, աղօթիւք հայցէիր։ Այնուհետև միանգամ, և փառս՝ բերանալիր գոհութեամբ առ յաւիտենականն վերընծայեա։ Ոչ արդեօք բնաւ հարաւային խստաշունչ հողմոցն վիմատապալ հնչմունք, որ զբովանդակ սիւնս տիեզերաց շարժել դիտէին։ Ոչ պարսկայինն այն դժոխազնեայ կերպարանացն դժնէատեսիլ դառնութիւն, որք առ երեւուածն աչաց մերոց յաճախէին։ Ահա հանգիստ է առ ամենեսեան, և անդորր խաղաղութիւն յամենեցունց համբուրեալ· կայ իւրաքանչիւր ոք՝ ըստ տեսանողին ձայնելոյ՝ շաբաթացեալ ընդ որթով իւրով և ընդ թզենեաւ (Մէյ· Գ· 4) փոխանակ ամօթոյն և արամութեան՝ զկրկին ուրախութիւնն զգեցեալ, և փոխանակ անարգանացն՝ զցնծութիւն (Նոայ· կա· 7)։

Որ զօրութիւնն է ժողովրդեան իւրոյ Աստուած (Սաղ· ԺԷ· 8)՝ ոչ եթող ինքն զմեղաւորաց գաւազանս 'ի վիճակս արդարոց (Սաղ· ճիգ· 3) այլ՝ յայց ել, ծանեաւ զիւրսն, և մերձեցոյց առ ինքն (Թուոց· ԺԸ· 5)։ Որպէս մայր (ասէր)՝ որ զմանուկ իւր գգուիցէ, այնպէս գգուեցից զձեզ (Նոայ· կԷ· 13)։

Զի թէև 'ի գերութիւն վարեցաւ Եզեկիա, այլ անդէն եկն եկաց Զօրաբաբէլ զօրացեալ՝ առ 'ի նորոգել ըզպետութիւնն։ Ընտիրքոս զսրբութիւն Տաճարին պղծեալ և Յուդա Մակաբեան հայրենի օրինացն նախանձայոյզ՝ վերստին զնոյն պայծառազարդեալ։ Որով և խաղաղութեանն ձայն անդրէն հնչեցաւ, և քրիստոսազօր յաղթութիւնն վերստին լսելի եղև· թշնամին հաւատոյ պարտեալ ամաչեաց, և Հօրն լուսոյ արևն շնորհաց մեծի գթութեան կրկին արդ ծագեաց, 'ի մեզ իսկ լուսեն առեալ թնդեա

սաւետարանութեանն Յիսուսմայ „Դու փրկութեամբ շրջի-ցին մարգիկ“ (Ը. 22)։

Բնդ՝ զի և զերազոյն Պետդ մեր ահա՝ և ընդհանուր Պապքրիստոնդ Հայկազնեայց, նահապետին հանգոյն Յակովբայ՝ ցոյժ միով անմխիթարութեան երթեալ 'ի պանդխտութիւն, երկոքումբք ահա բանակօք եղեր մեզ շնորհաբեր։ Եւ ընդէր ապա ոչ փութայցես զԱւութեանն եղանակել վստահօրէն համարձակ „Այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, 'ի սմա բնակեցայց“, և այլն (Սաղ. ՃԽԲ. 14)։

Օ՞ի՞նչ այլ յաւելուածք իցեն բանից. Ծագեաց առ մեզ կանխաւ Արուսեակն յառաջընթաց՝ Ներսէս տիրազօր Արհին զերապանծ, պատգամ՝ զմարգարէականն մեզ առբերելով „Ո՛ռ՝ փախերուք յերեսաց հիւսիսոյ, ասէ Տէր“ (Զաք. Բ. 6)։ Փայլեաց արդ և Արեգակնդ պատուածալոյս՝ հոգենշոյլ քո ճառագայթիւք՝ լուսաւոր խաղաղութեամբ յամն յոլովս 'ի պարծանս մխիթարութեան մեր ամենեցուն և համայն ազգի։

Դրչանիկ ինձ թուի ժամն՝ Հարք սուրբք՝ և ամենալուսաւոր հանդիսացեալ՝ այս կէտ վայրկենի, յորում ահա զառ 'ի վաղուց հետէ զմեր անձկալին՝ զգալեօքս վայելեմք տեսութեամբք։ Եւ զի՞նչ այլ քան զայս բերկրանաց ոգւոյ շարժառիթ՝ ասիցէ ոք։

Հնծանահարք բերթամիւսայ զոհիւք նուիրանաց խրախամիտ բերկրեցան ընդ զալուստ Տապանակին Տեառն 'ի դիմաց (Ա. Նագ. Ը. 13)։ Որպիսի՞ ինչ ապա ցնծութեան պարուք կայթել հոգեպէս անկ իցէ մեզ կարօտելոցս որդւոց՝ 'ի տեսութեան մեծի Քահանայապետիս մերոյ և ամենագթառատ Հօրս հասարակաց։ Եւ ո՞ ժուժկալեսցէ աւուր մտի սորա (Մաղաք. Գ. 2)։

Ամեն՝ ձայն ցնծութեան հնչեսցուք, զփառս ի բարձունս առաքեսցուք՝ զոհանալով զՔրիստոսէն մերմէ զԱստուծոյ. որ արժանիս զմեզ արար մեծամեծացս հանդիպիլ շնորհաց, և մաղթեսցուք ի նմանէ խաղաղութիւն, արքարութիւն, և փառք Աստուածպաշտութեան յաւիտենից յաւիտեանս։

ԺԴ.

ԳԱՏՐԻՆ

Նամէ Եէրի Գամուլիոյ սա Կոյսն Նիկոմէդիոյ։

Աստուածազօր Ինքնակալ Կայսր ամենայն Ռուսաց Ամենողորմ Խաղաղութիւն։

„Դու յարուցեալ զՔրիստոս ի վերայ Աթոռի. ժամանակ զԹագոյդ նորա հաստատ է ժամ“ (Պաղմ. ճա. 14)։

Ըստ անքննելի իրաւանց Ցնորն Ամենակալի, ի գլխաւորան՝ որ երբեմն պանծալին էր ընդ ազգաս սիրելեաց, ցանկալի անզուգականն Հռոմայ և իմաստանոյն Յունաստանի՝ այս նախարանակ ինքեան սակաւաթիւ գերգաստանի՝ Նոյի արդարոյ՝ զամն շարիք հալածեալ և կէս հնծէր անքնդհատ և ազգքեր ընդ երկամիտ լծոցք Պարսից, Թաթհայց և Հազարացւոց՝ հիսունուրց առանուն մարգարէին Մահմեդի։ Ինածին մարեցուցիչն ազանց և փոյր տարակուսիչն կայս տո քրիստոնեայն Հայաստան ի կատար հատուցին զկորուստս նորա և զաւերն անմոռացելի։ Որոյ նորա իրրև զերանակս անդէոց երբեմն մնասեալ լինէին ի բերան հոմայնաբնակ մահուան ի փառս հաստատց,

և երբեմն անվնաս վնասակար լինէին այլազգեաց։ Ժամանակակից պատմագրաց ազգիս՝ ցանկանալով ստանալ յապայ եկեղեցոյս զազգիս պատմութիւն, աւանդիցին զազգութիւն անօրինակ։ Որքանչափ տոգի՝ ոգեան ճոպաղքիս ասասանին։ Էջ իւրաքանչիւր բռնանգակի յինքեան զազգասալի նկարագրութիւն բազմաթիւ տպանութեանց։ Այսպագոյք մեր ամենարկեալ 'ի պատմութիւն Հայաստանի համարեցին զայն կամ կեղծիք անհաւատալի կամ ծնունդ խանգար երևակայութեանց հնգնոսկաց նոցա։ Այսպիսիք էին թշուառութիւնք Հայաստանի։ Ինանք և մահ, աւար և կոտորած անցնիւր Հայոց զգան յերկոս թաւալիւր 'ի վերայ լեռնի կատաղի բանաւորի ուրուք՝ անծանօթի Աստուծոյ, օրինաց և իրաւանց մոգոգիութեան։

Ի վերջոյ՝ լաւ չափ թշուառութեանց վանդալեան Հայաստանի։ Փեշաւութիւնն Աստուածեղն հաճեցաւ վերականգնել զնա, որքեր զգարաւոր արքաստաս զնոսանեղի զիշոց յայսոնց նորա։ և ահա յաջնանալն Հիւսիսոյ ճառագայթեցաւ յեղերս Հայաստանի ոգեկոչ շնորհաւորիւն ուրախութեան։ Հնչեցաւ աւետարանութիւն փրկութեան՝ նորոգութեան և քաղաքացի ազատութեան։

Ասաղեան Պայսերական Թեմութեան «Ս. Հայաստան Հայոց Ազգ» գրագրութեան Գրքասարազար «Դարեհատոց Գրոց» նշանեցաւ ազատութեամբ նեղեալն Հայաստանի։ Դոր փարաւոնն մեր՝ յանհամեմատս մոլեգնեալն քան զհինան՝ նախատեսեալ զկործանումն Հայաստանեաց զեմ ամբարշտութեանց իւրոց 'ի ձեռն «Գ.» Մարգարէի Գրքասասարէր՝ երևակայեաց հանգամանիլ «Գեզ», նոցանահանելոյդ 'ի յաւերտեանց Կ զերս իրաւանց Մարգա-

ուրին Խաղաւորաց. ահա հիմնադրութիւն փրկութեան զինուորեալ եկեղեցւոյ Քրիստոսի 'ի սիրոտ ուրացեալոյն ազգանդանի։

Սակ փրկարար ակնարկութիւն Քո՝ Զգուստաֆան Խնդգնուք՝ ոչոչալեաց զամբարտաւանութիւն մոլեգնեալ բռնաւորին և ամենայն վատաբարհուրդ արքանեկաց ա-նօրէն ըղձից նորա։ Բանակք պահապան զուարթնոց պատսպարեցին զգունդս Քրիստոսանուն զինուորութեանց Քոց. անյաղ մահն հանգերձ ամենայն սոսկալի արհաւաքք Ռոմայեցք փրապետէր 'ի խառնաշփոթ ժողովս հակառակորդաց Քոց, և այսոքիկ նոր Զգիպտացիք բռնադատեցան յակամայս երկրորդել զբարբառ հնոցն. փախիցուք յերեսաց Ռուսաց, զի Ցէր պատերազմի ընդ սոցա։

Յանկարծ ծաղկափթիթ երևի շուշան Քրիստոնէական բարեպաշտութեան անդ՝ ուր ամբարշտութիւնն թաքչուրէր. ուր առաքինութիւնն էր կոխան մոլութեանց։ Աղաղակք, գիւղք, տունք, փոխակերպեալք յանապատս՝ ընանին բնակչաք, որք աներկիւղ 'ի ապառնալեաց նեղչաց իւրեանց վերադարձին զպաղատանս իւրեանց առ Ցէր Աստուած՝ որ շնորհեաց ինքեանց 'ի գէմս Խաղաւորիդ Ինձի զխաղաղութիւն փրկութեան։ Զոր տեսեալ զանընկճելի թշնամին արդարութեան նուաճեալ առ պատուանդանաւ Գերամբարձ Պահի Քոյ՝ զմայեալ յանսահման հրճուանս հոգւոյ, աւետարանեն միմեանց. այս է Նորոգումն աջոյն Խարձելոյ. ահա արժանացաք բարձրել ընդ խաղաղաւէտ գայիսոնաւ Ինքնակալին ամենայն Ռուսաց։

Այո՝ Աստուածապատակ Խաղաւոր և ես անարժան ՀՈՒԼԻՍ ուղղափառ եկեղեցւոյ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ 'ի վերջին աւուրս վշտալի կենաց իմոց արժանի եղէ տեսանել զաս-

քանչելահրաշ փրկութիւն ամենասիրելոյս Հայաստանի։ Յամ 1393 յիսուն և չորս Հայրապետք Հայոց կրեալ զանօրինակ հալածանս և զտանջանս, և 'ի սիրոյ Հայրենեաց իւրեանց տեսեալ զնրութիւնհեղութիւն և զգերութիւն, զկորուստ և զկատաղութիւն՝ 'ի Թուխտ հասանկեալ աղէխորով վշտագնութեամբ ամփոփեցան 'ի գոգն յաւիտենից։ Եւ միայն արժանի զտայ տեսանել զայս փրկանաւոր փոփոխութիւն վիճակի նորա։ Եւ միայն տեսեալ զկատարած տառապանաց իմոց և Եկեղեցւոյ Քրիստոսի՝ այսօր խայտամ 'ի մէջ բազմերամ զաւակաց Հայաստանի՝ ազատելոց անպայման ողորմութեամբ Քրով յաշխարհաց անողորմ նոր Փարաւոնի մերոյ։ Իբր ութն հազար գերդաստանք՝ միմիայն փոփոգելով հնգահազարք Դայիսոնի Քրում, Սրբազան անուան Քրում, և բաղձացեալ վայելել զմաքուր երանութիւն 'ի ներքոյ խաղաղաւէտ բարեգթութեան Քրոյ, զոհեցին զամենայն ստացուածս իւրեանց և զտեղիս ծննդեան և հնազանդեալ ձայնի առ 'ի Քրոյդ բարութենէ նշանակեալ վասն տեզափոխութեան նոցա 'ի ծոց Հայաստանի արժանաւոր շառաւիղի պանծալի տոհմին Եղիազարեանց՝ զոր յոչ վերապատուն, անակնուանելի շառապանաք թողին զամենայն և փութացան յերկիրն աւետեաց՝ 'ի փարելի հովանաւորութիւն Քրոյ։ Եւ միում միում 'ի սոցանէ սաստուցանեմ օրհնել զանգին Ընուն Քրոյ՝ Ամենահնամ թագաւոր, և չիք ինչ վասն իմ քան զայս ասելի։ Օրհնելով զանմոռանալի Ընուն Քրոյ՝ Ինքնակալ թագաւոր՝ օրհնաբանեմք զԱստուած՝ որ նախատահմանեաց, ընտրեաց և էօծ զՔեզ թագաւորել նորոյս Իսրայէլի։ և 'ի ձեռն Քո պարգևեաց զփրկութիւն ամենայն Քրիստոնէից՝ որ 'ի սփիւռս արեղերաց։

Խարհամճանց, Օգոստոսփոս թագաւոր, Վեղ սեփոհան մարդասիրութեամբ վերընդունել զայսոսիկ ըստ զարուեստիցն անսահման շնորհակալութեան և անեղծ երախտագիտութեան ծերունեայս իրրև զխունկ անուշից մատուցեալ Վեղ 'ի սեղան սրտի իմոյ և հանոյն բանեալին Քրիստոսփոսն հօտի՝ ինձ յանձն եղելոյ ցերկնաւոր հանգիստարքին մերոյս հաւատոց: Եւ ոչ յերկար ինչ ելից զայս ուրախութիւն 'ի ստորինս յայսմ աշխարհի· և յարժամ կացից առաջի յաւիտենական Քահանայապետի մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ անդանօր 'ի մէջ որոց հրեշտակաց նորա և ամենայն ընտրելոցն երամոց՝ ազաչեցից զանպատում գթութիւն նորա զեղուլ 'ի վերայ Քեզ, թագաւոր Ամենարարչաշնչ, զամենատաւ շնորհս իւր, զերկնային զքաղաքութիւն անպատում:

Ընկալ, Ինքնակալ թագաւոր, զԵպիսկոպոսն Աշոտն Աշնակծին, զԱրքաղնատուրբ Պետրոսն Ամոյոց և զամենայն եկեղեցիս՝ որք ընդ նոքաւք և զմիլիոնաւոր աղքս Ամոյոց 'ի Քեզ հովանի հեղաշամբոյր· պաշտպանեա նոցա, հանգի և պատապարեա յամենայն զբպարտութենանց՝ որք ցայսոր ժամանակի վշտացուցին զնոսա: Ընդ սոսա բարեհաճեալց ընդունիլ 'ի գութ Ամենազորդ Ցերութեան Քեզ և զԳովարժան Յաչերդն իմ զԳարձրապատիս Արքաղան Տիրտեռ Աղբեպիսկոպոսն: Յօրէ յանձն առնղայն իմ զայս ստատիճան իմ, այս մեծանուն Ամենեցուց անգաղտաբ փաստակի անօրինակ ջերմեռանդութեամբ յօգուտ Ամենայս, Արքաղնատուրբ Աբրաքամեան Պետրոսին և համարձակ ազգին: Մանաւանդ 'ի ժամանակս եօթնամեայ ստրատարութեան իմոյ և հալածանացս 'ի Պարսից՝ զամենայն ընկալաւ զիս, սփոփեաց և արբեաց զարտասուս իմ և զարտասուին աւուրս ծերութեան իմոյ պէսպիսացոյց

կատարեալ որդիական մտերմութեամբ։ Հանապազապետիդ այդմիկ յանձն է յինէն լինել պատկեր իմ, Սրբազնասուրբ Արարատեան Սիւնհոդոսի և բովանդակ ազգիս Հայոց առ պատուանդանաւ Աստուածապարգև Աթոռոյս Հոյ։ Հայեաց՝ Աստուածընտիր Խաղաւոր 'ի պաղատանս նորա աչօք ողորմութեան Հոյ և բարեհաճեաց ուրախամիտ դարձուցանել զնա, զի նախ քան զվախճան կենաց իմոց յանձն արարից 'ի դա լիովին զղեակ Պատրիարքական Կառավարութեան։ Առ ցաւագին ծերութեանս և զգայարանացս տկարութեան՝ որ զայրացեալն է այժմ և զայրանայ օր քան զօր, ցանկամ վաղագոյն գտանիլ զնա աստ. զի փոխանորդեալ զտեղի իմ, շարունակեսցէ ըստ Աստուածաձիր կարողութեանն բարեգոյն օրինակաւ զկառավարութիւն տանս այսորիկ՝ հանդերձ հաւատարիմ հպատակութեանն արժանաւոր ծառայութեամբ առ Խաղաւորութիւն Ձեր։

Աստուածազօր Ինքնակալ Խաղաւոր՝ Օգոստափառ Ցեծ Կայսերութեան Ձերոյ, ամենախոնարհ ծառայ և աղօթարար Ընդհանրական Պատրիարք Հայոց

Ներսէս։

'Ի 18 Հոկտեմբերի 1828 ամի Ցեառն։

'Ի յԱրարատեան Աթոռն ամենայն Հայոց 'ի Սուրբ Էջմիածին։

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Կայսեր Ռոսաց Նիկողայոսի Ա.

Հարձրասահման Պատրիարք Էջմիածնի Ներսեսի։

Ինկալաք մեք առանձին հաճութեամբ նորոգ 'ի նամակի ձերում 'ի 18 Հոկտեմբ. անցեալ ամի գրեալ. զար-

տայայտումն զգացողութեանց ձերոց յարաբերելոց առ Տէրութիւնն Ս·ուսաց և զջերմեռանդութիւն ձեր առ մեզ։ Ո՛չ երկբայիմք զմտերմութենէ և զանփոփոխութենէ այսոցիկ զգացողութեանց, և մեզ ախորժելի է 'ի սմին պատահման նոյնպէս երկրորդել զցուցումն մերս հաստատուն բարեյօժարութեան առ ձեզ։ Յաւիմք ընդ խանգարումն առողջութեան ձերոյ, բայց և այնպէս հաւաստի եմք մեք, թէ նաև ընդ բեռամբ ամաց և ցաւագարութեան դուք ո՛չ դադարիք ըստ թելադրութեան պարտաւորութեան ձերոյ և սիրոյ առ հայրենակիցս անխոնջ ներգործութեամբ պարապիլ 'ի կառավարութիւն և 'ի բարեկարգութիւն եկեղեցւոյ, որում կացուցեալ էք դուք զլուխ։ Ա՛ռաջակ նորին պահանջէ զամենայն մտադրութիւն ձեր· և մեք հաստատապէս յուսամք, թէ ամենաբարձրեալն օրհնելով զվաստակս ձեր և զջանս՝ պահպանեսցէ զաւուրս ձեր յօգուտ ձեզ հաւատացեալ հոգևոր հօտին, և 'ի գործակցութիւն մերոց հոգոզութեանց վասն բարւոյ ազգին Հայոց համօրէն, և թէ այլ ևս յիրկար ո՛չ հարկաւորեսցի խորհիլ վասն ընտրութեան յաջորդին ձերոյ։ 'Ի ձեռնարկել առ այնչափ վսեմական գործ՝ ցանկալի եղև զի վերականգնեսցի կատարեալ անդորրութիւնն 'ի նահանգս սահմանաց Պայսիրութեան մերոյ՝ լքեալս ըստ մասին 'ի Հայոց· և զի բոլոր վաղեմի արմատական օրինագրութիւնքն եկեղեցւոյն ձերոյ ածցին 'ի կատարեալն յայտնութիւն և 'ի պարզութիւն։

Ղերսէս Եպիսկոպոսն ըստ առանձին յանձնարարութեանցն՝ տուելոց ինքեան՝ պարտի տակաւին մնալ 'ի նահանգն Ռեսարաբիոյ։ Ա՝նք յուսամք, թէ նա արդարացուսցէ զմերս վարկ, զգուշաւոր լրացուցմամբ նոյն յանձնարարութեանց։

Մնամք յարաժամ բարեհաճ առ ձեզ։

Ն՝ԻԿՈՂԱՅՈՍ։

Ս. Պ. Բուրգ։ 12 Մարտի 1829 ամի։

Ծանօթ. Պատճէն թարգմանութեան յորմէ ընդօրինակեցաւ թուղթս այս, ունէր և զայսպիսի ստորագրութիւն. „Իսկութեանն համեմատ գրեցի Յովհաննէս վարդապետ ատենագրիր“։ Ծանօթ. Զ. Մ։

ԺԴ.

ՊԱՏԱՐԷՆ

Նամակ Եփրեմ Կաթողիկոսի առ Կոմն Պասկիէվիչ։

Պայծառափայլ Կոմն,

Ողորմած Տէր։

ԱՂՕԹԱՐԱՐ Քեր և Յիսուսի Քրիստոսի, և այլն։ Աստուածային է վճիռն՝ հոգեղինացս վերստին 'ի նոյն ոչ գոլով ումեք անապական. և մարգարէական է բանն. ամենայն ումեք ելս դնել 'ի մոի 'ի հովտէս տրտմութեան այսմիկ։ Զի եթէ հզօր և կարող Պայսերութիւն ամենայն Ռուսաց՝ փառաւոր Թագաւորն Հայաստանեայց զսոյն մարգարէական խօրհրդով զԷրատ յառոյգ երիտասարդական հասակի յաւուր սրբազնակատար Օծութեան իւրոյ, և զայնմ Աստուածապարգև Դառանդն Տէրութեան՝ յատկացուցմամբ հրատարակեաց. ապա ոչ՞ չափ ևս առաւել մեզ անզօր և տկար բազմօրեայ ծերացելոյս է խրատ և պարտաւորութիւն զօրինակ բարեկարգութեան ուսանիլ Աստուածանման ազգեցութեանց Նորին Մեծութեանն։ Վասն որոյ ամենախոնարհաբար խնդրեմ,

Ողորմած Տէր՝ գթութեամբ առ հայրենիս և առ սրբ-
բացեալ տաճար Տեառն Սուրբ Էջմիածին՝ Պատրիարք-
քական հռչակաւոր վանքս և միաբանութիւն հոգևորա-
կանաց հայեցեալ, բարեհաճեցիս յարգել զկտակօրէն
զաղերսագրութիւնս զայս։

Քանզի մինչ բարբարոսական բռնութեանց պարտա-
կուտակումն և կենսական վտանգք հալածական արարեալ
զփտեալ ծերունիս ըստ հետևօղ պարագայից իմոց, ողոր-
մութեամբ վերին և արդար ակնարկութեամբ ամենողորմ
Աթոռոյ սուրբ Պայսերութեան Ռուսաց եօթնամեայ ժա-
մանակօք գտաք զանդորր և զանզբաղ կեցութիւն· յոր-
ժամ 'ի կշիռ եդեալ ղանկարութիւն իմ, հրատարակական
գրով փոխանորդ իմ և ծայրագոյն հոգևորական կառա-
վարիչ 'ի տեղի իմ կացուցի զԱ՛ղբասանու Հայոց Քարձր
Արքազան Գերսէս Արքեպիսկոպոս և Կաթողիկոս։ Որոյ
փորձն առեալ եմ, որ յոյժ խոհեմութեամբ և հաւատար-
մութեամբ յայնքան ժամանակն կառավարեաց 'ի բա-
ցակայութեան զվանական հոգևորականս, զպարտուպա-
հանջն և զհայրական պատիւ մեր։ Մեզ միայն վիճա-
կեալ էր միամտութեամբ հոգւոյ աղօթօղ լինել առ ամե-
նաբաւականն վասն անգին կենաց Քրիստոսազօր Պայսե-
բական Մեծութեանց և Քարձրութեանց՝ որոց շնորհիւն
տեսանել զվերանորոգութիւն հայրենեացն մերոց և պա-
տրիարքական Աթոռոյս՝ որպէս և յաջողեաց Գլխաւո-
նամութիւնն վերին 'ի ձեռս Պայծառափայլութեան մեծ
բարերարիդ Հայաստանեայց՝ վերադարձուցեր զանակնկալս
անպատում փառաք 'ի պատրիարքական Աթոռս այս·
պակաւորեցեր Պայսերական վերակրկնեալ շնորհաբա-
դութեամբ 'ի պատիւ ազգին իմոյ, և խնամարկեա հա-
նապազ որպէս բարեգութ հայր և բարերար տէր ազգովին

զամենեսեան զմեզ, որում չեմք բաւական երախտահատոյց գտանիլ բարեկաւութեանցդ առ մեզ։ Այլ, Պայծառափայլ Տէր, յայտ իսկ է լուսաւոր մտաց Ձերոց՝ թէ բարեհաճութիւնք երկրաւորաց երբեմն ոչ համաձայնին նախատեսութեանն վերին. ուստի բազմիցս յառաջադրեալ հասարակաւորուն բարութիւնք յայլում ժամանակի այլովք կատարին. որպէս Մովսիսիւ խոստացեալ Իսրայէլեան տոհմին զերկիրն բարութեան, Յեսուաւ վիճակեցաւ։ Այնպէս և առ մերս նուաստութիւն 'ի բարեբար Տեառնէդ մտադրեալ ազգաւորուն բարերախտութիւնք տեսանեմ, որում ոչ նպաստ լինի մեացեալ խարխուլ կեանք իմ, որովհետև զկնի բաժանման իմոյ 'ի պայծառափայլ բարերար Տէրութենէդ՝ օր քան զօր տեսութիւնք աչաց իմոց հեռացան և հեռանան յինէն. լսողութիւնք ականջաց տկարացեալք էին, և ևս տկարանան (իբր) ութանամենի առն, և այլ զգայութիւնք իմ միշտ բարեաւ մեայ ասացեալ են և ասեն։

Ուստի երանեալ է այրն՝ որ գիցէ զելս իւր 'ի մտի ոչ խաբելով զենքն և ոչ խաբիլ յաշխարհէ. որոյ վասն ըզկատարեալ կտակագրութիւն իմ ամենախոնարհ խընդրագրով մատուցի 'Նորին Պայծառափայլութեան, և մատուցանեմ Ձերդ Պայծառափայլութեան Դառանգ կացուցանելով Հայոց Պատրիարքական Վանուցս զԱնուրին Արքազնութիւն 'Ներսէս արքեպիսկոպոս և կավալէրն՝ որ 'ի մէնջ, 'ի համայն հոգևորականաց մերոց և յընդհանուր ազգէն մեր Հայոց վկայեալն է գոլ արժանաւոր այս ազգային Պատրիարքական վանուցս սուրբ Էջմիածնի։

Վանորոյ ամենախոնարհարար խնդրեմ և 'ի Ձերդ Պայծառափայլութենէ գթալով առ բազմամեայ ծերունիս՝

զինամոզական միջնորդութիւն Ձեր միաւորել աղերսագրութեան իմոյ՝ մատուցելոյ Նորին Կայսերական Մեծութեան, արժանի արասցես զիս մարգարէական երանութեանն ոչ զկնի վախճանի իմոյ, այլ այժմ 'ի կենդանութեան իմում· զի թէ բարեհաճեալ կաթողիկոսական շքով և գրամատիւք փութացուսցէ առ իս զՆորին Խարձր Արքաշնութիւնն՝ ես ինքնին ձեռամբ իմով ամենայն յօժարութեամբ ունիմ ըստ սովորութեան եկեղեցւոյն մերոյ օծանել զՆերսէս արքեպիսկոպոսն Ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց, և յանձնելով զամենայն պաշտօն և տնտեսութիւն Կաթողիկոսութեան իմոյ նմա՝ զմնացեալ կեանս իմ միամտութեամբ պարապեցուցից յաղօթս և 'ի գեղնամած երկրպագութիւնս առաջի սրբացեալ տաճարիս առ ամենազօր Խաչաւորն սիեղերաց՝ զի անպարտելի արասցէ զսուրբ Կայսերութիւն Նիկոլայ Պավլովիչ Կայսերն համայն Ռուսաց և Խաչաւորին մեր Հայոց· ընդ նմին և Ձերդ Պայծառափայլութեան, և համայն կուսակալաց, զօրապետաց և զօրաց Նորին Մեծութեան, որոց վասն կամ և ցեամ մշտապատրաստ աղօթարար

Կաթողիկոս ամենայն Հայոց Եփրեմ։

'Ի 20 Դեկտեմբերի 1828 ամի·
'Ի Սուրբ Էջմիածին։

ԺԷ.

ԿԸՏՐԻՆ

կոնդակ եէրեմ կաթողիկոսի ՝՝ Արտեշիսկոպոսն Նիբոս։

ՀՐԻՍՏՈՍԻ Նաւապետ Երեմիա Կաթողիկոս ամենայն Հայոց, և Նայրագոյն Պատրիարք Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի, նաև Երուսաղեմայ մայր Աթոռոյ Կաթուղիկէ Էջմիածնի։ Ողջոյն տամք սիրով Պերապատիւ Խարձր Արբազան Ներսէս արքեպիսկոպոսի և ասպետի ամենասիրելւոյ մերում, խնդալ միշտ ի Քրիստոս։

Գլխաւոր Կառավարութիւնն հոգևորական գործոց այլասեռ դաւանութեանց ի 2 ամսեան ապրիլի գրելով առ մեզ զանդրադարձն գրութեան մերոյ առ ինքն ի 23էն Նոյեմբերի ամին անցելոյ յայտնեալ էր զԽարձրագոյն Կամն Նորին Կայսերական Մեծութեանն շուրջ զկարգաւորութեամբ կողմանցդ վեճակաց. զոր զթարգմանութեանն օրինակ առաքելով ընդ այսմ ի տեսութիւն Ձեր՝ հանդերձ առաջնորդական կոնդակաւ յանուն Ձեր, և օրինակք թարգմանութեանն թղթոյ Պայծառափայլ Կուսակալի կողմանցս առ մեզ, և պատասխանեաց մերոց առ նա. և առ Մինիստրն հոգևորական գործոց. զայս գրեմ ամենասիրելւոյդ իմոյ համառօտաբար առ ժամն, ապաքէն վճիռ անյեղլի է, թէ հարկ զօրէնս լուծանէ. և եթէ զօրէնս լուծանէ, չեն ինչ զարմանք, թէ երբեմն փոխեսցէ. և զառաջադրութիւնս։ Սիրտք Խաղաւորաց ի ձեռին Աստուծոյ են, գրեալ է, և Խարձրագոյն կամք տիեզերակալ Խաղաւորի և Կայսեր՝ իսկաքանչ պատկերի Նորին էր՝ որ առաջի եգաւ մեզ, և մեզ անշուշտ պար-

տաւորութիւն էր և հարկ անլուծանելի՝ յարգել՝ ղայն անկեղծ բարեմտութեամբ· վասն որոյ այսպէս ուրեմն հանդերձեալ առաքեցաք զԿոնդակդ· ընտրեցաք զկանդիդատս վասն վիճակացն Վրաստանայ և Ստրախանայ, և զԵրոբէ վարդապետն 'ի 22 ամսոյս ձեռնադրեցաք եպիսկոպոս՝ համաձայնութեամբ սրբազան Սինոթին, զապագայն տնօրէնութեանցս յանձն արարեալ գլխովին 'ի խնամս տեսչութեան Աստուածային ամենաբարի կամաց։ Ամարիմք, թէ Ձեզ ևս է հասեալ արդէն տեղեկութիւն այսպիսի կամաց Տերին Կայսերական Մեծութեանն։

Անամք բարեացատենչ Ձեր միշտ 'ի սրտէ

Կոմնոդիկոս ամենայն Հայոց Եփրեմ։

'Ի Մայիսի 26, յամի 1830·
'Ի սուրբ Էջմիածին։

Ծանօթ· Գաղափար կոնդակիս գրեալ է ձեռամբ ծնողին իմոյ Մարգար Մարտիրոսեանց։ Ծանօթ· Զ· Մ։

ԺԷ.

ՕՐԻՆԱԿ

Հրամանագրական Եփրեմ կաթողիկոսի մատուցելոյ Սիմեոնոսին։

Սուրբ Յոգովոյ Միաբանական կառավարութեան Կաթուղիկէ սրբոյ Էջմիածնի

Ռացանական Ծանօթութիւն·

ԱՌԱՔԱԻՈՐ բան իմաստնոյն՝ ժամանակ լալոյ և ժամանակ ծիծաղելոյ, երկոքին այսոքիկ զուգընթաց են այսօր յիմարումն պատահման։ Որպէս եմ 'ի մի կողմանէ, զի

հայրենիք մեր փրկեցան շնորհիւ Աստուածազօր սուրբ Պայսերութեանն յանագորոյն բռնաւորութեանց. այլ 'ի միւս կողմանէ տխուր եմ, զի յԱստուածակոյս կողմանէ 'ի պատիժ մեղաց իմոց խանգարմամբ զգայութեանցս խանգարին և ընթացք եկեղեցական կարգաց։

Գիտեմ սիրելիք իմ, զի 'ի բացածանուցանելս այժմ զկարգ հետևեալ բանիցս, առ որս հասանիլ ունիցի լուրս, որպէս ձեզ անդամոց Միւնհոդոսի, նոյնպէս եղբարց և որդւոց միաբանակցաց և լրութեան ժողովրդոց մերազանց հեռաւորաց և մերձաւորաց համանգամային միօրինակ ունի տիրել և հզօրանալ ներգործութիւն բաւական ախտութեան՝ թէպէտև ոչ ամենեցուն, այլ զի՞նչ օգուտ, քանզի ձեռն ցեառն մխեալ տեսանի յիս. ըստ անհրաժեշտ հարկիս պարտաւորիմ ճանաչել զչափ անձին իմոյ և 'ի լուր աշխարհի յայտնաբարբառ քարոզելով զիմ վիճակ՝ անդատապարտ զանձն իմ կացուցանել արդէն և առ յապայն։

Որ ինչ գրեցաւ 'ի մեր վարդապետութիւն՝ գրեցաւ. առաքելական է քարոզութիւն. հարկ է ուրեմն ամենայն Աստուածահրամանն տառիցն ոչ բնաւ իրրև զանզգայս անյիշող գտանիլ, այն զի մինչ ահագինս որոտայ ձայնն Քրիստոսական. ամենայն որ ասէ բան զորգւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց որ զՀոգին սուրբ հայհոյիցէ՝ մի թողցի նմա։ անմարթ է ինձ զտիեզերալուր բանիս զսոսկալի տեսութիւն թագուցանել ընդ գրուանաւ զանցառութեան։

Որ նկարագրի այսպէս, զի ամենայն յանցմունք մարդկան են ընդ երկուս դէմս՝ կամ անգիտութեամբ և կամ գիտութեամբ. ներելի են մեղք՝ որ յանգիտութենէ, այլ որոց մեղք են գիտութեամբ, վերաբերին առ հոգին ճշմարտութեան և են անթողլի յայսմ աշխարհի և 'ի հան-

գերձելումն, զսոյն ակնարկէ և առաքեալն՝ թէ, որ գիտիցէ զԱարին և ոչ առնիցէ, մեղք են նմա, յայտ է թէ գիտելով ուրուք զճշմարտութիւնն, եթէ վերնամարտ մերոսութեամբ հակառակ յայտնի ճշմարտութեանն դարձեալ կամակորեսցի 'ի չարիս, մեղք և հայհոյութիւնք են առ հոգին սուրբ, ուսամ և անքաւելիք· անշուշտ կնքէ զսոյն վճիռն Տէրունի՝ ծառայ որ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա արբցէ զան բազում։ Ահա՝ ըստ այսոսիկ ահագնալուր աղդեցութեանց աննահանջելի բանից Աստուածայնոց՝ որ հանապազօր ազդարարութեամբ զդողանի հարկանէ զլսօղն, անհնարին էր ինձ զանցառութեամբ հարևանցիկ առնել զկանոնական գրովք ՀԱրցն Սրբոց՝ որք խօսեցան հոգւով սրբով՝ յորս աւանդութիւն է որպէս յայտ է ձեզ՝ թէ Գահանայ ծերացեալ և ախտակրեալ լռեսցէ 'ի Պատրիարքէն· ուր մակաբերելի է թէ ընդ սրբազան Պատրիարքին լռեցուցանէ համանգամայն և յամենայն խորհրդոյ եկեղեցւոյ· վասն այնորիկ էր զի նախ քան զելն իմ ՅԱ-թոռոյս 'ի տարագրութիւն բազմաք հրաժարեալ եմ հրապարակաւ, և յաւէտ ևս առ ստիպող հարկին ուրթն ամաք յառաջ, 1822, յամրոցն Շուշի ակնյանգիման պատուելի անդամոց խորհրդարանի այնր ժամանակի գրաւոր հաստատութեամբ ետու զհրաժարականն իմ 'ի Հայրապետական կոչմանէ և յամենայն վերաբերելոցն Հայրապետական Իշխանութեան։

Այն հրաժեշտ իմ ընկալեալ 'ի ժողովոյ անտի, ոչ հաճեցաւ 'ի բաց առնուլ յինէն զկնիքն, այլ որպէս պաշտպան կնքոյ վերապատուել զիս կոչմամբ Հայրապետական անուան, և ահա մինչև ցայժմ ըստ այսմ առաջադրութեան իմոյ՝ հաստատեալ եմ կնքապահ և եթ

եղեալ՝ դաղարիլ յամենայն իշխանութենանց կախելոց զ՝այրապետական յատկութենանց։ Ապաքէն առաւելապատիկ այժմ, զոր անցեալ զաւուրքք և տուայտեալ լի ցաւովք, ախտակիր ամենայն մասամբք զգայարանաց, խլացեալ ականջօք և վատեալ 'ի տեսողականութենէ յութսընամեայ հասակի անկեալ դնիմ որպէս պատկերաշուրջ, ահեղ է ինձ այսու ամենայնիւ արգելեալ վիճակի իմոյ անբաւականութեամբ ընդդէմ ճշմարտութեան սուրբ ՀՈԳւոյն և սուրբ օրինաց նորա ձեռնամուխ եղեալ 'ի կատարումն շնորհաբաշխութեան իրիք, զանցանել զօրինօք և զդատապարտութենանն չարաչար վրէժ յանձին լուծանել, զի բարձրաձայն քարոզէ առաքեալն՝ մի և մի իւիք տայցէք պատճառս, զի մի արատեսցի պաշտօնն, և սովին 'ի հասարակութենանց ծանօթից և յանծանօթից 'ի գիտնոց և 'ի տգիտաց զնաւփառութիւնն զկեղտ և զբամբասանս զենև արկանել, և այնպէս լինիլ ամենեցուն վէմ գայթակղութեան հակառակ սուրբ աւետարանութեան Քրիստոսի Փրկչին մերոյ՝ վայ որ գայթակղեցուցանէ. և թէ կոյր կուրի ո՞չ կարէ առաջնորդել, երկոքին սխալին և 'ի խորխորատ անկանին։ Արդ՝ յորժամ անկարելի է ինձ ընթեռնուլ զգիրս եկեղեցականս կամ արտաքսականս, զի՞արդ ներեսցեն ինձ օրէնք կատարել զիորհուրդ ինչ եկեղեցւոյ՝ այլ գոհանամ զմեծ ողորմութենանց Բարձրելոյն, զի գտանի դեռ յիս ամրողջութիւն մտաց և ուշիմութեան, նշմարանօք ևս կարողանամ ստորագրել զանուն իմ, թէև ըստ մեղացս գտանիմ ներքոյ անկեալ նշանակեալ պատահմանց։

Զ՝ան որոյ առ 'ի սրբելոյ զիս և զխիղճ մտաց իմոց գէթ 'ի զառամելութենես իմում յայսմիկ 'ի նախանցեալ խղճահարութենանց, այսինքն 'ի յարատևելոյ իմոյ ցարդ

'ի համարման Հայրապետական սուրբ կոչման, ահա յայտնագոյն ճշմարտութեամբ առաջի ահաւորին Աստուծոյ և սուրբ Յոգովոյդ դնեմ զվկայութիւն հաւատարիմ· կալ զիս հրաժարեալ, և կցորդեմ ընդ սմին զանշուշտ առաջադրութիւնս; զի թէ պատշաճ դատեսցի 'ի Սուրբ Յոգովոյդ դարձեալ զկնիքն յանձն առնել առ իս 'ի դէպս դէպս 'ի կիր առնուլ զայն յաթոռապատկան և յազգաւոր կարևոր իրողութիւնս, բարուք իսկ թէ և ոչ այս կամք իցեն ձեզ, արդէն իսկ ընդ հրաժարականիս մատուցանելով և զկնիքն, ինայ ինձ յայնմ հետէ հանգչիլ յանկեան ուրեք և ըստ վճարման կարճօրեայ կենաց իմոց՝ աղօթել և հայցել Աստուծոյ զյաղաղումն նորոգ Հայրապետի։

'Ի վերջոյ սիրելիք իմ և կարեկիցք· անկարելի եղև զմի ըստ միոջէն 'ի գիր արձանացուցանել այսօր· այլ թէ գուցեն ոմանք՝ որք ունիցին յօդել և բերել զպատճառս ինչ, հնարաւոր է նոցա՝ բանիւ բերանոյ լսել յինէն զլուծումն այնոցիկ։

Իբր անոռանիալ Պաղնոդլիոս ամենայն Հայոց Եպիսկոպոս։

1830, Հոկտեմբերի 8· 'ի Սուրբ Էջմիածին։
Համար 179·

ԺԷ.

ՀՐՈՎԱՐՏԱԿ

Կայսեր Ռուսաց Նիկոլայոսի Ա. առ Պատրիարքն Եփրեմ։

(Զկնի կայսերական ընդարձակ տիտղոսի)

Մեծ. սիրելի և հաւատարիմ բարձրաստիճան Եփրեմի, գահերէց Պատրիարքին Էջմիածնի, Կաթողիկոսին ամենայն Հայոց, արքեպիսկոպոսաց, եպիսկոպոսաց, վանահարց, Միւնհոդոսին Էջմիածնի, և ամենայն եկեղեցականացն Հայոց, արգոյ Մէլիքաց, Հարիւրապետաց և կառավարչաց և ամենայն պատուելի ազգին Հայոց Կայսերական ողորմութիւն մեր և բարեհաճութիւն։

Տակաւին 'ի 1812 ամի՝ սիրելին մեր Պատրիարքն Եփրեմ փափաքէր 'ի պատճառս ծերութեան իւրոյ և հիւանդութեանց թոզուլ զԱթոռն Պատրիարքութեան. սակայն չհաճեցաւ ընդ այն օգոստափառ և ամենասիրելի եղբայրն մեր՝ երջանկայիշատակ Աղեքսանդր Ա.։ 'Ի 1828 ամի բարձրաստիճան Պատրիարքն Եփրեմ կրկնեաց մեզ զիւր աղերս, վասն արձակելոյ զինքն 'ի կառավարչութենէ եկեղեցւոյն Հայոց, և ընտրելոյ նմին զյաջորդ. այլ մեք ակն ունելով՝ զի ամենաբարձրեալն պահպանեսցէ զաւուրս նորա և զօրացուցէ զնա յաշխատութիւնս և յերկս յօգուտ նմա յանձնեալ հոգևոր հօտին, և մանաւանդ շարժեալ անձնանուէր մտերմութեամբ առ մեզ և սիրով առ հայրենակիցս իւր, և ընդ բեռամբ ամաց և ցաւոց կարէ զէթ առ ժամանակ մի ևս գործակից լինել ըստ առաջնոյն մերումն հոգոզութեան յաղագս երջանկութեան Հայաստանեան առհմի. յայտնեցաք նմա զքանկութիւն մեր,

զի նա մնասցէ զէթ առ ժամանակ մի ևս գլուխ Հայաստանեայց եկեղեցւոյ։ Բայց սակայն ստուգեալ յազգաբարութեանց Պ. եներալ Գնելդմարշալին մերոյ Պասկևիչի կոմսին Երևանայ՝ թէ զօրացեալ ցաւոց բարձրաստիճան Պատրիարքին Երփրեմի՝ գլխովին բարձեալ են զկարողութիւն նորա կատարել զերկուս յերևելի Պատրիարգական պարտաւորութեանց՝ զօրհնութիւն մեռոնի, և զձեռնադրութիւն եպիսկոպոսաց· յոյր սակս հարկեալ տեսանէ զինքն 'ի բաց դնել յանձնէ զայն Բարձր կարգ· մեք թէպէտև ափսոսալով՝ հաւանեալ ընդ այն հրամայեցաք երևելի կարգաւորաց Հայոց որք են 'ի շրջակայս Աթոռոյն Էջմիածնի, միաւորեալ ընդ Միւնհոյոսին Էջմիածնի, ընդ նահագահութեամբ նորին իսկ Բարձրաստիճան Պատրիարքին Երփրեմի, ըստ հնագոյն և մաքուր կանոնաց նախնի եկեղեցւոյն Հայոց, ընտրել զերկուս Հայրապետացուս 'ի Պատրիարքութիւն· և ապա առաջարկեալ զանուանս ընտրելոցս այսոցիկ՝ հոգևորականաց մերձակայ վիճակաց, արգոյ Մէլիքաց, Խզբաշեաց, և այլոց անուանի անձանց պատուելի ազգին Հայոց, մատուցանել մեզ 'ի տեղեկութիւն՝ թէ զոր յերկուց ընտրելոցն 'ի ձեռն Միւնհոյոսի ցանկան առաւել տեսանել գլուխ եկեղեցւոյ։ Համաձայն կամացս մերոց մեծահանդէս ժողովն եկեղեցականաց որ եղև Էջմիածին ընդ նախագահութեամբ բարձրաստիճան Պատրիարքին Երփրեմի 'ի 16 Մարտի, ընտրեաց զերկուս անձինս յաթոռ Պատրիարքութեան Էջմիածնի՝ զտեղապահն Պատրիարքի զարքեպիսկոպոսն Մարտիրոս, և զՅովհաննէս արքեպիսկոպոսն Պարսատանեայց։ Համեմատեալ զայս նշանակութիւն Հայրապետացուս ընդ ցանկութեան գրաւորաբար յայտնելոյն 'ի հոգևորականացն վիճակաց մերձակայից

Ի՛ՋՄԻԱԾՆԻ, պատուելի Մէլիքաց, Իւզբաշաց և այլոց անուանի անձանց պատուական ազգին Հայոց, մեք հաճեցաք հաստատել յաստիճան Պատրիարքութեան Ի՛ՋՄԻԱԾՆԻ և Կաթողիկոսի ամենայն Հայոց զարքեպիսկոպոսն Յովհաննէս, և հրամայեմք Արարատեան Պատրիարքին Ի՛փրեմի կարգաւորել և կատարել զօծութիւն և զձեռնադրութիւն նորա համակ պարտուպատշաճ հանդիսավեհութեամբ և ճիշդ պահպանութեամբ հաւանն նախնի կանոնաց և սովորութեանց կարգադրելոց վասն այսր գերագոյն ծիսի սրբագործութեան։ Այսու ամենայնիւ մեք աներկմիտ եմք՝ թէ սիրելին մեր և հաւատարիմ՝ Արարատեան Պատրիարքն Ի՛փրեմ, թէպէտև 'ի բաց եղ յանձնէ զբեռն կառավարչութեան եկեղեցւոյն 'ի պատճառս տկարութեան իւրոյ, սակայն ոչ վերջացեալ 'ի սրտեռանդն փափաքանաց բարեաց ազգին Հայոց, որոյ եկեղեցւոյ ընդ այսքան ժամանակս էր Գլուխ արժանաւոր, ունի գործակից լինել նորոգ ընտրեալ պատրիարքին յամենայն ծանրագոյն դիպուածս վերաբերեալս առ Կառավարութիւն եկեղեցւոյս այսորիկ իւրովք խորհրդովք, և խրատուք, որք են պտուղք իմաստութեան ստացեալք բազմամեայ փորձիւ։

Ուստի և մեք նորոգ որպէս զսիրելիս և զհաւատարիմս մեր զԱրարատեան Պատրիարքունս զԻ՛փրեմ և զՅովհաննէս, նոյնպէս և զամենայն կարգաւորս եկեղեցւոյն Հայոց, զարգոյ Մէլիքս, զԻւզբաշիս, և զԿառավարիչս համայն հաւատարիմ Հայազգի հպատակաց մերոց և զամենայն ազգն Հայկական, հաւատացուցանեմք 'ի մերումն Կայսերական ողորմութեան առ նոսա և հովանաւորութեան, որք հանապազ ճեալոց են անկողոպտելի։

Տուաւ յաթոռանիստ քաղաքի մերում Սրբոյն Պետ-

բոսի, յամի Ծննդեան Փրկչաւոսի 1831 յառաջներորդ աւուր Յուլիսի և թագաւորութեան մերոյ 'ի վեցերորդն։

Նիկողայոս։

ԺԸ.

ՀՐՈՎԱՐՏԱԿ

Կայսեր Ռուսաց Նիկողայոսի Ա· առ Պատրիարք Յովհաննէս։

Խարձրաստիճան Պատրիարքին Էջմիածնի Կաթողիկոսին ամենայն Հայոց Յովհաննու։

ՀԱՅՏԱՏԵԱԼ զձեզ 'ի կարգ Նայրագոյն Պատրիարքի Հայաստանեայց եկեղեցւոյն՝ մեք 'ի նշան կատարեալ բարեհաճութեան մերոյ առ ձեզ վասն անձնանուէր մտերմութեան և ջերմեռանդութեան առ Կայսերութիւն մեր 'ի կառավարելն ձեր զեկեղեցականս Հայոց Վրաստանի, և 'ի յայտնութիւն յատկագոյն ողորմութեան մեր առ ամենայն ազգն Հայոց, ամենողորմաբար գասեմք զձեզ 'ի կարգ սրբոյն Անդրեասանդրի Նևսկւոյ, զորոյ նշանս ընդ սմին առաքելով՝ հրամայեմք արկանել զձեզք և կրել ըստ կարգաւորութեան։

Ունք ոչ երկբայիմք՝ թէ այժմ ամբարձեալ 'ի գերագոյն աստիճան եկեղեցւոյն Հայոց՝ դուք գործովք ձերովք վասն բարւոյ ձեզ յանձնեալ հոգևոր հօտին ստասջիք զնորանոր իրաւունս առ Կայսերական մեր ողորմութիւնորով մնամք միշտ բարեհաճ առ ձեզ։

Նիկողայոս։

ՅԱնէքսանդրիա մերձ առ Պետերբուրգ.
30 Յունիսի 1831 ամի։

ԺԹ.

ՀՐՈՎԱՐՏԱԿ

Կոյսեր Ռոսոսոց Նէլոզյոսի Ա. սա Պատրիարքն Եփրեմ։

(Զկնի կոյսերական համառօտ սիրաղոսի)

Խարձրաստիճան Պատրիարքին Եփրեմի։

ԾԱՆՈՒՑԱԼ, յազդալարութեանց Գլխաւոր կառավարչին Ս. բաստանեայց՝ թէ հասակ ծերութեան և զօրացեալ հիւանդութիւնք գլխովին զրկեալ են զձեզ 'ի կարողութենէ կատարել զինչ ինչ պարտաւորութիւնս Պատրիարդութեան, և թէ դուք տեսանէք զձեզ՝ յանշուշտ հարկի 'ի բաց ղնել յանձնէ ընդ երկայն յայսչափ ժամանակս կրեալ արժանապէս զկոչումն զլխոյ եկեղեցւոյ Հայոց. մեք թէպէտև ափսոսալով, յայտնեցաք զհամաձայնութիւն մեր ընտրել ձեզ զյաջորդ։

Հաստատեալ այժմ յաստիճան Պատրիարքութեան զմին յերկուց անձանց ընտրելոց առ 'ի ձէնջ և 'ի բովանդակ մեծահանդէս հոգևոր ժողովոյն. Ելչիքեանի, զարքեպիսկոպոսն Յովհաննէս, մեք 'ի նշան յատկագոյն բարեհաճութեան մերոյ առ ձեզ վասն մեծամութեան և ջերմեռանդութեան առ Կայսերութիւն մեր ընդ ամենայն ժամանակս կառավարելոյ ձեր զեկեղեցին Հայաստանեայց յաստիճանի Ծայրագոյն Պատրիարքի, ամենողորմաբար դասեմք զձեզ 'ի կարգ սուրբ և նախակոչ առաքելոյն Անդրէի. զորոյ զնշանս ընդ սմին առաքելով՝ հրամայեմք արկանել զձեռք, և կրել ըստ կարգադրութեան։

Ա՛նք հաստատութեամբ ակնունիմք՝ թէ; ամենաբարձ-

բեալն վարձատրեալ զառաքինութիւնս ձեր՝ պահեսցէ տակաւին ընդ երկար զկեանս ձեր վասն բարւոյ հայրենակցաց ձերոց, և թէ 'ի բաց եղեալ յանձնէ 'ի պատճառս տկարութեան զբեռն կառավարչութեան եկեղեցւոյ, դուք այսու ամենայնիւ ունիք յամենայն ծանրագոյն դիպուածս վերաբերեալս առ կառավարութիւն նորա նպաստամատոյց լինել գործադրութեանց փոխանորդին ձերոյ խորհրդովք և խրատուք, պաղովք իմաստութեան զոր ստացեալ էք բազմամեայ փորձիւ։

Ունամք բարեհաճ առ ձեզ։

Նիկողայոս։

Յանէքսանդրիա մերձ առ Պետերղոփ·
30 Յունիսի 1831 ամի։

Ի.

ՊԱՏԱՐԱԳ

Կոնդակի Յովհաննէս Կոմոդիկոսի առ Լիճակաւոր առաջնորդն Թիւսաբաբիոյ արտեղիսկոպոսն Ներսէս։

Յիսուսի Քրիստոսի ծառայ ոչ էր Յովհաննէս Կաթողիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն Պատրիարգ առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի, նաև գերագահ մայր Աթոռոյս Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։ Հայրապետական նախընծայ բազմապատիկ օրհնութեամբ առաքեմք զՅիսուսաւանդն ողջոյն առ 'ի վերայ Աստուածապահ և Պայսերախնամ վիճակիդ Ռուսաստանեայց բարեպաշտ օրհնեալ հաստատակութեան Հայոց եղելոց 'ի Պանկապետրէբուրգ, 'ի Մոսկով, 'ի Նոր Նախիջևան, 'ի Գրիմ և 'ի Գարատու քաղաք, 'ի Ռէֆֆէ, յԷսկիղրիմ, 'ի Բաղ-

չասարայ, 'ի Գրիգորիապոլ և յայլս և յայլս, նախ վիճակաւոր գերապատուեալ Խարձր Սրբազան 'Ներսէս արքեպիսկոպոսի և ասպետի, բարձր արժանապատիւ վարդապետաց, արժանապատիւ քահանայից աւագաց և երկրորդաց. և ապա գերազնիւ և ազնիւ աստիճանաւորաց՝ զինուորականաց և քաղաքականաց, արդարավաստակ վաճառականաց, քաջագործ արհեստաւորաց, բազմավաստակ և հաւատարիմ գանձապետաց և երեսփոխանաց և համօրէն ժողովրդականաց և բնաւ ուխտի մանկանց սուրբ եկեղեցւոյ՝ գերազնուհի և ազնուհի տանտիկնոց և ամենայն արանց և կանանց ըստ իւրաքանչիւր չափու՝ հասակի և աստիճանի, ուրախ լինիլ 'ի Տէր յարաժամ։ Այլև բազկատարած հայցմամբ զաղօթս ջերմեռանդականս յերկինս առ ամենասուրբ Երրորդութիւնն Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն վեր առաքեմք. զի շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն և քաղցրախնամ ակնարկութիւն և նախախնամութիւն նորին բազմացին 'ի վերայ ձեր՝ հանդերձ շնորհօք գերահրաշ տեղւոյս սրբութեան իջմանն Միածնի Խանին, և նորին կողմանէս սքանչելագործ սրբոյ գեղարդեան, և շնորհաբաշխ Էջմոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և դամբարանաց մաքուր օրհնութեանցն Քրիստոսի սրբոց Եռասանացն Հռիփսիմեանց և Գայիանեանց, և համօրէն սրբութեանցն և սրբոց նշխարաց գումարելոց աստէն 'ի տեղւոջս սրբութեան, և զարդարեսցեն զձեզ ամենայն բարեվայելչութեամբ հոգւոյ և մարմնոյ և ամենատեսակ բարեաց յաջողուածովք հանապազ. ամէն։

Հոգոյդ ընդ Աստուածային ողջունիս և օրհնութեանս ծանուցանեմք Լուսաւորչածին սիրելեացդ մերոց, զի 'Նորին Սրբազնակատար Օծութիւն Տեառն Եփրեմի Կա-

հափառ Հայրապետի նախորդի մերոյ տեսեալ թէ ընդ բեռամբք բազմամեայ ծաղկեալ ծերութեան և հասակի իւրոյ զգայ յանձին օր քան զօր զանհնարին վիշտս ցաւագին կենաց և որ ևն է զրկումն 'ի ներգործութեանց կրկնակի զգայութեանց՝ յոչ տեսութենէ աչաց և յոչ լսողութենէ ականջաց՝ որովք յետս նահանջէր ընուլ զգլխաւորագոյն պաշտամունս վերաբերեալս Հայրապետական գերագոյն աստիճանի և կոչման իւրոյ՝ այն է կատարողութեան էական խորհրդոց սրբոյ եկեղեցւոյ Հայոց՝ օրհնութեան մեւռոնի և ձեռնադրութեան եպիսկոպոսի· հաճեցաւ կամովին յօժարութեամբ իւրով տալ զհրաժեշտ իւր 'ի Հայրապետական իշխանութենէ 'ի 8 Հոկտեմբերի 1830 ամի, հասուցանելով զայն հրաժարագիր և զազերս յոտս ամենողորմ Աթոռոյ Նորին Օգոստափառ Կայսեր ամենայն Ռուսաց՝ և Թագաւոր Կայսրն զինջեալ քաղցրութեամբ 'ի հրաժարագիր և յաղերսարկութիւն 'Նորին Վեհափառ սրբութեան երանաշնորհ հօր մերոյ, հրամայեաց ըստ նախնի սովորութեան Արարատեան Աթոռոյս սրբոյ Էջմիածնի գումարմամբ հոգևորական Ժողովոյ ընտրել զնոր Կաթողիկոս Հայոց· և ահա ըստ այսմ բարեհաճութեան 'Նորին Կայսերական Մեծութեան Աստուածապատիւ սրբազնագոյն հայրն մեր Տէր Ներսէս Կաթողիկոսն ընդհանրական կոնդակաւ իւրով արձակեաց զհրաման 'ի շրջակայ քաղաքս և 'ի գաւառս յԱրարատեանն Հայաստան՝ 'ի Վրաստան առ մեզ, յԱրցախ, 'ի Տայս և 'ի Նախիջևան և առ որս շուրջ զնոքօք յաւանս և 'ի շէնս գալ ժողովել յԱթոռս սուրբ յընտրութիւն նոր Կաթողիկոսի՝ Արքեպիսկոպոսաց՝ Վարդապետաց և Աւագքահանայից՝ որ և գումարեցաւ Ժողովն 'ի սահմանեալ ժամու, 'ի 15 Մարտի ներկայ ամի·

ուր յետ զաւուրս երիս 'ի Հայրապետարանն 'ի ներկայութեան զառաքեալ սրբոյ Հայրապետիս գումարելոյ և արձակելոյ Ժողովոյն 'ի վախճանի յաւուրն երրորդի հաւանութիւն և զընտրութիւն իւր հասոյց ժողովն 'ի վերայ երկուց կանդիտատաց՝ այսինքն երկուց կաթուղիկոսացուաց՝ տեղապահ Մարտիրոս սրբազան Երքեպիսկոպոսի՝ որ վախճանեցաւ 'ի 16 Հոկտեմբերի, և մերս անարժանութեան վաւերացուցեալ Ժողովոյն զընտրութիւնն միաբան կնքով և ստորագրութեամբ իւրով, յետ որոյ զայս գիր ընտրութեան առաքեաց երանելի սուրբ Հայրապետս մեր 'ի յիշատակեալ գաւառսն՝ զի և ոչք պարունակեալք յայնս՝ գերազնուականք Հայոց, աղնուականք, Մելիքք, Իշխանք և պատուելի Ժողովրդականք, կնքովք և ստորագրութեամբք դիցեն 'ի նմա զհաւանութիւնս։ Հայոցիկ այսպէս եղելոյ՝ հուսկ ուրեմն վերամատոյց 'ի ծանօթութիւն Աստուածահաստատ Աթոռոյ սուրբ Պայսերութեանն՝ սպասելով թէ զո՞ յերկուց կանդիտատաց անտի նշանակելոց՝ ամենողորմած Պայսրն բարեհաճեալ հաստատել ունիցի 'ի Կաթողիկոսութիւն ամենայն Հայոց։ Եւ արդ չէք անծանօթ՝ թէ Տորին Պայսերական Մեծութիւն ամենաբարձր Պ. բամատիւ իւրով վիճակեցոյց զկոչումն Հայրապետական՝ մերս անարժանութեան, որ թէև օն անդր քան զչափ կարողութեան մերոյ՝ սակայն երկիւղածութեամբ պաշտելով զնախասահմանութիւն Բարձրելոյն՝ պատուեցաք և զայն սրբազան Առաքելոյն՝ թէ երկինք բարձր և երկիր խոր՝ սիրտ թագաւորի անքննին։

'Ի վերայ այսր ամենայնի հրաւիրական գրով Տորին Պ. Եհափառ Արքաշնակատարութեան Ցեառն Էփրեմի ելեալ 'ի Ցփխիսայ և հասեալ 'ի 15 Սեպտեմբերի յԱթոռ

սուրբ՝ 'ի 8 Նոյեմբերի ընկալաք զօծումն զարձեալ հոգևորական ժողովով նշանակեալ գաւառաց և ընդ վերատեսչութեամբ Նոցին Պայծառափայլութեանցն Ղէյսդվերթելնի Ստատսկի Մովսեսեանիկ և ասպետ Կնիազ Ալիկոլայ Յովսէփիչ Պահլէվանդովի և նախարարին Հայոց Նահանգին Երևանայ Ղ՝ենեալ Մայոր Կնիազ Ռէհբուդովին, և Նորին Գերազանցութեան Ղ՝ենեալ Վ՝ալանկալոյ և ասպետի և բազմութեան աստիճանաւորաց զօրապետաց և զօրաց արժանաւոր հանդիսակատարութեամբ ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան՝ 'ի նշան ամենաբարերար հովանաւորութեան իւրոյ առ ազգս Հայոց· յորում սուրբ աղօթիւք ձեր թերևս արժանի արասցէ զմեզ Ձեր կալ մնալ անսայթաք և անարատ իւրահաճոյ գործովք ըստ ամենայն սուրբ հրամանի իւրոյ։

Վ՝ասնորոյ այսու անդրանիկ օրհնութեան կոնդակաւ մերով հաղորդս արարեալ զսիրելիսդ մեր 'ի Քրիստոս Յիսուս մայրենի շնորհաց անախտ ծնողութեան Լուսաւորչական գահիս մեծի և նորոգ շնորհաբաշխութեանս մերոյ՝ յորդոր լինիմք նախ Գերապատիւ Վ՝ճռակաւոր Խարձր Արբազան արքեպիսկոպոսի կողմանցդ և ապա որոյ հովանաւորութեան Նորին յանձն եղեալ համօրէն եկեղեցականաց և ժողովրդականաց՝ զի իւրաքանչիւր ոք զառ ինքն հաւատացեալ յԱստուծոյ զարծաթ բանին անքուն տքնութեամբ անխարդախ պահեսցէ՝ շահելով և արդիւնացուցանելով զայն ընդ միոյ կրկին· 'Ի գովութիւն անձին և 'ի վարձ բարեաց հոգւոյ և մարմնոյ իւրոյ՝ որպէս զի կարող լիցի լսել զերանաւէտ բարբառն զայն Ձերունի՝ ազնիւ ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև 'ի սակաւ հաւատարիմ եղեր 'ի վերայ բազմաց կացուցից զքեզ՝ մուտ յուրախութիւն Տեառն քոյ։

Եւ ոչ այսչափ միայն՝ այլև զարաւանդեսջիք զանձինս ձեր օրհնել անդադար զանգին կեանս Տորին Պայսերական Աստուծոյ և Աստուածահիմն սուրբ Աթոռ նորա հանապազորդեան մաղթանօք սփռելով զաղերս՝ զպաղատանս և զխնդրուածս ըստ սրբազան Առաքելոյն հրամանի՝ վասն ամենայն բարօրութեանց նորա. և որպէս ցարդ՝ նոյնպէս և միշտ անկասելի շարունակեալ զանյողդողդ հաւատարմութեան ձերոյ զհանդէս։

Եւ 'ի վերջոյ աներկբայ եմք թէպէտ, այլ այսու ամենայնիւ ոչ անդէպ համարիմք երկրորդել յորդորմամբ հայրական սիրոյ և օրհնութեան զի զքրիստոնէական ջերմեռանդութիւն ձեր և ճշմարիտ ծնողասիրութիւն՝ զորս ուսեալ 'ի բարեյիշատակ նախնեաց ձերոց կալեալ էք ցարդ առ շնորհատու մայրս ձեր և առ օրինաւոր գահակալն սորին. զնոյն յարգ և զնոյն ջերմեռանդութիւն յարակայ մշտնջենաւորութեամբ կալջիք այժմ և յապայ։

Եւ մեք վերառաքեմք առ Ամենաբարձրեալն զհեծութիւնս անդադար բերանով և անհանգիստ բարբառով՝ զի օրհնեսցէ Տէր ըստ աւուրց երկնից նախապէս զՕգոստափառ և զամենաբարեպաշտ զմեծ Թագաւորն մեր և զՊայսրն ամենայն Ռուսաց զԱլիքսէյ Պաւլովիչ առաջին՝ որ յառաջնումն 'ի փրկագործութեան Հայաստանի և զարդիս 'ի դէմն անարժանութեանս մերոյ վերառեալ կանգնեաց բարձրացոյց զխոնարհեալ ազգն Հայոց ողջոյն և զանշքացեալ Աթոռս սուրբ. և ընդարձակեսցէ զնա բազմաշառաւիղ ժառանգակցօք և արքայազնովք և ամենայն կարօք և զօրապետօք ցկատարած աշխարհի։ Նոյնպէս օրհնեսցէ և զձեզ և զորդիս ձեր՝ զյարկ և զընակութիւնս ձեր. զառս և զտուրս ձեր. զմուտ և զել ձեր.

զգործս ձեռաց ձերոց ուղիղ արասցէ 'ի ձեզ· և յաջողեսցէ 'ի բարի և 'ի խաղաղութիւն· այլև զհոգիս ննջեցելոցն ձերոց ներկայից և անցելոց լուսաւորեսցէ յալեքայութեան իւրում ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան իւրոյ՝ և նոյն ինքն զամենայն աւուրս կենաց ձերոց ընդ ձեզ եղեցի և ընդ ձեզ բնակեսցի, ամէն։

Ջերմեռանդ աղօթարար վասն ձեր ամենեցուն

Կաթողիկոս ամենայն Հայոց Յովհաննէս։

1831· Դեկտեմբերի 1·
'ի Սբ Էջմիածին։

Ծանօթ. Գաւառէնն՝ յորմէ ընդօրինակեցաւ կոնդակս այս՝ գրեալ էր ձեռամբ Ներսէս Կաթողիկոսի։ Ծանօթ. Ջ· Մ։

ԻԸ.

ՕՐԻՆԱԿ

Կոնդակի Եփրեմ Կաթողիկոսի գրեալ առ Հասարակութիւնն Հայոց Կոստանդնուպոլսի։

. . . . Զոյգ ընդ հոգեպարար Աստուածային սուրբ ողջունիս և օրհնութեանս մերում ծանուցանեմք Լուսաւորչաձին սիրելեացդ մերոց· զի տեսեալ մեր օր· ըստ օրէն զնուազումն անձին և զակարութիւն ալեւորեալ հասակի մերոյ, որք ոչ ներէին մեզ կատարել զհարկաւորագոյն պաշտամունս վերաբերեալս Հայրապետական Ս. հաստիճանի մերոյ, մատուցաք զինդիր խոնարհական յոտս Նորին Ս՝ եծութեան Օգոստափառ Կայսերն ամենայն Ռուսաց, որպէս զի թոյլ տացէ մեզ յանձն առնել զԱրձ

Իշխանութիւն մեր Հայրապետական ուսմեամբ արժանաւորագոյն արքեպիսկոպոսի Հայաստանեայց եկեղեցւոյ մերոյ։ Բնագաւոր Կայսրն իրաւացի համարեալ զպատճառս հրաժարման մերոյ, և զիջեալ քաղցրութեամբ 'ի խնդիր մեր՝ ազորմածաբար հրամայել բարեհաճեցաւ, ըստ վաղեմի սովորութեան և օրինաց Հայաստանեայց եկեղեցւոյ ընտրել զնոր Կաթողիկոս։

Յաղագս որոյ ակն ածեալ գլխովին վաղեմի սովորութեանց ազգի մերոյ, առաքեցաք յամենայն գաւառս Հայոց զընդհանրական կոնդակս հրաւիրանաց, և գումարեցաք 'ի սուրբ Էթոռս Էրարատեան զգերապատիւ սրբազան արքեպիսկոպոսս, զնշանաւոր վարդապետս, և զաւագ քահանայս. որք եկեալ աւելի քան զ150 անձինք 'ի 15 Մարտի այսր ամի, ընդ մեզ 'ի ներկայութեան մերում և ընդ վերատեսչութեամբ մերով յետ կարդալոյ զշնորհս Հոգւոյն սրբոյ՝ ընտրեցին 'ի Բարձր աստիճան Կաթողիկոսութեան ամենայն Հայոց զերկու կանդիդատս, զտեղապահ Մարտիրոս արքեպիսկոպոսն, և զՅովհաննէս արքեպիսկոպոս զառաջնորդն Վրաստանի։ Եւ ապա մեր և ամենայն ժողովելոց արձանացուցեալ ըստ օրինի 'ի վերայ թղթոյ զվաւերական ընտրութիւն մեր, և ստորագրեալ կնքեցաք մի ըստ միոջէ։ Ապա զայս թուղթ ընտրութեան հանդերձ ընդհանրական կոնդակաւ մերով առաքեցաք 'ի գաւառս գաւառս Հայոց առ 'ի ստորագրութեամբ տալոյ զհաւանութիւն իւրեանց հոգևորականաց և աշխարհականաց երևելի անդամոց օրհնեալ ժողովրդեան մերոյ վասն արժանաւորագունի միոյ յընտրելոցն 'ի Կաթողիկոսութիւն ամենայն Հայոց։ Մեծագոյն մասն 'ի նոցանէ ստորագրեցին վասն երկրորդին, այսինքն վասն արքեպիսկոպոսին Վրաստանի, որ 'ի տիրոց հասակի իւրոյ

զանձն երևելի ընծայեցոյց առաջի մեծագումար միաբանութեան մերոյ· և ապա 'ի բարձրակալ յաստիճան վարդապետութեան և արքեպիսկոպոսութեան ուր ուրեք կարգեցաւ հովուապետ և կամ առաքեցաւ 'ի կատարել զմեծամեծ պաշտամունս սրբոյ Աթոռոյ մերոյ, գիտաց գովելի զանձն իւր ընծայեցուցանել առաջի ընկերակցաց և մեծաւորաց իւրոց: Այն սա կամաքն Աստուծոյ յետ ընտրելոյ և հաստատելոյ 'ի Պատրիարքութիւն ամենայն Հայոց, ահաւասիկ մեծաշուք հանդիսիւ ըստ վաղնջական արարողութեանց սրբոյ եկեղեցւոյ մերոյ ընկալաւ զօծումն հոգւոյն սրբոյ 'ի ձեռն մեր նուաստութեան և երկոտասան երևելի արքեպիսկոպոսաց 'ի 8 Նոյեմբերի, առաջի բաղմութիւն հոգևորականաց, ազնուական բարեպաշտոն իշխանաց, աստուածասէր մելիքաց, տանուտէրանց, և համայն ժողովրդեան Հայոց: Որին Պ. Եհափառութիւն Տէր Յովհաննէս Պատրիարք ամենայն Հայոց գրեաց 'ի դիմաց իւրոց և ս. կոնդակ օրհնութեան ամենայն ուրեք, և ծանոյց ըստ արժանեաց զբաղդիլ իւր յԱթոռ Հայրապետութեան: Ահա և 'ի դիմաց մերոց պարտուպատշաճ համարիմք հանդերձ օրհնութեամբ ազգ առնել սիրելի զաւակաց իմոց հոգևորականաց և մարմնաւորականաց համօրէն ազգի մերոյ· զի որպէս մեք ցորչափ վերնախնամ տնօրինութիւնն երկարեսցէ զկեանս մեր յայսմիկ աշխարհի՝ խորհրդով և բանիւ ունիմք օժանդակ լինել յաջորդի մերում· նոյնպէս և դուք ըստ ճշմարիտ հաւատարմութեան ձերոյ և ըստ անյոգդոգդ ջերմեռանդութեան՝ զորս ցուցեալ էք միշտ և հանապազ վայելչազարդ բարեպաշտութեամբ ձերով՝ սկսեալ 'ի մեծէ խոստովանողէ Քրիստոսի 'ի Գրիգորիոս Լուսաւորչէ զնոյն հաւատարմութիւն, զնոյն յարգ, և զնոյն ջերմեռանդութիւն, ցուց-

ջիք այժմ և առ յապայն Ս. Հոգեւոր յաջորդի մերում Տեառն Յովհաննէսի սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց։

Ի վախճան բանի՝ սիրելիք մեր և հարազատ որդիք սրբոյ մօրս լուսոյ Կաթուղիկէ Էջմիածնի. ահա մերձեցեալ ի դրունս մահու ի յետին շունչ կենացս յանձն առնեմք ձեզ սիրով՝ Քանալ յամենայն զօրութենէ հոգւոյ անգայթակղելի ջերմեռանդութեամբ շարունակել զհաւատարմութիւն ձեր առ բարձրագահ տէրութիւնն և առ հզօր Դուռն Օսմանեան, որում հպատակեալ էք, որ և ամենայն հանգամանօք խնամէ և մխիթարէ զձեզ։ Այս և առաքեալն քարոզէ „Ամենայն անձն՝ որ ընդ իշխանութեամբ է“, և այլն։

Ահա՛ առաքեմք առ ձեզ զԱրսեղ արքեպիսկոպոսն և զՅովհաննէս վարդապետն, որպէս զի եկեալ պատմեսցին ձեզ մի ըստ միոջէ զամենայն՝ որ ինչ տեղի կալաւ ի մասին ընտրութեան և մեծաշուք Օծման՝ յաջորդի մերում Նորին Ս. Հոգեւորութեան Տեառն Յովհաննէս Կաթողիկոսի։

Կաթողիկոս ամենայն Հայոց

Ներսէս։

Ծանօթ. Ըստ սմին մատեան է և կոնդակն գրեալ ի նոր Կաթողիկոսէ նոյնպէս առ հասարակութիւնն Հայոց Կոստանդնուպօլսի։

Ծանօթ. Մատեան Մատենադարանէ։

Ս. ԻՐԻՑ

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ

ЗАБРАНО

Ա.

ԱՅԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ՎԷՆԵՏԻԿԻ

Ի ՎԵՐՈՑ

ԱԹՈՌՈՑՆ ԷՋՄԻԱԾՆԻ

ՑՕՐԻՆԵԱԼ

Ի ՉԵՒ ՀԱՐՑՄԱՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻՈՑ

Ի Մեծոյ Գրիգորեան Զմիւռնացւոյ[1]։

ԳԼ. Ա.

Հ. Ո՞ր կայ տրգ Հայրապետական Աթոռ Լուսաւորչակրօն ազգիս մերոյ։

Պ. Թողեալ զԿիւլիկեայն և զԱղթամարայն, ծայրագոյն և նախապատիւ Հայրապետ կամ ըստ այլոց Պատրիարգ՝ Ճանաչի այժմ Նստեալն յաւագ եկեղեցւոջ Վաղարշապատ քաղաքի ՝ի սուրբ Կաթուղիկէի, զոր կառոյց

---

[1] Ո՛չ ենաւելի համարեցայ կցել ՝ի „Պատմութիւն Կաթողիկոսաց Էջմիածնի“ և զծնողին իմոյ զայս գործ, որ պարունակէ յինքեան տեղեկութիւնս հետաքննութեան և ուշադրութեան արժանիս, և մանաւանդ զաւուրս ազգային վիճակէ միաբանութեան Ս. Էջմիածնի, և որ գրեալ է ՝ի միջի 1830—1831 թուականաց մասամբ ՝ի Ս. Էջմիածին և մասամբ ՝ի Ցփխիս։ Պատասխանատու միաբանն, որպէս ունին տեսանել ընթերցողք, է ինքն ծնողն իմ Մեր Մաերեանց Զմիւռնացի։

Ծանօթ. Զ. Մ։

սուրբն Գրիգոր Լուսաւորիչ արժանաժառանգ Աթոռակալն սրբոց Առաքելոցն Թադէի և Բարթուղիմեայ յետ ելիցն 'ի Վիրապէն՝ նուիրեալ յանուն Տիրամօր Կուսին Աստուածածնի [2], այն է՝ զոր յետինք կոչեցին Էջմիածին կամ Իջման Տեղի, և յետագոյնք՝ Ամոռաձեալ կամ Ամոռաձիկեան տաճար:

ԳԼ· Ռ·

Հ· Երբ և էր արդեօք եղաւ նմա այդ անուն:

Պ· Արկնաբառս Էջմիածին անշուշտ երևի տարածեալ 'ի յետնոց ոմանց 'ի յետին դարս՝ թերևս 'ի պատճառս տեսլական սրբոյ Լուսաւորչին: Յայտնի անտի է, զի չնշմարի ոչ ուրեք 'ի գիրս նախնի Հարց մերոց, բայց եթէ յԱյսմաւուրս միայն [3]: Զի զառաջինն կոչիւր այն՝ Կաթուղիկէ կամ Մայր եկեղեցի [4], և մերթ՝ Հողակաթ [5]:

Զգոյշ կացցեն ուրեմն ժամերգու դպիրքն Էջմիածնի չմեղանչել այնմ բանի Հարակնոցին „Էջ Մի ածինն 'ի Հրէ“, և այլն: Զի ամբողջ նախադասութիւն է այն 'ի

---

[2] ՅԱգաթանգ· 375:

[3] Օգոստ· 14:

[4] Որպէս 'ի յետագոյ բանս նախնեաց· „Եկեալ հասանէր այնու հետեւ (Վահան) 'ի Վաղարշապատ քաղաք··· կատարէր զսովորական ուխտս և զպատարագս 'ի սուրբ եկեղեցւոջն Կաթուղիկէի“ (Փարպ· 273)։ — „Թագեալ խարսխեաց (զսուրբն Մեսրոպ մեծն Սահակ) յեկեղեցւոջն Կաթուղիկէ՝ որ 'ի Վաղարշապատ քաղաքի“ (Խոր· Գ· 66)։ — „Մեծ Հայրապետն Հայոց Բարգէն առնէ ժողով եպիսկոպոսաց Հայոց, վանաց, և Աղուանից՝ 'ի նոր քաղաքի 'ի սուրբ Կաթուղիկէի, 'ի մայր եկեղեցեաց Հայոց“ (Ցամ· Կաթ·)։ — „Զմեծ Կաթուղիկէ եկեղեցին որ 'ի Հայս՝ վերատին մեծապէս նորոգեաց (Վահան)“ (Առողկ Բ· 2)։

[5] Զգիրկական նշանն՝ որ 'ի վերոյ որբոյ Հողակաթի զմբեթին կանգնեալ էր (Արկահաճ ամիրայն) ճոպանաւք 'ի վայր բերէր“ (Առող· Գ·12)։ — „Մեծաւ ջանիւ կատարեցին զշինուած տաճարացն զՀողակաթին, և զսուրբ կուսանացն“ (Ցայսմաւ· Օգոստ· 14)։

Զորափորեցւոյն գրեալ 'ի Սահակայ Հայրապետէ յամի Տեառն 660, և ոչ առանձին ինչ յատուկ անուն տեղւոյ, որպէս յայտ է որոց միանգամ միտս ունիցին։

ԳԼ. Գ.

Հ. Այր կամ Կաթուղիկէ յի՞նչ միտս կոչի։

Պ. Բառիս Կաթո-ղիկէ՝ իմն ասէն ռամկական ա-սացուածով իբր գմբէթն կամ գմբէթայարկ, որովհետև 'ի Հայաստան սովորաբար (թէև ոչ ըստ հարազատ նշանակութեան) Կաթուղիկէ ասի ո և իցէ գմբէթաւոր շինուած, որպէս գտանին ցայսօր եկեղեցիք կամ աղօթարանք յԵրևան, 'ի Տփխիս, և յայլ քաղաքս՝ որք նոյնպէս յորջորջին Կաթուղիկէ. որպէս և 'ի գիրս պատմագրութեան Առաքել վարդապետի բազում ուրիք։ Այլ զի 'ի հաւատոց ունիմք մի միայն լինել Ընդհանրական (կամ որ նոյն է՝ Կաթուղիկէ) եկեղեցւոյ, ասելի է թէ՝ զայս ածական՝ որոյ բուն իմաստ 'ի Յոյն լեզուէ առ մեզս Հանրական լսի, չէ՛ և չէ՛ մարթ և ոչ իսկ երևելի եկեղեցւոյ՝ թող թէ նիւթական տաճարի միում ընծայել, որպէս քաջ ապացուցանէ Աստուածաբան վարդապետն Միքայէլ Սալանթեան[6]. ապա թէ ոչ՝ ընդդէմ ելանէ բան հանգանակին „Հաւատամք և 'ի մի միայն Ընդհանրական և Առաքելական եկեղեցի“։ Իսկ Մայր իմանալի է ա-ա-գ, գլխա-որ, երևելի, և այլն. ըստ որոյ և Ը Նորհալի Հայրապետն մեր զՀռոմ անուանէ Մայր քաղաքաց[7]։ Ու եթէ լայնաբար առցի՝ ոչ Էջմիածինն և եթ, այլև ո՛ր և իցէ եկեղեցի Հայոց կամ այլոց ուղ-

---

[6] 'Ի Կրօնագիտ. համար 113։

[7] ՀՈՂԸ ԵԳԵՒԻՑ ի։

զափառ քրիստոնէից ընդ տիեզերս՝ կոչի և մայր և դշխոյ և հարսն և սիօն հոգևոր, և այլն[8]· *բայց սեղմօրէն իմացեալ՝ վերնատունն Սիօնի՝ ուր ընկալան Առաքեալք զՀոգին սուրբ, առաջին է քան զամենայն· զի անտի եղև սկիզբն հիմնարկութեան այլոց եկեղեցեաց· վկայ այսմ՝ ճշմարիտ վարդապետն եկեղեցւոյ հրեշտակն 'ի մարմնի սուրբն Գրիգոր, որ ասէ· „Սկիզբն առեալ կենացս այս գանձու (այսինքն եկեղեցւոյ) 'ի վերնայարկն սրահէ, խորհրդակատարն վայրէ“, և այլն*[9]: *Խորհուրդ յիշել զեկեղեցին Յոդեսիոյ շինեալ յԱռաքելոյն Թադէոսէ՝ անդրանիկ և նախածին քան զԷջմիածին ամաք իբրև 270· յորոյ 'ի դիմաց ողբերգելով ասէ Հ Նորհալին առ Յրուսաղէմ·*

„Յերուսաղէմ քաղաք մեծի, Թագաւորին երկնաւորի·
Ցորմէ Որդին Հօր Միածին, լոյս ծագեցաւ անճառելին...
Եւ ինձ գրեաց երանութիւն, յառաջագոյն քան ամենի·
Քանզի նախկին հաւատացի, զՈրդի ընդ Հօր դաւանեցի·
Որով թէ ոչ յանդգնէի, զես վեհագոյն քեզ ասէի[10]*“:*

Բայց զի են ոչ սակաւք՝ որք զնախայիշեալ անուանսդ՝ Մայր և Կաթողիկէ, ճգնին ոգւով չափ առ եկեղեցին ՅԷջմիածնի և եթ հայեցուցանել, ստորակարգեցից ասասէն զթիւ եկեղեցեացն հիմնելոց յայլևայլ տեղիս նովին ա-նուամբ ընդ ժամանակս ժամանակս·

ա· Յեկեղեցին Աշտիշատայ՝ շինեալ 'ի Լուսաւորչէ, որ կանխակառոյց է քան զԷջմիածին[11]*, կոչեցաւ Մայր եկեղեցի*[12]:

---

[8] Նարեկ· հէ· 10, 12, 13, 14· 'Ի գով· ՃԲ· 'Ի մեկն· երգ· զ· 8· և այլն·
[9] 'Ի Նարեկ· հէ· 9·
[10] Ողբ Եդեսս· Ժ·
[11] Ագաթ· յեր· յկդ·
[12] Բիւզանդ դ, 4, ուր ասէ· „Ժողովեցան 'ի գիւղն Աշտիշատ՝ ուր զառաջին զեկեղեցին էր շինեալ (Լուսաւորիչ) զի նա էր Մայր եկեղեցեացն, և 'ի տեղի լեալ նախնեացն ժողովոց Աւետարանի“·

բ. Այլ 'ի Թիֆլիս աւանի յԱկեղեաց գաւառի եկեղեցի կաթուղիկէ կառուցեալ 'ի Մեծէն Ներսիսէ՝ որ քակեցաւ 'ի ժամանակի արշաւման անդ Աղտուռռահիմայ յամի իբր 635 [13]։

գ. Այլ և յերկրին Տարօնոյ յԱստղաբերդն ասացեալ տեղւոջ եկեղեցի անուանեալ Մեծ կաթուղիկէ, որ կործանեցաւ յարշաւման անդ նորին Աղտուռռահիմայ [14]։

դ. Հինեցաւ յաւուրս իշխանութեան Դաւթի Սահառունւոյ 'ի քաղաքագեղջն Մրեն եկեղեցի անուամբս կաթուղիկէ [15]։

Ե. Յամի 937 Աբաս թագաւոր Խաղբատունի կանգնեաց զեկեղեցի կաթուղիկէ 'ի Կարս քաղաքի՝ ուր եղեալ էր զԱթոռ. իւր [16]։

զ. Յիշխանանիստ գիւղաքաղաքն Հաղատ՝ որ 'ի Ծղկաց գաւառի նահանգին Սիւնեաց երևելի էր եկեղեցին անուանեալ Մայր եկեղեցեաց [17] յելս դ դարուն։

Է. Յամի 989 հիմն էարկ Սմբատ երկրորդ տիեզերակալ արքայ Հայոց Աշոտոյ ողորմածի, շինել զկաթուղիկէ եկեղեցի յԱնի քաղաքի, զոր ապա շինեալ լրացոյց

---

[13] „Աղտուռահիմ անցանէ 'ի հարք... 'ի սոյն ամի քակի եկեղեցին որ յԱշտիոյ վանան... և Ներսիսի հայրապետին կաթուղիկէ եկեղեցին 'ի Թիֆլիս յԵկեղեաց գաւառին" ('ի ձեռագ. Յովհ. Մամիկ.)։

[14] Տես 'ի ձեռագր. Յովհ. Մամիկոնէի։

[15] „'Ի հրամանէ Նորուն (Դաւթի) շինէր եկեղեցին գեղեցկայարմար որ 'ի քաղաքագեղն Մրեն" (Յովհ. կաթող.). այս է՝ զորմէ Սամուէլ ասէ „Շինուած կաթուղիկէին Մրենայ" ('ի Թիւն կդ)։ Եւ Կիրակոս „յաւուրս սորա (Դաւթի) եղև շինուած կաթուղիկէին Մրենոյ"։

[16] „Էր շինեալ Թագաւորին (Աբասայ) զկաթուղիկէն սուրբ 'ի քաղաքին Կարուց" (Ասող. դ. 7)։ „Շինեաց և Թագաւորն Աբաս զկաթուղիկէն 'ի Կարս" (Վարդան աշխարհագիր)։

[17] „Քաջամարտիկն Գաղանայ հասանէ վիճակաւ գիւղաքաղաքն Հաղատոյ, հանգերձ սուրբ եկեղեցեաւն՝ որ յայնմ ժամանակի Մայր եկեղեցեաց անուանէին" (Սամուէլ. Օրպէլ.)։

թագուհին Կատրամիտէ կին Գագկայ շահնշահ ալքա-
յի յամի իբր 993 [18]։

Ը· Խաչիկ Կաթողիկոս շինեաց զԿաթուղիկէ եկեղեցի
'ի Շիրակ գաւառի յեղը Էխուրեան գետոյ 'ի գիւղա-
քաղաքին Արգինայ յամի իբր 990 [19]։

Թ· Յառնուլ Լանկթամուրայ զքաղաքն Էջնկայ, զմեծ
Կաթուղիկէն որ 'ի նմա կոչեցեալ սուրբ Սարգիս 'ի հի-
մանէ տապալեաց յամի 1395 [20]։

Ժ· Շինեաց Լեւոն թագաւոր եկեղեցի 'ի Սիս անու-
ամբ Կաթուղիկէ [21]։

ԺԱ· Ընէր և Տիգրանակերտ, այն է՝ Ամիդ քաղաք,
եկեղեցի Կաթուղիկէ յանուն Թէոդորոսի վկային, զոր
նորակերտ յարդարեաց Մկրտիչ եպիսկոպոս մականու-
անեալ Նաղաշ [22]։

ԳԼ· Գ·

Ա· Իրօրէն համարելի է իջումն Միածնին։

Գ· Ու քաջ տեղեկանալոյ այդմ առանց շեղելոյ ինչ

---

[18] „Սմբատ որ տիեզերակալ կոչեցաւ՝ զմեծանիստ պարիսպն Անոյ շինեաց, և զԿաթուղիկէն հիմնարկէ" (Վարդան)։—„Կին նորա (Գագկայ) Կատրամիտէ թագուհի բարեպաշտուհի եղեալ, որ էր գաւառ Վասակայ Սիւնեաց իշխանին, շինեաց զհիմնարկեալ եկեղեցին Սմբատայ ամենապայծառ վայելչութեամբ... և զարդարեաց 'ի զարդ ծիրանէծաղիկ ոսկեթել նկարագործ անգուածոց... որովք ջահանայք ըստ երկնային կամարին Կաթուղիկէն սուրբ՝ որ 'ի քաղաքին Անուոյ" (Ասող· գ· 30)։

[19] „Նորոգեաց (Խաչիկ Կաթողիկոս) զտուն Կաթողիկոսարանին 'ի Շիրակ գաւառի 'ի գիւղաքաղաքին Արգինայ, յեղերս Էխուրեան գետոյ... և 'ի նմին գիւղ շինեաց զսուրբ Կաթուղիկէ եկեղեցին վիմարգեան կոփածոյիւք" (Ասող· գ· 9)։

[20] „Զմեծ Կաթուղիկէն զսուրբն Սարգիս 'ի հիմանց քակեաց" (Թովմաս Մեծոփեցի)։

[21] Պատմ· Հայ· գ· 172։ Առաքել· ծա·

[22] Պատմ· Հայ· գ· 483· 516· 548։

'ի ճշմարտութենէ, պարտ և պատշաճ է նախ զառաջին դիմել առ մեծ դիւանադպիրն Տրդատայ Ագաթանգեղոս՝ առ վկայեալն յամենեցունց ստուգապատում արժանահաւատ, որպէս զի և մեզ՝ որ հաւանիմքս զհետ երթալ զճշմարտասիրաց, եղեցի խօսիլ անաչառ, և գրել անաչառ։

Այդ՝ հաւաստէ նա, թէ սուրբն Գրիգոր ետես „Յեսիլ ահաւոր մարդոյ բարձր և ահեղ (որ)... եկն էջ „եհաս մինչև մօտ 'ի յատակս երկրի 'ի շինամէջ քաղաքիս „(Վաղարշապատայ) և բախեաց զթանձրութիւն լայնատարած գետնոյս, և մեծ և անչափ թնդիւնք հնչեցին „'ի սանդարամետս անդնդոց [23]։“

Գիտել արժան է աստանօր, զի Յեսիլ նշանակէ ոչ զկրն, այլ զերևոյթ կամ զնմանութիւն իրին. որոյ վասն 'ի սուրբ գիրս բազում ուրեք մի և նոյն իմաստ է՝ զոր տան երկոքին այս բառք Յեսիլ և Նմանութիւն. որպէս յորժամ ասի՝ Յեսիլ Աստուծոյ՝ աղեղան՝ լուսոյ՝ ղամբարաց՝ ականց՝ հրոյ՝ պղնձոյ՝ կառաց [24], մարդոյ [25]. ասի և Նմանութիւն աթոռոյ՝ արեգական՝ հրոյ՝ փառաց՝ առն՝ ձեռին՝ սողնոց՝ անասնոց [26], մարդոյ [27], և այլն։

Անրթ է իմանալ յայսմանէ՝ թէ երևոյթ կամ նմանութիւն և եթ էր այն՝ զոր ետես սուրբն Գրիգոր որպէս և ամենայն տեսիլք մարգարէից։ Զի զկորհուրդ Աստուածային տեսչութեանն ցուցանէր՝ յայտ 'ի մեկնելոյ հրեշտակին է, զի ասէր ցսուրբն Գրիգոր. „Այս ահաւոր

---

[23] ՅԱգաթանգ. յԻթ։
[24] Յեզեկ. ա. 1, 13, 15, 27, 28։ բ. 3։ թ. 3։ խգ. 3։
[25] 'Ի Դանիէլ ժ. 18։
[26] Յեզեկ. ա. 26, 27։ բ. 1. բ. 2, 3, 10։ ժ. 8։
[27] 'Ի Դանիէլ ժ. 16։

և շքեղաւոր՝ որ զառաջն ունի զլուսոյն և զուռն ոսկի 'ի ձեռին իւրում, և բախեաց զսանդարամետս· այս տեսչութիւն Աստուծոյ է" [28]։

Եհա Լուսաւորիչն ետես, և հրեշտակն մեկնաբանեաց· և ուրանօր իցէ բան զՄիածնէ կամ զիջմանէ նորին։ Իսկոյն տեսչութիւն Աստուծոյ ասել՝ զՄիածնէ՞ կարծեցին բառաստեղծ գրամատիկոսքն· սակայն և այս ա-նագրոյն մտաց է՝ իբր անհաւան ինչ եղեալ անստերիւր յայտնութեան Լանին առ 'ի հրեշտակէն ծանուցելոյ, յաւելուածս իմն 'ի մարգկային զաղափարուն հնարագի-տութեանց 'ի ներքս խառնել, և ըստ նոր իմն մտացածին մեկնութեան զնոր յորջորջումն կարգել։

Մի՛ բնաւ, մի՛ օտարաձայն ինչ թուեսցի այն՝ զի ա-սացի, եթէ տեսիլ նմանութեան և եթ էր· քանզի նոքա՝ որոց ընդդէմ թուի բանս, եթէ զտեսանելն Յակոբայ սանդուխք յերկրէ յերկինս [29], և Եսայեայ՝ զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան և զսերովբէքն կայծակնաբեր [30], և Երեմիայ զգաւազանն ընդուզի և զկոզով թզոյն և զկաթսայն [31], և Եզեկիէլի՝ զտեսիլ անուոցն և զկառաց [32], և Դանիէլի՝ զչորից գազանացն [33], և Զաքարիայ՝ զաշտանակին և զճրագացն և զգերանդուոյն [34], համարեսցի իրօք եղեալ· զհետ գայ նմա և զսանդուխքն և զունելիսն և զանիւսն և զգաւազանն և զկոզոցն և զկաթսայն և զգերանդին որպէս և զուռն ոսկի համարել նիւթագործ

---

[28] ՅԱգաթանգ· յլը։
[29] 'Ի Ծննդ· խբ· 12։
[30] Եսայ· զ· 1, 6։
[31] Երեմ· ա· 11, 13։ իդ· 3։
[32] Եզեկ·։
[33] 'Ի Դանիէլ է· 3։
[34] 'Ի Զաք· դ· 2։ է· 2։

կերտուածս արուեստի՝ իմաստՀն խելաց բերք իցէ այս։

Եւ եթէ վասն տեսլեանն զտեղին յարդել ոք կամիցի՝ այդմ և ես հաւանիմ. քանզի տեղիք՝ յորս միանգամ Աստուածային մատին ներգործութիւնք եղեն, պատուելիք և համբուրելիք 'ի բարեպաշտ արանց ճանաչին. որպիսի է տեղին՝ ուր մորենին վառեալ ոչ այրէր[35], և ապին Յովքաբ գետոյ՝ ուրանօր զԱստուածային տեսիլն ետես Եզեկիել[36], և սուրբ կղզին Պատմոս՝ ուր որդին Յեբեդեայ զՀրաշալի յայտնութիւնն ընկալաւ[37], և տունն Սիմոնի խաղախորդի 'ի Յոպպէ՝ յորում Պետրոս զտեսիլ կտաւոյն ետես[38], և այլ անհամար տեղիք՝ յորս աքանչելիք Տեառն յայտնեցան, որպէս տեսանի 'ի պատմութիւնս սրբոց, և առաւել քան զամենայն սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ ուր իբրև զմեզ ըստ մարդկան յերկրի շրջեցաւ Մարմնին հօր, և կատարեաց զփրկական զեւր մարմնառիկն տնօրէնութիւն։

Այլ զի համբաւեալ իմն է առ բազումս իրական իջումն Միածնին 'ի Վաղարշապատ, այգ չէ ինչ. զի քան հասարակացն և յետնոց ումանց զրուցաց, ըստ որոց համարի և Առաքել պատմիչ յասելն „Անկեալ (Կաթողիկոսն Սահակ) 'ի վերայ իջման տեղեացն Քրիստոսի՝ յորում տեղի Քրիստոս իջեալ է“[39], սուրբ գրոյն պարտիմք անսալ՝ որ ասէ „Համբաւ սուտ մի ընդունիցիս“[40]։

---

[35] Յել. գ. 2։
[36] Յեզեկ. ա. 1։ գ. 23։ խգ. 3։
[37] 'Ի Յայտն. ա. 9, 10։
[38] 'Ի Գործ. ժ. 11։
[39] Գլ. ի. յեր. 245։
[40] Յել. խգ. 1։

ԳԼ· Ե·

Հ· Տեսանց անընդհատ ժամանակաւ Աթոռակալութիւն յԷջմիածին։

Պ· Ոչ· քանզի զկնի սրբոց Վարդանանց նահատակութեանն, յամի Տեառն 452, փոխեցաւ Աթոռ Հայրապետութեանն 'ի Դուին, և անտի

Յամի 925 — յԱղթամար·
» 992 — յԱնի·
» 1065 — 'ի Ծամնդաւ·
» 1113 — 'ի Կարմիր վանս՝ որ 'ի Սեաւ լերին·
» 1125 — 'ի Ծովք դղեակ·
» 1147 — 'ի Հռոմկլայ·
» 1294 — 'ի Սիս· յորմէ թէպէտև

յամի 1441 փոխադրեցաւ դարձեալ յԷջմիածին, սակայն յաջորդին ցայսօր անդ 'ի Սիս և յԱղթամար այլ Հայրապետք՝ որք վարեն զառանձին իշխանութիւն, որպէս և փոքր մի յառաջ յԱղուանս։ Տես զայսմ ամենայնէ 'ի պատմութիւնս Հայոց։ Թող զայնոսիկ՝ որք նստան 'ի Հոնի քաղաք՝ որ 'ի Ջահան գաւառի, 'ի Գերմանիկ՝ այն է 'ի Մարաշ, 'ի Սեբաստիա, 'ի Ռերիա, և այլն։

Յայսցանէ յայտնի տեսանի, զի Հայրապետական Աթոռն եկաց յԷջմիածին միայն զամս 539 'ի Լուսաւորչէն մինչև ցարդ, այն է՝ ցամ Տեառն 1831· իսկ արտաքոյ այնր 'ի վերոյնշանակեալ տեղիս զամս իբրև 989։

ԳԼ· Զ·

Հ· Ոյք և քանիք են ցարդ՝ որք կալան զԱթոռ Հայրապետութեան յԷջմիածին։

Պ· Թիւ համօրէն աթոռակալ Հայրապետաց ազգիս

մերոյ սկսեալ 'ի Սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ մինչ ցԼիւսիմ՝[41] որ վասն այժմ զեկեղեցանուէրն Հայրապետական՝ է 138. յորմէ 'ի բաց առեալ զայնոսիկ՝ որք նստան յայլևայլ տեղիս և 'ի Աթոռ մինչ ցԳրիգոր Մուսաբէկեանց, թիւ նստելոցն յԷջմիածին ընդ բովանդակն չանցանէ քան զ54. որոց և անուանք են կարգեալք 'ի ստորև.

ա. Գրիգոր Լուսաւ.	յամի	302	
բ. Արիստակէս	»	332	
գ. Վրթանէս	»	339	
դ. Յուսիկ	»	356	
ե. Փառաներսեհ	»	362	
զ. Ներսէս ա	»	364	
է. Շահակ	»	384	
ը. Զաւէն	»	386	
թ. Աստատրատէս	»	387	
ժ. Սահակ ա	»	390	
ժա. Մեսրոպ	»	440	
ժբ. Յովսէփ	»	441	
. . . . .			
. . . . .			
. . . . .			
ժգ. Կիրակոս	»	1441	
ժդ. Գրիգոր ժ	»	1443	
ժե. Զաքարիա բ	»	1461	
ժզ. Արիստակէս բ	»	1462	
ժէ. Սարգիս բ	»	1466	
ժը. Արիստակէս գ	»	1490	
ժթ. Թադէոս ա	»	1498	
ի. Եղիշէ բ	»	1503	
իա. Զաքարիա գ	»	1515	
իբ. Սարգիս գ	»	1520	
իգ. Գրիգոր ժա	»	1536	
իդ. Ստեփաննոս ե	»	1541	
իե. Միքայէլ	»	1547	
իզ. Բարսեղ ե	»	1556	
իէ. Գրիգոր ժբ	յամի	1569	
իը. Ստեփաննոս դ	»	1573	
իթ. Թադէոս բ	»	1575	
ի. Աստուածատուր	»	1584	
ին. Դաւիթ ե	»	1586	
իբ. Մելքիսէթ	»	1593	
իգ. Գրիգոր ժգ	»	1603	
իդ. Սահակ դ	»	1624	
իե. Մովսէս գ	»	1629	
իզ. Փիլիպպոս	»	1633	
իէ. Յակոբ դ	»	1655	
իը. Եղիազար	»	1680	
իթ. Պատրոնա	»	1691	
խ. Աղեքսանդր ա	»	1707	
խա. Աստուածատուր	»	1715	
խբ. Գարագեան գ	»	1726	
խգ. Աբրահամ բ	»	1730	
խդ. Աբրահամ գ	»	1734	
խե. Ղազար	»	1737	
խզ. Գեորգ բ	»	1748	
խէ. Մինաս	»	1751	
խը. Աղեքսանդր բ	»	1754	
խթ. Յակոբ ե	»	1759	
ծ. Միքէլ	»	1763	
ծա. Ղուկաս	»	1780	
ծբ. Դաւիթ	»	1801	
ծգ. Դանիէլ	»	1806	
ծդ. Եփրեմ	»	1809	
ծե. Յովհաննէս բ	»	1831	

[41] Այն է՝ մինչ յամին 1831. Տառեր. Ջ. Մ.

ԳԼ. Ի.

Հ. Եղե՞ն երբէք նորոգութիւնք 'ի շինուածս Էջմիածնի։

Պ. Ընդ ժամանակս ժամանակս բազումք փոյթ կալան նորոգութեան Էջմիածնի. յորոց զառաջինն Վահան Մամիկոնեան սպարապետ Հայոց եղբօրորդի քաջին Վարդանայ արար նորոգութիւնս ինչ, որպէս պատմէ Ղազար վարդապետ Փարպեցի։

Կոմիտաս Հայրապետ զփայտայարկ գմբէթ եկեղեցւոյն՝ տաշածոյ քարամբք չքնաղակերտ յարդարեաց։

Մովսէս Դ Սիւնեցի պարսպապատ ամրացոյց զմենաստանն, և շինեաց 'ի նմա սենեակս 'ի բնակութիւն վանականաց։

Ստուանձատուր Համատանցի սպիտակաձեւի պայծառացուցեալ զնիրքին տաճարին՝ գեղեցիկս նկարազարդեաց, և կանգնեաց գմբէթ (Կաթուղիկէ) փոքրիկ պորփիւրեան քարամբք 'ի միջակիտի անդ՝ որ ասի Էջման գեղջ։

Աբրահամ Բ Խոշաբեցի կանգնեաց 'ի տաճարի զեր-կոսին խորանս յանուն սրբոյն Յակոբայ և Լուսաւորչի յաջմէ և յահեկէ աւագ սեղանոյն։

Նոյն և այլ բազումք՝ որք 'ի բազում շինութիւնս ձեռն արկին. զորոց ամենեցուն զլիակատար տեղեկութիւնս ընկալ 'ի զրոց „Պատրագրութեան Հայաստանի" զոր արարեալ է հոգեշնորհ գիտնական վարդապետին Յովհաննու Շահխիարցւոյ՝ իմն հոգևոր հօր։

Հայց յանցելում դարուս բազմաշխատ դատ. և Սիմէօն Հայրապետ, որ ձեռն էարկ յաւէտ 'ի շինութիւնս մեծամեծ և օգտակար իրաց (դպրոցաց և այլն)։

Շինեցաւ և առ մեօք աւազան ջրացայտ (շատրուան) չքնաղ կիրտուածով և այլ ինչ ինչ 'ի տան հայրապետանոցին 'ի զբօսանս զուարճութեան բնակելոց 'ի նմա։

ԳԼ. Ը.

Հ. Այլ ոմանք եղեն՝ որք փոյթ կալան 'ի ծաղկեցուցանել զգիտութիւն յԷջմիածին։

Պ. Յաղուստ 'ի Հայրապետաց մերոց՝ որք ապատաքոյ Էջմիածնի յայլևայլ տեղիս եդին զԱթոռ Հայրապետութեանն, այն է՝ 'ի Դուին, յԱնի, 'ի Հռոմկլայ, և այլն, էին ալք իմաստունք՝ հլուհանգեալք յիմաստս հոգևորս և յառաքինակրօն վարս՝ քաջահմուտք Աստուածային սուրբ գրոց գիտութեան՝ պերճք և շքեղազարդեալք ոչ յուրուական խենէշ զարդուց խեշերանս, այլ լիութեամբ ամենագեղեցիկ շնորհաց Հոգւոյն Աստուծոյ, որ պատուական է քան զոսկի և զտպազիոն։ Յորոց և յոգունք սեղանաւորեցին մեզ զշնորհապարգև պտուղս երկանց հոգեաբուղխ բանից վարդապետութեան իւրեանց՝ արձանագրելով զնոսին 'ի թուղթս մագաղաթեայս առ 'ի յօգուտ լուսաւորութեան Հօտի իւրեանց, որպիսի էին արժանիքն յիշատակաց.

Յամի	465	Երանելին Գիւտ	
»	480	Յովհան Մանդակունի	
»	617	Տէր Կոմիտաս	
»	718	Յովհան Օձնեցի իմաստասէր	Նստեալք 'ի Դուին։
»	791	Սողոմոն Դերունի	
»	854	Զաքարիա ա	
»	897	Մաշտոց բ յԵղուարդայ	
»	897	Յովհաննէս պատմաբան	
»	1019	Պետրոս Գետադարձ	Նստեալ յԱնի։
»	1065	Գրիգոր վկայասէր	Նստեալ 'ի Դամբեղաւ։

յամի	1113	Գրիգորիս Պահլաւունի նստեալ 'ի Դովք։	
»	1166	Ներսէս Շնորհալի	Նստեալք 'ի Հռոմկլայ։
»	1173	Գրիգորիս Դ. տղայ	
»	1195	Գրիգոր Գ. կամ Ապիրատ	
»	1220	Կոստանդին Ա. Բարձրբերդացի	
»	1268	Յակոբ Ա. գիտնական	

և այլք՝ յորոց իւրաքանչիւր իբրև զմի մի ջահ փայլեցան յազգի մերում յայլևայլ ժամանակս՝ լուսաւոր իմաստութեամբ և սքանչելի վարուք, և փոյթ կալան պայծառացուցանել զեկեղեցի մեր և լուսաւորել զմանկունս նորա հոգևոր իմաստութեամբ· զորոց յիրկայ լինէր լսել զպատմութիւնսն՝ եթէ բիւրեաք առ տեղեաւս։

Դատան այժ երբէք երբէք և 'ի նստելոցն յԷջմիածին երևելիք ոմանք և հզօրք բանիւք և արդեամբք· սակայն նուազ է յոյժ թիւ նոցին, զորոց իւրաքանչիւրոց 'ի դէպ ինձ ասասէն իսօսիլ առանձինն՝ հանդերձ նշանակութեամբ թուականութեան ամացն՝ յորս կալան զԱթոռ Հայրապետական իշխանութեան։

Նոց յերանելի յազգալոյս Թարգմանչաց մերոց Սահակայ և Մեսրոպեայ՝ վարողաց զՀայրապետական իշխանութիւն ընդ ամենն զամս 38, որոց առաքինահրաշ վարուցն սաստրագրութիւն և երկնակրօն վարդապետութեանցն հանդէսք՝ հանդերձ հոգեռանդն երկասիրութեամբ 'ի թարգմանութիւնս Աստուածային և Հոգևոր մատենից 'ի լուսաւորել զազգ մեր և զեկեղեցի՝ լիապատում նկարագրութեամբ ցուցանին 'ի գիրս արժանայիշատակ աշակերտաց նոցին Կորեանն Մովսէսի և Ղազարայ, երևելեացն յԷջմիածին·

Ա· յամի 1541· Սահմանեալս է Կոստանդնուպօլսեցի քաջահմուտ և վարժ 'ի Պարսիկ և 'ի Լատին լեզուս, որ կալեալ զԱթոռ Հայրապետութեան ամս 6, Ջան եղ

որչափ և մարթ էր պայծառութեան Աթոռոյն յաւէտ ուսումնականութեամբ քան արտաքին զարդուց հարստութեամբ, որ և յօրինեաց զմեկնութիւն աւետարանին Յովհաննու կարճառօտ բանիւք. յաւել թարգմանել և զինչ ինչ լեզուէ 'ի լեզու ըստ իւրում իմաստութեանն, որպէս գրէ Առաքել պատմիչ։

Բ. յամի 1629. Մովսէս Կաթողիկոս այր գիտնական և փոյթեռանդն 'ի շինութիւնս, կացեալ յԱթոռ Հայրապետութեան զամս երիս՝ հանդերձ յաւելուածով ինչ ամոց, եղոյց յամենայնի զվաստակս առ օգտի հայրենեաց և 'ի բարեկարգութիւն վանորէից, զարդարեալ զնոսին վայելուչ սահմանադրութեամբ, կարեւոր կարգաց և կանոնաց. երաց դպրոց 'ի Յովհաննավանն՝ որ ոչ հեռի յոյժ յԷջմիածնէ 'ի բարձրաւանդակ տեղւոջ, և հաւաքեալ 'ի նմա զբազմութիւն մանկանց ետ կրթել զնոսա 'ի գիտութիւնս աստուածային սուրբ գրոց՝ հսկելով 'ի վերայ նոցա մեծաւ պաշտպանութեամբ. յորոց յայտ է թէ՝ ելին և ծաղկեցան բազումք 'ի մխիթարութիւն հայրենեաց։

Գ. յամի 1633. Փիլիպպոս վարդապետ Հաղբակեցի՝ աշակերտ նախայիշեալ Մովսէս Կաթողիկոսի, ազգային հաւանութեամբ ընտրեալ և օծեալ 'ի Կաթողիկոսութիւն, համանման իւրում վարդապետին ոչ միայն նորոգութեանց և պայծառութեան եկեղեցեաց և վանորէից կալաւ փոյթ զանազան շինութեամբք, այլև հաստատեալով վարժարան յԷջմիածին, և կարգելով 'ի նմա վարժապետ զՍիմէոն Ջուղայեցի տրամաբան յամի 1640, 'ի լուսաւորութիւն վանականաց դասու։

Դ. յամի 1763. Սիմէոն Կաթողիկոս կացեալ 'ի Հայրապետութեան զամս եօթնեւասան՝ բաց յայլոց շինուածոցն՝

զոյս արար, կանգնեաց յԷջմիածին զվարժարան, զտպագրատուն և զգործարան թղթաշինութեան, զոյս և լրացոյց տաժանաքիրան ճգամբք, և ջան եդ ծաղկեցուցանել զգրատպութիւն՝ որչափ ինչ մարթ էր նմա ըստ ձեռնտուութեան ժամանակին՝ բերել տուեալ 'ի հեռաւոր աշխարհաց զհեղինակս և զգործիս թղթագործութեան և տպագրութեան։ Եւ ապա յաջորդ նորա Պ. ուկաս Կաթողիկոս անպիտան համարեալ զայնս (ըստ որում „Հայր գնած և Որդի ե՞ Ցէր աստղք պիտոյ են ինձ, ասէր, և ոչ քերթողք և փիլիսոփոսք“) 'ի քարանցն՝ զոյս եհան 'ի շինուածոց անտի թղթատան, շինեաց առ նմին լիճ լայն, ընդարձակ և գեղեցիկ 'ի պէտս զովացման սիրելի գոմշոցն յամարայնի, զոր և անուանեաց տաճկահայ բառիւ Պոմշակէօլ։ Իսկ վարժարանն է այժմ անբնակ, և 'ի տպագրատան պահի բուրդ։

ԳԼ· ԹԻ·

Հ· Պատմեն երբէք արք ուսումնականք կամ հեղինակք զլոց 'ի վարդապետաց մերոց արտաքոյ Էջմիածնի։

Պ· Այո՛, բազում են հոյլք մատենագիր հարց մերոց ջահափայլեալք յիւրաքանչիւր դարս արտաքոյ Էջմիածնի 'ի խուշս մանաւոր մենաստանաց և քաղաքաց յոգնաձիր պարգևօք գերառատ տուչութեան ամենասուրբ Հոգւոյն 'ի պարծանս՝ յօգուտ և 'ի մխիթարութիւն եկեղեցւոյ մերոյ· որոց իւրաքանչիւրոց նոցա թէ զի՞նչ և զինարդ գործք՝ կենցաղք՝ և երք յայսց կենաց աշխարհէս, զայդ ամենայն թողլով առանձնապատում ստորագրութեամբ պատկերել 'ի գիրս մատակարարեալ „Պարք մատենագրաց մերազանց“ բէր արդ զսակաւուցն 'ի բազմաց զանուանսն և եթ 'ի յայտ եդից, զոյք են·

1· Անանիա ։
2· Մուշէ
3· Պետրոս քերթող
4· Մաթուսաղայ
5· Մովսէս
6· Ստեփաննոս ։
7· Առաքեալ

Սոքա էին եպիսկոպոսք Արևելեաց՝ ծաղկեալք յաստուածաբանական գիտութեան և ի քերթողութեան՝ հզօրք գրչութեամբ և թարգմանութեամբ, որպէս և բազումք՝ ի յաջորդաց սոցուն՝ զորս առ համառօտութեան զանց առնեմ յիշել սատէն։

8· Թովմա Արծրունի՝ պատմիչ։
9· Բարսեղ վարդապետ ՃԷն՝ առաջնորդ Դպրեվանից։
10· Անանիա վարդապետ Շիրակացի՝ հանգերձ աշակերտաք։
11· Թէոդորոս վարդապետ քռթենաւոր։
12· Գրիգորիս եպիսկոպոս Արշարունեաց։
13· Համամ՝ վարդապետ։
14· Գրիգոր սարկաւագ քաջուսումն։
15· Մաշտոց վարդապետ Եղուարդեցի։
16· Անանիա վարդապետ Նարեկացի փիլիսոփայ։
17· Խոսրով եպիսկոպոս Անձևացեաց։
18· Գրիգոր վարդապետ Նարեկացի՝ քաջ հռետոր։
19· Ստեփաննոս վարդապետ Ասողիկ։
20· Յովհաննէս վարդապետ Խաչակիր։
21· Յովսէփ վարդապետ առաջնորդ Հնձուց վանաց 'ի Կարին։
22· Կիրակոս գծակերպ գիտնական։
23· Սարգիս վարդապետ Վայելչաձեռն ՝Աղուանոյ։
24· Ղևոնդ վարդապետ փիլիսոփայ։
25· Մեսրոպ երէց 'ի Վայոց ձորոյ։
26· Յովհաննէս վարդապետ Կաղեռն։
27· Անանիա վարդապետ միաբան Սանահնի։
28· Տիրանուն վարդապետ իմաստասէր։
29· Գրիգոր Մագիստրոս։
30· Արիստակէս վարդապետ Լաստիվերտցի։
31· Ստեփաննոս վարդապետ առաջնորդ Կարբի վանաց 'ի Սեւ լերին, վարժապետ Սարգսի և Իգնատիոսի։
32· Կիրակոս կամ Կիւրոս վարդապետ։
33· Յովհաննէս վարդապետ սարկաւագ՝ հանգերձ աշակերտաք։
34· Սարգիս վարդապետ Շնորհալի։
35· Իգնատիոս վարդապետ 'ի վանաց Շափերինայ։
36· Մատթէոս Ռուհայեցի վանեցի պատմիչ։
37· Սամուէլ Անեցի ժամանակագիր։
38· Ներսէս եպիսկոպոս Լամբրոնացի։
39· Գրիգոր վարդապետ Սկևռացի կամ Լամբրոնացի։
40· Արիստակէս գրիչ։
41· Գէորգ վարդապետ Սկևռացի։

42. Մխիթար քահանայ Անեցի։
43. Խաչատուր վարդապետ Տարօնացի առաջնորդ ուխտին Հոգարծնի, այն՝ որ արար զՀրաշալի երգն „Խորհուրդ խորին“, և այլն։
44. Մխիթար վարդապետ Գօշ։
45. Կարապետ վարդապետ գիտնական։
46. Բենիկ վարդապետ
47. Վարդան վարդապետ Բարձրբերդացի անուանեալ Մեծ։
48. Յովհաննէս վարդապետ վանական Տաւուշեցի 'ի վանս Գնտակայ։
49. Կիրակոս վարդապետ Գանձակեցի պատմիչ։
50. Մաղաքիա աբեղայ պատմիչ, ընդ որում և այլք։
51. Զաքարիա եպիսկոպոս Ապատազու։
52. Յովհաննէս վարդապետ Պլուզ, Երզնկացի կամ Դարձորեցի։
53. Յովհաննէս վարդապետ Արճիշեցի՝ ոսպնակեր։
54. Ներսէս վարդապետ Մշեցի
55. Վահրամ վարդապետ՝ պատմիչ։
56. Եսայի վարդապետ Նչեցի՝ հանդերձ բազմութեամբ աշակերտաց, առաջնորդ Գայլեձորոյ։
57. Յովհաննէս վարդապետ՝ ասնատէր։
58. Յովհաննէս վարդապետ Որոտնեցի։
59. Գրիգոր վարդապետ Տաթեւացի։
60. Կիրակոս Վարդապետ Երզնկացի։
61. Գէորգ վարդապետ Երզնկացի։
62. Յակոբ վարդապետ Ղրիմեցի։
63. Մատթէոս Վարդապետ։
64. Տիրատուր Վարդապետ։
65. Յովհաննէս վարդապետ Մեծոփեցի։
66. Թովմաս վարդապետ Մեծոփեցի։
67. Ղուկաս վարդապետ Կեղեցի։
68. Մելքիսէթ վարդապետ Վանեցի։
69. Թովմաս եպիսկոպոս Գողթնեաց։
70. Ղուկաս դպիր Վանանդեցի։
71. Եփրեմ Կաթողիկոս Սաղ
72. Մխիթար վարդապետ Սեբաստացի։
73. Յարութիւն սարկաւագ Բիւզանդացի։
74. Մինաս վարդապետ Ամդեցի։
75. Յակոբ պատրիարգ Կոստանդնուպօլսեցի։
76. Միքայէլ վարդապետ Պալանթեան Աստուածատրան 'ի Մոսկով։
77. Տէր Մեսրոպը քահանայ Կարնեցի։
78. Տէր Յովհան քահանայ Վանանդեցի՝ իմն վարժապետ։
79. Գրիգոր դ. Փեշտմալճեան։

Գ.Լ. Ժ.

Հ. Փառք բարեբանեալ սուրբ Հոգւոյն, որ տայ ըզշնորհս իւր և ոչ անխայէ որոց և կամի՝ երբ և կամի՝ որչափ և կամի. բուսական մխիթարութիւն եղև արդարև սրտի իմում՝ որ 'ի վաղ հետէ ոգւով չափ փափագէի ունիլ տեղեկութիւն զայդմ ամենայնէ. բայց ծանո՛ ինձ աղաչեմ, եթէ 'ի մասնաւոր վանորայս այլ և այլ տեղեաց այդչափ մեծաթիւ բազմութիւն հեղինակաց գտաւ՝ քանի՞ օն առաւելութեամբ ազգ ծաղկեալ իցէ ուսումնականութիւնն 'ի խուռներամ բազմութեան գնրամեծար համբաւնալն խմբի վանականաց հայրապետանիստ բարձրագահ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ որ իբրև մայր ամենայն եկեղեցեաց պաշտի 'ի ժողովրդականաց մերոց։

Պ. Ընպատում ուրախութիւն լինէր արդարև ամենայն հայրենասիրաց՝ եթէ ստոյգ ելանէր մակաբերութիւնդ. սակայն որպէս տեսանի 'ի պատմութենանց ազգիս յաւուրց անտի իշխանութեան Կիրակոսի՝ որ առաջին Հայրապետն է Էջմիածնի զկնի փոխադրութեան Աթոռոյն 'ի Սսոյ, մինչև ցԼուկաս վեց անձինք միայն երևեցան անդ՝ որք ըստ կարի իւրեանց ցուցին զվաստակս ինչ գրականութեան, և զորոց խօսեցայց որիշ որիշ։

Ա.

Սիմէօն վարդապետ Ջուղայեցի, որ յաւուրս Հայրապետութեան Մովսիսի Սիւնեցւոյ ել յԷջմիածնէ, և գնաց ընդ նուիրակ Խաչատուր վարդապետի Կեսարացւոյ 'ի Լէոպոլիս քաղաք Պոլոնիոյ. ուրանօր 'ի լինել հարցուփնդրոց 'ի Լատին պատրեաց 'ի վերայ քերականական և փիլիսոփայական խօսից, իբրև նոցա զինքն և զընկերս

իւր տկարացեալ 'ի պատասխանիս՝ ոչ գիտելով, թէ բառս Ա՛ստէֆ անուն իցէ արդեօք եթէ բայ (ըստ գրելոյ Ա-ռաքել վարդ· յեր· 390) 'ի խոր խոցեցաւ յոյժ· յորմէ և 'ի նախանձ բարի շարժեալ, 'ի վերադարձի իւրում Յէջմիածին՝ անդէն ետ զանձն 'ի վաստակս, սկսաւ մարզել յուսումն արտաքին գիտութեան՝ իմն տրամաբանութեան՝ առ ոսս Ա՛նէքիսէթ վարդապետի Ա՛ծանեցւոյ՝ որ եկեալ էր անդ յայնժամ 'ի Լիմն անապատէ, մինչև ընկալեալ փոքր 'ի շատէ զլոյս իմաստից, զկնի վախճանի ուսուցչին իւրոյ Յերևան՝ կարգեցաւ 'ի Փիլիպպոս կաթողիկոսէ յաջորդէն Ա՛ովսիսի մերթ դասատու Յէջմիածին՝ և մերթ առաջնորդ վիճակին Երևանայ՝ նստեալ Յամենափրկիչ վանսն 'ի Պ՛ասենի, ուր գրեաց զինչ ինչ 'ի վերայ քերականական և տրամաբանական նիւթոց, և ապա երդեալ Յեւդոկիա՝ վախճանեցաւ յամի Տեառն 1657, Փետրուարի 27։

Ր·

Ստեփաննոս վարդապետ Ա՛ճաղգի 'ի Լէհվպոլսէ, քաջավարժ 'ի Լատին դպրութեան՝ կրթեալ 'ի համալսարանի հայրենի երկրին, 'ի ժամանակս վրդովման չիպիսկոպոսին Նիկոլայ առաքեալ 'ի ծնողաց իւրոց Յէջմիածին՝ յառաջադէմ գտաւ և անդ 'ի հայկական լեզուի· և սակս պարկեշտագնաց առաքինի վարուցն ձեռնադրեալ քահանայ 'ի Փիլիպպոս կաթողիկոսէ՝ եղոյց զերևելի աշխատասիրութիւն 'ի թարգմանութիւնս հնգեցունց մատեանից՝ ոյք են·

1· Յովսէպոս պատմ· որ ասեցաւ Յէջմիածին։
2· Առաւածաբանութիւն Դիոնէսիոսի Արիսպագացւոյ։
3· Գիրք պատճառաց կամ բնազանցական։
4· Հայելի վարուց։
5· Բերասատան աղօթից։

Ի՛Ն սրբա մատանց և ձիլք նկարչութեան, զորմէ տես յՍտորագրութեան Հայաստ. արարեալ իմն Յովհ. վ. Հ՚ահրիարեցւոյ։

Գ.

Ամբակիւ վարդապետ Դաւրիժեցի գրեաց զպատմութիւն անցից Հայաստան աշխարհի սկսեալ 'ի Մելքիսէթ Հայրապետէ ցաւուրս իւր՝ ստորին ոճով։

Դ.

Ղազար Ճահկեցի ժողովեալ զայլևայլ բանս՝ արար գիրք մի ըստ զօրութեան մտաց և հանճարոյ իւրոյ. զոր և մեծարեաց անուամբս „Դրախտ ցանկալի," որպէս և զայլ իմն՝ կոչմամբս „Ստուածազիրս։"

Ե.

Պետրոս եպիսկոպոս Խարբուղիմեան (կամ աղաւաղանօք՝ Խերթումեան) 'ի Նախճաւանայ, այր առատամիտ և լուսաւոր իմաստիւք, որում ոչ ոք գտաւ ցայսօր 'ի միաբանից Էջմիածնի համեմատ 'ի հանդիսի լիարդիւն մատենագրութեան և վարդապետական շնորհաց։ Որոյս գրաւոր երկասիրութիւնք են.

1. Մեկնութիւն գրոցն ծննդոց։
2. » Ցրոյց։
3. » Երգոց։
4. » Յայտնութեան։
5. » Թղթոյն Պօղոսի առ Եփեսացիս։
6. Քարոզգիրք տարեկան. հատոր բ։
7. Ապաշխարարան՝ Գիրք Աղօթից. հատոր բ։
8. Աղբիւր բացեալ յաւակացն Քրիստոսի։
9. Առաւածանմանութիւն, որ տպեցաւ 'ի 1828 'ի Մեսրովբայ դպրէ Թաղիադեան 'ի Մադրաս։
10. Կշիռ արդարութեան։
11. Երգարան։

Թոռ զայնոսիկ՝ յորոց ոմանք անհետացեալք չերևին 'ի միջի, և բազումք (որպէս ասի) հրոյ 'ի կեր տուան 'ի թշնամեաց, և կէսք 'ի ներքնածրարս մշակապաշտօն ա-բեղայից կաշկանդեալ մնան։

Ա.

Սիմոն Հայրապետ Երևանեցի արար զգիրք ինչ քա-ղոքեց, որ գուցէ պիտոյասցի՝ միւռոնաբաշխ և արդիւնա-հաւաք նուիրակացն Էջմիածնի։ Բաց յայսմանէ՝ նորա-կարգ յերիւրեաց զտօնացոյց եկեղեցւոյս մերոյ, և կացոյց զանձն պարտավճար 'ի գրքոջն՝ զոր արար 'ի սուրբ Աթա-ռոջ, և տպեաց։

Թէև գուցեն և այլ քանի մի յետին վաստակաւորք 'ի գրչութեան, սակայն նոքին և ոչ իսկ յիշման անգամ արժանի համարին։

ԳԼ· ԺԸ։

Հ· Երանի թէ բնաւ իսկ չէի հարցեալ զայդմանէ· քանզի լի՛ արարէր զսիրտ իմ անհնարին տխրանօք՝ պա-տասխանելովդ ինձ ոչ որպէս եաս յուսայի՝ այլ ընդհա-կառակն։ Սակայն ոչ դադարեցայց 'ի հարցանելոյ՝ մինչև հանգուսցես զմիտս իմ։ Ընդէ՞ր այդպէս սակաւաթիւ են ուսումնական անձինք յԷջմիածին· մի գուցէ արք տար-տամ քան զէտք և իմաստատեացք տեղակալեալ են կամ տեղակալեն 'ի նմա։

Պ· Այդ ասել՝ ինձ նուաստիս, որ մանուկս եմ տիօք և իմաստութեամբ, անմասն յամենայն բարեաց, յանդգ-նութիւն համարիմ, և համարձակիմ իսկ ոչ՝ ըստ որում չներին հայրենասիրութեան օրէնք և սուրբ գիրք՝ զծնո-ղաց առականս նշաւակել· բայց և կամիմ՝ զի և ամե-

նեքին այսպէս իցեն։ Բայց զարմանք մեծ այն է, զի Աղաքել վարդապետ պատմիչ՝ որ երևելին էր յիւրում ժամանակի և մին 'ի բնիկ ասացեալ միաբանից Էջմիածնի, անդ սնեալ, անդ զարգացեալ, և բազում ուրեք նուիրակ առաքեալ, չդիտեմ զեմբդ և որով վստահութեամբ առ 'ի պինդ պահել զկապ ճշմարտախօսութեան աներկեղաբար բանս զկծելիս զմիաբանակից եղբարցն տողէ՝ ընդդէմ նոցին լսելեաց, յասելն 'ի պատմագրութեան. „Էջմիածին (յաւուրս Մելքիսէթի) կային միայն միաբանք սակաւք, և այնք ևս յոյժ տգէտք և գռեհիկք“ (գլ. Ժզ. յեր. 178), և 'ի գլ. Իդ. յեր. 299. „Անազգուիք „ոմանք սինլիքորք և գռեհիկք որպէս զգեղական հողա„գործս՝ որք վարնորդիւք մշակաք բնակէին Էջմիածին, „և զաւուրս տարւոյն զբազումն 'ի տեղորայսն անցու„ցանէին քան թէ Էջմիածին“։ Ըստ այսմ և 'ի ճէ դրեալ է. „Աշխատութիւնս, հալածանս, և ստրկու„թիւնս յոլովս կրեաց (Ոսկան՝ միաբան Էջմիածնի)՝ թէ „'ի Կաթողիկոսէն, թէ յընկերակցաց իւրոց, և թէ յազ„գէս մերմէ, և թէ 'ի ստրկագունից արանց քան զինքն, „քանզի ամենեքեան 'ի վերայ նորա յարևան իբրև 'ի վերայ „օտարի՝ և ոտնահարք եղեն խրոխտալով և մեծաբանելով, „և 'ի տրամաբանութիւնս ձեռնարկելով և հակաճառելով՝ „զորս ոչ ուսեալ էին, և ոչ լուեալ. ՈՐ թողեց զկրը„թութիւն և զնեղհուն գոլն,“ ևն (յեր. 634)։

Բանք այսպիսիք յաճախ գտանին նաև 'ի գիրս Պետրոս եպիսկոպոսի Բարթուղիմեան՝ որ վերագոյնդ յիշեցաւ. բայց ես 'ի պատասխանի հարցմանդ եկաց։

Պատճառք՝ զորս 'ի մէջ բերեն ոմանք վասն չծաղկելու սուսումնականութեան Էջմիածին՝ են.

ա. Յորչափ ժամանակս Աթոռն Էջմիածնի ընդ իշխայ

նուիրեամբ Պարսից կայր, յայտ է՝ թէ դժուար մանա-
ւանդ թէ անհնարին էր, ասեն, նմա, դպրոցս կանգնել,
մանկունս ժողովել, ուսուցիչս կարգել, տպարան հաստա-
տել, և այլն։ Սակայն չզօրեն ինչ այս փաստք. նախ զի
ոչ հաւատալի իմն է ասել, թէ Պարսիկք արգելուին
զվանականս կամ յաշխարհականաց զոք յընթեռնլոյ՝ յու-
սանելոյ՝ 'ի գրելոյ, և այլն, զի զայդ արար միայն երբեմն
Շահաբաս Ա., որ կամէր 'ի կրօնս Մահմետի շրջել զժո-
ղովուրդն (ՅՌաք. գլ. ԺԴ. յեր. 166). բայց և յետոյ
սարջացեալ անդրէն դարձոյց առ նոսա զգիրսն՝ զոր ժողո-
վեալ էր 'ի նոցունց։ Երկրորդ՝ զի Հայրապետքն Մովսէս,
Փիլիպպոս և Սիմէօն զբազում ինչ այդպիսի յաւուրս
նոցին իշխանութեան արարին, որպէս ասացաւ 'ի վերոյ։
Իսկ 'ի յաջորդել Ղուկասու, որ՝ „սուրբ ես Տէր և Հայր
գթած ասողք՝ և ոչ քերթողք կամ փիլիսոփոսք պիտոյ
են ինձ“, ասէր, նուազեցաւ առկայծեալ ուսումնականու-
թիւնն, և հետ զհետէ 'ի սպառ անյայտացաւ։

'Ի դէպ գայ առ այս առածն վաղնջական՝ զոր դու
ինքն ասել կամէիր թերևս. „Երանի քաղաքին (ապա
և վանաց) յորում կամ իշխանք իմաստասիրեն, կամ
իմաստասէրք իշխեն“, որպէս և միւսն այն „Զուկն 'ի
գլխոյն սկսանի նեխիլ“։

բ. Իսկ այժմ ծանր պարտուց ներքոյ եղեալ կայ, ասեն,
Ընթռն, որոյ վասն և չյաջողէ նմա 'ի գործ այդպիսի
ձեռնարկել։ Եւ այս յայտ անտի է, զի 'ի խնդրել իմն
Հօր գերապատիւ Մանուէլ վարդապետի 'ի Սիւնհոդոսէն
Էջմիածնի զվերակացութիւն ուսումնարանի և տպագրա-
տան՝ որոց ցանկայր հաստատութեանն, Սիւնհոդոսն և
Կաթողիկոսն Եփրեմ գրով իւրեանց 'ի 10 Փետրուարի,
համար 21, արարին պատասխանի օրինակ զայս. „Սուրբ

„Ընթռուն 'ի պատճառս բազմադէմ անյաջողութեանց չէ
„այժմ ձեռնհաս վերահաստատել զուսումնարան իւր ըստ
„կարգի և ըստ ամենայն հարկաւոր հանգամանաց, կամ
„'ի դործ դնել զապարանն, և այնպէս զվերակացութիւն
„նոցին ձեզ յանձնել", և այլն։

Զորոշի 'ի բանի աստ, թէ զի՞նչ և ուստի՞ իցեն ան-
յաջողութիւնքն՝ զոր եթէ համարեսցուք մեք պատճա-
ռեալ 'ի պարտուց, սակայն և այնպէս տակաւին կէս մի
արդար է բանս, և կէս մի ոչ։ Օ՛ի թէպէտ և գումարք
դրամոց պիտին առ գործածութիւն տպարանի, այլ ոչ
առ ուսուցիչս կամ ուսանողս, որք գոլով 'ի վանակա-
նաց Էջմիածնի՝ սակաւուք գիտեն շատանալ յորժամ
պիտոյք նոցա ամենայն անթերի և առանց զրկանաց հո-
գասցին. նա մանաւանդ՝ եթէ իցեն արք հայրենասէրք։

Թող զայս, զի ահա 'ի զերծանիլ Արարատեան աշ-
խարհի 'ի ձեռաց բռնակալացն Պարսից, զերծաւ և Ը-
թռուն 'ի հարկս հարկանելոյ՝ ապա և պարտուց, վայելե-
լով 'ի 1827 ամէ մինչև ցայժմ յանդորր ազատութեան
և 'ի խաղաղ վիճակի ընդ հովանաւորութեամբ ամենա-
յաղթ հզօր Ինքնակալի ամենայն ռուսաց։

Ամէն զի և այժմ իսկ նոյնպէս առանց տպագրատան
և վարժարանի կայ մնայ Ընթռուն, այդմ բնաւ ամենևին
չէք պատճառ արտաքուստ և ոչ մի։ Այլ ըստ արդի
հանգամանաց կառավարութեան նորին խորհելով հաւա-
նիմ տալ քեզ զայս տեղեկութիւն։

Տեսեալ բարձրագոյն խորհրդարանի սրբազան Սիւն-
հոդոսին Էջմիածնի, թէ օգուտ ոչ փոքր ընծայի յայգե-
գործութեանց և 'ի վարուցանից (այսինքն է 'ի սերմա-
նելոյ գարի, ցորեան, որիզ՝ ըստ նոցա չալթուկ, կորեակ,
և ունդն՝ գիւլիւլ ասացեալ, և այլն) եթէ Ընթռուոյն, և

եթէ բազմաց 'ի միաբանից՝ ոչք կարգին 'ի պաշտօն և 'ի վերակացութիւն բազմատեսակ գործոց վերաբերելոց առ այնս, խորախորհուրդ տնօրէնութեամբ և իրաւացի պատճառաւք բարուք և օգտակար համարեցաւ յոյժ չշինել ուսումնարանի յԷջմիածին։

Սի՝ զի 'ի հաստատիլ ուսումնարանի որպէս և տպագրատան՝ ծաղկէր արդեաք 'ի նմա օր ըստ օրէ և ուսումն, և 'ի ծաղկիլ ուսման՝ թիւ ուսումնական անձանց աճէր, և եռանդն բարենախանձ յամենեսին վառեալ բորբոքեալ՝ մի զմիով էլևելս առնէին, և սկսանէին զտիւ և զգիշեր ընթերցուածոց գրոց և գրչութեան պարապիլ, որպէս 'ի վանսն Ղազարու՝ որ 'ի Վենետիկ։ Եւ 'ի լինել այսոցիկ թէպէտև օգուտ մեծ յառաջ գայր հայրենի ազգի մերում և եկեղեցւոյ· բայց յայտ է թէ՝ խափան լինէր միանգամայն և երկրագործութեան և այլոց նմանօրինակ ծառայական պաշտամանց Եջմիածնի։ Զի ո՞ ոք այնուհետև 'ի վարդապետաց կամ 'ի սարկաւագաց ախորժէր կամ՝ յանձն առնոյր երբէք կարգիլ տնտես խահանոցի, գինեպան (շերաձի), շորապան, ձիթապան, հացպան, շտեմարանապետ (ամպարտար), հիւրընկալ (քերվանսպաշի), տասանորդահաւաք (միւքանաձի), վերակացու այգեաց՝ սեխեստանի (պոստանի)՝ գարեոյ՝ որիզոյ (չալթուկի), և այլն։ Եւ այսպէս անշուշտ՝ ոչ Աթոռն միայն կրէր զվնաս՝ որ պարտաւորիւր վարձու ունել գրեթէ զմշակս յաշխարհիկ արանց յայնմ հետէ, այլ և բազումք յեպիսկոպոսաց զրկեալ մնային 'ի մարմնաւոր օգտաբերութեանցն և 'ի բարեաց անտի՝ յորս լեալեր վայելէին և վայելեն 'ի ձեռն վերակացուացն այնոցիկ հանապազօր։ Զորոց մանր կրկտել յայլում մատենի ոչ դանդաղեցայց։

Երկրորդ՝ զի 'ի ծագել լուսաւորութեան 'ի գունդս

աբեղայից և սարկաւագաց ըստ օրինի այլոց ազգաց և լուսաւորեալ տէրութեան Ռուսաց, ոչ զնոյն համարումն յարգանաց մարթէին գտանել զինքեանց եպիսկոպոսքն՝ զոր ինչ այժմ։ Վասնզի յոգունք 'ի նոցունց (յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց) թէպէտև չիցեն ուսեալք, սակայն գոլով այժմ 'ի գերագոյն պատուի և պաշտաման, զոր օրինակ՝ գանձապետութեան, յաւագլուսարարութեան, 'ի դարպասաճութեան, և այլն, 'ի մեծի համարի են յաչս միաբանից և բնակչաց Վաղարշապատայ՝ որ այժմ ասի գիւղ Էջմիածնի, և վկային լինել արժանիք առաջնորդութեան՝ նուիրակութեան՝ կաթողիկոսութեան, և այլն. որոյ վասն իսկ վայելեն 'ի մեծագոյն բարութիւնս, և օր ըստ օրէ առաւելուն պատիւ փառաց իւրեանց. իսկ 'ի բանիլ աչաց միաբանից լուսով իմաստից, յայտնի է՝ թէ այն համարումն կամ բնաւ իսկ ոչ միայր առ նոսա, և կամ փոխարկիւր յայլ ինն. քանզի կամաւ կուրանալ՝ կամաւ կորանալ՝ ոչ ամենեցուն է, բայց այնոցիկ միայն՝ որոց կամ արտաքին և կամ ներքին կուրացեալ իցեն աչք։

Ահա զայս ամենայն և զսոցին նմանս զմտաւ ածեալ թերևս սրբազան Միւնհոդսի՝ որ միշտ զգեղեցիկն և զհաճոյն տնօրինել խորհի, առ 'ի հնազանդութեան և 'ի ցածութեան ունելոյ միշտ զմիաբանութիւնն համօրէն՝ ընտրեաց յարգել առաւել զպաշտօնակալութիւն զարտաքին գործոց և զծառայութեանց՝ քան զուսումնականութիւն, որ բազում անօգտութիւնս պատճառելոց էր ապաքէն, եթէ ծաղկեալ լինէր, որպէս ասացի։

Այլ զի մի գոգցես, եթէ յանձնէ ինչ է կամ 'ի կարծեաց զոր խօսիմ, առաջի եդից աստէն զպատմութիւն քառեսակ դիպուածոց, յորոց, մարթիս ասացելոցս տեսնայնկ ճշմարտութեանն 'ի վերայ հասանել։

ՃԻ. Յամի Տեառն 1829 իմն գերապատիւ Հայր Մանուէլ վ. Հահինեան Միւմիւշխանեցի՝ այր սիրող իմաստից և իմաստասէր անձանց ցանկալով ոգւով չափ մուծանել զուսումնականութիւն յԱՀՋմիածին՝ գրաւոր խրախուսանօք առաջի արար Միւնհոդոսին հաստատել 'ի պէտս ազգային լուսաւորութեան զժողովարան մի ընկերութեան ուսումնական անձանց որոշեալ ինչ թուով բաղկացելոց. և այնր ընկերութեան պարտաւորութիւնք՝ ըստ սահմանելոյ նորին ազգասէր վարդապետի պարտ էին լինել համառօտեալքդ 'ի յետագայ պարբերութիւնս.

1. Պարապիլ մի միայն գրաւոր աշխատասիրութեանց, ընթերցուածոց գրոց և նոցին ընդ իրեարս բաղդատութեանց, ուղղագրութեանց, և այլն, և ընծայել զգրաւոր պաղարերութիւնս 'ի պատմականաց՝ 'ի բանասիրականաց և յայլոց նոյնպիսեաց 'ի պարծանս Աթոռոյ, յօգուտ և 'ի լուսաւորութիւն մանկանց եկեղեցւոյ մերոյ։

2. Որոշել զպատշաճաւոր ինչ տեղի 'ի մէջ Աթոռոյն կամ եթէ յաջողեսցի 'ի միում 'ի շրջակայ վանորէից, 'ի վարժիլ անդ մանկանց ժառանգաւորաց նորին ընդ գաստիարակութեամբ հայրենասէր ուսուցչի՝ ունելով զայն ընդ կառավարութեամբ իւրով։

3. Գրել յոր և իցէ ժամանակի՝ բայց հրամանաւ Միւնհոդոսի՝ առաջս և կամիցի 'ի հեռաւորս կամ 'ի մերձաւորս՝ Առաջնորդաց՝ Եպիսկոպոսաց կամ այլոց գործակալաց կարգելոց յԱթոռոյն՝ առ ձեռն բերել զհին կամ զնոր հարկաւորեալ մնծեռանս որով և իցէ եղանակաւ։

4. Պարտականալ հրաւիրել կամ գրել 'ի հաղորդակցութիւն իւր նահ. ղեկեղեցական կամ զաշխարհական ուսումնասէր անձինս՝ որք փափագին այնմ, թէև իցեն արտաքոյ Աթոռոյն։

5. Ընձակել երբեմն զմի ոմն յանդամոց իւրոց հրամանագրով Միւնհոդոսին՝ շրջել յայլևայլ նահանգս և 'ի քաղաքս Հայաստանի 'ի գիւս արձանագրաց կամ ձեռագիր մատեանից և 'ի տեղեկութիւն կարևոր գիտելեաց, և այլն։

6. Գրատունն ունել ընդ կառավարութեամբ իւրով, և զգրեանս որ 'ի նմա խնամել՝ կարգագրել, և այլն։

7. Փոյթ տանիլ նորոգութեան տպարանի, և ընդ յաջողեալ ժամանակին 'ի գործ դնել զտպագրութիւն մատեանից՝ զոր ինքն հարկաւոր դատեսցի։

8. Ծնուրեալսն 'ի ժառանգաւորութիւն Աթոռոյն կամ 'ի քահանայութիւն, և այլն, նախ քննել զհանգամանս բարուց՝ գիտութեան,

և այլն, և ապա վկայել զարժանաւորութենէ նորա առ ընդունելոյ զաստիճան ինչ հոգևոր։

9. Արբագրել զապեղի մատեանս՝ մանաւանդ յորս իցեն բանք զհաւատոյ, զերդնից, և այլն, և ապա տալ հրաման մուծանելոյ զնոսին 'ի տիպ։

10. Յամենայն կարևոր գէպս տալ գրաւոր յայտարարութիւն սրբազան Միւնհոդոսին, և ՄԵՍ հրամանի կամ հաճութեան նորա։

Ահա սոքիմբք և այլ ևս սոյնպիսեաք պարտաւորութեամբք տնօրինեալ զթուղթ կարգաւորութեան ընկերական ժողովոյն վերոյ յիշեալ Հայրն իմ՝ ետ զսուաջինն սրբազան Միւնհոդոսին, և 'ի չառնուլ ինչ բաւականութիւն 'ի նմանէ՝ մատոյց ապա Ս. Հայրապետ Կաթողիկոսին Եփրեմայ, սակայն և նա հանգոյն Միւնհոդոսի պատ 'ի պատ բանիւք այսր անդր զերան ձգելով՝ չարար զորոշ ինչ պատասխանի՝ այն կամ ոչ։

բ. Տեսեալ սորին՝ յիշատակեալ Հօր իմոյ, թէ բազում անկարգութիւնք վերերևին օր ըստ օրէ 'ի միաբանութեան անդ Էջմիածնի յամօթ և 'ի նախատինս Աթոռոյ և ազգի (զորս յայլում վայրի թողում բացատրել), և եկեղեցական Աստուածային պաշտամանց կատարողութիւնք դադարեալ ՄԵՆԱՆ բազում անգամ և հետ զհետէ խափան առնուն 'ի պատճառս արտաքին ծառայական՝ կամ ուղիղ ևս՝ մշակական գործավարութեանց՝ զորս կատարէին անխտիր սրբազան եպիսկոպոսք, բարձրապատիւ աբեղայք և սարկաւագունք՝ գնալով ոմանց 'ի նոցանէ վաղ քաջ ընդ առաւօտն յայգեստանեայցս, ոմանց՝ յանդս, այլոց՝ 'ի սեխեստանիս, կիսոց՝ առ հնծանահարս, և այլն, ջանեալ բանաւոր պատճառաք հաւանեցուցանել զՄիւնհոդոսն՝ զգործս վարուցանից կամ զվերակացութիւն նոցին մի ևս եկեղեցական պաշտօնէից յանձնել. և զմարմնաւորն ընդ հոգևորին չարաչար շփոթել, որ արգելեալ է ըստ

սուրբ Հայրն կանոնելոյ (յԼնդհանր·)։ Եւ խելամուտ արարեալ զնոսա, թէ քանի բարի և օգտակար եղեցի, եթէ այնքիկ ամենայն գործք վարուցանիցն յանձնեսցին գիւղական անձանց՝ հանդերձ արտորէիւք, պայմանաւ հատուցանելոյ Աթոռոյն զկիսաբաժն արդեանց, որ շատ ևս է քան զպիտոյս նորա, ետ եկեղեցացուցանել զմիաբանութիւնն, 'ի սկզբան 1830 ամի, և 'ի հարցանել ցմի մի 'ի նոցանէ՝ թէ հաճի՞ իցէ ձեզ չհաղորդիլ յիրս արտաքին ծառայութեանց, այլ միայն զհոգևոր պաշտօն ձեր փառաւոր առնել, և կարդալոյ և գրելոյ պարապիլ, անդէն ոմանք՝ որք ուսումնասէրքն էին, ցուցին զմիակամ համաձայնութիւն իւրեանց առ այն· իսկ այլք և որք 'ի կողմն իշխանացելոյ որդւոյն այգորդի էին՝ ըստ ակնարկելոյ նորա, անհաւան գտան, և այսպէս չթուեցաւ նոցա հաճոյ զնոյն զհին կապելոն յանձնէ 'ի բաց թօթափել։

Զ· Որպէս գրեցաւ 'ի վերոյ 'ի խնդրել նորա գրով 'ի 6 փետրուարի այնր ամի, համար 9, 'ի Սիւնհոդոսէն՝ թէ կարելի գուցէ՝ հաստատել զվարժարան Աթոռոյն, 'ի գործ դնել զտպարան նորին, և զնոցին վերակացութեանն պաշտօն ինքեան յանձնել, Սիւնհոդոսն 'ի 10 նորին ամսոյ, համարով 21, յայտնի բացասութեամբ վճռէ, թէ սուրբ Աթոռն չէ ձեռնհաս վերահաստատել զուսումնարան իւր, և այլն։

Է· Ընձինք ուսումնասէրք՝ որովհետև չմարթին միշտ ամենայն իւիք 'ի բանս, 'ի գնացս և 'ի կենցաղս կապիկանալ այլոց, նման նախնի հարց մերոց սրբոց, ածան յոլով անգամ 'ի փուրշիշս կամաց, որով և վշտմբերս գտան արժանիքն յիշատակաց 'ի մահ, 'ի բանս և յաքսորս վարեալք, որպէս շնորհազարդ և Աստուածուսոյց

բաբունիքն Մանուէլ Շահինեան, Զաքարիա Գուլասպեանց, Ղուկաս, Աբրահամ, և Յովհաննէս Շահխաթունեանց, որոց գովութիւն 'ի գիրս անդ իւրեանց է։

Զայսմանէ յերկար պատմեալ է իմ յառանձին գիրս՝ մակագրեալ „Ընդք չորից վարդապետաց“. տես անդ՝ եթէ ախորժես։

ԳԼ. ԺԱ.

Ա. Գոհ եմ սիրելի զեղբայրութենէդ, որ փոքր բանիւ բազում իրաց խելամուտ արարեր զիս։ Խնդրեմ յայտնել ինձ այժմ թէ պարտքն՝ զոր վերագոյնդ յիշեցեր անուամբ Աթոռոյ, ուստի, երբ, գնչափ, և առ ի՞նչ պատճառի գոյացաւ, կամ ընդէ՞ր ոչ տանի ազգն հոգն 'ի հատուցանել զայն։

Պ. 'Ի վախճանիլ Այրարատեան Գանիէլի, որպէս վկայեն և նոյն իսկ միաբանք Էջմիածնի, չգոյր ինչ ամենևին Աթոռոյն պարտք և ոչ ինչ. իսկ յետ յաջորդելոյ նորին Ս. Հափառութեան Տեառն Եփրեմի Ծորագեղցւոյ յԱթոռ Այրարատեան յամի Տեառն 1810, այլևայլ առթիւք սկսաւ Աթոռն անկանիլ ընդ պարտուք, որք և հետ զհետէ աճեալ՝ գումարեցաւ 44·000 երևանեան թուման, զոր անճարացեալ հատուցանել նորին մեծի Այրարատի՝ իսոյս ետ յերկիրն Արցախայ՝ այն է ըստ տաճկաց Ղարաբաղ, յամի 1821, և անտի չուեալ 'ի սուրբ Ղշան վանս Աղբատայ՝ հանգիստ կալաւ անդէն առ ժամանակ ինչ՝ գոլով ընդ իշխանութեամբ Տէրութեան Ռուսաց, մինչ ցօր տիրապետելոյ ռուսաց աշխարհին Արարատայ։

Զծանրութիւն պարտուցս թեթևացոյց սակաւ մի հիսէին սարտարն՝ որ իշխէր Երևանայ յայն աւուրս, բարձեալ 'ի տոկոսեացն ըզ. ..... 14·000 թուման։

Արքազան Տերսէս արքեպիսկոպոս Վրաստանի վճարեաց	12·000	Թուման։
Միաբանք Աթոռոյն՝ հալեալ զարծաթի անօթս տաճարին՝ հատուցին	5·330	»
Յամի 1830 յարդեանց եկեղեցեացն Ցփխիսայ տուաւ·	2·500	»
Վճարեցաւ գարձեալ ՅԱթոռոյ	4·000	»

Գումար հնտուցելոցն եղև· 37·830, զոր հանեալ 'ի գումարէ պարտուցն՝ մնայ հատուցանելի 6·170։

Սակայն անաչառ զննելով՝ տեսանեմք, զի յընթացս միոյ ամի զոգ կրկնապատիկ առաւելութեամբ քան մնացորդ պարտուցդ գումար դրամոց եմուտ ՅԱթոռն ընդ ձեռն Խարձր Արքազան Դիտին վրաստանի Յովհաննու արքեպիսկոպոսին Կարբեցւոյ՝ որ այժմ 'ի 8 Նոյեմբեր ամսոյս օծաւ Կաթողիկոս յաւուր տօնի Ընշտակապետաց 'ի Կաթողիկոսէն Էփրեմայ։

ա· Արդիւնք՝ որք համբուրեցին զԱրքամագուր Աղարքազան Դիտին Յովհաննու· 'ի քահանայից մինչ էրն 'ի Ցփխիս՝ ըստ պատմելոյ նոցին իսկ քահանայից	5·075	Թուման։
բ· 'Ի վաճառմանէ կայից հանգուցեալ դիտին Աստրախանայ	750	»
գ· Յարգեանց վանացն Թելէթի	750	»
դ· Յառաջնորդութենէ Գանձակայ	150	»
ե· Յեպիսկոպոսէն Շամշատնոյ	75	»
զ· 'Ի վաճառմանէ տեղւոյ սրբոյն Կոզմայի	200	»
է· 'Ի վաճառմանէ այլ ինչ տեղւոյ	37	»
ը· 'Ի տարեկան արգեանց առաջնորդարանին Ցփխիսայ	2·500	»
թ· 'Ի նուիրակութենէն Գանձակայ	150	»
ժ· 'Ի շնորհաց կայսեր	2·850	»
Ընդ ամենն	12·537	Թուման։

Սակայն այժմ ակնկալութիւն է, թէ նորընտիր Հայրապետն Յովհաննէս, որ ըստ Կայսերական Խարձրագոյն բարեհաճութեան օծաւ 'ի 8 Նոյեմբերի այսր 1831

ամի, իւրով բազմաշխատ ջանիւք վճարեալ իցէ կամ վճարեսցէ զայս ճեացուած պարտուց, քանզի մեծ եղև առ նա շնորհք Աստուածամեծի Ինքնակալի ամենայն ռուսաց Նիկողայոսի առաջնոյ, որ ՝ի միոյն նշանաւ ամենասրբազան ասպետութեան սրբոյն Ղազարոսեղի պսակազարդեաց զնա, այլև առատաձիր բաշխիւք ողորմութեան քաղցրացաւ ՝ի վերայ տատանեալ տանն սրբութեան, առաքելով զ11·400 մանէթ արծաթ դրամ, որ վերածեալ յԵրևանեան դրամ՝ առնէ 2·850 թուման, և ըստ Օսմանցւոց՝ առնէ զուրուշ 136·800։

ԳԼ. ԺԳ.

Հ. Որպիսի է ձև կամ շինուած Էջմիածնի։

Պ. Ընուամբս Էջմիածին՝ հարկ է իմանալ եթէ զմենասատանն, և եթէ զտաճարն՝ որ ՝ի նմա։

Մենասատանն կառուցեալ է ՝ի տափարակ վայրի կից քաղաքին Վաղարշապատայ, որ այժմ է գեօղ ինչ՝ կոչեցեալ յանուն Էջմիածնի, և բնակիչք նորա անուանեն զինքեանս Էջմիածնեցիս։

Զև մենասատանին գրեթէ է քառակուսի հաւասարանկիւն. յարևելեան կողմն նորա գոն փուռն կամ փռնատուն, վարժարան՝ որ այժմ է հիւրանոց, և քանի մի փոքրիկ խուցք՝ յորս բնակին անարգք ՝ի միաբանից։ Ի Հիւսիսային կողմն են սենեակք պատուաւոր միաբանից, որոց ոմանք են կրկնայարկք։ Ի կողմն արևմտից է տուն Կաթողիկոսին որոշեալ պարապաւ, և կոչի՝ Վեհարան, յորում ամենայն շինուածքն են զարդարուն զանազան նկարուածովք. գոյ ՝ի նմա աւազան ջրացայտ (շատրուան) ՝ի զբօսանս Վեհապետանց. և ընդ մէջ նորա անցանէ

ջուրն կոչեցեալ Գանգան։ 'Ի Վ՝ Եհոպանէ աստ են տպա-
գրատունն՝ յորում պահի այժմ բուլպ, մրգանոցն (եէմ-
շատունն), գանձատունն, և առանձին խահանոցն սրբա-
զան Կաթողիկոսի։ 'Ի հարաւային կողմն են երկու սեղա-
նատունք, ուր լինին ճաշկերոյթք և ընթրիք միաբանից՝
'ի միումն յամառան, և 'ի միւսումն 'ի ձմեռան։ 'Ի սմին
շարի են և խահանոցն հասարակ միաբանից, մածնա-
տունն, սառնատունն, գինետունն (շէրպպիանէ), և գա-
ւեթատունն՝ ուր 'ի դիպահոլ առնեն երբեմն զընդրիմա-
բարոյն 'ի միաբանից։ Օ՝թիկամբ սեղանատանցս որիշ
պարսպաւ գոյ շինուած ինչ կրկնայարկ Ղ՝ազար Կաթո-
ղիկոսի՝ անուանեալ յանուն նորա Ղ՝ազարապատ· յո-
րում ազանին հիւրք և ուխտաւորք։ 'Ի Ղ՝ազարապատի
աստ է և աւազան ինչ՝ ընդ որ անցանէ ջուրն Գան-
գանի։

Տաճարն՝ է 'ի կեդրոնի այսր մենաստանի շինեալ սեան
և կարմիր տաշեալ ծոյ վիմաք· ձև նորա է քառակուսի խա-
չանման· բաց յաւագ դրանէն՝ որ է յարևմտեան կողմն,
ունի և զայլ դրունս երկուս· զմին 'ի հարաւոյ, և զմիւսն
'ի հիւսիսոյ։

'Ի մէջ կամ 'ի կեդրոնի տաճարիս գոյ փոքրիկ գմբե-
թաւոր խորան ինչ կանգնեալ յԻՆՉման տեղի՝ 'ի վերայ
չորից մարմարիոնեայ սպիտակ սեանց։ Լարձրութիւն
շինուածոյս է իբր 6 կանգուն օսմանեան։

Ա՝ւագ խորանն տաճարիս է յանուն սուրբ Աստու-
ածածնի· յորոյ յաջ թեւն է խորան սրբոյն Յակոբայ
Տեառն եղբօր, և աւանդատուն՝ ուր զգեստաւորի պատա-
րագիչն։ և 'ի ձախ թեւն՝ է խորան յանուն սուրբ Ղ՝ու-
կասոյի։ և 'ի կից նմին խորանն մնասնց՝ յորս պահին
նշխարք սրբոց և սուրբ նշանք։

'Ի հիւսիսային կողմն տաճարիս՝ է խորան յանուն սրբոյն Պետիաննոսի, և 'ի հարաւային կողմն՝ խորան յանուն Յովհաննու Պարապետի։ Յայսոսիկ խորանս գոն մի մի փոքրիկ սեղանք՝ որք հային յարևելս։

'Ի վերայ սեղանատան՝ է գրատունն, յորում գնի բազմութիւն ոսկագիր և գրչագիր մատենից նորոց և հնոց։ Եւ այս գրատուն զուրկ գոլով 'ի յատուկ պաշտպանողէ, և միանգամայն անկեալ 'ի ձեռս տգիտաց՝ կայր անխնամ մինչև բազմաց յընտիր մատենից 'ի կորուստ վարիլ, և կիսոցն փոքիլ, և այլն, մինչև ցամ Տեառն 1828, յորում ժամանակի եկեալ Մանուէլ վարդապետ Միսիշեանեցի 'ի Ղրիմայ, և տեսեալ զգրատունն յայնպիսի վիճակի խանգարման՝ եմոյծ զայն 'ի նորոգ կարգ և 'ի վայելչութիւն աշխատակցութեամբ իմ, և այլ երկուց վարդապետաց, ըստ հրամանի Ներսէս արքեպիսկոպոսի, որ ունէր յայնժամ զընդհանուր իշխանութիւն 'ի վերայ Էջմիածնի՝ գոլով փոխանորդ Հայրապետին Եփրեմայ։

ԳԼ. ԺԴ.

Հ. Նիր և ոգպէս լինի ճաշկերոյթ կամ ընթրիք միաբանից։

Պ. Ճաշկերոյթն լինի զկնի արձակման ճաշաժամուն։ Միաբանք եկեալ յեկեղեցւոյ՝ իսկ և իսկ թողեալ զփիլոնս իւրեանց անծալ 'ի սենեկի։ փութան հասանել 'ի սեղանատունն։ Իւրաքանչիւրն ունի վասն իւր առանձին զգանակ, զդրգալ, և զպատառաքաղ (չանկալ), զբոս կամ ինքն և կամ սպասաւոր նորա (փոքրաւորն) թէ ունիցի պարտի տանել 'ի սեղանատուն անդր։ զի ոչ ասան անդ զայլ ինչ բաց 'ի հասարակաց կերակրոյ։ Սարկան

անձինք, հիւրք կամ ուխտաւորք՝ որք անգիտակ գոլով այսմ սովորութեան, առանց այսց գործեաց երթան 'ի սեղան անդր, կամ ձեռօք ուտեն, և կամ քաղցած դառնան յիւրեանց տեղիս։

Այրեանք, այսինքն՝ եպիսկոպոսք, աբեղայք, սարկաւագք, դպիրք, մենդք, աշխարհական գործավարք՝ ժողովին 'ի սեղանատունն. և յօրհնել ժամարհնողին զսեղանն՝ նստին իւրաքանչիւր տեղիս կարգաւ. գայ ոմն յաբեղայից հացպան անուանեալ՝ զկնի իւր ունելով զհացաբարձ աշխարհական ոմն և տայ դնել իւրաքանչիւր բազմելոցն առաջի մէն մի հաց, բոլորշի տափակաձև և երբեմն ինքն հացպանն ընտրանօք առնու և դնէ զհացն ձեռամբ իւրով առաջի պատուաւոր եպիսկոպոսաց և վարդապետաց։

Յաւարտիլ բաժանման հացին՝ գայ այլ ոմն և բաշխէ զպանիր, կամ զխորոված (եթէ իցէ օրն Միւրակէ կամ ասն երևելի)։ Յետ այնորիկ մատակարարի կերակուրն փոքրիկ պղնձի ամանովք։ Զև ճաշակեալ պատառս հինգ գայ ոմն և մատուակէ զգինի ՝ի ամենեցուն, այլ՝ եպիսկոպոսաց և վարդապետաց միայն։ Լաղում անգամ շփոթ մեծ ծագի 'ի ստորին բազմականս, այն է՝ 'ի սարկաւագս և 'ի դպիրս՝ յորժամ անմասն մնան նոքա յայնցանէ՝ զորս վայելեցին վերին բազմականք։

Յաւուրս Միւրակէից կամ երևելի ասնից՝ յորս գտանին ուխտաւորք, ճաշկերոյթն լինի հանդիսաւոր և ամենայն միաբանք գտանին 'ի սեղանատան անխաբան. կերակրոցն տեսակք բաց 'ի պանրոյ՝ երկու կամ երիք, այսինքն՝ եախնի, տօլմայ, փիլաւ. գինի մատուակի 3 կամ 4 գաւաթ՝ զորոց վերջինն ըմպեն յանուն սրբազան Պաթողիկոսի իւրեանց։

Իսկ 'ի հասարակ աւուրս ոչ զան ամենեքին 'ի սեղանն հասարակաց, այլ միայն նոքա, որք չունին կարգ այլ ուստեք ընալ զպէտս որովայնի իւրեանց։ Երկեալք եպիսկոպոսք և գործակատար վարդապետք ունելով 'ի սենեկի իւրեանց զամենայն պատրաստութիւն ապրուստի իւրեանց, ոչ հարկաւորին հանապազորդել 'ի հասարակաց սեղանն։

'Ի հասարակ աւուրս կերակուրն հասարակաց է (եթէ օրն իցէ ուտեաց) կամ եաղնի և կամ ջլոյր ձաւարով. այլ եթէ օրն իցէ պահոց՝ կերակուրն լինի կամ մուղաշարի, կամ տանտուռ խաշած, և կամ մախօխ թթուեալ։ Ի՛ և այլ տեսակ ինչ ընդեղինաց անուանեալ ըստ բարբառոյ տեղւոյն՝ գիւլուլ, յորմէ եփեն թան. բայց զգուշանալ պարտէ յաւտեղոյ ղային, զի պատճառէ սաստիկ խիթ որովայնի, և համարեա թէ քարացուցանէ զաղին մարդոյ, որպէս և փորձ առեալ է իմ և բազմաց բազում անգամ։ Զգուշանալ պարտէ նաև յրմպելոյ զջուր սառնախառն՝ զոր դնեն ամանով առաջի բազմականացն. զի 'ի նմանէ պատճառին բազում ցաւք և ախտաւորութիւնք, որպիսի են՝ տենդ, այրոց, հազ, և այլն։

Յաւարտիլ ճաշկերութի՝ ոմանք 'ի միաբանից՝ որ չքաւորագոյնք իցեն, առեալ ընդ անթով իւրեանց զյաւելուածս կերակրոյն կամ զկոտորս ինչ հացի փաթութեալ 'ի կտաւի՝ տանին 'ի սենեակս իւրեանց առ 'ի ուտել յորժամ քաղցն ստիպեսցէ. և այնուհետև բաժանեալ 'ի ջոկս ջոկս, երկուք աստ, երիք անդ, և այլն զգնան և ճեմեն խօսելով ընդ իրեարս առ 'ի մարսել զկերածս իւրեանց։ Ընցանէ ժամ մի, և ամենայն ոք ընկողմանի 'ի մահիճս քնոյ, մինչև 'ի հարկանել զանգի երեկոյեան ժամու։

Ընթրիքն թէպէտև սոյնօրինակ կատարի, բայց չէ այնպէս հանդիսաւոր յաճախութեամբ կերլեաց և ըմպելեաց, որպէս ճաշկերոյթին. վասնորոյ և բազումք պէտքն և եթ առեալ դառնան 'ի սենեակս։

ԳԼ. ԺԷ.

Ա. Իսկ բնակութիւնք միաբանից։

Պ. Միաբանից ոմանք արդեամբք իւրեանց շինելով կամ նորոգելով ղսենեկան՝ յորս բնակին, սեպհականեալ են ինքեանց, և չ՝ կարեն փոխել զնոսա յայլ սենեակ. և ոմանք՝ ուր և հրամայեսցեն՝ անդ բնակին երկու կամ երեք 'ի միասին։ Սենեակք առաջնոցն լի են անուշահամ մրգեղինօք, անուշահոտ իւղովք, անուշաճաշակ գինեօք, գեղեցիկ յախճապակեօք, և այլն. իսկ վերջնոցս՝ ոջլովք, աղբովք, և գարշահոտութեամբ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

ԶԻՐԱՒԱՆՑ, ԶՊԱՏՈՒՈՑ ԵՒ ԶԻՍԽԱՆՈՒԹԵՆԷ

ԾԱՑՐԱԳՈՒՇՆ ՊԱՏՐԻԱՐԳԻՆ ՀԱՅՈՑ

ՈՐ 'Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ։

ԳՐԵԱԼ[1]

'Ի Մոսկուայ Մոսկիոպոլոսի Զիսոնոցոյ։

—

ԳԼ. Ա.

ԶԱՆԱԶԱՆ ԱՆՈՒԱՆՔ ՅՈՒԵԱԼՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

1. Եպիսկոպոս։

Սուրբն Սահակ յիրեսին ևս թուղթս իւր որ առ Թէոդոս Կայսր և առ Ատտիկոս պատրիարգ Կոստանդնուպօլսոյ և առ Ընատոլիս զօրավար՝ կոչէ զինքն Սահակ Հայոց Եպիսկոպոս. որպէս և նոքա 'ի պատասխանելն՝ սովին անուամբ կոչեցին (տես 'ի Խորին. գ. 57)։ *Այնպէս և Յովսէփ Կաթողիկոս 'ի գրելն առ Թէոդոս Կայսր՝ կոչէ զինքն „Յովսէփ Եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իմովք“* (Յեղիշ. 112)։

2. Մեծ արքեպիսկոպոս։

„Մեծ արքեպիսկոպոսն երանելին Գրիգորիս“ (Ագաթանգ. յՃՂ)։

---

[1] Գրուածս այս գրեալ է 'ի Մոսկուայ, յամին 1852։ Ծանօթ. Զ. Մ.

3· Եպիսկոպոսապետ։

Խորենացին զԿաթողիկոսունսն Հաւէն, Ասպուրակէս, կոչէ Եպիսկոպոսապետ (գ· 40, 41, 49)։ Եւ զկաթողիկոսութիւնն՝ Եպիսկոպոսապետութիւն (գ· 66, 67)։ Նոյնպէս Հռոմա Ընծրուանի զմեծն Ներսէս, զԸ՝ահակ, զՀաւէն, և զԱսպուրակէս կոչէ եպիսկոպոսապետ։

4· Գլուխ եպիսկոպոսաց։

Ռուզանդ զկաթողիկոս՝ սկսեալ 'ի Հաւէնէ՝ կոչէ Գլուխ եպիսկոպոսաց (դպր· ՁԼ)։

5· Վահանայապետ կամ Մեծ Վահանայապետ։

Ռուզանդ զսուրբն Գրիգոր կոչէ Մեծ Վահանայապետ, և զսուրբն Ա՝ՐԹանէս՝ Վահանայապետ (գ· 3)։ 'Ի շարակնոցի սուրբն Գրիգոր և մեծն Ներսէս միշտ կոչին Վահանայապետ։

6· Պապրիարգ կամ Մեծ Պապրիարգ։

Յովհաննէս կաթողիկոս պատմագիր զԳոմիտաս կոչէ Մեծ Պապրիարգ, և Կիրակոս զՊետրոս կաթողիկոս կոչէ Պապրիարգ, և Ա՝ՐԳան զսուրբն Գրիգոր, և զԱհակ, և զԱնաստաս, և զԴաւիթ, և զՅովսէփ՝ յիշէ անուանքս Պապրիարգ։ Նոյնպէս զկաթողիկոսութիւնն կոչէ Պապրիարգութիւն և զկաթուղիկոսարանն՝ Պապրիարգարան։

7· Կամո-ղիկոս։

Ագաթանգեղոս գրէ վասն սրբոյն Գրիգորի· „Յայնժամ մեծ արքայն Տրդատ և սուրբ Կամո-ղիկոսն Գրիգոր հանդերձեցին և արձակեցին զԱստակէս“ (յՁԳ)· և Ռուզանդ

ասէ վասն Էրիտաակիսի. „Որդի Գրիգորի սքանչելւոյ՝ առաջին Կաթողիկոսին Հայոց մեծաց“ (գ. 10)։ Զ՝ոգար Փարպեցի զԳուտ կոչէ Կաթողիկոս (198)։ Եւ Յովհաննէս Կաթողիկոս զառաջին Յովսէփ նախ անուանէ Կաթողիկոս. զի զառաջինն Հայրապետ կամ Պատրիարգ անուամբ յիշատակէ։ Խորենացին ոչ ուրեք յիշատակէ զանունս Կաթուղիկոս, այլ՝ Եպիսկոպոս և Եպիսկոպոսապէտ։ Էգաթանգեղոս և զԼ՝ևոնդիոս եպիսկոպոսն Կեսարիոյ կոչէ Կաթողիկոս (յԺ)։ Եւ Ռուզանդ գրէ „Ցեսին անդ (՝ի Կեսարիա) զԿաթողիկոսն Կաթողիկոսաց զսուրբն Եւսեբիոս“ (ղ. 4)։ Եւ թէ „Ցարին զմեծն Ներսէս առ Կաթողիկոսն Եւսեբիոս յերկիրն Պամբաց, և՝ ի մայր քաղաքացն Նոցա՝ ի Կեսարիա, զի ձեռնադրեսցեն անդ զսուրբն Ներսէս՝ ի Կաթողիկոսութիւն Հայոց մեծաց“։ Նոյնպէս և զՅուսիկ և զՓառէն, զՀ՝ահակ, յիշատակէ անուամբս Կաթողիկոս (գ. 12. 16. 17)։

8. Հայրապետ։

Այս անուն առ մեզ է հասարակ անուն նաև այլ ամենայն եպիսկոպոսաց տուեալ, թէպէտև է թարգմանութիւն Յունական անուանս Պապրիարգ, որպէս գրէ Մխիթար Գոշ. „Առաջին դասք եկեղեցւոյ Պատրիարգք, որ թարգմանին Հայրապետք“։ Բայց ըստ առմանն սարբերի. զի Հայրապետ կոչին նաև այլ ամենայն եպիսկոպոսունք. իսկ Պապրիարգ կոչին միայն այն եպիսկոպոսապետք՝ որոց աթոռ ընկալեալ իցէ զայս անուն, և ընդ որովք են այլևայլ աթոռք եպիսկոպոսաց և արքեպիսկոպոսաց։ Յովհաննէս Կաթողիկոս զայս զանազանութիւն դնէ յասելն վասն մեծին Ներսիսի. „Առաքեցին զնա ըստ

առաջնոյ կարգի 'ի Կեսարիա ձեռնադրիլ 'ի Հայրապետութիւն (որ է՝ յեպիսկոպոսութիւն). բայց ապա տեսեալ զնորա զարդիւնս, խորհեցան „Նախակարգել 'ի պատիւ Պապրիաքիոնեան“։

Բայց 'ի գիրս մեր ուրեք ուրեք Հայրապետ կոչին և Կաթողիկոս. որպէս 'ի Շարակնոցի „Ցնծութեամբ տօնեսցուք զքիշատակ Հայրապետին մերոյ (Գրիգորի)“, և Յովհաննէս Կաթողիկոս գրէ. „Ընկեալ առ ոտս Հայրապետին“, և Կաթուղիկոսարանն կոչի Հայրապետանոց. զոր օրինակ. „Կամեցայ 'ի Հայրապետանոցի աստ արձանացուցանել“ (Յովհ. Իմաստ. յիշատ. կանոն.)։ „Ուսեալ 'ի Հայրապետանոցի“ (Յովհ. Կաթող.)։ Եւ կաթողիկոսութիւնն կոչի Հայրապետութիւն. „Լցեալ զկէտ Հայրապետութեան... Կացեալ յաթոռ Հայրապետութեան... կացուցանեն յաթոռ Հայրապետութեան“ (Յովհ. Կաթող.)։

ԳԼ. Բ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Վասն ընտրութեան Կաթողիկոսաց յառաջին ժամանակս տեսանեմք փոյթ մեծ ունել 'ի սերնդոց Լուսաւորչին կարգել. որոյ և սերունդ արդարև իւրով բարեբաւութեամբ վարուց արժանի կացոյց զինքն այնմ աթոռոյ. մինչև պատճառս եղծանելոյ սմենայն բարեձեւութեան աշխարհին Հայոց յաւուրս Երշակայ՝ համարի Մեսրոպ պատմիչ 'ի կողմանէ քաղաքականին՝ զչունելն զօրավար 'ի տոհմէ Մամիկոնէից. իսկ 'ի կողմանէ եկեղեցականին՝ զչունելն Կաթողիկոս 'ի տոհմէ Լուսաւորչին. „Եւ տեսեալ Երշակայ, ասէ, որ ոչ գտանի առաջնորդ 'ի Հա-

ցորդաց սուրբ ազգին՝ մեծ քահանայապետին սրբոյն Գրիգորի, և ոչ զօրավար 'ի քաջ և 'ի տիրասէր ազգէն Մամիկոնէից, և եթէ աւերումն աշխարհիս Հայոց յաղագս այսր պատճառաց եղև", և այլն։

Այսն եղանակի ընտրութեան Կաթողիկոսաց յետ հերձուածոյն Դաւթի Կաթողիկոսին որ յԱղթամար 'ի սկիզբն երկոտասաներորդ դարուն, գտանեմք կանոն ինչ սահմանեալ, զի առանց հաւանութեան չորից աթոռաց եպիսկոպոսաց՝ ոչ ոք նստցի Կաթողիկոս. որք են եպիսկոպոսն Ռշնոյ, Հաղբատոյն, Դաւսաթէու՝ որ 'ի Սիւնիս, և Թադէոսի վանաց՝ որ յԱրտազ։ Դատանի և յիշատակութիւն ինչ 'ի թուղթն Մխիթարայ Կաթողիկոսի 'ի սկիզբն չորեքտասաներորդ դարուն՝ զոր գրեաց 'ի Հռոմ[1]. „Դողովին, ասէ, հրամանաւ արքայի արքեպիսկոպոսունք, եպիսկոպոսունք... իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ տայ զանուն միոյ ուրուք յեպիսկոպոսաց կամ վարդապետաց... և զանուանն գրով տան Թադաւորին ընդ կնքով իւրեանց. և եթէ բազումք իցեն վիճակեալքն, հրամայէ Թադաւորն՝ զի միաբանեցին 'ի վերայ երկուց կամ երից։ Դ. ապա Թադաւորն հանդերձ ժողովով իւրով ընտրէ յերից 'ի նոցանէ զմին զոր կամի. և յաւուր օծութեան անդ՝ Թադաւորն ինքնին ծունր կրկնեալ դնէ զմատանին 'ի ձեռս նորա համբուրելով զաջ նորին, և զառնայ 'ի տեղի իւր. և յայնժամ առնուն զնա առաջնորդք, և օծանին ըստ օրինի Կաթողիկոսութեան"։

---

[1] Այս թուղթ Լատիներէն գտանի 'ի մեծի հաւաքման ժողովոց ապագրեալ 'ի Գանո

Գ·Լ· Գ·

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ձեռնադրութիւնն 'ի սկզբան անդ լինէր 'ի Կեսարիա· զի թէպէտ յետ գալոյ Թադէոսի առաքելոյն յաշխարհս մեր և քարոզելոյ զաւետարանն՝ Տեացին աստ և անդ քրիստոնեայք 'ի Ծածուկ· բայց սակս սաստիկ հալածանաց կռապաշտից ոչ Տեաց 'ի Հայաստան յաջորդութիւն նորա, և ոչ աթոռ եպիսկոպոսական· վասնորոյ կամելով զսուրբն Գրիգոր 'ի յաջորդութեան Թադէոսի կացուցանել Հայրապետ և Հովիւ 'ի Հայաստան որպէս հարազատ ծնունդ առաքելական քարոզութեան նորա 'ի Կեսարիա առաքեցին 'ի ձեռնադրութիւն· զի ծանեան՝ թէ սուրբն Թադէոս նաև 'ի Կեսարիա էր քարոզեալ, և անդ եղեալ զիւր աթոռն· ուր անխախտ Տեալով յաջորդութեանն՝ եպիսկոպոսունք Կեսարիոյ էին յաջորդք Թադէոսի առաքելոյն, որոց առաջինն կոչէր Թէոփիլոս[3]*։ Եւ այսպէս սուրբն Գրիգոր իրաւամբք կոչի յաջորդ Թադէոսի, և աթոռ նորին՝ աթոռ սրբոյն Թադէոսի· որպէս և նշանագրէ Խորենացին (բ· 91)։ Տես և 'ի Ռուզանդ, գ· 3, և այլն։*

---

[3] *Զայս յայտ առնէ Վարդան յաստղն· „'Ի յերեսուն ամի Լուսաւորութեանն իւրոյ սուրբն Գրիգոր զԱրիստակէս առաքէ 'ի Կեսարիա ձեռնադրել, վասն զառաջին ձեռնադրութիւնն անդ առնելոյ Թադէի առաքելոյն, և արկանելոյն հիմունս եկեղեցւոյն. և անուն եպիսկոպոսապետին զոր արար անդ սուրբ առաքեալն Թադէ, Թէոփիլոս կոչէր"։ Այսպէս գրէ և Մեսրոպ ժ·. „Բայց ասացեալ յաղագս որոց պատմառաց առնուին ձեռնադրութիւն 'ի Կեսարիա... մնեալ 'ի նա առաքելոյն Թադէոսի՝ անդ լուսաւորեաց և զնոսա. և ձեռնադրեաց զոմն յիւրոց աշակերտաց եպիսկոպոս Կեսարու, որում՝ անունն էր Թէոփիլոս. և ինքն գնացեալ 'ի Հայս այնր աղգաւ առնուին Հայք ձեռնադրութիւն 'ի Կեսարիա"։ Զոյն գրէ և Վարդան 'ի գալեան Լուսաւորչին· „'Ի Կեսարիա երթեալ 'ի մայրաքաղաքն Կապադովկացւոց՝ և մայրն*

'ի ձեռնադրութեան սրբոյն Գրիգորի 'ի Կեսարիա առաջին ՀԱՅՐԱՊԵՏին ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ՝ թուէր զառաջինն թէ օրէնք իմն հաստատուն լինելոց էր և 'ի յաջորդս նորա 'ի Կեսարիայ առնուլ զձեռնադրութիւն իւրեանց. զոր և յուշ առնէ Ղ. Եւոնգիոս ՀԱՅՐԱՊԵՏ 'ի թուղթն իւր որ առ Ցրդաթ. և 'ի նոյն յորդորէ տեսել. „Եւ հաստատեալ կացցէ վկայութիւն 'ի մէջ երկոցունց կողմանցս. զի պարգևաբաշխութիւն նորոգեալ քահանայապետութեանդ ձերոց նահանգի առ 'ի մէնջ՝ կացցէ անշարժ յեկեղեցւոջս Կեսարու. ուստի և հանգերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինութեան, ձեռնադրութեանդ, որով անապական պարգևք բաշխին ձեզ“ (Ընդաթ. յկթ)։ Եւ արդարև 'ի նոյն հանապազորդեցին մերքն մինչև 'ի մեծն Դերսէս 'ի Կեսարիա առաքելով առնուլ զձեռնադրութիւն։ Այլ զյաջորդ նորա զԸ. ՀԱՅԿ, առէ Յովհաննէս Պաթողիկոս, Նստուցին յաթոռ Պատրիարգութեան ոչ ևս ըստ սովորութեանն առաջնոյ առաքեալ զնա 'ի Կեսարիա, այլ քեալ 'ի բաց զօրէնն առաջին, ըստ օրինի Պատրիարգաց կալան կարգ՝ ժողովով եպիսկոպոսաց ձեռնադրել... զի մի յայլոց ոմանց ընդ ձեռամբ

հիմարութեան հաւատոյ 'ի ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՍ 'ի Թագէէ առաքելոյ, ուր արար զառաջին ձեռնադրութիւնն և զհիմարութիւն եկեղեցւոյ, երթեալ առնոյր զառաքելական պատուն... Քանզի որ առ շիրմաքն նորա յղացաւ և էառ սկիզբն գոյութեանն ըստ Աստուծոյ յառաջին աթոռ նորա, ուր զուարթնոցն՝ եպիսկոպոս ձեռնադրեաց սուրբն Թադէոս... պայծառացեալ զառնայ 'ի նորին առաքելական անդաստանն, ինքեան իսկ և նորա վաստակաւք հերկեալ“։ 'Ի դէպ գոյ այսմ և բան Ղ. Եւոնգի հայրապետին առ Ջինորայ 'ի պատասխանին իւր առ սուրբն Գրիգոր, 'ի պատճէնն երկրորդ. „Քեզ ծագեալ արեգակն արդարութեան Քրիստոս 'ի գուռ (այսինքն յաղթի քում՝), և զառ ընարեցեալ 'ի տեղի ընարելոյ սրբոյ առաքելոցն Բարթողիմէոսի և Թադէոսի“։

անկցի՝ որ ինքնակալութեամբն է պատուեալ պատրիարգութիւն։ Եւ Յոյնս եւս գտանեմք զհաւատիս իրացս այսոցիկ· զի 'ի գաւազանագիրս եպիսկոպոսարանաց Կայսերութեան արձանագրեալ յաւուրս Ղ Լեւոնի Կայսեր իմաստնոյ, որ էր յիններորդ դարու, յետ յիշելոյ զեպիսկոպոսարանս չորրորդ Հայոց, ասի· „Գիտելի է՝ զի սա ինքնագլուխ է· ոչ առեալ ձեռնադրութիւն ընդ առաքելական աթոռով, այլ պատուեալ վասն սրբոյն Գրիգորի Հայաստանեայց“։ Ա՛յս է՝ զոր յիշէ Լամբրոնացին 'ի թուղթն որ առ Ոսկան ճգնաւոր· „'Ի Տիփաիկոնն յորում կարգ եպիսկոպոսացն սահմանի՝ գրեալ է, որ Հայոց Կաթողիկոսն պատուեցաւ վասն սրբոյն Գրիգորի, որպէս և կղզին Կիպրոսի վասն առաքելոյն Բառնաբայ· և յիւրեանց եպիսկոպոսացն առնուն արքեպիսկոպոսքն զձեռնադրութիւնն“։

Գ·Լ· Գ·

ՍԱՀՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Գրէ Կիրակոս վասն սրբոյն Գրիգորի· „Ձեռնադրեաց զորդի իւր զսուրբն Արիստակէս եպիսկոպոսապետ Հայոց և Վրաց և Աղուանից“։ Յովհաննէս Կաթողիկոս յաւելու և „զՆդգերացիս“։ „Ա՛յս Մովսէս զԿիւրիոն սրբոյ Կաթուղիկէի վանաց երէց՝ ձեռնադրէ յարքեպիսկոպոսութիւն Վրաց Նահանգին և Գուգարաց և Նդգերացւոց, ըստ օրինակի կարգացն առաջնոց“։ Ել 'ի գործադրութենէն երևի՝ ոչ անմիջապէս ընդ իշխանութեամբ Կաթողիկոսին Հայոց անկեալ Նդգերացւոցն այլ միջնորդութեամբ Վրաց։ Բայց և այս իշխանութիւն՝ 'ի վերայ Վրաց՝ տեւեաց մինչև ցնախայիշեալն Կիւրիոն· զոր

Ի. Մովսէս կաթողիկոս 'ի մէջն անդ վեցերորդ դարուն ձեռնադրեաց (տես զայսմանէ 'ի Պատմագիրս)։

Իսկ զԱղուանս միշտ ընդ իշխանութեամբ Հայոց Կաթողիկոսին լեալ տեսանեմք մինչև զՅովհաննէս Կաթողիկոս, որ յելս իններորդ դարուն և 'ի սկիզբն տասներորդին. զի 'ի խօսելն զԱղուանից՝ ասէ. „Հալածեալ „շրջեցայ քաղաքէ 'ի քաղաք 'ի կողմանս արևելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ երթեալ, և առ թագաւորն նոցունց Աշտներսեհ, որ ըստ արևելից հիւսոյ կովկասու. զի և նոքա 'ի ժողովրդենէ մերմէ և 'ի խաշնարօտէ մերոյ էին“։ Բայց յետ այնորիկ և սոքա ևս յետս կացին 'ի հնազանդութենէ ընդ ժամանակս ինչ. զբաս Անանիա Կաթողիկոս 'ի մէջն անդ տասներորդ դարուն դարձեալ էարկ ընդ իշխանութեամբ ըստ գրելոյն Վարդանայ. „Յետ Անանիա մոկացի... բազում աշխատութեամբ հնազանդեաց զԱիւնիք, որ զԱղուանիւք թեւակոխէին... այլև զԱղուանս ածեալ 'ի հաւան չձեռնադրել իւրեանց Կաթողիկոս առանց աթոռոյն սրբոյն Գրիգորի“։ Եմին իրի և յաւուրս Շնորհալւոյն տեսանեմք 'ի պատմութեան մխաբանական թղթոց զԱղուանս ևս դասեալ ընդ ժողովուրդս Կաթողիկոսին Հայոց. „Ինքն (Շնորհալին) ժողովոյ հրաման հանէր յամենայն Հայաստանեայցս, սկսեալ յաթոռոյն Աղուանից մինչև 'ի կողմանս Սւարացւոց, և մինչև ցարևմտային կողմանս. զի ամենեքեան 'ի մասին եկեալ եպիսկոպոսք և վարդապետք“, և այլն։ Այս ինչ յայտնի է, զի նաև Յոյնք զՎիրս և զԱղուանս ճանաչէին ընդ իշխանութեամբ Կաթողիկոսին Հայոց. քանզի 'Եպիկոդայոս յոյն Պատրիարգ Կոստանդնուպօլսոյ՝ որ 'ի սկզբան տասներորդ դարու՝ յայտնի գրէ առ Յովհաննու Կաթողիկոսի. „Յաղագս

Հայոց, Վրաց և Աղուանից՝ միահամուռ քոյդ հաւատացեալ հօտիցդ“։ Եւ ասորև. „Քոյոյդ հօտիդ Հայոց և Վրաց և Աղուանից“։ Զոր ոչ զրէր արդեօք եթէ էր այսպէս լեալ 'ի սկզբանէ։ Կիրակոս յիշատակէ զԱսորի եպիսկոպոս զոր 'ի կաթողիկոսէն Հայոց առեալ զձեռնադրութիւն. զի ասէ. „Եւ սա (առ Գ· Դերսէս Շինող) եկեալ Ասորւոց խնդրէին 'ի նմանէ եպիսկոպոս... և ապա ձեռնադրեցին (Հայք) զԱբդիրոյ եպիսկոպոսն“։ Իսկ Թովմա Մեծոփեցի 'ի պատմելն զձեռնադրութիւն Կիրակոսի կաթողիկոսին, այնպէս ցուցանէ վասն Ասորւոց՝ որպէս թէ յառաջն միշտ 'ի կաթողիկոսէն Հայոց առնուին, ապա „Յոգիպտոսէ առին զիշխանութիւն կաթողիկոսութեան 'ի Խոսրովի ազգէն“։

Գլ· Ե·

ԶԳԵՍՏՓ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

1· Վրէղ։

'Ի գիրս մեր զսանին յիշատակութիւնք ինչ ոչք յայտ առնեն յառաջ ժամանակաւ 'ի կիր արկեալ 'ի կաթողիկոսաց զքօղն, և ապա բարձեալ զի Կիրակոս 'ի պատմելն զխռովութիւնն վասն Դիոսկորոսի կաթողիկոսին որ նստաւ 'ի կենդանութեան Պետրոսի կաթողիկոսին 'ի սկիզբն մեսասաներորդ դարուն՝ ասէ. „Ընթացեալ յանդգնութեամբ 'ի վերայ Դիոսկորոսի՝ պատառեցին զքօղն երեսաց նորա յաւուրս յայտնութեան Ցեսուն մինչ զեռ օրհնէին զՋուրն. քանզի քօղով վարէին յայնմ ժամանակի կաթողիկոսք“։ Դայց ոչ յիշէ՝ թէ յորմէ ժամանակի էր սկսեալ. արդեօք 'ի սկզբանէ 'ի Լուսաւորչէն մինչև ցԴիոսկորոս, թէ զկնի Լուսաւորչէն

յայլոց սկսեալ, և ապա վասն այնորիկ բարձեալ 'ի յեռապարայից. զի զժուարին երևի ազգին խափանել զայն ինչ՝ որ 'ի Լուսաւորչէ էր սկսեալ։ Մինչն 'ի Յայսմաւուրն 'ի յուլիսի 30 գտանեմք յիշատակութիւն ինչ այսպիսի, ուր պատմի վասն Լուսաւորչին՝ թէ յորժամ Դաւիթ 'ի սկիզբն ժբ զարուն նստաւ Կաթողիկոս հայոց ԱՂԹԱՄԱՐ, պատճառս բերէր առ իւր ունել զպէսպէս նշխարս, ընդ որս յիշէ և Զոր և դաւազան և մաշկեղէն գօտի սրբոյն Գրիգորի։ Բայց Տէր Խորայէլ 'ի պատմութեան գիւտի նշխարաց սրբոյ Լուսաւորչին՝ զայն քօղ ցուցանէ 'ի կարգս եկեղեցական սպասուց լեալ. զի յիշէ գտեալ առ մարմնով նորա սկիհ, մաղզմայ, և քօղ ոսկեթել ծայրիւք։ Արդ քանզի Լուսաւորիչ ոչ կրէր 'ի գլուխ իւր ոսկեթել ինչ, յայտ է թէ այն էր քօղ ոսկւոյ. կամ թէ կրկին քօղք գտան, զկնոյն այլ, և սկւոյն այլ. թող զի 'ի յիշելն Յովհաննու Կաթողիկոսի և Թոմայի Արծրունւոյ զերդ սրբոյ Հայրապետին պահեալս 'ի Զորոյ վանս, ուրանօր Կաթողիկոս նստաւ Դաւիթ, ոչինչ յիշատակեն զքօղոյն (տես 'ի Մեծ Հայս. 186)։ Նա թէպէտ Յոյնք 'ի կիր առնուին, բայց ոչ զամենայն ինչ զՅունականացն առին մերքն։

Ա՛յրդան այնչափ սեփական համարի զկնոյ կաթողիկոսի զքօղն, մինչև զնոյն անուն բազում ուրեք փոխանակ կաթողիկոսութեան 'ի կիր առնու. զոր օրինակ. „Խորայէլ կնցեալ յաթոռն ամն տասն վախճանի. և առնու զքօղն սուրբն Սահակ որ 'ի Զորոփոր յարքունեացն“ յեօթներորդ դարու։ Նա յետ պատմելոյ զմահ Գնտառ դարձ Պետրոսի՝ ասէ. „Նա առնու զքօղն Խաչիկ“ Նա թէ՝ „Տէր Խարսեղ ընկեց 'ի նմին ժամու զկաթողիկոսն Թէոդորոս, և առ 'ի նմանէ զքօղն և զգաւազանն և

զսուրբ նշանն Տէր Պետրոսի", որ էր խաչն Դեստաղարձ Պետրոսի։ Եւ վասն Գրիգորի Վ. կայասէրի գրէ. „Յայնժամ Տէր Գրիգորիս յուղարկեաց զքօղն և զգաւազանն և զսուրբ նշանն Տէր Պետրոսի առ Տէր Սարգիս"[1]։

2. Եղիշէորդն՝ հինգ էջին։

Տես զայսմանէ 'ի գիրսն Մխիթարայ Դօշի։

ԳԼ. Ջ.

ՍՊԱՍՔ ԵՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

1. Դատաստան պանէլ ատաջի։

Յիշատակի առ Մատթէոսի ՃԸ. յասելն վասն Պետրոսի Դեստաղարձի. „Եւ այսպիսի փառաւորութեամբ կացեալ Տէր Պետրոս 'ի Պոստանդնուպօլիս 'ի մէջ Հռոմոց զամս չորս, և յաւուր յաւելոյր փառաք և պատուովք 'ի մէջ Յունաց. և յորժամ երթայր 'ի պալատ թագաւորին՝ նախ զՀայրապետական գաւազանն յառաջ տանէին. յորժամ տեսանէր թագաւորն՝ երկիր պագանէր"։

2. Խաչ պանէլ։

Յիշատակեալ առ Վարդանայ յասելն վասն Կոթողիկոսին Ռարազի. „Եւ պատահէ նմա փորձութիւն ինչ սակաւ 'ի Ճանապարհին 'ի բերդն Մեծկերտոյ մօտ 'ի Ռալու 'ի յունականացն որ անդ, որք կամեցան կողոպտել զնոսա. բայց նա քաջասրտաբար արիացեալ ոչ եհ ըստ կամաց իւրեանց առնուլ, այլ զոր ինքն թողացոյց։

[1] Այս բան նոյնութեամբ գտանի 'ի Պատմութեան Ուռհայեցւոյն բառ առ բառ։ Գուցէ 'ի սմանէ առեալ է և Վարդան։

Լայց գիտէք երկաթի ձեռագործ առաքելոյն Թադէոսի՝ որ փանէին ասաջէ, ընկեց բարձօղն 'ի ծովակն· որ յետոյ զտեալ եղև 'ի քրիստոնէից", և այլն։

Այնչափ սովորական էր այս, զի նաև Մէլիք Շահն որդի Ալփասլանայ, քանզի սիրող էր քրիստոնէից՝ թոյլ ետ Պաթողիկոսին այնպէս մտանել առաջի իւր, զոր այլք 'ի Հագարացւոց ոչ տային թոյլ· որպէս վկայէ Պարդան ասելով զնմանէ· „Այր ողորմած և բարեմիտ ազգիս մեր, մինչ զի զՊատրիարգն զԱրասեղ Եղբայրեալ Խաչի առաջի իւր մուծանէր, և պատուէր պարգևօք և տուղբայիւ գրոյ"։ Այսպիսի իմն արտունութիւն և նախ քան զԱրասեղ տուեալ պատմի 'ի նոյն պատմագրէ վասն Զաքարիա Պաթողիկոսին 'ի մէջն իններորդ դարուն· „Յաւուրս յայսոսիկ Տէր Զաքարիա երթայ տեսանել զՅիսէ որդի Հէխայ, և յոյժ մեծարի 'ի նմանէ, տուեալ նմա բազում պարգևս և դրօշս՝ բառնալ Խաչ 'ի վերայ նորա"։

3· Պապոսեալ զԱթոռն։

Ձէր օրէն այլում ումեք նստել յԱթոռ Պաթողիկոսին, որպէս յայտ առնէ այս դիպուած պատմեալ 'ի Կիրակոսէ յետ առման Ենոյ յԱլփասլանայ, և թագաւորացն Ենոյ և Կարուց առ Յոյնս երթալոյ· „Իսկ զՊաթողիկոսն Պետրոս (Գետադարձ) մեծապատիւ պատուեաց Կայսրն, և եղ նմա Աթոռ ոսկի· և իբրև յարեաւ յԱթոռոյն՝ և կամէր արտաքս ելանել, եպիսկոպոս մի անուն Եղիսէ՝ առ զսայլեան (որ է լատիներէն Սելլա՝, այսինքն Աթոռ) ոսկի յորոյ վերայ նստաւ Պաթողիկոսն· իսկ սպասաւորք արքունի ոչ տային նմա թոյլ առնուլ (զԱթոռն)։ Եւ եհարց Կայսրն զեպիսկոպոսն եթէ ընդէր զայդ առնէր·

և ասէ ցնա եպիսկոպոսն՝ օրէն է մեր զի յԱթոռն ուր նստի Կաթողիկոս՝ ոչ այլ ումեք նստիլ բաց 'ի Կաթողիկոսէն։ Եւ զսրմացաւ Կայսրն ընդ պատիւն զոր ետ եպիսկոպոսն Կաթողիկոսին։ և հրամայեաց սպասաւորացն թոյլ տալ զի առցէ եպիսկոպոսն և ասէ ցնա՝ „հինգ հազար դահեկան է այդ։ տար պահեա 'ի պատիւ Կաթողիկոսին քո“։ Այս և Մատթէոս պատմէ 'ի ձգ, այլովք հանգամանօք։

4· Նկարել կենդանագրեր։

Այս 'ի դիպուածոյ անտի Սողոմոնի Կաթողիկոսի իմաստասիրեմք, զոր պատմէ Յովհաննէս Կաթողիկոս։ „Հարցաւ ապա յոմանց ազատաց (Սողոմոն), թէ վասն զի ծեր ես, և յանհնարին ճգնողական վարուց յոյժ անաւագեալ, ընդէ՞ր յօժարեալ երթաս 'ի Հայրապետութիւն։ առ որ պատասխանեալ նորա ասէր։ երթամ՝ զի գեղապաճոյճ նկարողաց «նել զիս ընդ այլ Հայրապետն տամ յորմ նկնղեցւոյն։ և ըստ սմին այսմիկ գործն կատարէր։ զի ոչ աւելի քան զմի ամ կեցեալ՝ փոխի յաշխարհէ աստի, և դնի ընդ հարս իւր։ և կենդանագրի 'ի քաւարանի սրբում“։ Որ և յառաջ բերէ Վարդան 'ի պատմագրութեանն։ „Յո՞ երթաս։ ասէ (Սողոմոն), «նել զերեսս դեղով ընդ այլ Հայրապետն։ որպէս և եղեւն, զի զկնի ամի միոյ վախճանեալ նկարի ընդ այլն“։

5· Ճանապարհորդել և ղրկել։

Վասն ճանապարհորդութեան Գեռատարձ Պետրոսի Կաթողիկոսի Յնի քաղաքէն 'ի Կոստանդնուպոլիս՝ այս-

պիսի գտանեմք յիշատակութիւն առ Մատթէոսի ճգ. „Ազատօքն փառաւոր արամբք, երեք հարիւր վառեալ զինուք, և վարդապետս և եպիսկոպոսունս և երաժիշտս և կրօնաւոր քահանայս հարիւր և քսան հեծեալս 'ի ջուրջ, հետևակ պաշտօնեայս երկերիւրս... Արդ այս ամենայն վարդապետք և իմաստասէրք... և ինքն ամենազովելին տէր Պետրոս ոսքօք հետևեալ ճանապարհորդութեամբ հասանէր 'ի Կոստանդնուպօլիս“։ Այս ճանապարհորդութիւն սորա յիշելով և ընդարձակօրն Սամուէլի 'ի շՁ թուին՝ դնէ ընդ նմա լեալ այս երեքհարիւր, իսկ եպիսկոպոս և վարդապետ՝ հարիւր։

'Ի շրջելն ոչ լինել օրէն 'ի ձի հեծանել և ոչ իսկ եպիսկոպոսաց՝ յայտ առնէ պատմութիւն Խադայ առ Խորենացւոյն (գ. 31)։ Իսկ 'ի ջուրջ հեծանել Կաթողիկոսին՝ յայտ առնեն այս բանք Յովհաննու Կաթողիկոսի. „Բայց և ես որ զայս գրեցի՝ պատուեցայ պատուասիրաբար յոստիկանէն զգեստիւք ըստ օրինակի կարգիս. և ջորի պաճուճաբար ոսկեզօծ զարդուք առաջի մատուցանելով ինձ“։

ԳԼ. Ի.

ՎԵՐՑԱՌՈՒԹԻՒՆՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հ. Նորհալ-ոյն.

'ԵՒ ՄԻՆՉ Նուաստ ծառայ Քրիստոսի, և ողորմութեամբ և կամաք Նորին Կաթուղիկոս Հայոց ('ի թուղթն որ վասն միաբանութեան ընդ Յոյնս)։

'ԵՒ ՄԻՆՉ ծառայ Աստուծոյ, և ողորմութեամբ Նորին Կաթողիկոս Հայոց ('ի թուղթն որ առ Սամոստացիս)։

Պ· Գրիգորի Կաթողիկոսի·

ԳՐԻԳՈՐԻՈՍ նուաստ ծառայ Քրիստոսի, և ողորմութեամբ նորին կաթողիկոս Հայոց ('ի ժողովական թուղթն՝ 'ի սկզբան)։

ԳՐԻԳՈՐԻՈՍ ողորմութեամբն Աստուծոյ կաթողիկոս Հայոց մեծաց, և յաջորդ մեծի աթոռոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին (անդ՝ յաւարտն)։

Մէսրոպայ·

ՄԵՍՐՈՊԻՊ շնորհօքն Աստուծոյ կաթողիկոս ամենայն Հայաստանեայց ('ի թուղթն առ Լեհացիս գրեալ 'ի 1364)։

Պ· Կոստանդնի·

ԿՈՍՏԱՆԴԻՆ շնորհօքն Քրիստոսի կաթողիկոս ընդհանուր ամենայն Հայաստանեայց ('ի սկիզբն թղթոյն առ Իվովթիս)։

ԿՈՍՏԱՆԴԻՆ շնորհօքն Աստուծոյ կաթողիկոս ամենայն Հայոց (անդ, յաւարտն)։

Թէոդորոսի Բ·

ԹԷՈԴՈՐՈՍ ծառայ ծառայիցն Քրիստոսի Յիսուսի Աստուծոյ Տեառն մերոյ· շնորհօք և ողորմութեամբ նորին կաթողիկոս ընդհանուր ամենայն Հայաստանեայց ('ի թուղթն գրեալ առ Լեհաստան 'ի 1383)։

ԹԷՈԴՈՐՈՍ եպիսկոպոսապետ մեծաց Հայոց, և Պատրիարգ ամենայն արևելից ('ի թուղթն գրեալ 'ի 1390)։

Յակոբայ Գ· որ նստաւ 'ի 1409·

ՅԱԿՈԲ եպիսկոպոսապետ Հայոց մեծաց։

Կոստանդնի Դ· որ նստաւ 'ի 1430·

ԿՈՍՏԱՆԴԻՆ, ծառայ ծառայից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբն Աստուծոյ կաթողիկոս Ամենայն Հայոց։

Փիլիպպոսի·

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Փիլիպպոս կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարգ Ամենայն Հայոց, Լուսակառոյց և Քրիստոսամատոյց Ամենեփառ և հրեշտակարար սրբոյ աթոռոյ Էջմիածնի ('ի թուղթն գրեալ 'ի Կոստանդնուպօլսոյ առ Լեհաստան 'ի 1653)։

Յակոբայ Գ·

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Յակոբ կաթողիկոս կաթողիկէ եկեղեցւոյ Հայաստանեայց· վեհ և վերադիտող ամենայն Հայկազեան սեռի, և պատրիարգ Ամենայն Հայոց քաղաքի առաքելական աթոռոյ 'ի տեղւոջ իջման Լանին Աստուծոյ· տեղապահ և յաջորդ աթոռակալ և փոխանորդ մեծահռչակ Տեառն մերոյ և հօրն հասարակաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ('ի թուղթն գրեալ 'ի Կոստանդնուպօլսոյ առ Հայկազունս Լեհաստանու յամի 1671 Օգոստոսի 28)։

Կարապետի·

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Տէր Կարապետ կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարգ Ամենայն Հայոց,

Լուսակառոյց և տիրանկար սրբոյ և մեծի գեղազարդ աթոռոյս Էջմիածնի ('ի գրեալն իւր 'ի 1729 'ի Մայիսի 4)։

Սիմէոնի·

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ տէր Սիմէոն Կաթողիկոս ամենայն Հայոց, և ծայրագոյն Պատրիարգ Աստուածայնոյ և առաքելականի եկեղեցւոյս Քրիստոսի· նաև տիեզերականի մեծի աթոռոյս սրբոյ Էջմիածնիս ('ի գրեալն 'ի 1764)։

Եղիազարու·

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Եղիազար Կաթուղիկոս ամենայն Հայոց, և Պատրիարգ Վաղարշապատու Լուսակառ և Քրիստոսանկար երկնահանգէտ և աղինասարաս սրովբէաձեմ և արփիահրաշ սրբոյ և մեծի հրաշալան աթոռոյն Էջմիածնայ ('ի կոնդակն գրեալ առ տէր Սարգիս աւագ երէցն Ռեթղեհեմի եկեղեցւոյ՝ որ 'ի Տփխիս, 'ի թուին Հայոց ՌՃԼՌ, 'ի Յունվարի 21 գրեալ 'ի սուրբ Էջմիածնէ)։

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Եղիազար Կաթուղիկոս ամենայն Հայոց և Պատրիարգ Վաղարշապատու Լուսակառոյց Քրիստոսամատոյց սրովբէաձեմ և քրովբէապար սրբոյ աթոռոյս Էջմիածնի ('ի կոնդակին առ նոյն տէր Սարգիս և առ ժողովուրդն Երիմանեցւոց՝ որ 'ի Տփխիս, 'ի թուին ՌՃԼՌ, 'ի Յունիսի 4, գրեալ յԷջմիածնէ)։

Աղէքսանդրի·

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ տէր Աղեքսանդր Կաթուղիկոս ամենայն Հայոց և Պատրիարգ Վաղարշա-

պատու Լուսակառոյց սրբոյ աթոռոյս Էջմիածնի (՝ի կոնդակին առ հասարակութիւնն Հայոց Տփխիսայ, գրեալ ՝ի թուին ՌՃԹ, յՕգոստոսի 22, յԷջմիածնէ)։

Յակոբայ Գ. Ղազարեան։

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Յակոբ Կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարգ Կաղարշապատու երկնահանգէտ և ազգինասարաս սուրբ աթոռոյս Էջմիածնի (՝ի կոնդակին առ Իշխանն Տփխիսայ՝ պարոն Ռերթէլ, պարոն Մանուչար, պարոն Ղիմշիդ, պարոն Պաղինդուր, պարոն Գիրալ, ՝ի թուին ՌՃԹ, յԱպրիլի 8)։

Կոստանդէայ Ա.

ԿՈՍՏԱՆԴԻՆ ծառայ Քրիստոսի, շնորհօք նորին Կաթողիկոս ամենայն Հայոց (՝ի շրջաբերական թղթին՝ զոր գրեաց յամի 1247)։

Ներսէսի.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ Տէր Ներսէս, և շնորհիւ նորին Կաթողիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ Արաքելական եկեղեցւոյ, նաև մեծի մայր Աթոռոյս սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի (յամենայն կոնդակս իւր)։

Յովհաննէսի Բ.

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ծառայ տէր Յովհաննէս Կաթողիկոս ամենայն Հայոց և Ծայրագոյն Պատրիարգ առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի, նաև գերագահ մայր Աթոռոյս Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի (յամենայն կոնդակս իւր)։

ՆԵՐՈՒՆ Ա·

ՆԵՐՈՒՆ Ծառայ Քրիստոսի, և անհասանելի կամաքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց, Նոյրագոյն Պատրիարգ համազգական նախամեծար աթոռոյ Արարատեան մայր եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի (յամենայն կոնդակս իւր)։

Մ՚ՍՊՆԷՈՍ[5]·

ՄՍՊՆԷՈՍ Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամաքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց Նոյրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան մայր եկեղեցւոյ Կաթուղիկէ Էջմիածնի (յամենայն կոնդակս իւր)։

ԳԼ· Ը·

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ԹՂԹՈՑ ՑԵՂԱԿԱԼԱՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ՝ ՈՐՔ ԱՆՈՒԱՆԷԻՆ

ԷՊԻՍԿՈՊԱԿԱՆ։

Մինասայ՝ որ էր յաստուծոյ Եղիազարոյ Կաթողիկոսի·

ՄԻՆԱՍ
ՎԱՐԴԱՊԵՏ

Պարոն Մօլարէթխուցէս Վայիխոսրով բէգին
ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ծառայ Մինաս վարդապետ,

---

[5] Վերտառութիւն կաթողիկոսին Մատթէոսի յաւելաւ 'ի մէջ։ Ծանօթ. Զ· Մ։

Էքեռակալ ամենապայծառ և նախամեծար Պ. Եհանանդ արքայ աթոռոյս Յէջմիածնի։ Յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան և սիրոյ հանդերձ աստուածային բաղմապատիկ ողջունիւ և նախախնամական գթութեամբ առ իսկապէս սիրելիդ մեր, և այլն (գրեալ 'ի թուին ՌՃԼԸ, Յուլիսի 2, 'ի դրանէ սուրբ Յէջմիածնի)։

ԳԻՐ· ԹԻ·

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ Է-ԵՊԷՍԻ·

ՅԻՍՈՒՍԻ ՎՐԻՍՏՈՍԻ ծառայ Է.ետիս եպիսկոպոս Տեսուչ և Առաջնորդ Հաղբատայ, արեամբ ներկեալ երկոտասան սուրբ նշանաց· յորմէ ժամանեալ հասցէ գիր օրհնութեան, և այլն ('ի թղթին գրեալ առ հաստատութիւնն Դօրեայ 'ի թուին ՌՃԺԳ 'ի Սեպտեմբերի 18)։

ԳԻՐ· ԺԲ·

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ոմանք ցուցանեն սովորական լեալ կարմրանիշ գլխել· զէ չորրորդ Կոստանդին Կաթողիկոս զայս օրինակ աւարտէ զեւր թուղթն· „Հեռնագրեցաք մերով սովորական կոչմէք ձեռնագրովս ժե 'ի յունվ· 'ի թուին պիգ (1314)։ Կոստանդին շնորհօքն Աստուծոյ Կաթուղիկոս ամենայն Հայոց“։

Ապերոպ աւարտէ· „Գրեցաւ գիր օրհնութեան հրամանիւ մեր 'ի մարմնաւոր ծննդեան Յիսուսի Վրիստոսի 'ի ՌՃԺԳ ամին· և 'ի սրբոյն Գրիգորի ՌԾԳ ամի· և 'ի թուիս պԾԳ 'ի յամսեանն յունվարի ժե· 'ի մեր Կաթո-

զիկոսութեանն օր է ամ կէս և օր ի. և վասն առաւել հաստատութեան իմով կամաւ ձեռնագրեցի սաղմոս զլով սովորական կոչմէը ձեռնագրաւ... Մեսրաւպ շնորհաքն Ընտրեալ Կաթուղիկոս ամենայն Հայաստանաց"։

Այնպէս և Թէոդորոս. „Գրեցաւ գիրս օրհնութեան Խալիձ հրամանիս մեր... 'ի թուիս Հայոց պՀԷ, ամի (1383). յապրիլ ամսոյ բ... Եւ վասն առաւել հաստատութեան և ավտալոյ ձեր՝ ձեռնագրեցաք մեր սովորական կոչմէը ձեռնագրովս. Թէոդորոս Ծառայ Ծառայիցն Քրիստոսի Ընտրեալ մերոյ, և ողորմութեամբ նորին Կաթուղիկոս ամենայն Հայոց"։

ԳԼ. ԺԸ.

ԿՆԻՔ

'Ի նախնեաց ունիմք զպատկեր կնքոյ Գրիգորի Կաթողիկոսի. յորոյ 'ի մէջն է դէմք Քրիստոսի, և շուրջանակի գրեալ. „Տէր Գրիգոր Կաթողիկոս Հայոց". զոր և կարես տեսանել 'ի քրոնիկոնին Եւսեբեայ, հատ բ. թղթ. 238։ Եւ այլոցն այլազգ։

ԳԼ. ԺԿ.

ՊԱՇՏՕՆԵԱՑՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻՆ

Անտիոս 'ի թիւն ՃԾԷ, պատմելով զհանդերձանս և զփառաւորութիւն սան Կաթողիկոսարանին՝ ասէ. „Երկոտասան եպիսկոպոսս[6] և չորս վարդապետս 'ի սան

---

[6] Զեպիսկոպոսունս երկոտասան յիշէ և Թուզանդ յոգեալն. վասն մեծին Ներսիսի. „Էին 'ի ներքնի Հայրապետին 'ի սան իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք խոր գործակիցք և խորհրդակիցք" (գ. 5)։

Հայրապետին անպակաս լինէր, և վաթսուն երէց 'ի կրօնաւորաց, և յաշխարհականաց հինգ հարիւր· և չէր նուաստ աթոռ Հայրապետութեանն քան զԹագաւորութեանն Հայոց։ Եւսև զարդարանք եկեղեցեացն և տան Հայրապետութեանն բազում և անհամար և հրաշալի մեծութեամբ լցեալ, զոր առաջին Թագաւորացն տուեալ հաստատութեամբ առաջին Հայրապետացն, որ զայր հասանէր մինչև 'ի տէր Պետրոսն (Գետադարձ)· և առ նովաւ խափանեալ լուծաւ"։

Եւ յայնչափ բազմութենէ երիցանց և վարդապետաց՝ զոմանս և եթ գտանիմք 'ի գիրս մատենագրաց ազգիս մերոյ յիշատակեալ յանուանէ կարգի պաշտաման իւրեանց, զորս յայսմ վայրի մի առ մի յիշատակեսցուք·

1· Մենէպէտ·

Յիշատակեալ առ Խորենայ բ· 2· „Ներսէսի կացեալ սմա տան՝ յաջորդէ զաթոռն Ընտստաս 'ի ձի թուին, որ էր Մենէպէտ Ներսէսի"։ Յովհաննէս Պաթողիկոս կոչէ Մենէպատն։

2· Փանխալ·

Յովհաննէս Պաթողիկոս ասէ վասն նոցա՝ թէ „Եղբ Փանխալ սրբոյն Գրիգորի"։ Ստեփաննոս Օրբէլ· կամ յիշէ զանուն Մխիթար աւագ երէց քաղաքին Ընտոյ, և Փանխալ սուրբ Պաթողիկէին։

3· Վանաց Երէց·

Յիշատակեալ առ Յովհաննէս Պաթող· „Մովսէս զԿիւրիոն սրբոյ Պաթողիկէի Վանաց Երէց՝ ձեռնադրէ յարքեպիսկոպոսութիւն Վրաց"։

4. Դրան եպիսկոպոս.

„Այս դուռն համարիմ վասն Կաթողիկոսարանին ասացեալ. քանզի Յովհ. Կաթող. 'ի յիշելն. „Դրան վերոյ եպիսկոպոս“, ասէ. „Որպէս և 'ի ժողովն Ատանոյ՝ որ 'ի 1316՝ յիշատակի Ստեփաննոս եպիսկոպոս դրան Կաթողիկոսարանին“:

5. Դպրապետ.

Յիշատակի առ Մատթէոսի ճիշ. Դէորգ վարդապետ դպրապետ Գրիգորիս Վահրամ Կաթողիկոսին. որ և 'ի Թաւրիզ նստաւ Կաթողիկոս:

6. Հիւրապետ.

Յիշատակեալ առ Լաստիվերտցւոյն գլ. Ժ. „Ու եկեալ խնդրակացն գտին զերէց ոմն Կիւրակոս անուն, որ Կաթողիկոսարանին Հիւրապետն էր“:

7. Ընտիրական կամ ասրկաւագապետ.

Ռուզանդ 'ի գ. 15. 'ի խօսելն զմեծէն Ներսիսէ յիշատակէ ասելով. „Յղեաց զիւր աթոռակիցն զԽոսրով, և զնիւթ Ընտիրականն եպիսկոպոսին՝ որում անուն Մուրին կոչէր“:

Խորենացին Հայկական թարգմանութեանմէ վարէ զնոյն անուն ասելով. „Ապատուական մարմին նորա բարձեալ ասրկաւագապետին նորին (մեծին Սահակայ) Ներսիսայի՝ հանդերձ աշակերտակցօք տարեալ հանգուցին“, և այլն:

Պաշտօն և իշխանութիւն Ասրկաւագապետին ոչ դուզնաքեայ ինչ էր. զի բաց 'ի ասրկաւագութենէ էր և իբր աջակից արքեպիսկոպոսի:

ԳԼ. ԺԳ.

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ԽԱԼԱԹԵԼՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՑ ԶԱՐԺԱՆԱ-ԻՈՐՍՆ ՎԱՐՔՈՒ.

Երբեմն սովորութիւն լեալ առ Կաթողիկոսունս յետին դարուց՝ Խալաթել զորս համարէին 'ի հոգեւորականաց արժանիս պարգեւաց՝ կամ վարձու. և այս ցուցանի 'ի բանից անտի՝ զոր գրէ Մ՝ինաս վարդապետ Աթոռական Եղիազարու Կաթողիկոսի առ Պարոն Մօլարէթինուցէս Վայիխոսրով բէգ՝ 'ի Տփխիս 'ի թղթին իւրում առ նա գրեցելոյ 'ի թուին ՌՃԼՌ. Յուլիսի 2, յորում յետ այլոց բանից ասէ և զայս. „Սակս տէր Սարգսի Ժողովրդոցն որպէս հրամայեալն էիր՝ զհրամանն քո յօժարութեամբ սրտի կատարեցաք, և վերստին հրամանաւ Վ՝ահին (իմն Կաթողիկոսին Եղիազարու) զծուին նմա հաստատեցաք, և Խալաթեցաւ զնա, և յետս դարձուցաք“։

Այս ինքն տէր Սարգիս կրկին անգամ Խալաթեցաւ Ամենասանդր Կաթողիկոսէ. որպէս ցուցանի 'ի կոնդակի նորա գրեցելոյ առ հասարակութիւնն Տփխիսայ 'ի թուին ՌՃԾԼ, յՕգոստոսի 22. ուր յետ օրհնութեանցն ասէ. „Ծանեալուք սիրելի և հոգեւոր որդիք մեր... ահա զմեր սիրելի որդի տէր Սարգիսն Խարձր իշխանութեամբ սուրբ Աթոռոյս, և մերով հաստատուն և անփոփոխելի նամակաւս աւագ երէց կարգեցաք 'ի վերայ ձեր. պարտիք ամենեքեանքդ թէ քահանայք թէ ժողովուրդք սիրով և մեծաւ պատուով ընդունել զդա... նա ևս ձեր խաթերդ Խալաթի- և սիրով ճանապարհորդեցաք“։

ԺԳ.

ՑԱՏԿԱՆԻՇՔ ՊԱՏՐԻԱՐԳԻՆ ԷՋՄԻԱԾՆԻ

Ա.

Բնուն իսկութիւն Պատրիարգին Էջմիածնի առ վա-
ւերութիւն իւր՝ պահանջէ զյատկանիշս. յորոց առա-
ջինն է՝ Եպիսկոպոսական ձեռնադրութիւն կրաւորական
անկախ յօտարաց, այն է՝ զի մի կարօտ առնուլ զձեռ-
նադրութիւն իւր 'ի Յունաց՝ 'ի Լատինաց՝ յԱսորւոց
կամ յայլոց քրիստոնէից, այլ՝ յիւրոց եպիսկոպոսաց
միայն, հիմն ունելով այսմ զգործս սուրբ Լուսաւորչին
մերոյ, որ բաց 'ի 400 եպիսկոպոսաց՝ ըստ վկայելոյն
Ագաթանգեղոսի, ձեռնադրեաց նաև զերկուս որդիս իւր՝
զԱրիստակէս և զՎրթանէս՝ յեպիսկոպոսս, որք և ա-
ռանց նոր ինչ ձեռնադրութեան յաջորդեցին 'ի Կաթո-
ղիկոսական աթոռ հօրն իւրեանց. վասն զի յաւուրսն
յայնոսիկ ոչ գոյր յատուկ ձեռնադրութիւն կաթողիկո-
սական կամ պատրիարգական պատուոյ, որպէս յետ ժա-
մանակաց սահմանեցաւ առ մեզ և առ այլս ոմանս, և
ասէ մինչև ցայսօր. այլ նոյն մի ձեռնադրութիւնն եպիս-
կոպոսական շնա էր 'ի կարգել Կաթողիկոս կամ Պա-
տրիարգ. ըստ որոյ և Գրիգորիս 'ի հօրէն իւրմէ 'ի Վրթա-
նայ եպիսկոպոս ձեռնադրեալ՝ կարգեցաւ Կաթողիկոս
Աղուանից. նոյնպէս և Յուսիկ եղբայր սորա՝ արգէն
եպիսկոպոս գոլով՝ յետ մահուան հօրն իւրոյ Վրթանայ՝
նստաւ յաթոռ կաթողիկոսութեան Հայոց՝ ոչանց նոր
ձեռնադրութեան ինչ։ Իսկ Փառէն կամ Փաւստոսէ
վասն այն գնաց 'ի Եկեսիս առ 'ի ձեռնադրել՝ զի նա
դեռ չէր եպիսկոպոս, այլ լոկ երէց, որպէս վկայէ

Փաւստոս (յեր· 44)· Նովին աղագաւ և մեծն Նեքսէս առաքեցաւ 'ի Կեսարիա, վասն զի լոկ սարկաւագ էր՝ ըստ վկայելոյ Նորին Փաւստոսի (յեր· 70)։ Իսկ 'ի Յունղովն անդ յաւուրս սորին Նեքսիսի սահմանեցաւ այն կանոն՝ զորմէ բանք մեր են աստանօր, թէ կաթողիկոսացուն Հայոց՝ եթէ չիցէ դեռ եպիսկոպոս, մի՛ և առ գնասցէ 'ի Կեսարիա առ 'ի ձեռնադրիլ, այլ յիւրոց եպիսկոպոսացն, ձեռնադրեսցի եպիսկոպոս և կարգեսցի Կաթողիկոս և Պատրիարգ ազգին· առ որ թէ ունէիցն արդեսք յայնմ ժամանակի զնոր ինչ արարողութիւն կամ ծէս, ոչ ունիմք հաւաստել 'ի գրոց մերոց։ Այլ գիտեմք անտարակոյս՝ թէ այժմեան ծէսք կաթողիկոս օծութեան՝ յետոյ ուրեմն սահմանեալ են 'ի Ջերմեռանդից ոմանց՝ յառաւել պայծառութիւն՝ այնր սրբազան պատուոյ։

Ի·

Նոր կրկրորդ յատկանիշ Պատրիարգին Նշմարծնի՝ է և պիսկոպոսական ձեռնադրութիւն՝ անհաղորդ այլոց, այսինքն զի բաց 'ի Պատրիարգէն՝ այլ եպիսկոպոսք ոչ կարեն ձեռնադրել զեպիսկոպոս, ոչ զի անվաւեր լինի ձեռնադրութիւնն, այլ զի այդպէս օրինադրեալ են սուրբ Լուսաւորիչն և որդիք և թոռունք նորա, ոչ գրաւոր՝ այլ ձայնաւոր և գործաւոր օրինօք, որ առաւել քան զգրաւոր օրէնս հաստատ և անշարժ տարբացեալ կայ յեկեղեցւոջ մերում, այնչափ՝ զի 'ի սկզբանց անտի մինչև ցայսօր ոչ ընդդիմութիւն և ոչ նեղհակ կանոն ինչ ելեւեցաւ յազգի մերում վասն այսր· այլ ամենայն եպիսկոպոսք մեր սիրով հրաժարեցան յայսմ իրաւանց, և սեպհականեցին զայն Պատրիարգի իւրեանց, առ 'ի անլու-

ծանեալի պահպանել զկեղրոնական միութիւն եկեղեցւոյ և զՀայրենաւանդ կանոնն բարեկարգութեան։

Գ.

Երրորդ յատկանիշն է Ինքնակալութիւն, ինքնիշխանութիւն, անհարկադիր և ձեռնարձակ հովուութիւն, ոչ լինել կախեալ զայլմէ ումեքէ գերագոյն կարծեցեալ Հայրապետէ 'ի մասին հովուութեան և կառավարութեան եկեղեցւոյ. ըստ որոյ հաւաստի գիտեմք 'ի պատմութեանց, թէ սկսեալ 'ի Լուսաւորչէն մինչև ցայսօր ոչ ոք յիմաստուն Հայրապետաց մերոց ետ զմօրուս իւր 'ի ձեռս այլոց կամ արկ զինքն ընդ իշխանութեամբ օտարազգի ուրուք Հայրապետի, ոչ լատին Պապին Հռովմայ, և ոչ յոյն Պատրիարգին Կոստանդնուպօլսի։ Այլ Պատրիարգք Էջմիածնի՝ որպէս և այլ ամենայն ազգաց ինքնագլուխ Պատրիարգք 'ի տեսչութեան հօտին մեծ քան զինքեանս ճանաչեն զԱստուածաշունչ գիրս և զսրբազան կանոնս եկեղեցւոյ. և վասն տնտեսութեան իւրեանց համար տան՝ միայն ընդհանուր ժողովոյն եպիսկոպոսաց, և ոչ եթէ այլազգի ումեք Հայրապետի։

Գ.

Չորրորդն է Գլխաւորութիւն, գլուխ՝ գագաթն՝ առաջին և ծայր լինել ամենայն եպիսկոպոսաց Հայոց. ըստ որոյ և կոչի նա՝ Հայրապետն Պատրիարգ. զի 'ի մէջ եկեղեցւոյ չէք քան զնա գերակատար իշխանութիւն հոգևոր, այլ նա միայն է իբրու գմբէթ և կաթողիկէ 'ի գլուխն անդ բոլոր շինուածոյ եկեղեցւոյ. և գուցէ սորին աղագաւ կոչեցի՝ Կաթողիկոս, որպէս թէ նմանեալ կորըն-

թաւոր գմբէթաձև առաստաղի, որ զայլ ամենայն մասունս շինուածոյն 'ի ներքոյ իւր պարունակէ. որ 'ի լեզուի մերում կոչի՝ Կաթողիկէ։ Այս գլխաւորութիւն ամենայն ուրօք հարկաւոր է առ 'ի պահպանել զմիութիւն եկեղեցւոյ, առ 'ի կապակցել զբազմութիւն անդամոցն ընդ միմեանս, և առ 'ի կազմել զմի բոլոր հաւաքական։ Զանեան զայս Ծայրագոյն հարկաւորութիւն և նախնի Հայրապետք յառաջին կամ յերկրորդ դարուն կեցեալք, յայն սակս և սահմանեցին զայն 34 երորդ կանոնն Առաքելական, որ այսպէս պատուիրէ՝ „Եպիսկոպոսք իւրաքանչիւր ազգի՝ պարտին ճանաչել զնա՝ որ է՝ առաջին 'ի մէջ նոցա, և համարեսցին զնա իբրև զգլուխ իւրեանց, և առանց կամաց նորա մի արասցեն կարևոր ինչ բան“, և այլն։ Յայսմ կանոնէ ճշմարտութեան և յիրաւացութենէ իրին ստիպեալ ամենայն ազգք քրիստոնէից՝ զմն յեպիսկոպոսաց իւրեանց կացուցին գլխաւոր և առաջին 'ի վերայ այլոց՝ Յոյնք, Հայք, Ասորիք, Արաբացիք, Եթովպացիք, Լատինք, և որ այլ ևս իցեն. զի զայն պահանջեն անտնօրինելի օրէնք բարեկարգութեան և ընթացք բնութեան։

Ե.

Հինգերորդ յատկանիշն Պատրիարգին Հայմիածնի՝ է Միութիւն կամ միաթիւ եզականութիւն. զի որպէս եկեղեցին Հայոց՝ ըստ որում մարմին ինչ հաւաքական՝ մի է և եզական. նոյնպէս և գլուխն նորա հարկաւ լինելոց է մի։ Այսորիկ աղագաւ անհարազատ Կաթողիկոսք Աղթամարայ և Սսոյ ոչ համարին բնաւ գլուխ եկեղեցւոյն Հայոց, այլ՝ սոսկ Պետրապօլիտք՝ ևս առաւել

Պատրիարգքն Յերուսաղէմայ և Կոստանդնուպօլսի ՝ի բազմացուցանեն զգլուխս եկեղեցւոյն մերոյ· զի անուամբ և տիտղոսիւ միայն կոչեն Պատրիարգ վասն տեղեացն, յորս երբեմն նստէին հռչակաւոր Պատրիարգք Յունաց· իսկ իրօք և արդեամբք միայն եպիսկոպոսն Յէջմիածնի է Կաթողիկոս և Պատրիարգ ամենայն Հայոց· և ազգն իսկ բովանդակ զնա միայն ճանաչէ այնպիսի։

Ա·

Վեցերորդն է՝ օրհնել զմեռոն։

ՎԵՐՋ·

ՑՈՒՑԱԿ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆՑ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՄԱՍԻՆԵԱՆՑ

ԶՄԻՒՌՆԱՑԻՈՑ։

Ա։

Տպագիր էջագրութիւն։

1. ՀՐԱՀԱՆԳ Քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, ընդարձակեալ համապատշաճ վկայութեամբք։ Մոսկուա 1850 ամի։
2. ՆՈՑՆ, յաշխարհիկ բարբառ։ Մոսկուա 1861 ամի։
3. ՀՐԱՀԱՆԳ Քրիստոնէական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց։ Մոսկուա 1850 ամի։
4. ՀԱՒԱՏԱՊԱՏՈՒՄ, այն է՝ Մանր ուսմունք Քրիստոնէական հաւատոյ։ Մոսկուա։ առաջին տպագրութիւն 1850 ամի։
5. ՔՐԻՍՏՈՍԱՊԱՏՈՒՄ, այն է՝ Մանր ուսմունք Արքայական Պատմութեան աւետարանի։ Մոսկուա։ առաջին տպագրութիւն 1850 ամի։
6. ՔՐԻՍՏՈՍԱՊԱՏՈՒՄ, այն է՝ Համառօտութիւն Աւետարանական Պատմութեան, հանդերձ ծանօթութեամբք։ Մոսկուա 1861 ամի։
7. ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ Ազգային եկեղեցական պատմութեան։ Մոսկուա 1874 ամի։
8. ԿՐԹՈՒԹԻՒՆ Աւետարանական։ Տփխիս։ առաջին տպագրութիւն 1835 ամի։
9. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ կաթողիկոսաց Էջմիածնի 'ի Ախմէոնէ մինչ ցՈՎՀԱՆՆԷՍ։ Մոսկուա 1876 ամի։
10. ԽՄԲԱԳԻՐ Հափածոյ Բանից Մեծաց Մագիստրոսի Մասեանց։ Մոսկուա 1864 ամի։
11. ՑԻՂԱՑԱԿԱՐԱՆ կենաց և գործոց մեծանուն պայազատաց Լազարեան Տոհմի։ Մոսկուա 1856 ամի։

12· ՑԵՏԻՆ ԺԱՄՔ կայսեր Նիկողայոսի Առաջնոյ։ Թարգմանութիւն։ Մոսկուա 1855 ամի։

13· ՃՌԱՔԱՂ, ամենագիր՝ կրօնական, Բանասիրական և Ազգային գիտելեաց։ Երէ+ հատոր։ Մոսկուա յամէն 1859 մինչ յամն 1862։

14· ՑԵԱՌՆ ՑՈՎՀԱՆՆՈՒ Քահանայի Վանանդեցւոյ ՃԱՌ ՆԵՐԲՈՂԵԱՆ 'ի սուրբ Խաչն Քրիստոսի, և պատմագրական Առասաց-ութիւն 'ի սուրբ Նշանն Վարագայ, և և ՍԵԻԵՐԻԱՆՈՍԻ Գանձապետի եպիսկոպոսի ՃԱՌ 'ի վերայ բանին թէ „Հուր եկի արկանել յերկիր" և այլն, հրատարակեալ 'ի Մասրայ Մանրեանց։ Մոսկուա։ 1853 ամի։

15· ՕՐԱՑՈՑՑ 1849 Թուականին Քրիստոսի և Հայոց ՌՄՂԸ։ Մոսկուա։ 1848 ամի։

Ր։

ԿԻՐՃԱՓԷՐ ԵՐԿԱՐԷՐՈՒԹԻՒՆ։

1· ԲԱՌԱՐԱՆ նոյնայանգ բառից Հայկական լեզուի։

2· ԿՑԱԿ, այն է՝ ՃԱՌ 'ի խորհուրդ շարշարանաց Յեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ասացեալ 'ի Ս· Էջմիածին յամին 1828։

3· ԽՆԶՈՑՔ հոգևոր սիրոյ 'ի վերայ նկարագրի Սաղոմոնեան երգոյ երգոց, տպագաչափեալ 'ի 1828 ամի, հանգերձ յաւելուածով համառօտաբար բացատրութեան ըստ խորհրդականին 'ի վերջոյ։

4· ՎԷՊ Մասրայ յիւրմէ գրեալ 'ի 1831 ամի 'ի Տփխիս։

5· ԴՈՐԾՆԱԿԱՆ· վարդապետութիւն հաւատոյ։ Թարգմանութիւն։

6· ՊԱՏՄՈՒԹԻՒՆ կենաց և գործոց Մանուկ պէյի։

7· ՆՈՑՆ, պոմիերէն։

8· ՆՈՒԷՐ Մաղթանաց՝ աղօթից աղերսանաց ընծայեալ 'ի վերա Հաստիչն էից Աստուածն բարձանոյ, գրեալ 'ի Ս· Էջմիածին յամին 1829։

9· ԿՐՕՆ, լեզու և դպրութիւն Հայոց, և և արուեստք գտեալք կամ ծաղիկեալք 'ի Հայաստան 'ի հին ժամանակս, 'ի պէտս ուսումնասիրաբանչիկ մանկանց։

10· ՊԱՏՐԱՍՑ պատասխանիք ըստ պէտպէտ ուսումնական հարցմանց։

11· ԾԱՆՕԹԱՐԱՆՈՒԹԻՒՆ դՀին գրչագիր Աւետարանէն՝ գտելոյ 'ի մատենադարանի Լազարեան ճեմարանի, և բազդատութիւն նորին ընդ Աւետարանաց տպագրելոց 'ի Վենետիկ յամին 1805։

12· ՆՈՐ ԶՈՑԻԼՈՍ, ընդդէմ վրիպակոյզ վերծանողին ժամագրոցն տպելոյ 'ի Մոսկուա յամին 1853։

13· ՄԱՆԿՈՒԹԻՒՆ երևելի արանց։ Թարգմանութիւն։

14· ՀԱՄԱՌՕՏ պատմութիւն Ռուսաց։ Թարգմանութիւն։

15· ՀՐԱՀԱՆԳ ուղղախօսութեան, որ է՝ երկրորդ մասն քերականութեան Հայկական լեզուի։

16· ՊԱՏՄՈՒԹԻՒՆ վարուց և գործոց Հայրապետաց և վարդապետաց Հայաստանեայց Ս· եկեղեցւոյ։ Շարունակեալ։

17· ԴԱՍՔ յեկեղեցական պատմութեանց։ Մասն Առաջին՝ Դասք յԸնդհանուր եկեղեցական պատմութենէ։ Մասն Երկրորդ՝ Դասք յԱզգային եկեղեցական պատմութենէ։ Շարունակեալ։

18· ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Հին կտակարանի։ Շարունակեալ։

19· ՀՐԱՀԱՆԳ ճարտասանական 'ի պէտս աշակերտաց։ Շարունակեալ։

20· ԾԱՂԿԱՓԱՂ 'ի Սուրբ Գրոց, այն է՝ համառօտ նկարագիրք երևելի անձանց, անցից և տեղեաց յիշատակելոց 'ի սուրբ Գիրս, 'ի պէտս Հայկազնեայ մանկանց։ Շարունակեալ։

21· ԳԻՏԵԼԻՔ գՀին կտակարանէ։ Շարունակեալ։

22· ՊԱՐԾԱՆՔ Էջմիածնի· Լաւ բան է, կարդա։ Քննութիւն 'ի վերայ Օրացուցին 1833 ամի, տպագրելոյ 'ի Ս· Էջմիածին, գրեալ 'ի Տփխիս յամին 1832։

23· ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ Տօնից, և այլ պէտ պէտ ծէսք և սովորութիւնք Եկեղեցւոյ Հայաստանեայց։

24· ԱՂԻՒՍԱԿ, որով գտանին ծնունդք և քառորդք լուսնի՝ ըստ ժամուց և ըստ բոպէից, տարարեալ 'ի Հնչեշտ յամին 1843։

25· ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ Մերայ Գրիգորեան Մսերեանց Զմիւռնացւոյ, յամէ Տեառն 1830 մինչ ցամն 1873։

26· ՃԱՌՔ, ասացեալք 'ի Մերայ Մ· Մսերեանց։

Այս ցուցակիս մէջ նշանակուած երկասիրութիւնքն աւարտեալ են և կարող են մամլոյ տակ մտանել։

Дозволено Цензурою. С.-Петербургъ 17 Октября 1875 г.

Imprimerie W. Gautier, au pont des Maréchaux, maison Torletzky.